Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1875
1876
1877

84
- 60

ԿՈՄՄ

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՈՅ

ՅԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ



ԳՐԱՏՈՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ
Կ. ՊՕԼԻՍ
ՀՈՓՄՈՓՎԱԾՔՈՎ ԲՕՓՈՒՆ № 50

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1875

29239 ԱՀ

ԿՈՄՍ

ՄՕՆԹԷ-ԿՐԻՍԹՈՅ

ԳԼՈՒԽ Ա

ԵՐԵՒՈՑԹԸ

Ինչպէս որ թաղատուրի դործակալը տիկին Տանկլարի ըսեր էր՝ վալանթին դեռ առողջացած չէր։

Անհանդստութեան յոդնութենէն ուժէ կտրած՝ անկողինը պառկած էր, և իր սենեկին մէջ տիկին տը Վիլֆօրէն իմացեր էր այն ամեն դէպքերը, որոնք քիչ մը առաջ պատմեցինք, այսինքն՝ Էօժէնիի փախուստը և Անտրէա Գավալղանթիի կամ թէ ըսենք պէնէտեթթոյի բռնուիլը, ինչպէս նաև անոր վրայ եղած մարդասպանութեան ամբաստանութիւնը։

Սակայն վալանթին այնչափ տկար էր, որ այս պատմութիւնը իրեն այն աստիճան տպաւորութիւն չըրաւ, որչափ որ իր առողջութեան վիճակին մէջ պիտի բնէր։

Իրօք իր խօթայեալ ուղեղին մէջ և աչացը առջև տարօրինակ դաղափարներով և մտացածին խորհուրդներով խառն աղօտ դաղափարներ և անորոշ կերպարանքներ կը ներկայանային, որոնք դրեթէ անմիջապէս անյայտ եղան և իր զդայութիները արթնցուցին։

Ցորեկը վալանթին իր դոյութեան վրայ դոնէ ապահով էր, քանդի Նուարթիէ ինքզինքը իր Թուռան սենեակը տանել կուտար և հոն կը ճնար իր հայրական խանդաղատալի նայուածքը անոր

վրայ յարելով. ետքը Վիլըֆօր ալ ատեանէն դառնալով մէկ կամ երկու ժամ իւր հօրը և զաւկին քովը կ'անցընէր։

Ժամը վեցին Վիլըֆօր իւր դահլիճը կը քաշուէր. ժամը ութին Պ. տ'Ավրինեի կու գար՝ ծաղկահաս աղջկան համար պատրաստուած դիշերուան դեղը իւր ձեռօքը բերելով. անկէ ետև Նուարթիէն ալ իւր սենեակը կը տանէին։

Վերջապէս երբ ամէն մարդ հիւանդին սենեկէն կը հեռանար, բժշկէն որոշուած խնամակալուհի մը Վալանթինի վրայ կը հրաւիրէր, և ան ալ ժամը տասին կամ տասն ու մէկին Վալանթինի քնացած միջոցին անկէ կը հեռանար։

Վար իջնելու առեն՝ Վալանթինի սենեկին բանալիները Պ. տը Վիլըֆօրին ձեռքը կը յանձնէր, այնպէս որ միայն տիկին տը Վիլըֆօրի և փոքր Էտուարի սենեակներէն անցնելով հիւանդին քովը կարելի էր երթալ։

Ամէն առտու Մորէլ Նուարթիէի սենեակը կու գար Վալանթինի վրայ լուր ստանալու համար. սակայն ինչ զարմանալի բան, օրէ օր Մորէլի անհանգստութիւնը կը նուազէր։

Վասն զի նախ՝ Վալանթին ալ օրէ օր աւելի կ'աղէկնար, թէև ջղային սաստիկ բորբոքման մը ենթակայ էր. երկրորդ՝ իւր շփոթութեան մէջ Մօնթէ–Քրիսթոյի դիմած առեն՝ կոմսը իրեն ըսած չէր որ եթէ Վալանթին երկու ժամէն չվեռնէր՝ պիտի ազատէր։

Վալանթին կենդանի էր տակաւին, և չորս օր անցեր էին։

Այս ջղային բորբոքումը Վալանթինը անհանդիստ կ'ընէր առնոր քնացած կամ թէ ըսենք անոր թմբրութեան առեն անգամ. այն առեն դիշերուան լռութեան և կրակարանին վրայ դրուած սպիտակ կիՃէ դիշերային կանթեղին կէս մթութեան մէջ այն ստուերները կը տեսնէր, որոնք հիւանդայ սենեակը կը լեցուին, և իրենց քստմնելի թևերովը սենեակը կը շարժեն։

Այն առեն իրեն այնպէս կ'երևէր թէ մերթ իւր մօրուն կը տեսնէ որ իրեն կ'ըսպառնար, և մերթ Մորէլը, որ իւր բազուկները իրեն կ'երկնցընէր, և մերթ իւր սովորական կենաց օտար էակներ, ինչպէս էր Մօնթէ–Քրիսթոյ կոմսը։

Իւր զառանցութեան ժամերուն մէջ մինչև կարասիները շարժուն և թափառող կ'երևէին, և այս բանս առտուան մինչև ժամը երկու կամ երեքը կը տևէր, որմէ ետքը ծաղկահաս աղջիկը ծանր քունի մը մէջ կ'ընկղմէր և մինչև առտու կը քնանար։

Էօժէնիին փախուստը և Պէնեդէթթոյի բռնուիլը լսած օրուան իրիկունը՝ հետզհետէ Վիլըֆօրի, տ'Ավրինեի և Նուարթիէի մեկնելէն ետև՝ երբ Վալանթինի զառանցանաց առարկաները սկսեր էին երևիլ, երբ Սէն–Ֆիլիփ եկեղեցւոյն ժամացոյցը տասն ու մէկ կը զարնէր, և երբ Վալանթինի խնամակալուհին բժշկէն պատրաստուած ըմպելին հիւանդին ձեռքին մօտ սեղանին վրայ դնելէն և սենեկին դուռը փակելէն ետև՝ ծառաներուն քունը երթալով՝ երեք ամէ 'ի վեր թագաւորի գործակալին նախասենեկին երեկոյթները սարսափեցընող աղէտալի պատմութիւնները մտիկ կ'ընէր, հիւանդին զգուշութեամբ փակուած սենեկին մէջ անակնունելի տեսարան մը տեղի ունեցեր էր։

Արդէն գրեթէ տասը վայրկեանէ 'ի վեր խնամակալուհին հեռացեր էր անկէ։

Վալանթին ժամէ մը 'ի վեր ամէն գիշերուան իւր վրայ եկած ջերմէն տաղնապելով, ակամայ իւր գլուխը կը յանձնէր ուղեղին յուզեալ, միօրինակ և եռանդալի աշխատութիւնը շարունակելու համար, որ անդադար կը յոդնէր նոյն խորհուրդները և նոյն մտացածին տեսիլները յղանալու։

Գիշերային ձրագին պատրոյգէն տարօրինակ երևոյթներով ձաձանչներ կը ցայտէին, երբ յանկարծ անոր դողդոջուն ցոլացումին մէջէն Վալանթինի այնպէս երևցաւ թէ կրակարանին մօտ պատին խոռոչաձոր կողմը եղած դրքադարանին կամայ մը բացուիլը կը տեսնէ՝ առանց անոր ծխնիներուն ձայնը լսուելու։

Ուրիշ ժամանակ՝ Վալանթին կրնար զանգակին մետաքսեայ ժապաւէնը ձեռքն առնուլ և օգնութիւն կանչել. սակայն իւր այն կացութեանը մէջ իւր զարմանքը պրաւող բան մը չկար։

Այնպէս համոզուած էր որ վինքը ջրջապատող երևոյթները իւր զառանցութեան ծնունդն են. քանզի ամէն առտու կը տեսնէր որ գիշերուան երևոյթներուն հետքը անդամ չէր մնար, և ցորեկուան լոյսին հետ աներևոյթ կ'ըլլային անոնք։

Դրան եաին մարդկային դէմք մը երևցաւ։

Վալանթին իր ջերմին մէջ այս տեսակ երևոյթներուն ընտանեցած ըլլալուն՝ անոնցմէ չէր վախնար. միայն իր աչքը աղէկ մը բացաւ որպէս զի տեսնէ թէ երևցողը Մորէլն է։

Երևոյթը իր անկողնոյն մօտենալով կեցաւ. կ'երևէր թէ խորին ուշադրութեամբ մարիկ կ'ընէր։

Այս միջոցին կանթեղին լոյսը դիշերային այցելուին դիմացը վրայ զարկաւ։

— Ան չէ —, մրմռաց Հիւանդը։

Եւ կարծելով թէ երազ կը տեսնէ, սպասեց որ այն մարդը աներևոյթ ըլլայ, ինչպէս որ երազի ժամանակ կը պատահի, և կամ ուրիշ անձի փոխուի։

Իր երակին զարկը բռնեց, և անոր ուժգին բաբախումը ղողալով միտքը եկաւ որ այս տարօրինակ երևոյթները աներևոյթ ընելու լաւագոյն միջոցը գեղը խմելն էր. իր յուզմունքը հանդարտեցընելու նպատակաւ բժշկէն խնդրած այս ըմպելիքին ղովութիւնը Վալանթինի ջերմը թեթևցընելով իր ուղեղը կը հանդարտեցընէր, և քիչ մը ատեն իր տպաւորութիւնները կը նուաղէր։

Ուստի Վալանթին իր ձեռքը երկնցուց, որպէս զի այն դեղը պարունակող վանակնեայ բաժակը առնու. բայց իր դողդոջուն բազուկը անկողնէն դուրս երկնցուցած միջոցին՝ երևոյթը առաջանալ աւելի շուտով երկու քայլ անկողնոյն մօտեցաւ, և ծաղկահաս աղջկան այնչափ մօտեցաւ որ Հիւանդը անոր շնչառութիւնը լսեց և այնպէս կարծեց թէ իր ձեռքը կը բռնէ։

Այս անգամ մահացածին կամ՝ թէ ըսենք ստոյգ երևոյթը միևչև այն ատեն Վալանթինի զգայուածներուն սահմանը կ'անցընէր. Հիւանդը սկսաւ իր թմբրութիւնը թօթվել և իր արթնութիւնը ստուգել, և տեսնելով որ տեսածը ցնորք մը չէ ու իր խելքը ղլուխն է՝ վախցաւ։

Վալանթինի ձեռքը բռնելուն նպատակն էր արդիլել զան։

Վալանթին կամայ մը ձեռքը քաշեց։

Այն ատեն՝ երևոյթը, որուն աչքը իր վրայէն չէր վերցներ, և որուն նայուածքը աւելի պաշտպանողական կ'երևէր քան թէ

եպատակական, բաժակը առաւ, Հրաշալի մօտեցուց, և դողդոջ առնոր թափանցկութիւնն ու յստակութիւնը քննելու համար ըմպելիին նայեցաւ։

Բայց այս առաջին փորձով չբաւականացաւ։

Այն մարդը, կամ թէ ըսենք, այն երևոյթը, քանզի այնչափ կամաց կը՛քալէր որ իր քայլերուն ձայնը օթոցին վրայ չէր լսուեր, դդալ մը ըմպելիէն առաւ և խմեց։

Վալանթին այս գործողութիւնները ապշութեան խորին զգացումով մը կը դիտէր։

Անշուշտ կը կարծէր որ այս երևոյթը շուտով աներևոյթ պիտի ըլլար և անոր տեղը ուրիշ տեսարան մը պիտի բացուէր. սակայն մարդը փոխանակ ստուերի մը պէս աներևութանալու՝ իրեն մօտեցաւ, և բաժակը Վալանթինին երկնցընելով՝ յուզեալ ձայնիւ մը ըսաւ.

— Խմեցէ՛ք Հիմա . . . —։

Վալանթին սարսռաց։

Առաջին անգամն էր որ այս երևոյթներէն մէկը կենդանի ձայնով իրեն հետ կը խօսէր։

Բերանը բացաւ որ ձայն մը հանէ. բայց մարդը իր մատը շրթանց վրայ դրաւ։

— Պ. Մօնթէ–Քրիսթոյ կ'ամեն է —, մրմռաց Վալանթին։

Ծաղկահաս աղջկան աչաց մէջ նկարուած սարսափը, անոր ձեռաց դողդոջիլը, վերմակին մէջ կծկուելու համար արագ շարժումը յայտնի կը ցուցընէին իր համոզմանը դէմ ունեցած վերջին մրցումը. քանզի այնպիսի ժամու մէջ Մօնթէ–Քրիսթոյի ներկայութիւնը, դաղտնի, երևակայական և անիմանալի կերպով պատի մը մէջէն իր սենեակը մտնելը Վալանթինի յուզեալ մտացը անկարելութիւններ կ'երևէին։

— Մարդ մի՛ կանչէք և մի՛ վախնաք, ըսաւ կոմսը. կասկածի մը երևոյթին ու անհանգստութեան մը ստուերն անգամ ձեր սրտէն հեռացուցէք, ձեր առջևը երևցած մարդը, (քանզի այս անգամ իրաւունք ունիք, Վալանթին, տեսածնիդ առ աչօք տեսիլ մը չէ), ձեր առջևը երևցած մարդը այնպիսի խանդաղատալի հայր

մը և՝ այնպիսի պատուաւոր բարեկամ մ՚է, որ երբէք մտքերնէդ անցուցած չէք — ։

Վալանթին պատասխան մը չդտաւ որ տայ. իրեն հետ խօսողին ստոյգ ձայնը յայտնող այն ձայնէն այնչափ սաստիկ կը վախնար, որ իւր ձայնը անոր հետ խառնելու կը սոսկար. սակայն իւր դողաստարսափ նայուածքը կ՚ուզէր ըսել. « Եթէ ձեր դիտաւորութիւնները անմեղ են, ինչո՞ւ ուրեմն այս ժամուս հոս կը գտնուիք » ։

Իւր հիանալի խորամտութեամբը կոմսը ծաղկահաս աղջկան սրտէն բոլոր անցածները հասկըցաւ ։

— Մտիկ ըրէք, ըսաւ, կամ գոնէ երեսս նայեցէք. աչերս կարմրած են և դէմքս սովորականէն աւելի դունատեալ. պատճառը այն է որ չորս դիշերէ՝ի վեր վայրկեան մը աչքս չգոցեցի, չորս դիշերէ՝ի վեր ձեր վրայ կը հսկեմ, զձեզ կը պաշտպանեմ, ու զձեզ ձեր Մաքսիմիլիէն բարեկամին համար կը պահպանեմ — ։

Ուրախալի արիւն մը իսկոյն հիւանդին այտերը շառագնեց. վասն զի կոմսին արտասանած անունը անոր իրեն ազդած կասկածը փարատեց ։

— Մաքսիմիլիէն . . . , կրկնեց Վալանթին՝ այնչափ այս անունը քաղցր կ՚երևէր իրեն արտասանելու, ուրեմն Մաքսիմիլիէն ամեն բան խոստովանեցաւ ձեզ ։

— Ամեն բան. ինձ ըսաւ որ իւր կեանքը ձեր կեանքէն կախեալ է, և ես խոստացայ անոր որ զձեզ մահուանէ ազատեմ ։

— Խոստացաք որ մահուանէ ազատէք զիս ։

— Այո ։

— Ուրեմն բժիշկ էք դուք ։

— Այո, և այս միջոցիս Աստուած ինձմէ աղէկ բժիշկ մը չէր կրնար ղրկել ձեզ, հաւատացէք ինձ ։

— Իմ վրաս հսկեցիք կ՚ըսէք, ըսաւ Վալանթին անհանգստութեամբ մը, բայց ուրկից, ես չտեսայ զձեզ — ։

Կոմսը իւր ձեռքը դրքադարանին կողմը երկնցուց ։

— Այս դրան ետին պահուած էի, ըսաւ, և այս դուռը քովի տանը մէջ կը բացուի, զոր ես վարձած եմ — ։

Վալանթին ամօթխած սէգութեան շարժմամբ մը աչքերը դարձուց, և խիստ մեծ սոսկումով մը ըսաւ.

— Պարոն, ձեր այդ ըրածը տարօրինակ անխոհեմութիւն մ՚է, և ձեր ինձ ընորհած պաշտպանութիւնը թշնամանքի մը խիստ կը նմանի ։

— Վալանթին, ըսաւ կոմսը, ձեր վրայ այնչափ երկար ժամանակ հսկելու միջոցիս՝ իմ տեսածներս ձեր սենեակը եկողները, ձեզի համար պատրաստուած կերակուրները և ըմպելիները էին միայն. երբ այն ըմպելիները վտանգաւոր երևէին ինձ, հիմակուան պէս ներս կը մտնէի, բաժակիդ կը պարպէի, և այն թոյնին տեղը առողջարար ըմպելի մը կը դնէի, որ ձեզի համար պատրաստուած մահուան տեղ՝ կեանք կը շնորհէր ձեզ ։

— Թոյն և մահ կ՚ըսէք, գոչեց Վալանթին կարծելով թէ վերստին զառանցութեան մէջ կ՚իյնայ. այդ ինչ խօսքեր են, պարոն ։

— Լռէ, աղջիկս, ըսաւ Մոնթէ–Քրիսթօ վերստին իւր մատը շրթանցը վրայ դնելով, այո՛, թոյն ըսի, և կը կրկնեմ, մահ պատրաստուած էր ձեզի համար. բայց նախ խմեցէք այս դեղը ։ (Կոմսը իւր ծոցէն սրուակ մը հանեց, ու անոր մէջ պարունակուած կարմիր ջուրէն քանի մը կաթիլ բաժակին մէջ կաթեցուց)։ Եւ ասկէ ետքը ուրիշ բան մի՛ ուտէք բայց այս դիշեր — ։

Վալանթին ձեռքը երկնցուց, բայց բաժակին չդպցուցած սոսկումով ետ քաշեց ։

Մոնթէ–Քրիսթօ բաժակն առաւ և կէսը խմելէն ետև Վալանթինին ներկայացուց, որ ժպտելով ըմպելիքին մնացեալը խմեց ։

— Ո՛հ, այո՛, ըսաւ ծաղկահաս աղջիկը, իմ դիշերային դեղերուս համը ունի, այն ըմպելիքին, որ սրտիս զովութիւն և ուղեղիս հանգարտութիւն կու տայ. շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ ։

— Ահա այս կերպով չորս դիշեր կարող եղաք ապրելու, Վալանթին, ըսաւ կոմսը ։ Սակայն ես ինչ կերպով կ՚ապրէի. ո՛հ, ինչ անտանելի ժամեր կ՚անցընէի, և ինչ ահռելի տառապանաց մէջ կը մաշէի, երբ ձեր բաժակին մէջ մահացու թոյնին դրուի-

լը կը տեսնէի, և կը վախնայի որ չըլլայ թէ զայն կրակարանին մէջ թափելու հասնելէս առաջ դուք խմէք։

— Բաժակիս մէջ մահացու թոյն դրուիլը տեսնելով՝ տառապանքներ կը կրէիք կ՚ըսէք, պարոն, կրկնեց Վալանթին սոսկումով պաշարուած. ուրեմն՝ եթէ բաժակիս մէջ թոյն դրուիլը տեսած, անշուշտ թոյնը դնող անձն ալ տեսած էք։

— Այո՛, տեսայ —, պատասխանեց կոմսը։

Վալանթին իր անկողնոյն մէջ ելաւ նստաւ, և ձիւնէն աւելի սպիտակ կուրծքը բանուած բարակ կտաւով ծածկելով, որ զառանցութեան պաղ քրտինքէն խոնաւցած ըլլալէն զատ՝ սոսկումի տառած քրտինքն ալ կ՚ըսկսէր անոր հետ խառնուիլ։

— Դուք տեսաք զան, կրկնեց նորատի աղջիկը։

— Այո՛, ըսաւ երկրորդ անգամ կոմսը։

— Այդ ինչ սոսկալի խօսք է որ կ՚ըսէք, պարոն. ինձ հաւատացընել ուզածնիդ դժոխային գործ մ՚է։ Ինչ, իմ հօրս տան և իմ սենեկիս մէջ ու իմ վշտացս անկողնոյն վրայ կ՚ուզեն սպանո՞ղ ըլլս. ո՛չ, հեռացէք ասկէ, պարոն. դուք իմ խիղճս կը փորձէք, և աստուածային բարութեան դէմ կը հայհոյէք. անկարելի է, պարոն, չկրնար ըլլալ։

— Մի՛թէ այն ձեռքէն թունաւորուողներուն առաջի՞նն էք դուք, Վալանթին։ Ձեր բոլորտիքը Պ. որ Սէն–Մէրանին, տիկին որ Սէն–Մէրանին և Պարուային մեռնիլը չտեսա՞ք. և Պ. Նուարթիէին մեռնիլն ալ պիտի չտեսնէի՞ք, եթէ այն ծերունին երեք տարիէ՝ի վեր ոսվորութիւն ըրած չըլլար իւր դեղերուն մէջ թոյն դործածել և թոյնին դէմ թոյնով մրցիլ։

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ Վալանթին. այս է պատճառը ուրեմն որ պրեթէ տանէ մը՝ի վեր հաւս կը պնդէ որ իւր ըմպելիներուն մասնակից ըլլամ։

— Անոր ըմպելիները կէս չորցած նարնջի կեղևի պէս դառն համ մը ունին, այնպէս չէ՞, հարցուց Մօնթէ–Քրիսթօ։

— Այո՛, այո՛։

— Ո՛հ, հիմա ամէն բան կը հասկընամ, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ, ուրեմն ձեր հաւն ալ պիտէ որ ձեր տան մէջ թունաւորող

մը կայ և դուք թունաւորողն ալ կը ճանչնայ։ Դուք անոր խիստ սիրելի թռուը ըլլալնուդ՝ զձեզ մահացու թոյնէն պզուշայուցեր է, և այն մահացու թոյնը ձեր սկսած սովորութեան դէմ ազդեցութիւն չէ ըրեր. ահա ինչ կերպով դուք կենդանի էք տակաւին, որուն պատճառը ես չէի կրնար հասկընալ, որ չորս օր առաջ այնպիսի զօրաւոր թոյնով թունաւորուած ըլլաք և տակաւին չմեռնիք։

— Բայց ո՞վ է այդ թունաւորողը, այդ մարդասպանը։

— Ես ալ ձեղի կը հարցընեմ. գիշերը ձեր սենեակը մտնողն մտնելը տեսած չէք։

— Այո՛։ Շատ անգամ կը կարծէի թէ ուրուականներ կը տեսնեմ, որոնք լինջի կը մօտենային, կը հեռանային և աներևոյթ կ՚ըլլային. բայց ես զանոնք իմ ջերմիս տանջանքէն դոյացած երևոյթներ կը կարծէի, և հիմա ալ երբ դուք սենեակս մտաք, երկար ժամանակ կարծեցի թէ կամ կը զառանցեմ և կամ կ՚երազեմ։

— Ուրեմն ձեր կենսայ թշնամի եղող անձը դուք չէք ճանչնար։

— Ո՛չ, ըսաւ Վալանթին. բայց ինչ պատճառ մէկը իմ մահուանս պիտի փափաքի։

— Ուրեմն հիմա պիտի ճանչնաք զան, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ ականջ դնելով։

— Ի՞նչ կերպով, հարցուց Վալանթին սարսափով իւր բոլորտիքը նայելով։

— Վասն զի՝ այս գիշեր ո՛չ ջերմ ունիք և ոչ զառանցութեան մէջ կը գտնուիք, վասն զի այս գիշեր արթուն էք, վասն զի առաջին անգամ է որ այս գիշեր կը հնչէ, և մարդասպաններուն ժամանակը կէս գիշերն է։

— Ո՛վ Աստուած իմ, ո՛վ Աստուած իմ—, ըսաւ Վալանթին իւր ճակտէն մարգարտի նման վաղած քրտինքը ձեռքովը սրբելով։

Իրօք ժամացոյցը յամր և տխուր կերպով կէս գիշեր կը հընչէր. և անոր իւրաքանչիւր հնչիւնը ծաղկահաս աղջիկը կը կարծեր թէ պղնձեայ ուժգին հարուածներ են իւր սրտին վրայ։

— Վալանթին, շարունակեց կոմսը, բոլոր այժմիդ ամբո-

փեցէք, ձեր սրտին բաբախումը զսպեցէք, ձայներնիդ կոկորդնուդ մէջ արգիլեցէք, քուն ձեւացուցէք և պիտի տեսնէք, այո՛, պիտի տեսնէք — :

Վալանթին կոմսին ձեռքը բռնեց :

— Կարծեմ թէ շշուկ մը կը լսեմ, ըսաւ, հեռացէք ասկէ :


— Մնաք բարեաւ, պատասխանեց կոմսը, և կամ վերստին տեսնուինք — :

Ետքը այնպիսի տխուր և հայրական ժպիտով մը, որմէ ծաղկահաս աղջկան սիրտը երախտագիտութեան զգացմամբ շարժեցաւ, ոտքին ծայրովը քալելով դրքագարանին դրան մօտեցաւ :

Բայց զայն գոցելէն առաջ երեսը վերստին դարձընելով՝

— Ամենևին շարժում մը մի՛ ընէք, ըսաւ, ձայն մը մի՛ հանէք, թող զձեզ քնացած կարծեն, եթէ ոչ՝ դուք օդնութեան հասնելէս առաջ՝ զձեզ սպաննել ուզեն — :

Եւ այս սոսկալի պատուէրէն ետև՝ կոմսը դրան ետին անհրևոյթ եղաւ, որ լռութեամբ իր վրայ գոցուեցաւ :



ԳԼՈՒԽ Բ

ԼՈՒՏԻՈՍԹ

Վալանթին առանձին մնաց. Սէն–Փիլիփ եկեղեցւոյն ժամացոյցէն ետ մնացող երկու ուրիշ ժամացոյցներ տարբեր միջոցներով կէս գիշերը հնչեցին :

Ետքը՝ քանի մը հեռաւոր կառքերու ձայներէն զատ՝ ամեն կողմ լռութիւնը տիրեց :

Ան ատեն Վալանթինի բոլոր ուշադրութիւնը իր սենեկին ժամացոյցին վրայ կեդրոնացաւ, որուն ճօճանակը մանրերկրորդները կը նշանակէր :

Մանրերկրորդները համրելով դիտեց որ անոնք իր սրտի բաբախումէն կրկնակի յամրաքայլ էին :

Այսու ամենայնիւ դարձեալ կը տարակուսէր. անմեղ Վալանթինը չէր կրնար երևակայել որ մէկը իր մահուան փափաքի. ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակաւ, և ի՞նչ չարութիւն մը պործած էր որ թշնամի մը ունենար :

Երկիւղ մը չունէր որ քնանար :

Սոսկալի մտածմունք մը միայն իր միտքը գրաւած էր. աշխարհիս մէջ անձ մը կար որ զինքը սպաննելու փորձ փորձեր էր, և վերստին պիտի փորձէր :

Ի՛նչ պիտի ընէր Վալանթին եթէ այս անգամ այն անձը թոյնին անազդեցութենէն ձանձրացած՝ Մօնթէ–Քրիսթոյի ըսածին պէս սուրի դիմէր, եթէ կոմսը օդնութեան հասնելու ժամանակ չունենար, եթէ ինքը իր վերջին վայրկենին հասնելով Մորէլը չվարեններ տեսնել :

Այս մտածութեան մէջ, որ իր դէմքը կապոյտ դեղնութեամբ մը և միանգամայն սառած քրտինքով մը պատեց, Վալանթին պատրաստուեր էր զանգակին ժապաւէնը քաշելու և օդնութիւն կանչելու :

Բայց իրեն այնպէս երևցաւ թէ դրքադարանին դրան մէջէն կոմսին աչաց փայլիլը կը տեսնէ, այն աչաց, որ իւր վրայ կը հսկէր, և այն ատելիձան զինքը ամբաստար կ'ընէր որ ծաղկահաս աղջիկը ինքն իրեն կը հարցընէր թէ՝ արդեօք կոմսին այս անխորհուրդ բարեկամութեան փոխարէն պիտի կրնար իւր երախտագիտութիւնը յայտնել:

Այս կերպով երեսուն վայրկեան և Վալանթինի համար երեսուն անվերջ դարեր անցան:

Վերջապէս ժամացոյցը մանրերկրորդ մը առաջ ձայն հանելով՝ հնչական սկահին վրայ հարուած մը զարկաւ:

Նոյն միջոցին կոմսը դրքադարանին տախտակը ըղունդովը հարկաւ լսելի կերպով քերելով՝ կ'իմացընէր Վալանթինին որ միշտ անոր վրայ կը հսկէ և կը հրամայէր որ արթուն կենայ:

Վալանթինի այնպէս երևցաւ թէ դրքադարանին դիմացի կողմը, այսինքն Էտուարի սենեկին մէջ տախտակամածին վրայ քալելու ձայներ կը լսէ:

Իւր գրեթէ հեղձեալ շնչառութիւնը արգիլելով՝ ականջ դրաւ, նիզին երկաթը կռնչեց, և դուռը ծխնիներուն վրայ դարձաւ:

Վալանթին, որ իւր արմկան վրայ եղեր էր, հարկաւ ժամանակ ունեցաւ ինքզինքը անկողնոյն վրայ ձգելու և իւր աչերը թևերուն տակը պահելու:

Եւ անպատում սոսկումով, յուզմամբ և դողդողալով սպասեց:

Մէկը անկողնոյն մօտեցաւ և վարագոյրը բացաւ:

Վալանթին իւր բոլոր ոյժը ամփոփեց և հանդարտ քուն մը յայտնող շնչառութեան մը կանոնաւոր մրմունջը հանեց:

— Վալանթին —, լսաւ կամաց մը ձայնը:

Ծաղկահաս աղջիկը իւր սրտին մինչև խորը սարսռաց, բայց ամենևին չպատասխանեց:

— Վալանթին —, կրկնեց նոյն ձայնը:

Վալանթին դարձեալ լուռ կեցաւ. քանդի խօսք տուեր էր որ արթուն ըլլալը ամենևին չյայտնէ:

Այն ատեն լռութիւնը տիրեց:

Միայն Վալանթինի բաժակին մէջ հեղուկի մը թափուելուն անդադար ձայնը կը լսուէր:

Այն ատեն ծաղկահաս աղջիկը համարձակեցաւ իւր երկնցուցած թևերն տակէն իւր արտևանունքը կիսով չափ բանալու:

Գիշերային սպիտակ զգեստով կին մը տեսաւ, որ սրուակի մը հեղուկը իւր բաժակին մէջ կը պարպէր:

Այն կարճ միջոցին մէջ՝ դուշէ Վալանթին իւր ընչաւութիւնը արգիլեց կամ անտարակոյս շարժում մը ըրաւ. քանդի կինը անհպստութեամբ մը կանգ առաւ և դէպ 'ի հիւանդին անկողինը հակեցաւ, որպէս զի աղէկ մը տեսնէ թէ ստուգիւ Վալանթին քնացա՞ծ էր:

Տիկին տը Վիլֆօրն էր ան:

Վալանթին իւր մօրուն ձանչնալով, այնպիսի ուժգին կերպով սարսռաց, որ իւր անկողնոյն շարժում մը պատճառեց:

Տիկին տը Վիլֆօր իսկոյն պատին տակը քաշուեցաւ, և հոն անկողնոյն առադաստին ետին ապաստանուած՝ Վալանթինի մինչև ամենաթեթև շարժումը լուութեամբ և ուշադրութեամբ կը դիտէր:

Ծաղկահաս աղջիկը Մոնթէ-Քրիսթոյի սոսկալի խօսքերը յիշեց. իրեն այնպէս երևցաւ թէ իւր մօրուն միւս ձեռքը երկար և սուր դաշոյնի մը փայլիլը կը տեսնէ:

Այն ատեն Վալանթին իւր կամքի զօրութիւնը իրեն օգնութեան կանչելով՝ ջանաց իւր աչքերը դոցելու. սակայն մեր ղպայարաքանդ ամենէն երկիւղալի այս գործը, որ սովորաբար այնչափ քնական է, այս միջոցիս գրեթէ անկարելի կ'ըլլար կատարելը, այնչափ անյագ հետաքրքրութիւնը կը գրգռէր իւր արտևանունքը բացուելու և ճշմարտութիւնը ստուգելու:

Սակայն տիկին տը Վիլֆօր Վալանթինի ընչաւութեան կանոնաւոր ձայնը վերստին սկսիլը տեսնելով և ապահովապէս կարծելով որ հիւանդը քնացած է՝ իւր բաղուկը երկնցուց և անկողնոյն գլխին կողմի ամփոփուած առադաստին ետին կէս մը պահուած՝ իւր սրուակին մէջ մնացած հեղուկին մնացորդը պարպեց:

Ետքը այնպիսի զգուշութեամբ և անձայն հեռացաւ անկէ որ Վալանթին չիմացաւ:

Միայն այն բազկին աներևութանալը տեսեր էր, որ քսան և հինգ տարեկան նորատի և գեղեցիկ կնոջ մը կլոր և մատղաշ

քաղուկն էր և իւր բաժակին մէջ մահուան հեղուկը կը թափէր։

Անկարելի է տիկին տը Վիլըֆօրի մէկ ու կէս վայրկեան իւր սենեակը կեցած միջոցին Վալանթինի զգացածը նկարագրել։

Գրքադարանին վրայ ըղունդի քերումը նորատի աղջիկը անզգայութեան նմանող թմբրութենէն սթափեց։

Վալանթին իւր գլուխը սոսկումով վեր վերցուց։

Գրքադարանին դուռը երկրորդ անգամ իւր ծխնիներուն վրայ դարձաւ և Մօնթէ–Քրիսթօ երևցաւ։

— Ըսէք հիմա, ըսաւ կոմսը, դեռ կը տարակուսի՞ք։

— Ո՛հ, Տէր Աստուած, մրմնաց ծաղկահաս աղջիկը։

— Տեսա՞ք։

— Ափսո՛ս։

— Ճանչցա՞ք զան —։

Վալանթին հառաչանք մը հանեց։

— Այ՛, ըսաւ, բայց ինձ անհատական կ'երևի։

— Ուրեմն աւելի՛ կ'ընտրէք մեռնիլ և Մաքսիմիլիէնի ալ մահուան պատճառ ըլլալ...։

— Ո՛վ Աստուած, ո՛վ Տէր իմ Աստուած, կրկնեց ծաղկահաս աղջիկը դրեթէ շուարած. բայց այս տունէն պիտի չկրնամ մեկնիլ և ազատիլ արդեօք...։

— Վալանթին, զձեզ հալածող ձեռքը ամէն տեղ ետևնէդ պիտի հասնի. ստակի ուժով ձեր ծառաները պիտի հրապուրուին, և մահը ամէն երևոյթներով ձեր առջևը պիտի ներկայանայ եթէ աղբիւրէն խմած ջուրերնուդ և եթէ ծառէն կտրած պտուղնուդ մէջ։

— Բայց դուք ըսիք թէ թոյնէն չվնասուելու համար հաւս նախազուշութեամբ զօրացուցած է ղիս։

— Մէկ տեսակ թոյնէն և այն երբ փոքր քանակութեամբ դործածուած է։ Կրնան թոյնը փոխել կամ քանակութիւնը աւելցընել —։

Կոմսը բաժակը առաւ և իւր շուրթերը անոր մէջի հեղուկով թրջեց։

— Ահա, ըսաւ, արդէն փոխեր են, այս անգամ բևեռնի թոյնով չեն նաև գործուած։ Ես ալ ձեզ պէս ղիս կը հալածէ։

— Բայց, ո՛վ Աստուած իմ, գոչեց ծաղկահաս աղջիկը, լինչո՞ւ արդեօք այսպէս ղիս կը հալածէ։

— Ա՛յնչափ քաղցր ու այնչափ բարեսիրտ էք, և այնչափ այս եղեռնագործութեան չէք հաւատար, որ չէք հասկըցեր, Վալանթին։

— Իրաւունք ունիք, ըսաւ ծաղկահաս աղջիկը. վասն զի ես անոր չարութիւն մը ըրած չեմ։

— Պատճառը այն է որ դուք հարուստ էք, Վալանթին, վասն զի երկու հարիւր հազար ֆրանք եկամուտ ունիք, և դուք այն երկու հարիւր հազար ֆրանք եկամուտը անոր զաւկէն կը յափշտակէք։

— Ի՛նչպէս, իմ հարստութիւնս իրեն չվերաբերիր. քանզի իմ ծնողքէս ժառանգած եմ զայն։

— Անտարակոյս, և ահա այս է պատճառը որ Պ. և տիկին տը Սէն–Մէրան մեռան, որպէս զի դուք անոնց հարստութիւնը ժառանգէք. ահա այս է պատճառը որ Պ. Նուարթիէ ալ զձեզ իւր ժառանգը ըրած օրէն՝ թունաւորուելու ենթակայ եղած էր. և դուք ալ՝ այս պատճառաւ պիտի մեռնէիք, Վալանթին, որպէս զի Պ. տը Վիլըֆօր ձեր հարստութիւնը ժառանգէ, և ձեր եղբայրն անոր միակ զաւակը ձեալով՝ ձեր հօրը հարստութիւնը ժառանգէ։

— Էտուար, ո՛հ, խեղճ զաւակ, անո՛ր համար այսչափ մեղքեր կը գործուին։

— Ո՛հ, վերջապէս հասկըցա՛ք։

— Ո՛հ, ո՛վ Աստուած, մի՛ թողուր որ այսչափ եղեռնագործութեանց մեղքը անոր վրայ իյնայ։

— Հրեշտակ մ'էք, Վալանթին։

— Բայց իմ հաւս թունաւորելէ ետ կեցած են։

— Անշուշտ մտածեր են որ ձեր եղբայրը բնականաբար ամէն

նուվ չէն թունաւորեր զձեզ, այլ պարզ թմբրեցուցիչ դեղով մը։ անոր հոտէն կը ճանչնամ։ Ո՛հ, Վալանթին, Վալանթին, եթէ ձեր բաժակին մէջ տիկին տը Վիլըֆօրի դրած այս ըմպելին խմէիք, անշուշտ կորսուած էիք։

— Բայց, ո՛վ Աստուած իմ, գոչեց ծաղկահաս աղջիկը, լինչո՞ւ արդեօք այսպէս ղիս կը հալածէ։

— Ա՛յնչափ քաղցր ու այնչափ բարեսիրտ էք, և այնչափ այս եղեռնագործութեան չէք հաւատար, որ չէք հասկըցեր, Վալանթին։

— Իրաւունք ունիք, ըսաւ ծաղկահաս աղջիկը. վասն զի ես անոր չարութիւն մը ըրած չեմ։

— Պատճառը այն է որ դուք հարուստ էք, Վալանթին, վասն զի երկու հարիւր հազար ֆրանք եկամուտ ունիք, և դուք այն երկու հարիւր հազար ֆրանք եկամուտը անոր զաւկէն կը յափշտակէք։

— Ի՛նչպէս, իմ հարստութիւնս իրեն չվերաբերիր. քանզի իմ ծնողքէս ժառանգած եմ զայն։

— Անտարակոյս, և ահա այս է պատճառը որ Պ. և տիկին տը Սէն–Մէրան մեռան, որպէս զի դուք անոնց հարստութիւնը ժառանգէք. ահա այս է պատճառը որ Պ. Նուարթիէ ալ զձեզ իւր ժառանգը ըրած օրէն՝ թունաւորուելու ենթակայ եղած էր. և դուք ալ՝ այս պատճառաւ պիտի մեռնէիք, Վալանթին, որպէս զի Պ. տը Վիլըֆօր ձեր հարստութիւնը ժառանգէ, և ձեր եղբայրն անոր միակ զաւակը ձեալով՝ ձեր հօրը հարստութիւնը ժառանգէ։

— Էտուար, ո՛հ, խեղճ զաւակ, անո՛ր համար այսչափ մեղքեր կը գործուին։

— Ո՛հ, վերջապէս հասկըցա՛ք։

— Ո՛հ, ո՛վ Աստուած, մի՛ թողուր որ այսչափ եղեռնագործութեանց մեղքը անոր վրայ իյնայ։

— Հրեշտակ մ'էք, Վալանթին։

— Բայց իմ հաւս թունաւորելէ ետ կեցած են։

— Անշուշտ մտածեր են որ ձեր եղբայրը բնականաբար ամէն

հարստութեանց տէր պիտի ըլլայ, միայն եթէ վճռքը ժառանգութենէ զրկել չուզեն, և վերջապէս Պ. Նուարթիէն ալ թոռնուորելը անօգուտ ըլլալէն զատ՝ կրկնակի վտանգաւոր ալ էր։

— Եւ այս եղեռնագործութեան գաղափարը կնո՞ջ մը մտքին մէջ ծնունդ առած է. ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ։

— Մտքերնիդ բերէք Ռէրուզ քաղաքը, պանդոկին ձողաբարձը և այն կապոյտ վերարկուով մարդը, որուն ձեր մօրուն դեղերու վրայօք հարցուփորձ կ'ընէր. այն ժամանակէն այս դժոխային խորհուրդը իւր ուղեղին մէջ կը տածէր։

— Ո՛վ պարոն, դուէք ծաղկահաս սիրուն աղջիկը աչերը արտասուօք լցուած, եթէ այդպէս է՝ կը տեսնեմ որ մեռնելու դատապարտուած եմ։

— Ոչ, Վալանթին, ոչ. վասն զի անոր լարած որոգայթները դուշակած եմ ես, ոչ, վասն զի ձեր թշնամին յայտնուելով յաղթուած է. պիտի ապրիք դուք, Վալանթին, և անշուշտ պիտի ապրիք սիրելու և սիրուելու, երջանիկ ըլլալու և ալնիւ սիրտ մը երջանկացընելու համար. բայց ապրելու համար, Վալանթին, պէտք է որ բոլորովին վստահ ըլլաք իմ վրաս։

— Հրամայեցէք, պարոն, ինչ պէտք եմ ընել։

— Պէտք է որ իմ տալու դեղս կուրօրէն առնուք։

— Ո՛հ, վկայ ըլլայ երկինքը, դուէք Վալանթին, որ եթէ ես աշխարհի մէջ առանձին ըլլայի, յօժարութեամբ կ'ուզէի մեռնիլ։

— Ամենևին մեկու վրայ պէտք չէ որ վստահիք և ոչ իսկ ձեր հօրը։

— Բայց Հայրս այս ահռելի ոճիրին մասնակից չէ, այնպէս չէ՞, պարոն, ըսաւ Վալանթին ձեռքը միացընելով։

— Ոչ. սակայն ձեր Հայրն ալ, որ դատաստանական ամբաստանութեանց սովորած մարդ մ'է, պէտք էր կասկածիլ որ իւր տան մէջ իրարու եւս պատահած մահերը բնական չեն։ Ձեր Հայրը կը պարտաւորէր ձեր վրայ հսկել, և այս ժամուս իմ տեղս ան ըլլալ պէտք էր. այս բաժակը պարպելը, մարդասպանին եւս եւս իյնալը անոր պարտքն էր։ Ճիւաղի դէմ ճիւաղ պէտք է, մրմռայ կոմսը իւր խօսքը ցած ձայնով վերջացընելով։

— Պարոն, ըսաւ Վալանթին, ապրելու համար ամեն բան ընելու պատրաստ եմ. քանզի աշխարհիս մէջ երկու էակներ կան, որոնք այնչափ կը սիրեն զիս, որ եթէ ես մեռնիմ, անոնք ալ պիտի մեռնին, և որոնք են Հաւս և Մաքսիմիլիէնը։

— Ինչպէս որ ձեր վրայ հսկեցի, անոնց վրայ ալ պիտի հսկեմ։

— Ուրեմն, պարոն, ձեր հրամանը կատարելու պատրաստ եմ. ինչ որ կ'ուզէք՝ ըրէք ինծի — , ըսաւ Վալանթին։

Եաքը կամայ ձայնով՝

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, ըսաւ, ինչ պիտի պատահի արդեօք ինծի։

— Ի՛նչ որ պատահի, Վալանթին, չըլլայ որ վախնաք. եթէ անհանգստութիւն մը ղդաք, ձեր տեսութիւնը, լսողութիւնը, շարժողութիւնը կորսնցընէք, ամենևին մի՛ վախնաք. եթէ առանց ուր ըլլալնիդ գիտնալու արթննաք՝ եթէ շերմի մէջ իսկ գտնուիք և եթէ դագաղի մէջ, պէտք չէ որ վախնաք. իսկոյն խելքերնիդ ղլուխնիդ բերէք և դուք ձեզի ըսէք. — Այս ժամուս՝ իմ ու Մաքսիմիլիէնի բարօրութեանը փափաքող բարեկամ մը, հայր մը և մարդ մը իմ վրաս կը հսկէ։

— Ափսո՛ս, ափսո՛ս, ինչ սոսկալի վիճակ մ'է այս։

— Վալանթին, ձեր մօրուն ամբաստանելը նախամեծար կ'ընտրէք։

— Ո՛հ, հարիւր անգամ նախամեծար կ'ընտրեմ մեռնիլ քան թէ այնպիսի գործ մը ընել։

— Ոչ, պիտի չմեռնիք դուք. և ինչ որ պատահի, կը խոստանաք ինձ որ ամենևին պիտի չվշտանաք և պիտի յուսաք։

— Մաքսիմիլիէնը միտքս պիտի բերեմ։

— Ամենասիրելի աղջիկս էք դուք, Վալանթին. ես միայն կրնամ ազատել զձեզ և պիտի ազատեմ — ։

Վալանթին իւր յետին երկիւղին մէջ ձեռքերը միացուց, (քանզի կ'ըզգար որ Աստուածմէ այժ խնդրելու ժամանակը հասած էր) աղօթք ընելու համար ելաւ՝ առանց հետևութեան խօսքեր մրմնալով և մոռնալով որ իւր սպիտակ ուսերը երկար մազերէն զատ ծածկոյթ մը չունէին, և իւր դիշերային զգեստին բարակ տաղնեզործին տակը սրտին բաբախելը կը տեսնուէր։

Կոմսը իւր ձեռքը կամայ մը ծաղկահաս աղջկան թևին կլլուծ թընդոց, թաւշեայ մեծագին վերմակը մինչև անոր պարանոցը ծածկեց և հայրական ժպիտով մը ըսաւ.

— Աղջիկս, հաւատացէք իմ անձնուիրութեանս, ինչպէս որ Աստուծոյ բարութեանը և Մաքսիմիլիէնի սիրոյն կը հաւատաք —։

Վալանթին երախտապարտ նայուածք մը յարեց անոր վրայ, և իւր անկողնոյն մէջ մանչան մը պէս հանդարտ կեցաւ։

Այնատեն կոմսը իւր բաճկոնին ծոցէն շաքարահատերու զոյգ րուխտեայ տուփը հանեց, անոր ոսկի խուփը բացաւ և Վալանթինի աջ ձեռքին մէջ ոլորուն մեծութեամբ կլոր շաքարահատ մը դրաւ։

Վալանթին միւս ձեռքովը առաւ զայն և ուշադրութեամբ կոմսին երեսը նայեցաւ։

Վեհութեան և կարողութեան ցոլացում մը այն աներկիւղ պաշտպանին դիմաց դէմերուն վրայ կ'երևէր։

Ցայտնի էր որ Վալանթին իւր նայուածքովը կը հարցընէր թէ պիտի կլլէ զայն։

— Այո՛ —, պատասխանեց կոմսը։

Վալանթին շաքարահատը բերանը տարաւ և կլլեց։

— Մնաք բարեաւ, զաւակս, վերստին կը տեսնուինք, ըսաւ կոմսը. ասկէ ետքը հանդարտ պիտի քնանամ. քանզի ազատեցաք դուք։

— Գացէք, ըսաւ Վալանթին, ինչ որ պատահի, կը խոստանամ որ պիտի չվախնամ —։

Մօնթէ-Քրիսթօ երկար ատեն իւր աչերը ծաղկահաս աղջկան վրայ յարած կեցաւ, որ իւր տուած թմրեցուցիչ դեղին զօրութենէն յաղթուած կամայ կամայ քնացաւ։

Այն ատեն՝ կոմսը բաժակը առաւ, անոր պարունակութեան երեք մասը կրակարանին մէջ պարպեց, որպէս զի կարծուի թէ բաժակին մէջէն պակսածը Վալանթին խմած է, և դիշերուան սեղանին վրայ դրաւ զայն։

Ետքը դրքապարանին դուռը երթալով աներևոյթ եղաւ Վալանթինի վրայ վերջին ակնարկ մ'ալ նետելէն ետև, որ Տիրոջ ո-

ւիշ տակը հանդչող հրեշտակի մը վստահութեամբն ու անմեղութեամբը կը քնանար։



ԳԼՈՒԽ Գ

ՎԱԼԱՆԹԻՆ

Գիշերային կանթեղը՝ ջուրին վրայ լողացող իւղին վերջին կաթիլները սպառելով՝ Վալանթինի կրակարանին վրայ դեռ կը վառէր։

Արդէն կարմրագոյն բոլորակ մը անոր սպիտակ կիՃը կը դուշնաւորէր, և անոր լուսաւոր բոցը իւր վերջին կայծերը կ'արձակէր, որոնք անշունչ մարմիններուն զոդցես ոգեվարքի վերջին ջղաձգութիւններն են։

Շիջամերձ և աղէտալի լոյս մը նսեմ ցոլայումով ծաղկահաս աղջկան սպիտակ առագաստներն ու սաւանները կը ներկէր։

Փողոցին բոլոր ձայները դադրեր էին, և ներքին լռութիւնը սոսկալի էր։

Այն ատեն Էտուարի սենեկին դուռը բացուեցաւ, և արդէն մեղի ծանօթ դլուխ մը դրան դիմացը դտնուած հայելիին մէջ երեցաւ։

Տիկին տը Վիլըֆօրն էր ան, որ Թոյնին ազդեցութիւնը տես-
նելու համար ներս կը մտնէր։

Սեմոյ վրայ քիչ մը կեցաւ, ականջ դրաւ, և այն պրեթէ ան-
բնակ սենեկին մէջ միայն Ճրագին հալիւ լսելի կայծերուն յայտ-
տուածները լսեց, եւրը կամաց մը սեղանին մօտեցաւ, որպէս զի
տեսնէ թէ Վալանթինի բաժակը պարպուա՞ծ էր։

Ինչպէս որ ըսինք՝ բաժակին մէջ ըմպելիքին դեռ մէկ քառոր-
դը մնացեր էր։

Տիկին տը Վիլըֆօր առաւ զայն, և գնաց մոխիրին մէջ պար-
պեց, մոխիրն ալ խառնեց որպէս զի աւելի դիւրութեամբ ծծէ.
եւրը զգուշութեամբ բաժակը լուաց, իր թաշկինակովը սրբեց
զայն, և վերստին սեղանին վրայ դրաւ։

Եթէ մէկը իր նայուածքը այն սենեկին մէջ թափանցել կա-
րենար, պիտի տեսնէր որ տիկին տը Վիլըֆօր իր աչքը Վա-
լանթինի վրայ դարձընելու և անկողնոյն մօտենալու կ'երկմտէր։

Ճրագին աղօտ լոյսը, տիրող լռութիւնը, դիշերային այն ոճ-
րալի գործը անտարակոյս իր խղճին տագնապին հետ կը համա-
ձայնէին, քանի Թունաւորողը իր գործէն կը վախնար։

Վերջապէս սիրտ առաւ, առաջաստը վերցուց, և անկողնոյն
վրայ հակելով՝ Վալանթինին նայեցաւ։

Ծաղկահաս աղջկան շունչը դադրեր էր, և կիսաբաց ակռա-
ներուն մէջէն կենդանութիւնը յայտնող շնչին շողին չէր երևներ։

Իր սպիտակացեալ շրթները շարժելէ դադրեր էին։

Իր աչերը գոգցես մաշկին տակէն մգուած մանիշակագոյն շո-
դիով մը քողարկուած էին, և անոր կոպերը ուռեցընող դնտակ-
ներուն վրայ աւելի սպիտակ կ'երևէին, և իր երկար ևս արտե-
ւանները մոմի պէս դեղին մորթ մը կը դծէին։

Տիկին տը Վիլըֆօր իր անշարժութեամբը ցոյցուցած եռան-
դալի զգացումով մը այն դէմքը դիտեցէն ետև՝ սիրտ առաւ և
վերմակը վերցընելով ձեռքը նորատի աղջկան սրտին վրայ դրաւ։

Վալանթին անշունչ և սառած էր. և իր ձեռքին տակը բա-
բախողը իր մտերուն երակներն էր, ուստի սոսկումով մը իր
ձեռքը քաշեց։

Վալանթինի թևը անկողնէն դուրս կախուած էր։

Ուսէն մինչև արմունկը այս թևը ծէրմէն Բիլլընի երեք Շնոր-
հաց արձաններուն մկուն թևին կը նմանէր. սակայն արմունկէն
մինչև դաստակը եղած մասին ձևը կարկամութենէ սակաւ մը
փոխուած էր, և իր դեղեցիկ դաստակը, որ պիրկ կ'երևէր և
մատերը անջատեալ, կահճենիին վրայ կը թնաձ էր։

Ըղունգներուն սկսած մասերը կապտատոյն էին։

Տիկին տը Վիլըֆօր ալ տարակոյս չունէր. ամեն բան լմնցեր
էր. իր կատարել փափաքած այն սոսկալի վերջին գործը վեր-
ջապէս՝ ի գլուխ հաներ էր։

Թունատուն այն սենեկին մէջ ալ գործ չունէր։

Անչափ զգուշութեամբ անկէ հեռացաւ, որ յայտնի կը ցու-
ցընէր թէ օթոցին վրայ իր քայլերուն ձայնը հանելէն կը վախ-
նար. բայց մինչև մեկնիլը՝ անկողնոյն առաջաստը վերցուցած բըռ-
նած էր և իր նայուածքը այն մահուան տեսարանին վրայ յա-
րած էր, որ ձգողական անդիմադրելի զօրութիւն մը ունի, ինչ
ատեն մեռեալը միայն անշարժ կը կենայ և իր կերպարանքը այլ-
այլած չըլլար, և դաղտնիք մը կունենայ, ու զզուանք մը չպատ-
ճառեր։

Վայրկեանները կ'անցնէին, և տիկին տը Վիլըֆօր չէր կրնար
ձեռքէն թողուլ այն առաջաստը, զոր պատանի մը պէս Վալան-
թինի դլխին վրայ բռնած կեցեր էր։

Մտածութիւնը զինքը դրաւեց։

Մեղքի մը վրայ մտածելը խղճի խայթն է։

Նոյն միջոցին՝ կանթեղին կայծերուն յայտումները կրկնապատ-
կեցին։

Այն ձայնէն տիկին տը Վիլըֆօր սարսաց և վարագոյրը ձեռ-
քէն թողուց։

Նոյն վայրկենին կանթեղը անցաւ, և սենեակը ահարկու մթու-
թեան մը մէջ ընկղմեցաւ։

Ժամացոյցն ալ նոյն լուին մթութեան մէջ արթննալով ժամը
չորս ու կէս հնչեց։

Թունատուն այս կրկնակի շարժումէն վախնալով՝ խարխափմամբ

սենեկին դուռը գոցաւ և Ճակատը քրտինքով ու անձկութեամբ պատած իւր սենեակը հասաւ։

Մթութիւնը երկու ժամ ևս տևեց։

Անկէ ետև՝ աղօտ լոյս մը սենեկին վանդակապատներէն ներս թափանցեց, և կամաց կամաց աւելի լուսաւորելով՝ սենեկին առարկաներուն և մարմիններուն դոյնը և ձևը երևցուց։

Այն ատեն խնամակալուհւոյն հաղիւ ձայնը սանդուխին վրայ հնչեց, և քիչ մը ետքը՝ ձեռքը դաւթով մը Վալանթինի սենեակը մտաւ։

Հօր մը կամ սիրահարի մը առաջին նայուածքը իսկոյն պիտի վճռէր որ Վալանթին մեռած էր. բայց այն վարձուոր կնոջ համար Վալանթին քնացած էր։

— Աղէկ, ըսաւ խնամակալուհին դիշերուան սեղանին մօտենալով, դեղին մէկ մասը խմեր է, և բաժակին երկու երրորդ մասը պարապ է —։

Այս ըսելով կրակարանին մօտեցաւ, կրակը վառեց, թևաթոռի մը վրայ նստաւ, և թէպէտ իւր անկողնէն նոր ելած էր, սակայն Վալանթինի քնացած միջոցին քիչ մը ժամանակ ինքն ալ հոն քնացաւ։

Ժամացոյցը ութը հնչելով զինքը արթնցուց։

Այն ատեն ծաղկահաս աղջկան անսթափ քունին վրայ զարմացած, և անկողնէն դուրս տարածուած ձեռքէն վախնալով, որ քանի մը ժամ առաջ սեսած դիրքին մէջ մնացեր էր, անկողնոյն մօտեցաւ, և այն ատեն անոր պաղ շուրթերն ու սառած կուրծքը դիտեց։

Ուզեց թևը մարմնոյն մօտեցընել, բայց թևը այն սոսկալի ուղղորդութեամբ հնազանդեցաւ, որմէ խնամակալուհի մը չէր կրնար խաբուիլ։

Այն ատեն սոսկալի ձայն մը հանեց, և դէպ՝ ի դուռը վազելով պոռաց.

— Հասէք, հասէք։

— Ի՞նչ կայ —, պատասխանեց ս՝Ավրինեի ձայնը սանդուխին վարէն։

Բժշկին գալու սովորական ժամը հասեր էր։

— Ի՞նչ կայ, պոչեց և Վիլըֆօր իսկոյն իւր գահլիճէն դուրս նետուելով. պարոն բժիշկ, օգնութեան կանչելու ձայն մը լսեցինք։

— Այո՛, այո՛, վեր ելնենք, պատասխանեց ս՝Ավրինեի. շուտով Վալանթինի սենեակը երթանք —։

Բժիշկին ու հայրը չհասած՝ նոյն պատիկոնին վրայ սենեակներուն և պատիներուն մէջ պտնուող ծառաները հիւանդին սենեակը վազեր էին, և Վալանթինը իւր անկողնոյն վրայ դունատեալ և անշարժ տեսնելով, ձեռքերնին դէպ՝ ի երկինք կը վերցընէին և դլխապարի պէս կը թեթևէին։

— Տիկին տը Վիլըֆօրը կանչեցէք, շուտով տիկին տը Վիլըֆօրը արթնցուցէք —, պոչեց Թալաւորի գործակալը սենեկին դռնէն, որուն մէջ դոդցես չէր համարձակեր մտնել։

Բայց ծառաները փոխանակ հնազանդելու՝ պ. ս՝Ավրինեին երեսը կը նայէին, որ Վալանթինի քովը վազելով՝ իւր բազկացը մէջ առաւ զան։

— Աս ալ լմնցեր է . . . , մրմնաց բժիշկը զան անկողնոյն վրայ դնելով. ով Աստուած իմ, Աստուած իմ —։

Վիլըֆօր սենեկին մէջ նետուեցաւ։

— Ի՞նչ ըսիք, պարոն բժիշկ, պոչեց ձեռքը դէպ՝ ի երկինք վերցընելով, ըսէք, պարոն բժիշկ . . . , պարոն բժիշկ . . . ։

— Կ՝ըսեմ թէ Վալանթին մեռեր է —, պատասխանեց ս՝Ավրինեի հանդիսաւոր և սոսկալի ձայնով մը։

Պ. տը Վիլըֆօր իւր սրնգաց ոյժը կորնցուցածի պէս Վալանթինի անկողնոյն վրայ ինկաւ։

Բժշկին խօսքերուն և հօրը ձայներուն վրայ ծառաները գաղտնի անէծք կարդալով սարսափով մը փախան։

Գաւիթներուն և սանդուխներուն վրայ անոնց արտորալու ոտնաձայները և ետքը ստորին բակին մէջ մեծ շարժում մը լսուեցան։

Որմէ ետև ձայները դադրեցան։

Ամենքն ալ այն անիծեալ տունէն հեռացեր էին։

Այն միջոցին՝ տիկին տը Վիլըֆօր իւր առտուան զգեստին մէջ թևը կէս մը անցուցած՝ դուռը բացաւ։

Վայրկեան մը սեմոյ վրայ կեցաւ՝ ինչ պատահած ըլլալը հոն դանուողներուն հարցընել ձեւացընելով, և ապստամբ արտաստաց քանի մը կաթիլներ իրեն օդնութեան կանչելով։

Ցանկարծ քայլ մը կամ թէ ըսենք ոտիւն մը ըրաւ դէպ 'ի յառաջ՝ թևերը սեղմելին վրայ տարածելով։

Քանզի ա'Ավրինեին տեսեր էր որ հետաքրքրութեամբ այն սեղանին վրայ հակեր և այն բաժակը առեր էր, որուն պարունակութիւնը հատասի էր որ դիշերը Վալանթինի համր էր։

Բաժակին մէջ ըմպելիքին դեռ մէկ երրորդ մասը մնացեր էր, ճիշդ մոխիրին մէջ թափած միջոցին մէջը եղածին չափ։

Եթէ այն վայրկենին Վալանթինի ոդին թռնատորոդին առջևը ներկայանար, այնչափ ապատորութիւն պիտի չընէր իրեն։

Իրօք Վալանթինի բաժակին մէջ իւր դրած հեղուկին գոյնը ունէր այն, որուն միւս մասը Վալանթինի համր էր։

Բաժակին մէջինը թոյն մ'էր, զոր ճանչնալու համար Պ. ա'Ավրինեի չէր կրնար խաբուիլ և այն միջոցին ուշադրութեամբ կը դիտէր։

Եւ անտարակոյս Աստուած հրաշք մը դործած պիտի ըլլար, որպէս զի ոճրադործութեան մէկ հեղը, մէկ ապացոյցը կամ մէկ նշանը մնայ, թէև մարդասպանը զայն չյայտնելու համար այնչափ զգուշութիւններ բանեցուցեր էր։

Սակայն երբ տիկին տը Վիլըֆոր Սոսկումի արձանին նման անշարժ մնացեր էր, և Վիլըֆոր իւր գլուխը մեռեալին անկողնոյ սաւաններուն մէջ պահած իւր բոլորտիքը աեղի ունեցածները չէր տեսներ, ա'Ավրինեի պատուհանին մօտեցաւ, որպէս զի բաժակին պարունակութիւնը աւելի աղէկ քննէ և մատին ծայրովը կաթիլ մը անկէ առնելով համը նայեցաւ։

— Ո՛հ, մրմռաց բժիշկը, բևեռնի թոյն չէ այս անդամ. տեսնենք ինչ է —։

Այս ըսելով Վալանթինի սենեկին պահանոցներուն մէկուն քովը վազեց, որ դեղավաճառի խանութ մը դարձեր էր, և իւր արծաթի արկղիկին մէջէն սրուակ մը բորակածին թթուաղ հանեց, անորմէ քանի մը կաթիլ բաժակին մէջ կաթեցուց, և անմիջապէս անոր մէջինը բոցագոյն արիւնի փոխուեցաւ։

— Ա՛հ —, ըսաւ ա'Ավրինեի՝ ձչմարտութիւնը երևան հանող դատաւորի մը սոսկումին հետ դժուար խնդիր մը լուծող գիտունի մը ուրախութեամբը լցուած։

Տիկին տը Վիլըֆոր շուարած իւր բոլորտիքը կը դառնար։

Իւր աչերը բոցեր արձակելէն ետև՝ նուաղեցան։

Եւ թևթևելով ձեռքովը դուռը փնտռեց և անելևոյթ եղաւ։

Վայրկեան մը ետքը տախտակամածին վրայ մարմնոյ մը խփնալու հեռաւոր ձայնը լսուեցաւ։

Բայց մարդ ուշադրութիւն չըրաւ անոր։

Խնամակալուհին քիմիական լուծումը դիտելու զբաղած էր։

Վիլըֆոր միշտ ինքզինքը կորնցուցած վիճակի մէջ կը գտնուէր։

Միայն Պ. ա'Ավրինեի իւր աչերը տիկին տը Վիլըֆորի վրայէն վերցուցած չէր և արտորնօք դուրս ելնելը դիտեր էր։

Վալանթինի սենեկին պրան վարագոյրը բացաւ, և իւր նայուածքը Էտուարի սենեկին մէջէն մինչև տիկին տը Վիլըֆորի սենեակը թափանցեց, և պեպինը անշարժ տարածուած տեսաւ զան։

— Գնա տիկին տը Վիլըֆորին օդնութեան հասիր, ըսաւ բժիշկը խնամակալուհուն, տիկին տը Վիլըֆոր նուաղեցաւ։

— Բայց օրիորդ Վալանթինը, կակազեց խնամակալուհին։

— Օրիորդ Վալանթինը ալ օդնութեան պէտք չունի, ըսաւ ա'Ավրինեի, քանզի օրիորդ Վալանթին մեռաւ։

— Մեռաւ, մեռաւ, դոչեց Վիլըֆոր հառաչելով ու իւր պղնձեայ սրտին անլուր և անծանօթ վիշտերը նորոգելով։

— Մեռաւ կ'ըսէք, դոչեց երրորդ ձայն մը, ոմ ըսաւ թէ Վալանթին մեռաւ —։

Բժիշկն ու Վիլըֆոր երեսնին դարձուցին, և դրան սեմոյ վրայ Մորէլը տեսան, որ պռնաւեալ, այլայլեալ և սոսկալի կ'երեւէր։

Ահա երիտասարդին պատահածը։

Իւր սովորական ժամուն՝ Էտուարթիէի սենեակը տանող դռնակէն Մորէլ ներս մտեր էր։

Սովորութեան հակառակ՝ դուռը բաց գտեր էր։

Ուստի զանգակը հնչեցընելու պէտք չունեցաւ։

Ներս մնաւ, և պատիճին մէջ վայրկեան մը սպասեց ան և է ծառայ մը կանչելով որ զինքը ծերունի Նուարթիէի քով տանի։

Բայց մէկը չպատասխանեց իրեն։

Ինչպէս ըսինք՝ ծառաները տունէն հեռացեր էին։

Մորէլ այն օրը անհանգստութիւն մը ղգալու պատճառ մը չունէր։

Քանզի Մօնթէ–Քրիսթօ իրեն խոստացեր էր որ Վալանթինն պիտի ապրի, և մինչև այն օրը իր խոստումը ճշդիւ կատարեր էր։

Ամեն իրիկուն կոմսը իրեն աղէկ լուրեր տուեր էր, զորոնք Նուարթիէ ալ հետևեալ առաւօտ իրեն կը հաստատէր։

Սակայն տան մէջ եղած առանձնութիւնը իր զարմանքը դրաւեց. երկրորդ և երրորդ անգամ ձայն հանեց, նոյնպէս պատասխան չստացաւ։

Ան տեղն որոշեց որ վեր ելնէ։

Նուարթիէի դուռը միւս դռներուն պէս բաց էր։

Ծերունին իր սովորական տեղը թևաթոռին վրայ նստեր էր։

Իր խիստ բացած աչերը կարծես ներքին սոսկում մը կը յայտնէին, զոր իր դիմաց գծերուն վրայ տարածուած տարօրինակ դեղնութիւնն ալ կը հաստատէր։

— Ի՞նչպէս էք, պարոն, հարցուց երիտասարդը՝ առանց սրտի անհանգստութենէ ազատ ըլլալու։

— Աղէկ եմ, ըսաւ ծերունին աչքը դոցելով, աղէկ եմ— ։

Բայց իր կերպարանքը սրտի անձկութեան աւելնալը կը յուցընէր։

— Ի՞նչ կը մտածէք, շարունակեց Մորէլ. բանի մը պէտք ունիք. կ՚ուզէք որ ծառաներէն մէկը կանչեմ։

— Այո՛ — , ըսաւ Նուարթիէ ։

Մորէլ զանգակին առաստանը ձեռքը առաւ, և զայն փրցընելու չափ քաշեց. բայց մարդ չերևաւ։

Ան տեղն Նուարթիէի քովը դարձաւ։

Ծերունին դիմաց դեղնութիւնն ու անձկութիւնը աստիճանապար կ՚աւելնային։

— Տէր Աստուած, ըսաւ Մորէլ, բայց ինչու արդեօք մէկը չկայ. արդեօք տան մէջ հիւանդ մը կայ — ։

Նուարթիէի աչերը կարծես թէ իրենց կապիճներէն դուրս պիտի ցայտէին։

— Բայց ի՞նչ ունիք, շարունակեց Մորէլ, վնս կը սոսկացընէք . . . Վալանթին հիւանդ է . . . ։

— Այո՛, այո՛ — , ըսաւ Նուարթիէ ։

Մաքսիմիլիէն բերանը բացաւ որ խօսի, բայց իւր լեզուն չկրցաւ հնչիւն մը հանել։

Գլուխը դեղեցաւ և կարասի մը բռնելով կեցաւ։

Եաքը ձեռքը դէպ՚ի դուռը երկնցուց։

— Այո՛, այո՛, այո՛ — , ըսաւ ծերունին ։

Մաքսիմիլիէն դէպ՚ի սանդուխը վազեց, երկու ոստիւնով վեր ելաւ, ինչ ատեն Նուարթիէ ալ դողդոջ իր եաևէն պոռալ կ՚ուզէր.

— Աւելի շուտ, աւելի շուտ վազեցէք — ։

Վայրկեան մը բաւական եղաւ երիտասարդին տան միւս մասերուն պէս առանձնացած քանի մը սենեակներուն մէջէն անցնելու և մինչև Վալանթինի սենեակը հասնելու։

Դուռը հռելու պէտք չունեցաւ, քանզի կռնակի վրայ բաց էր այն։

Առջի լսած ձայնը հեծկլտալու ձայն մ՚էր ։

Ամպի մը մէջէ տեսնելու պէս՝ սև կերպարանք մը տեսաւ, որ ծնրադրեալ և իր դէմքը անկողնոյ խառն ճերմկեղէններուն մէջ կորսուած էր ։

Երկիւղը, սոսկալի երկիւղը իր ոտքերը սեմոյ վրայ կը բևեռէր։

Ան տեղն ձայն մը լսեց, որ կ՚ըսէր թէ Վալանթին մեռաւ, և երկրորդ ձայն մը արձագանգի մը պէս անոր կը պատասխանէր.

— Մեռաւ, մեռաւ — ։



ԳԼՈՒԽ Դ

ՄԱՀՍՈՒՄԱԼԻՆ

Վիլըֆօր դրեթէ ամբողջ տարի մնացեր էր իր սաստիկ վշտացը մէջ օտարական մը ներս մտնելուն համար։

Քսան և հինգ տարիէ ՚ի վեր վարած սոսկալի պաշտօնը վերջապէս իրեն առնելիութիւն տուեր էր։

Վայրկեան մը շփոթած աչքերը Մորէլի վրայ դարձուց։

— Ո՞վ էք դուք, պարոն, ըսաւ, որ այսպէս մահ պատահած տուն մը անզգուշութեամբ կը մտնէք։ Դուրս ելէք, պարոն, դուրս ելէք —։

Սակայն Մորէլ անշարժ կեցեր էր. իր աչքը տակն ու վրայ եղած անկողնոյն սոսկալի տեսարանին և անոր մէջ պառկած ժպտուն դէմքին վրայէն չէր կրնար վերցնել։

— Դուրս ելէք, կը լսէք —, դոչեց Վիլըֆօր՝ ինչ ատեն և ա՛Ավրինեի Մորէլը դուրս հանելու համար անոր կը մօտենար։

Երիտասարդը այլայլեալ դէմքով բոլոր սենեակը, դիակը և երկու մարդիկը դիտեց, և վայրկեան մը երկմտութիւն ցոյց տուց. բերանը բացաւ որ խօսի, բայց պատասխանելու խօսք մը չգտնելով, թէև անթիւ աղէտալի խորհուրդներ իր ուղեղը պրաւեր էին, իր ձեռքերը մազերուն մէջ խօթելով եկած ձամբայէն ետ դարձաւ, այնպէս որ Վիլըֆօր և ա՛Ավրինեի վայրկեան մը իրենց մտածութենէն սթափելով, անոր եռևէն դիտելէն ետև՝ իրարու երես նայեցան, որով ըսել կ՚ուզէին.

— Խենթ է —։

Բայց այս դէպքին վրայ հինգ վայրկեան չանցած՝ սանդուխին վրայ խիստ ծանր քայլերու ձայներ լսեցին, և քիչ մը ետքը Մորէլը տեսան, որ զերմաջրկային ուժով մը նուաղութենէն թեւաթռռով մէկտեղ գրկելով՝ տան առաջին դասիկոնը կը բերէր զան։

Սանդուխին վրայ հասնելուն պէս՝ Մորէլ թեւաթռռը դեռինը

դրաւ, և զայն անուականերուն վրայ քաշեցընելով, ծերունին միասնաւ Վալանթինի սենեակը տարաւ։

Երիտասարդը բոլոր այս գործողութիւնը իր սաստիկ յուզմունքէն կրկնապատկուած ուժով կը կատարէր։

Բայց ամենէն աւելի սոսկալին՝ դէպ ՚ի Վալանթին մօտեցած միջոցին նուաղութիւն դէմքին երևոյթն էր, որուն վրայ իր մտային բոլոր կարողութիւնը կը նկարուէր, և որուն աչերը իրենց բոլոր ոյժը կ՚ամփոփէին, որպէս զի միւս զգայարանաց թերութիւնները լեցընեն։

Ուստի անոր բոցավառ նայուածքն ու ժպտուն դէմքը Վիլըֆօրին սարսափելի երևցաւ։

Ամեն անգամ իր հօրը հետ դէմ առ դէմ գտնուած ժամանակը՝ միշտ սոսկալի դէպ մը պատահած կ՚ըլլար։

— Տեսէք ինչ ձիւն բերին Վալանթինի գլուխը, դոչեց Մորէլ մէկ ձեռքը տակաւին թեւաթռռին յենարանին կռթնցուցած, զոր մինչև անկողնոյն քովը բերեր էր, և միւս ձեռքը դէպ ՚ի Վալանթին երկնցընելով. տեսէք, հայր իմ, տեսէք —։

Վիլըֆօր քայլ մը ետ քաշուեցաւ և զարմանքով այն երիտասարդին երեսը նայեցաւ, որ դրեթէ իրեն անծանօթ էր, և նուաթիէն իր հայրը կոչեր։

Այն միջոցին ծերունւոյն հոգւոյ բոլոր կարողութիւնը դոյգ աչացը մէջ կենդրոնացաւ, որոնք արիւնով լցուեցան, իր պարանոցին երակները ուռեցան. լուսնոտի մը մորթը պատող կապոյտ գոյնին նման գոյն մը իր պարանոցը, այտերն ու քունքը պատեց. որ և է էակի մը այս ներքին ուժգին յուզման ձայն մը կը պակսէր։

Այս ձայնը, որ իր համրութեամբը աւելի սոսկալի և լռութեամբը աւելի կսկծեցուցիչ էր, դոյգս իր մորթին ծակոտիքներէն դուրս ելաւ։

Տ՚Ավրինեի ծերունւոյն քովը վազեց և կազդուրիչ ոդելից հեղուկ մը անոր քթին բռնեց։

— Պարոն, դոչեց այն տանն Մորէլ կաթուածահարին անշարժ ձեռքը բռնելով, այս պարոնները ոմ ըլլալս և ինչ իրաւամբ

հոս պտնուիլս կը հարցընեն ինձ. դուք որ ամեն բան գիտէք, ըսէք, կ'աղաչեմ, ըսէք — :

Եւ երիտասարդին ձայնը հեծկլտանքով մարեցաւ :

Իսկ ծերունւոյն հեաղով շնչառութիւնը գրեթէ իր կուրծքը կը շարժէր : Կարծես թէ ոգեվարքին առաջնորդող յուզմանց մէջ կը պտնուէր :

Վերջապէս ծերունւոյն աչերէն արտասուքը սկսաւ բղխիլ. կաթուածահարը երիտասարդէն աւելի երջանիկ էր, որ կը հեծկլտար, բայց չէր կրնար լալ : Իր գլուխը ծռել չկրնալուն՝ աչերը դոցուեցան :

— Ըսէք, շարունակեց Մորէլ հեղձեալ ձայնով մը, ըսէք որ ես անոր նշանածն էի :

« Ըսէք որ օրիորդը իմ ամենիւ բարեկամուհիս և աշխարհի մէջ իմ միակ սիրոյ առարկաս էր :

« Ըսէք, ըսէք որ այս գիակը ինձի կը վերաբերի — :

Եւ երիտասարդը իւր ուժին մեծութիւնը գուցընելէն ետև՝ վհատելով անկողնոյն առջևը ծանրութեամբ մը ծնկան վրայ ինկաւ, և իւր կնճռած ձեռքերովը սեղմած բռնեց զայն :

Երիտասարդին վիշտը այն աստիճան կսկծեցուցիչ էր, որ տ'Ավրինեի իւր յուզմունքը ծածկելու համար գլուխը միւս կողմը դարձուց, և Վիլըֆոր այն մաղնիսական զօրութենէն մղուած, որ զմեզ դէպ 'ի այն անձերը կը քաշէ, որոնք մեր կորուսած անձը սիրած են, իւր ձեռքը երիտասարդին երկնցուց առանց ուրիշ բացատրութիւն մը խնդրելու :

Սակայն Մորէլ բան մը չէր տեսներ, Վալանթինի սառած ձեռքը բռներ էր, և լալ չկրնալով՝ մունչիւնով մը անկողնոյն սաւանները կը խածնէր :

Քիչ մը ժամանակ այս սենեկին մէջ միայն հեծկլտանաց, անիծից և աղօթից ձայները կը լսուէին : Բայց այս ամենուն վրայ շընջիւն մը կ'իշխէր. ծերունւոյն սոսկալի և սրտաուչ շնչառութիւնն էր այն, որ ամեն մէկ շունչին՝ Նուարթիէի կուրծքին մէջ դողդես անոր կենդանութեան տարրերէն մէկը կը խորտակէր :

Վերջապէս Վիլըֆոր, որ ամենէն աւելի իւր յուզմանց տէրն

էր, քիչ մը ատեն՝ այսպէս ըսենք՝ իւր տեղը Մաքսիմիլիէնի թողլէն ետև՝ բերանը բացաւ :

— Պարոն, ըսաւ Մաքսիմիլիէնին, Վալանթինը կը սիրէիք կ'ըսէք, և անոր նշանածն էիք. ես ձեր այդ սէրը իմացած չէի և ձեր որոշումը չէի գիտեր. այսու ամենայնիւ իբրև անոր հայրը կը ներեմ ձեզ. քանզի կը տեսնեմ որ ձեր վիշտը անպայման, անկեղծ և ճշմարիտ է :

« Մանաւանդ որ ես ալ մեծ վիշտեր ունենալուս՝ սրտիս մէջ բարկութեան տեղի տալու ժամանակ չունիմ :

« Սակայն ինչպէս որ կը տեսնէք ձեր յուսացած հրեշտակը աշխարհէս բաժնուած է. մարդոց սիրոյն պէտք չունի ալ, քանզի այս ժամուս զԱստուած կը պաշտէ ան. ուստի ձեր հրաժարական ողջոյնը տուէք, պարոն, անոր տխուր գիակին, զոր մեր մէջը թողուցած է. վերջին անգամ մ'ալ բռնեցէք անոր ձեռքը, ուրուն կ'ըսպասէիք, և յաւիտեանս բաժնուեցէք անորմէ : Վալանթինն հիմա քահանայէ զատ ուրիշ մէկու պէտք չունի :

— Կը սխալիք, պարոն, գոչեց Մորէլ մէկ ծնկան վրայ ելլելով ու սիրտը մինչև այն վայրկեանը զգացած ցաւերէն աւելի ազդու ցաւ մը զգալով. կը սխալիք, պարոն, Վալանթինն՝ իւր այս կերպ մահուանը մէջ՝ ոչ միայն քահանայի այլ և վրէժխնդրի մը պէտք ունի :

« Պ. որ Վիլըֆոր, քահանան կանչել տուէք, ես պիտի ըլլամ անոր վրէժխնդիրը :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարոն, մրմռաց Վիլըֆոր Մորէլի զառանցանաց այս նոր ազդեցութենէն վախնալով :

— Ըսել կ'ուզեմ, շարունակեց Մորէլ, թէ դուք երկու անձ կը ներկայացընէք, պարոն. հայր էք և թագաւորի դործակալ. հայրը բաւական լացաւ, թագաւորի դործակալը հիմա թող իւր դործը սկսի — :

Նուարթիէի աչերը բոցավառեցան. տ'Ավրինեի անոր մօտեցաւ :

— Պարոն, շարունակեց երիտասարդը ներկայ գտնուողներուն դիմաց վրայ յայտնի երևցած զգացումները աչօքը ըմբռնելով, ես ըսածս պիտեմ, և ըսելիքս դուք ալ ինձի չափ աղէկ գիտէք. Վալանթին սպաննուած մեռաւ — :

Վ[ԼՓՕՐ ԳՈՀԱԼԸ ԽՈՍՈՐՀՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՑԱ ԱՐՑ ԱՐ ԱՂԱ-
ՋԱՏՈՒԹՅԱՆ, Ե ՈՒՂՂԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՏՎԱՎ ՐԱՆ՝

— Ա՛Մ, ԻՆՉ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ ՀԱՐՑՐԱՆՔՆԵՐՍ ՀԱՄԱՐ, ՊԱՐՈՆ ՎԱՐՉԱՊԵՏ, ԱՅՍ ՊԱՐԶ ԵՐԵՎՈՒՄ Է, ՈՐ ՄԵՐ ՀԱՐՑԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆԱԼ ԼՈՒԾԵԼ ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ, ԱՅԼ ՊԵՏՔ Է ՆԱԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼ ՈՒ ՄՏՔԵՐԸ ՀԱՎԱՔԵԼ ՄԻԱՅՆ ՆՐԱՆՈՎ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆՔ ՄԵՐ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ։

ՎԱՀԱՆԸ ՀԱՍԿԱՑԱՎ, ՈՐ ՔՆՆԻՉԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆԱԼ ՄԵՂԱԴՐԵԼ ՆՐԱՆ, ՍԿՍԱՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻՑ ՍԿԶԲԻՑ։

— ՄԵՂԱԴՐԵՔ ՄԵՐ ՀԱՐՑԸ, ՍԱԿԱՅՆ ՄԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԵՔ ՀԱՄԱՐՎԵԼ ՈՉ ՄԵԿԻՆ, ՈՉ ԱՅԼՈՒՄ, ՈՐՈՎՀԵՏԵՎ

Ա՛յն առեն կարդը տ՛Ավբինեիին եկաւ։

— Ես ալ, ըսաւ ուժգին ձայնով մը, ես ալ պ. Մորելին հետ կը միանամ պարծանաց յանցանքին պատասխանը խնդրելու. վասն զի սիրաս կը յուզուի երբ կը մտածեմ որ իմ վատ ներողամտութեամբս մարդասպանին քաջալերութիւն տուի։

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ—, մրմնջաց Վիլըֆոր վհատեալ։

Մորել գլուխը վեր վերցուց, և ծերունւոյն աչաց սովորականէն դուրս փայլելը տեսնելով,

— Ահա, ըսաւ, տեսէք, պ. Նուարթիէն խօսիլ կ՛ուզէ։

— Ա՛յո՛, ըսաւ Նուարթիէ այնպիսի յայտնի նշանով մը, որ ողորմելի անզօր ծերունիին բոլոր կարողութիւններուն իր նպատակին մէջ կենդրոնացած ըլլալը կը յայտնէր։

— Մարդասպանը կը ճանչնաք դուք, ըսաւ Մորել։

— Ա՛յո՛, պատասխանեց Նուարթիէ։

— Եւ մեզ պիտի ճանչցընէք, դոչեց երիտասարդը. մանիկ ընէնք, պ. տ՛Ավբինեի, մանիկ ընէնք—։

Նուարթիէ ողորմելի Մորելին սխտոր մը ուղեց, աչքը այն քաղցր մանիներէն մէկը, որ այնչափ անգամ Վալանթինի երջանկութիւն տուեր էր, և իր ուշադրութիւնը յարեց։

Եղբը իր նպատակը դէպ՛ի դուռը դարձուց։

— Կ՛ուզէք որ դուրս ելնեմ, պարոն, դոչեց Մորել սխրութեամբ մը։

— Ա՛յո՛, ըսաւ Նուարթիէ։

— Ափսոս, ափսոս. բայց պիտի ջնջէք ինձի, պարոն—։

Ծերունիին աչերը անպիտանութեամբ դէպ՛ի դուռը յարած մնացին։

— Գոնէ պիտի կրնամ վերադառնալ, հարցուց Մորել։

— Ա՛յո՛։

— Առանձին դուրս պիտի ելնեմ։

— Ոչ։

— Ո՛վ պիտի պայ հետս, Թաղաւորի պ. դործակալը։

— Ոչ։

— Պ. բժիշկը։

— Ա՛յո՛։

— Պ. որ Վիլըֆորի հետ առանձին ճաշ կ՛ուզէր։

— Ա՛յո՛։

— Բայց ձեր խօսքերը պիտի կրնայ հասկընալ։

— Ա՛յո՛։

— Ո՛հ, ըսաւ Վիլըֆոր դրեթէ ուրախանալով որ այն խնդրոյն վրայ իր հօրը հետ առանձին պիտի խօսի, ո՛հ, անհոգ եղէք ես իմ հօրս խօսքերը աղէկ կը հասկընամ—։

Եւ Թաղաւորի դործակալին այս խօսքերը ինչպէս ըսինք ուրախութեամբ խօսելու առեն ալ՝ իր ակռաները սաստկութեամբ իրարու կը կափկափէին։

Տ՛Ավբինեի Մորելի հետը մնաւ և երիտասարդը մօտակայ սենեակը տարաւ։

Ա՛յն առեն բոլոր այս տան մէջ մեռեալին լռութենէն աւելի խորին լռութիւն մը տիրեց։

Վերջապէս քառորդ մը ետքը երերուն քայլ մը լսուեցաւ, և Վիլըֆոր այն սենեկին սեմոյ վրայ երեցաւ, ուր տ՛Ավբինեի և Մորել կը պահուէին՝ մէկը մտածութեանց մէջ ընկղմած, և միսը թեղդուելու մօտ։

— Եկէք—, ըսաւ։

Եւ զանոնք Նուարթիէի թևաթոռին մօտ տարաւ։

Ա՛յն առեն Մորել ուշադրութեամբ Վիլըֆորի երեսը նայեցաւ։

Թաղաւորի դործակալին դէմքը կապարի պոյն մը սոսկալի էր. ժանդապոյն խորշեր իր ճակատը կ՛ակօսէին. ձեռքը բռնած պրիչի մը մատներուն մէջ ձարձատմամբ մանրուելուն ձայնը կը լսուէր։

— Պարոններ, ըսաւ հեղձեալ ձայնով մը տ՛Ավբինեիին և Մորելին, ձեր պատուոյ խօսքը կը խնդրեմ որ այս սոսկալի դաղտնիքը մեր մէջը ծածուկ մնայ—։

Երիտասարդն ու բժիշկը շարժում մը ըրին։

— Կ՛երդնցընեմ զձեզ. . . , շարունակեց Վիլըֆոր։

— Բայց, ըսաւ Մորել, ով է չարագործը, ըսէք, մարդասպանը յայտնեցէք մեզ։

— Անհոգ եղէք, պարոն, այդ բանին դատաստանը պիտի տես-

նուի, ըսաւ Վիլըֆօր։ Հայրս յանցաւորին անունը յայտնեց ինձ. ան ալ ձեզի պէս վրէժխնդրութեան ծարաւի է, սակայն ինձի պէս կ'երդմնցնէ զձեզ որ գործած յանցանքը գաղտնի պահէք։ Այնպէս չէ՞, հայր իմ։

— Այո՛ —, ըսաւ Նուարթիէ հաստատութեամբ։

Մարէլ սոսկումի և չհաւատալու շարժում մը ըրաւ։

— Ո՛հ, գոչեց Վիլըֆօր Մաքսիմիլիէնի թևէն բռնելով, երբ հայրս, այն անողոքելի մարդը, զոր դուք կը ճանչնաք, ձեզ այսպիսի առաջարկութիւն մը կ'ընէ, պատճառը այն է որ գիտէ թէ Վալանթինի վրէժը սոսկալի կերպով պիտի լուծուի։ Այնպէս չէ՞, հայր իմ —։

Ծերունին նշան ըրաւ թէ այո՛։

Վիլըֆօր շարունակեց.

— Հայրս կը ճանչնայ զիս, և ես անոր խոստացայ։ Ուստի այս մասին ապահով եղէք, պարոններ. երեք օր կը խնդրեմ՝ ձեզմէ, միայն երեք օր, որ ոստիկանութեան խնդրած պայմանաժամէն ալ քիչ է, և երեք օրէն իմ զուկիս համար լուծած վրէժս ամենէն անտարբերը մարդոց սրտին մինչև խորը պիտի սարսուեցնէ։ Այնպէս չէ՞, հայր իմ —։

Եւ այս խօսքերը ըսելով իր ակռաները կը կրճտէր և ծերունւոյն թմրած ձեռքը կը շարժէր։

— Այս ամէն խօսք արուածները պիտի կատարուի՞ն, պարոն Նուարթիէ, հարցուց Մորէլ, ինչ ատեն և Պ. տ'Ավրինեի իր նայուածքովը նոյնը կը հարցընէր ծերունւոյն։

— Այո՛, ըսաւ Նուարթիէ աղէտալի ուրախութեամբ մը։

— Երդում ըրէք ուրեմն, պարոններ, ըսաւ տը Վիլըֆօր տ'Ավրինեիի և Մորէլի ձեռքը միացընելով, երդում ըրէք որ իմ տանս պատուոյն պիտի խնայէք, և վրէժխնդրութեան հոգը ինձ պիտի թողուք —։

Տ'Ավրինեի երեսը դարձոց և խիստ տկար ձայնիւ մը այո՛ մրմնաց. բայց Մորէլ իր ձեռքը դատաւորին ձեռաց մէջէն քաշեց, դէպ՚ի անկողինը նետուեցաւ, իր շուրթերը Վալանթինի սառած շուրթերուն յարեց և յուսահատութեան մէջ ընկղմող ոգիի մը երկար հառաչանքովը փախաւ։

Արդէն ըսինք որ բոլոր ծառաները աներեւոյթ եղեր էին։

Ուստի Պ. տը Վիլըֆօր ստիպուեցաւ տ'Ավրինեին աղաչել որ մեծ քաղաքաց մէջ մանաւանդ այսպիսի կասկածելի պարագաներով մեւեալի մը պահանջած այն անթիւ և փափուկ արարողութիւնները՝ ի գործ դնէ։

Իսկ Նուարթիէի առանց շարժման դպացած վիշտը և յուսահատութիւնը և առանց ձայնի թափած արտասուքը տեսնելը սոսկալի էր։

Վիլըֆօր իր դահլիճը մտաւ. տ'Ավրինեի դիակ քաղաքապետին բժիշկը կանչելու, որ մեւեալոց քննութեան պաշտօնն ունէր, և որուն մեւեալոց բժիշկ անունը կու տային։

Նուարթիէ ամենևին չուզեց իր աղջկան քովէն բաժնուիլ։

Կէս ժամ եաքը Պ. տ'Ավրինեի իր պաշտօնակիցին հետ վերադարձաւ. փողոցին դռները պոցուած էին, և որովհետև դռնապանն ալ միւս ծառաներուն հետ փախչեր էր, Վիլըֆօր ստիպուեցաւ անձամբ երթալ դուռը բանալու։

Սակայն սանդուխին գաւթին վրայ կեցաւ. մեւեալին սենեակը մտնելու այժ չունէր ալ։

Ուստի երկու բժիշկները առանձին մինչև Վալանթինի քովը գացին։

Նուարթիէ մեւեալին պէս դունատեալ և անոր պէս անշարժ և անձայն անոր անկողնոյն քովը կը դտնուէր։

Մեւեալոց բժիշկը իր կէս կեանքը դիակներու հետ անցընող մարդու մը անտարբերութեամբը մեւեալին մօտեցաւ, նորատի աղջկան վրայ ծածկուած սաւանը վերցուց, և անոր շրթները միայն կէս մը բացաւ։

— Ո՛հ, ըսաւ տ'Ավրինեի հառաչելով, խեղճ աղջիկ, նա տարեալ մեռած է։

— Այո՛ —, պատասխանեց բժիշկը լակոնական ոճով Վալանթինի երեսը ծածկող սաւանը վերստին դոցելով։

Նուարթիէ խորդալու կամաց ձայն մը հանեց։

Տ'Ավրինեի անոր նայեցաւ, ու տեսաւ որ ծերունւոյն աչերը քոցավառ կ'երևէին։

Բարեսիրտ բժիշկը իմացաւ որ Նուարթիէ իւր թոռան երեսը տեսնել կ'ուզէր։

Անկողնոյն մօտեցաւ, և երբ մեռելոց բժիշկը Վալանթինի շըրթերուն դպցած մատերը քղորացեալ ջուրի մէջ կը լուար, տ'Ավրինեի նորատի աղջկան հանդարտ և ժպտոյն երեսը բացաւ, որ ննջողը հրեշտակի մը երեսին կը նմանէր։

Նուարթիէի աչաց մէկ ծայրը երևցած արտասուաց կաթիլ մը բարի բժշկին շնորհակալութեան նշանն եղաւ։

Մեռելոց բժիշկը նոյն Վալանթինի սենեկին մէջ սեղանի մը վրայ իւր գրաւոր վկայութեան բարձր արարողութիւնը կատարէլէն ետև՝ տանը բժշկին առաջնորդութեամբը սենեկէն դուրս ելաւ։

Վիլըֆոր անոնց վար իջնելը լսեց և իւր դահլիճին դուռը ելաւ։

Ֆանի մը խօսքով իւր շնորհակալութիւնը բժշկին յայտնեց և տ'Ավրինեին դառնալով,

— Հիմա, ըսաւ, քահանայ մը պէտք է։

— Եկեղեցական մը ունիք, որուն մանաւորապէս կ'ուզէք յանձնել Վալանթինի համար աղօթք ընելը, հարցուց տ'Ավրինեի։

— Ոչ, ըսաւ Վիլըֆոր, ամենէն մօտ բնակող քահանան կանչեցէք։

— Ամենէն մօտ գտնուողը, ըսաւ բժիշկը, Իտալացի բարի աբբայ մ'է, որ ձեր տան քովի տունը բնակելու եկած է։ կ'ուզէք որ ասկէ երթալու առեն իմացընեմ անոր։

— Տ'Ավրինեի, ըսաւ Վիլըֆոր, հաճեցէք, կ'աղաչեմ, պարոնին ընկերանալու։ Ահա տանս բանալին, որպէս զի կարենաք ուզած ժամանակիդ մտնել ու ելնել։ Քահանան հետերնիդ բերէք, և իմ խեղճ զաւկիս սենեակը տարէք։

— Կը փափաքիք անոր հետ խօսելու, բարեկամ։

— Առանձին մնալ կ'ուզեմ։ Կը ներէք ինձ, այնպէս չէ։ Քահանայ մը անշուշտ ամեն վիշտերը կը հասկընայ, հայրական վիշտն անգամ—։

Եւ Վիլըֆոր տ'Ավրինեին բանալի մը տալով՝ օտար բժիշկը երկրորդ անգամ բարևեց և իւր դահլիճը մտաւ, ուր սկսաւ աշխատիլ։

Տեսակ մը կազմութիւն ունեցող մարդոց համար աշխատութիւնը ամեն վշտաց դեղն է։

Փողոցին դուռը իջած ժամանակնին՝ եկեղեցականի հագուստով մարդ մը տեսան, որ մօտակայ դրան սեմոյ վրայ կանգնած էր։

— Ահա ձեղի յիշած քահանաս—, ըսաւ մեռելոց բժիշկը տ'Ավրինեին։

Տ'Ավրինեի եկեղեցականին մօտեցաւ։

— Պարոն, ըսաւ անոր, արդեօք կարելի՞ է որ բարեհաճիք մեծ ծառայութիւն մը մատուցանել թշուառ հօր մը, պ. որ Վիլըֆոր թագաւորի դործակալին, որ իւր զաւակը կորսնցուց։

— Ո՛հ, պարոն, պատասխանեց քահանան բուն Իտալացի արտասանութեամբ մը, այո՛, դիտեմ, մեռեալը անոր տան մէջ կը գտնուի։

— Ուրեմն հարկ չկայ իմացընել ձեզ թէ ինչ տեսակ ծառայութիւն կ'ըսպասէ ձեզմէ։

— Հիմա ես անձամբ սիրտի գայի, պարոն, ըսաւ քահանան. մեր կոչումն է մեր պարտքը կատարելու պատրաստ գտնուիլ։

— Մեռեալը ծաղկահաս աղջիկ մ'է։

— Այո՛, դիտեմ. տունէն փախչող ծառաներէն իմացայ։

«Իմացայ նաև որ անոր անունը Վալանթին է, և արդէն անոր համար աղօթք ըրի։

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, պարոն, ըսաւ տ'Ավրինեի. ուրեմն քանի որ ձեր սուրբ պաշտօնը սկսեր էք՝ ի գործ դնել, հաճեցէք շարունակել զայն։

«Եկէք մեռեալին քովը ձեր պարտքը կատարելու, և սղոյ մէջ ընկղմած ամբողջ ընտանիք մը ձեզ երախտապարտ պիտի ըլլայ։

— Կու գամ, պարոն, պատասխանեց աբբան, և կը համարձակիմ ըսել որ խիստ ջերմեռանդութեամբ պիտի աղօթեմ—։

Տ'Ավրինեի աբբային ձեռքէն բռնեց, և առանց Վիլըֆորի հանդիպելու, որ իւր դահլիճը փակուեր էր, մինչև Վալանթինի սենեակը տարաւ զան, որուն դիապատիկները հետագայ դիշերը պիտի գային իրենց գործը կատարելու։

Երբ սենեակը մտան, Նուարթիէ ուշադրութեամբ աբբային

նայեցաւ, և անտարակոյս մանաւոր բան մը տեսաւ անոր վրայ, քանզի իր նայուածքը անոր վրայէն չվերցուց։

Տ՝Ավրինեի ոչ միայն մեռեալը այլ և կենդանի ծերն ալ աբբային խնամոյը յանձնեց, և աբբան խոստացաւ Վալանթինի համար աղօթք ընել և Նուարթիէի հոգ տանիլ, և անտարակոյս իր աղօթելու ժամանակ չընդմիջուելու, և Նուարթիէն իր վշտացը մէջ աղատ ձգելու համար՝ տ՝Ավրինեին մեկնելուն պէս՝ ոչ միայն բժշկին դուրս ելած դրան, այլ և տիկին տը Վիլըֆօրի սենեակը տանող կրան պարզուն հակները դրաւ։



ԳԼՈՒԽ Ե

ՏԱՆԵԱՑՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ առտու տխուր և ամպամած էր։

Գիշերը՝ դիասպահները իրենց սղալի պաշտօնը կատարեր էին, անկողնոյ վրայ տարածուած մարմինը մեռեալներուն տխուր պատանին մէջ կարեր էին, այն պատանին, որ մեռեալին կենացը մէջ իրեն սիրելի եղած բանին մէկ վերջին նշանը կը կրէ, թէև մեռեալները հաւասար են ըսուի։

Այս պատանը տան և հինգ օր առաջ ծալկահաս աղջկան ջնաց ջքեղ բարակ կտաւի կտոր մ՝էր։

Այս գործին համար կանչուած մարդիկը Նուարթիէն չլուսցած Վալանթինի սենեկէն իր սենեակը տարեր էին, և ամենուն ակնկալութեան հակառակ՝ ծերունին ամենևին դժուարութիւն չցուցուցեր էր իր թոռան մարմնոյն քովէն հեռանալու։

Աբբայ Պիւզոնին միտքէ լուսնալը անոր վրայ հսկեր էր, և առաւտու միայն իր տունը դացեր էր առանց մէկը կանչելու։

Ժամը պէտ՝ի ութին՝ տ՝Ավրինեի գալով՝ Վիլըֆօրը տեսաւ որ Նուարթիէի սենեակը կ՝երթար. ինքն ալ անոր ընկերացաւ, որպէս զի իմանայ թէ ծերունին գիշերը ինչպէս անցուց։

Անկողնոյ տեղ ծառայող մեծ թևաթոռին վրայ քաղցր և դրեթէ ժպտախառն քունի մը մէջ պտան գան։

Երկուքնին ալ զարմացած սեմոյ վրայ կեցան։

— Տեսէք, ըսաւ տ՝Ավրինեի Վիլըֆօրին, որ իր քնացող հօրը կը նայէր. տեսէք, ինչպէս բնութիւնը ամենէն սաստիկ վիշտերը հանդարտեցընելու կարող է. անշուշտ չենք կրնար ըսել թէ Պ. Նուարթիէն իր թոռը չէր սիրեր, այսու ամենայնիւ քնացեր է։

— Այո՛, և իրաւունք ունիք, պատասխանեց Վիլըֆօր զարմանքով մը. քնացեր է, և խիստ տարօրինակ կ՝երեւի ինձ այս բանս, վասն զի ամենափոքրիկ արգելք մը ամբողջ գիշերներ առնոր քունը կը փախցընէր։

— Վիշտը յաղթած է գան —, պատասխանեց տ՝Ավրինեի։

Եւ երկուքնին միասեղ թագաւորի դործակալին դահլիճը վերադարձան։

— Հաւատացէք, ըսաւ Վիլըֆօր իր չարուած անկողինը տ՝Ավրինեին ցուցընելով, որ ես ամենևին չքնացայ. վիշտը երբէք չյաղթեր գիս. երկու գիշեր է որ անկողնոս մոտած չեմ. բայց ասոր փոխարէն, իմ գրասեղանս նայեցէք, ան Ճոտած իմ, այս երկու օրուան և երկու գիշերուան մէջ որչափ գիր գրեցի... որչափ անդամ այս թղթոց ծրարները խառնեցի... և այն պէնէֆէթթօ մարդասպանին ամբաստանութեան յայտարարութիւնը արձանագրեցի... Ո՛վ աշխատութիւն, աշխատութիւն, դուն իմ սէրս, ուրախութիւնս և բարկութիւնս ես, քեզմով իմ բոլոր վիշտերուս կը յաղթեմ —։

Եւ դողդոջուն ձեռքով տ'Ավրինեի ձեռքը սեղմեց։

— Ինձի պէտք ունիք, հարցուց բժիշկը։

— Ոչ, ըսաւ Վիլըֆօր. միայն թէ ժամը տասն ու մէկին կը խնդրեմ որ պաք. յուղարկաւորութիւնը կէս օրին տեղի պիտի ունենայ.... Ո՛վ Աստուած իմ, խեղճ զաւակս, ողորմելի աղջիկս —։

Եւ թաղաւորի դործակալը աչերը դէպ 'ի երկինք վերցուց ու հառաչանք մը հանեց։

— Ընդունելութեան սրահը դո՞ւք պիտի դանուիք, հարցուց տ'Ավրինեի։

— Ոչ, աղդական մը ունիմ, որ այս տխուր պաշտօնին յանձնառու պիտի ըլլայ։ Իսկ ես պիտի աշխատիմ, պարոն բժիշկ. երբ կ'աշխատիմ, ամէն բան կը մոռնամ —։

Իրօք բժիշկը դեռ դուռը չհասած՝ արդէն թաղաւորի դործակալը աշխատութեան նստեր էր։

Սանդուխին դաթին վրայ՝ տ'Ավրինեի այն աղդականին հանդիպեցաւ, որուն վրայ Վիլըֆօր իրեն խօսեր էր. այս անձը մեր պատմութեան, ինչպէս նաև ընտանիքին մէջ աննշան մէկն էր, այնպիսի անձերէն էր, որոնք ծնած ժամանակնին աշխարհիս օդտակար ըլլալու համար ուխտած են ըլլենք։

Ճշդութիւնը կը յարդէր, սև դդեստներ հադած էր, թևին վրայ սև շղարշ մը կապեր էր, և այնպիսի հանդիսի մը մէջ ներկայանալու համար իր դէմքը առժամանակեայ յարմարցուցեր էր։

Ժամը տասն ու մէկին յուղարկաւորութեան կառքերը տան բակը խոնեցան, և Ֆօպուր-Սէնթ-Օնօրէ փողոցը ժողովրդեան մըրմունջներով լցուեցաւ, որոնք հարստաց ուրախութեանց կամ սուդին հատասարապէս կը փափաքին, և դքսուհւոյ մը ամուսնութեան երթալու չափ փութով հանդիսաւոր յուղարկաւորութեան կը վազեն։

Կամաց կամաց հանդուցեալին սրահը լեցուեցաւ, և ամենէն առաջ մեր ճանչցած հին բարեկամները եկան, որոնք էին Տըպրէ, Շաթօ-Ռընօ և Պոշան. ասոնցմէ ետև եկան երևելի առեւնականներ, դրագէտներ և պաշտօնատարներ. վասն զի Պ. տը Վիլը-

ֆօր իր բարձր պաշտօնովն ու անձնական արժանաւորութեամբը Բարիզեան ընկերութեանց առաջին կարդէն կը համարուէր։

Աղդականը դուռը կեցած էր և ամէն մարդու ընդունելութիւն կու տար. ստոյգն ըսելով անտարբեր մարդոց համար սփոփանք մ'էր հոն այնպիսի անտարբեր դէմք մը տեսնելը, որ հանդիսականներէն պատիր կերպարանք և կեղծ արտասուք չէր պահանջեր, ինչպէս որ հայր մը, եղբայր մը կամ նշանած մը պիտի պահանջէր։

Իրարու ծանօթ եղողները ակնարկով զիրար կը կանչէին և խմբեակներ կը կազմէին։

Այս խմբեակներէն մէկը կը բաղկանար Տըպրէէն, Շաթօ-Ռընոյէն և Պոշանէն։

— Խեղճ աղջիկ, ըսաւ Տըպրէ՝ ուրիշներուն պէս ինքն ալ այն ցաւալի դէպքին վրայ ակամայ քանի մը խօսք յարելով, խեղճ աղջիկ, ուրչափ հարուստ և ինչպէս գեղեցիկ էր։ Երբէք մտքերնէդ կ'անցնէր այս բանս, Շաթօ-Ռընօ, երբ ասկէ երեք շաբաթ կամ աւ աւաւելն ամիս մը առաջ իր ամուսնութեան դաշնագիրը ստորագրելու եկանք, և չկրցանք ստորագրել։

— Ստուգիւ ամենևին մտքէս չէր անցներ, ըսաւ Շաթօ-Ռընօ։

— Կը ճանչնայիք զան։

— Տիկին տը Մորսէրֆի պարահանդէսին մէջ մէկ կամ երկու անդամ հետը խօսեցայ. հիանալի աղջիկ մը երևցաւ ինձ, թէև քիչ մը տխուր։ Ո՞ւր է անոր մօրուն, դիտէք։

— Մեզ ընդունելութիւն տուող այս պարոնին կնոջը այցելութեան դնաց։

— Ո՞վ է այս պարոնը։

— Ո՞ր պարոնը։

— Մեզ ընդունելութիւն տուողը. պատդամաւորաց ժողովէն է։

— Ոչ, ըսաւ Պոշան, ամէն օր մեր պատուելիները տեսնելու դատապարտուած եմ, և այս դէմքը անոնց մէջ տեսած չեմ։

— Այս մահուան վրայ ձեր օրագրին մէջ խօսեցա՞ք։

— Անոր մէջ յօդուած մը կայ, բայց իմս չէ, այնպիսի յօդուած մը, որ Պ. տը Վիլըֆօրին հաճելի ըլլալուն իսկ տարա-

կոյս ունիմ։ Քանի կարծեմ ըսուած է անոր մէջ թէ թագաւորի պարոն դործակալը անշուշտ աւելի պիտի յուղուէր, եթէ այն չորս մեռեալները հետզհետէ ուրիշ տան մէջ պատահէին։

— Սակայն, ըսաւ Շաթօ-Ռընօ, ա'Ավրինեի՝ որ մօրս բժիշկն է՝ կը հաստատէ որ թագաւորի պարոն դործակալը մեծ յուսահատութեան մէջ ինկած է։

— Բայց ղո՞վ կը փնտռէք, Տըպրէ։

— Պ. տը Մօնթէ-Քրիսթօն կը փնտռեմ, պատասխանեց երիտասարդը։

— Հոս դալու ժամանակս ծառուղիին վրայ անոր Հանդիպեցայ, ըսաւ Պոշան, որ իւր սեղանատուրին տունը կ'երթար, կարծեմ թէ հիմա անորմէ բաժնուած է։

— Իւր սեղանատուրին կ'ըսէք. իւր սեղանատուրը Տանկլարը չէ՞, հարցուց Շաթօ-Ռընօ Տըպրէին։

— Կարծեմ թէ ան է, պատասխանեց մեր երիտասարդը թեթեւ շփոթութեամբ մը. բայց պ. տը Մօնթէ-Քրիսթոյէն զատ ուրիշներ ալ կան, որոնք եկած չեն. Մորէլը չեմ տեսներ հոս։

— Մորէլ ըսիք, միթէ Մորէլ գանոնք կը ճանչնայ, հարցուց Շաթօ-Ռընօ. կարծեմ թէ միայն տիկին տը Վիլֆոռին ներկայացաւ։

— Հոդ չէ, պէտք էր դալ, ըսաւ Տըպրէ. այս իրիկուն ինչ բանի վրայ պիտի խօսի, այս յուղարկաւորութիւնը օրուան լուրն է. բայց լսենք, ահա ոստիկանութեան պարոն դործակալը, հիմա իւր վշտակցութիւնը լայտղ ազդականին յայտնելու պարտաւորեալ պիտի կարծէ ինքզինքը —։

Եւ երեք երիտասարդները դրան մօտեցան, որպէս զի ոստիկանութեան պարոն դործակալին փոքրիկ առեղծուածը լսեն։

Պոշան սասյգ ըսեր էր։

Յուղարկաւորութեան հանդէսին դալու առենը Մօնթէ-Քրիսթոյի տեսեր էր, որ Շոսէ-ա'Անթէնն փողոցը, Տանկլարի տունը կ'երթար։

Սեղանատրը կոմսին կառքը իւր տան բակը մտնելը պատուհանէն տեսնելով, զան դիմաւորելու եկեր էր տխուր բայց քաղցր դէմքով մը։

— Ո՛հ, կոմս, ըսաւ իւր ձեռքը Մօնթէ-Քրիսթոյին երկնցընելով, արդեօք ձեր վշտակցութիւնը ինձ յայտնելո՞ եկաք։ Սատանի դժբաղդութիւնը իմ տանս մէջ կը բնակի, այնպէս որ երբ ղձեզ տեսայ, իրաւի կը հարցընէի թէ արդեօք ես ալ խեղճ Մորսէրֆի ընտանեաց դժբաղդութեանը պատճառ եղայ. այս բանս այն աստիճան խօսքը կ'ըստուդէ թէ՝ «Ո՛վ որ ուրիշին դէշ կ'ուզէ, դէշը իր գլուխը կու դայ»։ Ճշմարիտ կ'ըսեմ, հատատայ էք ինձի որ իմ միտքս Մորսէրֆին դէշութիւն ընել չէր։

«Մորսէրֆ ինձի պէս ոչինչէ յատաջ եկած և ինձի պէս ամեն բան իւր վաստակովը սատցած ըլլալուն՝ պէտք չէր հպարտանալ. բայց ամեն մարդ իւր պակասութիւններն ունի։ Ո՛հ, զգուշացէք, կոմս, մեր ժամանակակից մարդիկը . . .։ Բայց ներեցէք, դուք մեր ժամանակին չէք վերաբերիր, դուք երիտասարդ մ'էք . . .։ Մեր ժամանակակից մարդիկը այս տարի խիստ դժբաղդ են. այս բանիս վկայ է թագաւորի խոստովրա գործակալը, վկայ է Վիլլըֆոր, որ իւր աղջիկն ալ կորսնցուց։ Համառօտիւ կ'երկրորդեմ. Վիլլըֆոր տարօրինակ կերպիւ իւր բոլոր ընտանիքը կորսնցուց. Մորսէրֆ անպատուեցաւ և ինքզինքը սպաննեց. ես ալ այն դարշելի պէնէֆէթթոյին եղեռնագործութեամբը խայտառակուեցայ. ասկէ զատ . . .։

— Ասկէ զատ ինչ ունիք, հարցուց կոմսը։

— Ափսոս, չէք պիտեր ո բեմն։

— Նոր դժբաղդութիւն մը պատահեցաւ։

— Աղջիկս . . .։

— Օրիորդ Տանկլարը։

— Էօժէնին մեղմէ բաժնուեցաւ։

— Ո՛վ Տէր Աստուած, ինչ կ'ըսէք։

— Այո՛, սիրելիդ իմ կոմս. որչափ երջանիկ էք եղեր որ ո՛չ կին ունիք և ո՛չ զաւակ։

— Այնպէս կը կարծէք։

— Ո՛հ, այո՛։

— Ուրեմն օրիորդ Էօժէնին . . .։

— Այն թշուառականին ըրած նախատինքը չկրնալով տանիլ, Ճանապարհորդելու համար հրաման խնդրեց ինձմէ։

— Եւ մեկնեցաւ :

— Անցեալ գիշեր :

— Տիկին Տանկլարի՞ հետ :

— Ոչ, ազգականուհւոյ մը հետ . . . : Փոքր կորուստ մը չէ այս . քանզի իւր բնութիւնը ճանչնալովս՝ մեկ մ'ալ Գաղղիա դառնալուն սարակոյս ունիմ :

— Ընտանեկան վիշտերը, սիրելիդ իմ սեպուհ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, անտանելի են այն խեղճ մարդուն համար, որուն զաւակը իւր բոլոր հարստութիւնն է, սակայն միլիոնատէրի մը համար անոնք անցաւոր բաներ են : Փիլիսոփաները ինչ որ կ'ուզեն՝ թող ըսեն . փորձառու մարդիկ իրենց գործերովը անոնց ըսածին հակառակը կը հաստատեն . ստակը ամեն բանի մէջ մարդուս ուրախութիւն կու տայ, հետևաբար դուք ալ ար և է մարդոյմէ աւելի սիրտիանք կրնաք գտնել, և ստակին պերապոյն զօրութիւնը կը ճանչնաք, դուք որ հարստութեան կողմանէ թագաւոր մ'էք, և կարողութիւնդիդ ամեն բանի կը հասնի — :

Տանկլար կողմնակի ակնարկ մը շրջեց կոմսին վրայ, որպէս զի տեսնէ թէ ինքը կը հեգնէ՞ թէ առանց կատակի կը խօսի :

— Այո՛, ըսաւ, ստոյգ է որ հարստութիւնը մարդս կը մխիթարէ, և ես պէտք եմ մխիթարուիլ . քանզի հարուստ եմ :

— Այնչափ հարուստ էք, սիրելիդ իմ սեպուհ, որ ձեր հարստութիւնը բուրգերու կը նմանի, զորոնք եթէ կործանել ուզէ մարդ՝ պիտի չհամարձակի, և եթէ համարձակի իսկ՝ չպիտի կարենայ — :

Տանկլար կոմսին այս բարեսիրտ վստահութեանը վրայ ժպտեցաւ :

— Այս ըսածնիդ կը յիշեցնէ ինձ, ըսաւ, որ հոս եկած ժամանակնիդ հինգ փոքր վճարապիրեր շինելու վրայ էի . արդէն երկուքը ստորագրեցի, կը բարեհաճիք ներել ինձ որ մնացեալ երեքն ալ ստորագրեմ :

— Լռեցուցէք, սիրելիդ իմ սեպուհ, լռեցուցէք — :

Վայրկեան մը լռութիւն եղաւ, ինչ ատեն սեղանաւորը իւր գրչին ձայնը կը հանէր, և կոմսը առաստաղին ոսկեզօծեալ քիւերուն կը նայէր :

— Սպանիոյ պարտամուրհակներ են ատոնք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ, Հայիթիի թէ Նարօլիի :

— Ոչ, ըսաւ Տանկլար իւր ամբարտաւան ձիծաղովը, գաղղիոյ լումայանոցին վրայ քաշուած պրաբերին վճարելի տոմսակներ են, Նայեցէք, յաւելցուց սեղանաւորը, պարոն կոմս, դուք որ հարստութեան կողմանէ կայսր մ'էք, ինչպէս որ ես թագաւոր մ'եմ, այս մեծութեամբ թղթի շատ կտորներ տեսած էք, որոնք մեկ միլիոն արժողութիւն ունենան — :

Մօնթէ-Քրիսթօ Տանկլարին դուռդութեամբ իրեն ներկայացուցած հինգ կտոր թղթերը կշռելու համար իւր ձեռքը մէջ առաւ և կարդաց .

« Գաղղիոյ Լումայանոցին տեսուչները բարեհաճի վճարել իմ հրամանիս, և՛ի հաշիւ իմ ունեցած պրամապետոյս՝ մեկ միլիոն :

« ՍԵՊՈՒՀ ՏԱՆԿԼԱՐ » :

— Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, հինգ միլիոն, կեցցես, այս ինչ դումարներ են, իշխանդ Կրեսոս :

— Ահա ես այսպէս գործեր կ'ընեմ, ըսաւ Տանկլար :

— Հիանալի են ատոնք, մանաւանդ եթէ, ինչպէս որ տարակոյս չունիմ, այս դումարը կանխիկ վճարուի :

— Կանխիկ պիտի վճարուի, ըսաւ Տանկլար :

— Ինչպէս ազէկ բան է այսպիսի վարկ մը ունենալը . տուդիւ միայն Գաղղիոյ մէջ այսպիսի գործեր կ'ընեն . հինգ թղթի կտորներ հինգ միլիոն արժեն . մարդս մինչև որ չտեսնէ՝ չհաւատար :

— Կը տարակուսիք :

— Ոչ :

— Այնպիսի ձայնով մը կ'ըսէք որ . . . : Բայց կեցէք, զբօսնելու համար կ'ուզէք պրագրիս հետ լումայանոցը երթալ, պիտի տեսնէք որ նոյն դումարին արժողութիւնը ստանալով դուրս պիտի գաք :

— Ոչ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ հինգ տոմսակները ծալլելով,

ոչ, խիստ հետաքրքրական բան մ'է այս, և ես անձամբ փորձը կ'ուզեմ ընել: Ձեր վրայ վեց միլիոնի վարկ ունէի, ինը հարիւր հազար ֆրանքը առի, հինգ միլիոն հարիւր հազար ֆրանք ինծի պարտք ունիք. ձեր հինգ կտոր թղթերը ես կ'առնում, որոնց վրայ ձեր ստորագրութիւնը տեսնելով, իբրև վճարագիր կ'ընդունիմ զանոնք, և ահա ձեզ ընդհանուր ընկալագիր մը վեց միլիոն ֆրանքի համար, որով մեր հաշիւը կանոնաւորած կ'ըլլանք: Առաջին պատրաստեր էի զայն. ըստ որում սէտք եմ ըսել որ այսօր ստակի խիստ պէտք ունիմ— :

Եւ մէկ ձեռքով Մօնթէ–Քրիսթօ հինգ տոմսակները ծոցը դրաւ, և միւսովը իր ընկալագիրը սեղանաւորին երկնցուց:

Եթէ Տանկլարի ոտքին կայծակ մը իյնար, այնպիսի մեծ տոսկամ մը պիտի չզգաստանար անոր:

— Ինչ, կակաչեց սեղանաւորը, պարոն կոմս, այս դումարը դո՞ւք կ'առնէք. բայց ներեցէք, այս դումարը առանց մ'է իմ քովս, և աղքատանոցայ պարտաւոր եմ, որոնց այս առտու վճարելու խօսք տուեր էի:

— Ո՛հ, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ, այդ տարբեր խնդիր է, և ես չեմ պնդեր որ ձիշդ այս հինգ տոմսակները ինձ տաք, ուրիշ կերպով վճարեցէք ինծի. միայն հետաքրքրութենէ շարժեալ ատնք ուզեցի, որպէս զի ամէն մարդու կարենամ ըսել թէ Տանկլարի լումայատունը առանց ապդարարութիւն մը ունեցած ըլլայու և առանց հինգ վայրկեան իսկ պայմանաժամ խնդրելու՝ կանխիկ հինգ միլիոն ֆրանք վճարեց ինծի. ուրչափ մեծ համբաւ պիտի պատճառէր ձեզ: Բայց ահա առէք ձեր վճարատոմսերը, և կը կրկնեմ, ուրիշ վճարատոմսեր առէք ինծի — :

Եւ հինգ տոմսակները Տանկլարին կը ներկայացնէր, որ կապոյտ գոյն մը ստանալով նախ իր ձեռքը երկնցուց, ինչպէս որ անդղ մը իր առջևէն առնուած միսի կտորը բռնելու համար վանդակին մէջէն իր մատիները կ'երկնցընէ:

Բայց յանկարծ իր միտքը փոխեց, ինքզինքը զսպեց և ձեռքը քաշեց:

Եաքը սկսաւ ժպտիլ, և իր այլայլեալ դիմաց գիծերը առնլի հանդարտ երեցան:

— Ո՛հ, իրօք ձեր ընկալագիրն ալ ստակ է, ըսաւ:

— Անշուշտ, և եթէ հոս պանուէիք, Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը, ձեզի պէս առանց դժուարութիւն ցուցընելու, իմ ընկալագիրս տեսնելով պիտի վճարէր ձեզ:

— Ներեցէք, պարոն կոմս, ներեցէք:

— Ուրեմն այս տոմսակները կրնամ առնուլ:

— Այո՛, ըսաւ Տանկլար իր հերերուն արմատէն մարգարտի նման հոսած քրտինքը սրբելով, առէք, առէք —:

Մօնթէ–Քրիսթօ հինգ տոմսակները վերստին իր ծոցը դրաւ դիմաց այն անհնարագրելի շարժումով մը, որով ըսել կ'ուզէր.

— Մտածեցէք, եթէ զղջացած էք, դեռ ժամանակ ունիք:

— Ոչ, ըսաւ Տանկլար, ոչ. ստուգիւ պահեցէք վճարատոմսերս: Բայց դուք աղէկ դիտէք, որ հարուստ մարդ մը ամենափոքր բաներու ալ ուշադրութիւն կ'ընէ. այս ստակը աղքատանոցայ համար սահմաներ էի, և ձիշդ այս տոմսակները չտալով կը կարծէի թէ զանոնք անոնցմէ պիտի դողնամ, որպէս թէ ուրիշ ստակ մը այս ստակին արժողութիւնը չունի: Ներեցէք, կ'աղաչեմ— :

Եւ սկսաւ բարձրաձայն բայց իր ջիղերովը ծիծաղիլ:

— Կը ներեմ, պատասխանեց Մօնթէ–Քրիսթօ քաղցրութեամբ մը, և այս վճարատոմսերը կ'ընդունիմ— :

Եւ զանոնք իր թղթապարանին մէջ գետեղեց:

— Բայց, ըսաւ Տանկլար, հարիւր հազար ֆրանքի հաշիւ մը ունինք:

— Ո՛հ, ոչինչ բան է, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ: Լումայաշահը դուցէ նոյն դումարին հաւասար պայ. պահեցէք զայն, և մենք առնելիք տալիք չենք ունենար:

— Կոմս, ըսաւ Տանկլար, առանց կատակի կը խօսիք:

— Սեղանաւորներու հետ ամենևին կատակ չեմ ըներ —, պատասխանեց Մօնթէ–Քրիսթօ անպատեհ ծանրութեամբ մը:

Եւ մեկնելու համար դէպ 'ի դուռը յառաջացաւ ձիշդ այն միջոցին որ սենեկապանը աղքատանոցայ ընդհանուր դրամաժողովը, որ Պովիլի գալուստը կ'իմացընէր:

— կը տեսնեմ որ Ճիշդ ժամանակին հասեր եմ ձեր վճարա-
տումները ընդունելու, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ, եթէ ոչ ուրիշը
պիտի առնուր զանոնք — :

Տանկլարի դոյնը երկրորդ անգամ նետեց, և փութայ կոմսէն
բաժնուելու :

Մօնթէ–Քրիսթօ պատուով ողջունեց Պ. տը Պովիլը, որ
սպասելու սրահը ոտքի վրայ կեցած էր, և Մօնթէ–Քրիսթոյի
մեկնելէն անմիջապէս ետքը Պ. Տանկլարի պահլիճը հրամայուելին
ընդը :

Կոմսին դիմաց ծանրութիւնը խոկոյն աւժամանակեայ ժպիտի
մը փոխուեցաւ, երբ աղքատանոցայ պարոն դրամաժողովին ձեռ-
քը պարտամուրհակայ թղթապարանը տեսաւ :

Դրան առջև իր կառքը իրեն կ'ըսպասէր. կոմսը կառավարին
հրամայեց որ խոկոյն լումայանոցը տանի զինքը :

Տանկլար իւր շփոթութիւնը զսպելով, դրամաժողովը դիմաւո-
րելու եկաւ :

Աւելորդ է ըսել թէ ժպիտն ու քաղցրութիւնը իւր շրթանց
վրայ տպաւորուած էին :

— Բարի եկաք, պարոն պարատտէրա, ըսաւ սեղանաւորը,
վասն զի դրաւ կը դնեմ որ դումարը պահանջելու եկած էք :

— Ճիշդ է դուշակածնիդ, պարոն սեպուհ, ըսաւ Պ. տը Պո-
վիլ, քանզի աղքատանոցները իմ միջոցաւս ձեզ կը ներկայանան.
որբերն ու այրիները իմ բերանովս ձեզմէ հինգ միլիոնի ողորմու-
թիւն մը կը խնդրեն :

— Եւ որբերուն համար կ'ըսեն թէ յաւելեալ վիճակի մէջ կը
գտնուին, ըսաւ Տանկլար կատակը երկնցընելով, խեղճ արա-
րածներ :

— Ես ալ անոնց անունովը ձեզ կը ներկայանամ, ըսաւ Պ.
տը Պովիլ. անշուշտ երէկ նամակս ընդունած էք :

— Այո՛ :

— Ահա ընկալագրովս ես ալ եկայ :

— Սիրելիդ իմ Պ. տը Պովիլ, ըսաւ Տանկլար, ձեր այրի-
ներն ու որբերը Թող բարեհաճին քսան ու չորս ժամ սպասել.

քանզի Պ. տը Մօնթէ–Քրիսթօ, որուն ասկէ դուրս ելնելը տե-
սաք . . . տեսաք զան, այնպէս չէ՞ :

— Այո՛, ի՞նչ կայ :

— Ի՛նչ կայ. Պ. տը Մօնթէ–Քրիսթօ անոնց հինգ միլիոնը
առաւ դնաց :

— Ի՞նչպէս :

— Կոմսը անսահման վարկ մը ունէր իմ վրաս, վարկ մը՝ զոր
Հռոմի Թոմսըն և Ֆրէնչ լումայատունը բացեր էր : Ա.յսօր եկաւ
հինգ միլիոնը մէկտեղ ուզեց, ու ես լումայանոցին վրայ վճարա-
տոմս մը տուի անոր. իմ դրամաղլուխս այն լումայանոցին մէջ
դրած ըլլալուս՝ կը վախնամ որ մէկ օրուան մէջ անկէ տասը մի-
լիոն քաշելս տարօրինակ չերեւի անոր տնօրէնին : Բայց եթէ եր-
կու օրուան մէջ տասը միլիոն քաշեմ, յաւելցուց Տանկլար ժպտե-
լով, հոգ չէ :

— Կառավարը թողուցէք, դոչեց Պ. տը Պովիլ չհատատալու
կերպով մը. հինգ միլիոն վճարեցիք կ'ըսէք այն պարոնին, որ
հիմա ասկէ դուրս կ'ելնէր, և դիս այնպէս բարեւեց որպէս թէ
առաջէն կը ճանչնար :

— Գուցէ դուք զինքը չճանչցած՝ ան ճանչնայ զձեզ. քանզի
Պ. Մօնթէ–Քրիսթօ ամեն մարդ կը ճանչնայ :

— Հինգ միլիոն :

— Ահա անոր ընկալագիրը. Թովմաս առաքելոյն պէս ըրէք.
տեսէք և շօշափեցէք — :

Պ. տը Պովիլ Տանկլարին իրեն ներկայացուցած թուղթը ա-
ռաւ և կարդայ.

«Ընկալայ ՚ի Պ. սեպուհ Տանկլարէ զդումար հինգ միլիոն
հարիւր հազար ֆրանքի, զորոնք ուղած ժամանակը Հռոմի Թոմ-
սըն և Ֆրէնչ վաճառատունէն պիտի ընդունի » :

— Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը կը ճանչնաք :

— Այո՛, ըսաւ Պ. տը Պովիլ, ժամանակաւ երկու հարիւր
հազար ֆրանքի դործ մը ըրի անոր հետ, բայց անկէ ՚ի վեր ա-
նոր վրայ խօսուիլը չլսեցի :

— Եւրոպայի ամենէն երեւելի վաճառատուներէն մէկն է, ըսաւ Տանկլար ընկալաւ իրը պ. տը Պովիլի ձեռքէն առնելով և անտարբերութեամբ պրասեղանին վրայ նետելով։

— Եւ այսպէս միայն ձեր վրայ հինգ միլիոն ունէր. ինչ կ'ըսէք, ուրեմն շահապ մ'է այդ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը։

— Ստուգիւ ինչ ըլլալը չեմ գիտեր. սա գիտեմ որ երեք անսահման վարկեր ունէր, մէկը իմ վրաս, մէկը Րոչիլտի և միւսը Լաֆիթթի վրայ, և հարիւր հազար ֆրանք միայն լումայաշահի համար ինձ թողուց —։

Պ. տը Պովիլ մեծ զարմացման նշաններ յայտնեց։

— Պէտք է որ երթամ այցելութիւն մը ընեմ անոր, ըսաւ, և մեղի համար բարեպաշտական նուէր մը խնդրեմ։

— Ո՛հ, ընդունած համարեցէք. ամուսան մը մէջ իւր տուած ողորմութիւնները միայն քսան հազար ֆրանկի կ'ելլեն։

— Ուրեմն կ'երթամ, և տիկին տը Մորսէրֆին ու անոր ոգւոյն օրինակը յառաջ կը բերեմ։

— Ի՞նչ օրինակ։

— Իրենց բոլոր հարստութիւնը ալքատանոցաց թողուցին։

— Ի՞նչ հարստութիւն։

— Հանգուցեալ Մորսէրֆ զօրապետէն իրենց մնացած հարստութիւնը։

— Ի՞նչ պատճառաւ։

— Քանզի այնպիսի անարժանութեամբ ստացուած հարստութիւնը մերժեցին։

— Ի՞նչպէս պիտի ապրին հիմա։

— Մայրը իւր քաղաքը պիտի երթայ և որդին զինուոր պիտի դրուի։

— Ի՛նչ կը լսեմ, ըսաւ Տանկլար. ահա խղճահարութիւնն ալ այսպէս կ'ըլլայ։

— Անոնց ըրած նուէրը երէկ արձանագրեցի։

— Եւ ո՛րչափ հարստութիւն ունէին։

— Մեծ բան մը չէր, մէկ միլիոն երկու կամ երեք հարիւր հազար ֆրանք. բայց մեր միլիոններուն վերապառնանք։

— Յօժարութեամբ, ըսաւ Տանկլար բոլորովին բնական ձայնիւ. այս առտուն ստիպողականէն կերպիւ կը խնդրէք։

— Այո՛, մեր դրամարկղին քննութեան օրը վաղն է։

— Վա՛ղը. ինչո՞ւ անմիջապէս չըսիք այդ խօսքը. մինչև վաղը դար մը կայ։ Վաղը ժամը քանիին պիտի ըլլայ այդ քննութիւնը։

— Ժամը երկուքին։

— Կէս օրին առտուն պատրաստ է —, ըսաւ Տանկլար ժպիտով մը։

Պ. տը Պովիլ դրեթէ չէր պատասխաներ։

Իւր դլխովը այո՛ կ'ըսէր և իւր թղթապարանը կը շրջէր։

— Բան մը կը մտածեմ, ըսաւ Տանկլար, որ ձեր գործը կըրնայ լմնցընել։

— Ի՞նչ բան։

— Մօնթէ-Քրիսթոյի ընկալագիրը ստակ ըսել է. այս ընկալագիրը Րոչիլտի կամ Լաֆիթթի լումայանոցը ներկայացուցէք, և անոնք անմիջապէս կ'ընդունին զայն։

— Թէև Հռոմի մէջ վճարելի ըլլայ, այնպէս չէ՞։

— Անշուշտ. միայն հինգ կամ վեց հազար ֆրանկի փեղկ մը պիտի կորմնցընէք —։

Դրամաժողովը դէպ 'ի եաև յառկեց։

— Ոչ, ոչ, ըսաւ. աւելի աղէկ ունիմ մինչև վաղը սպասել, ինչպէս շուտով գործերնիդ լմնցընել կ'ուզէք։

— Ներեցէք, ըսաւ Տանկլար մեծ անխոհեմութեամբ մը, կարծեցի թէ պակաս գումար մը ունիք լեցընելու։

— Ո՛հ, ոչ, ըսաւ դրամաժողովը։

— Այսպիսի բաներ կրնան պատահիլ, և այն ատեն զոհողութիւն կ'ընէ մարդ։

— Փառք Աստուծոյ, այդպիսի պէտք մը չունիմ, ըսաւ պ. տը Պովիլ։

— Ուրեմն վաղը, այնպէս չէ՞, սիրելիս։

— Այո՛, վաղը, բայց անշուշտ։

— Բայց դուք կատակ կ'ընէք։ Կէս օրին մէկը ըրկեցէք, և Լումայանոցը իմ ազդարարութիւնս ընդունած պիտի ըլլայ։

— Ես անձամբ կու գամ։

— Ա՛ելի աղէկ, քանզի զձեզ տեսնելու ուրախութիւնը կ՚ունենամ — ։

Երկու պարոնները իրարու ձեռքը թօթվեցին ։

— Աղէկ միտքս եկաւ, ըսաւ Պ. տը Պովիլ, խեղճ օրիորդ տը Վիլըֆօրի յուզարկաւորութեան պիտի չերթաք. ծառուղին վրայ զան անցընելնին առնայ ։

— Ո՛չ, ըսաւ սեզանաւորը, պէնէտէթթոյի դէպքին՝ի վեր քիչ մը անպատուած եմ և առնէն դուրս չեմ ելներ ։

— Ի՞նչ կ՚ըսէք, միթէ դուք այն դործին մէջ յանցանք մը ունիք ։

— Մտիկ ըրէք, սիրելի իմ դրամաժողով, ինծի պէս անառարատ անուն մը ունեցող մարդը խիստ դիւրազգայ կ՚ըլլայ ։

— Ամեն մարդ ձեր վրայ կը ցաւի, հաւատացէք ինծի, մանաւանդ ձեր ապջիան վրայ ։

— Խեղճ Էօժէնի, ըսաւ Տանկլար խորունկ հառաչանքով մը ։ Գիտէք, պարոն, որ վանք մը պիտի մտնէ ։

— Ո՛չ ։

— Ափսոս, այո՛, պարոն. այն դէպքին հետևեալ առաւոտ հատուկտոր բարեկամներ մը հետ մտնելու որոշում ըրաւ, և Իտալիոյ կամ Սպանիոյ մէջ խիստ անաչառ վանք մը փնտռելու դնաց ։

— Ո՛հ, այդ ինչ սոսկալի բան է — ։

Եւ Պ. տը Պովիլ այս բացատրութեան վրայ՝ մխիթարական խօսքեր ընդհատ եւ մինչեցաւ ։

Բայց հազիւ թէ դուրս ելեր էր, երբ Տանկլար այնպիսի եռանդալի շարժումով մը (զոր Ռոպէր Մաքէր կոչուած խաղին Գրէտրիքէն ներկայացուիլը տեսնողները միայն կը հասկընան,) պոռաց.

— Ա՛հաիա — ։

Եւ Մօնթէ-Քրիսթոյի ընկալատիրը իր փոքր թղթադարանին մէջ սեղմելով.

— Եկու վաղը կէս օրին, յաւելցուց, և վաղը կէս օրին աստիճան պիտի ըլլամ ես — ։


Եդբը իր դահլիճին մէջ փակուեցաւ՝ զրան փականքը կրկին անգամ դարձընելէն ետև, իր դրամարկղին գզրոցները պարպեց, յիսուն հազար ֆրանքի չափ լումայատոմսեր հաւաքեց, զանազան թղթեր այրեց, ուրիշ թղթեր ալ բաց տեղը դրաւ, և սկսաւ նամակ մը գրել, զոր կնքելէն ետև՝ վրան հետևեալ հասցէն գրեց.

« Ա՛ռ տիկին սեպտուհ Տանկլար » ։

— Ա՛յս իրիկուն, մրմնաց, ես ձեռօքս անոթ ղարդարանայ սեղանին վրայ պիտի դնեմ այս նամակը — ։

Եդբը պահանոյէն անցպուիր մը հանելով.

— Բարի, ըսաւ, այս անցպուիրը դեռ երկու տարի վաւերական է — ։



ԳԼՈՒԽ Զ

ՐԷՓ–ԼԱԾԷԶ ԿՈՉՈՒԱԾ ԳԵՐԵԶՄԱՆԱՑՈՒՆԸ

Պարոն տը Պովիլ իրօք Վալանթինը իր վերջին կայանը տանող յուղարկաւորութեան հանդիսաբերը էր ։

Օդը տխուր և ամպամած էր. տակաւին դաղջ բայց դեղնած տերևներուն համար մահաւիթ հով մը արդէն տակաւ տակաւ մերկացեալ ոստերուն վրայէն զանոնք կը խլէր և ծառուղիներուն մէջ լցուած անթիւ բազմութեան վրայ կը ցրուէր ։

Պարոն տը Վիլըֆօր բուն Բարիզեան մը ըլլալով՝ Բարիզեան

ընտանիքի մը մահացու դիակը ընդունելու արժանաւոր միակ դերեզմանատունը Բէր-Լաշէզինը կը նկատէր: Միւս դերեզմանատունները դեղջկական և ստորին կ'երեւէին իրեն:

Միայն Բէր-Լաշէզի մէջ բարձր ընտանիքները իրենց մտնելու դերեզմանը ունէին:

Ինչպէս որ ասկէ առաջ տեսանք՝ Վիլըֆօր հոն երկիր մը գնեցուց իւր մտնելու շիրիմը շիներ էր, որուն մէջ իւր առաջին ընտանեաց բոլոր անդամները այնչափ շուտով ամիսփուեր էին:

Շիրիմն ձակատին վրայ հետեւեալ արձանագրութիւնը կար.

ՍԷՆ-ՄԷՐԱՆԻ ԵՒ ՎԻԼԸՖՕՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Վասն զի այս էր Վալանթինի մօրը ողորմելի Ռէնէին վերջին փափաքը:

Ուստի Սէնթ-Օնօրէ արուարձանէն մեկնող հանդիսաւոր բազմութիւնը գէպ 'ի Բէր-Լաշէզ ճամբայ ինկած էին:

Գրէթէ բոլոր Բարիզի մէջէն անցան, Թանբլի արուարձանը մտան, ու մինչև դերեզմանատունը եղած արտաքին ծառուղիներն յառաջացան:

Ցիսաներէն աւելի կառքեր յուղարկաւորութեան քսան կառքերու եւս կ'երթային, և այն յիսուն կառքերուն եւս հինգ հարիւրէն աւելի անձինք ոտքով կը քալէին:

Եւ ասոնք գրեթէ ամենքն ալ երիտասարդներ էին, որոնց համար այն նորատի, դեղեցիկ և ողջախոհ աղջկան իր ծաղիկ հասակին մէջ մահուան ժանիքներէն յափշտակուիլը մեծ ազդեցութիւն ըրաւ և կայծակի հարուած մը եղաւ իրենց:

Բազմութիւնը Բարիզէն դուրս ելնելու ատեն՝ արագընթաց կառք մը տեսան չորս ձիերէ լծուած, որոնք իրենց ծնողաց աճառուտ յօդերը պողպատեայ զսպանակներու պէս պրկելով յանկարծ կեցան:

Այս կառքին մէջ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը կը գտնուէր, որ վար իջնելով յուղարկաւորութեան կառքին եւս ոտքով կը քալէր:

Շաթօ-Ռընօ տեսաւ զան ու իր կառքէն իջնելով եկաւ անոր ընկերացաւ:

Պոշան ալ իւր վարձած կառքը թողուց և անոնց քովը եկաւ:

Կոմսը ուշադրութեամբ բազմութեան մէջ ամէն կողմ կը դիտէր. յայտնապէս մէկը կը փնտռէր:

Վերջապէս չկրցաւ ինքզինքը զսպել:

— Ո՞ւր է Մորէլ, հարցուց անոնց. պարոններ, ձեզմէ մէկը անոր ձէր ըլլալը գիտէ:

— Հանգուցեալին տունը արդէն մենք մեզի նոյն հարցումը կ'ընէինք, ըսաւ Շաթօ-Ռընօ. ամենևին չտեսանք զան —:

Կոմսը լուեց, բայց շարունակ իւր բոլորտիքը կը դիտէր:

Վերջապէս դերեզմանատունը հասան:

Մօնթէ-Քրիսթոյի սուր նայուածքը յանկարծ դեղձերուն և տաքիներուն անտառակին մէջ թափանցեց, և բոլորովին անհանգիստ երեւցաւ. քանզի տեսաւ որ խիտ սև հագուստներու տակը ստոր մը կը մտնէր, և Մօնթէ-Քրիսթօ անտարակոյս իւր փնտռածը ճանչցեր էր:

Այս շքեղ դերեզմանատան մէջ թաղման հանդիսին ինչ ըլլալը ամէն մարդ գիտէ. սեպհական բազմութիւնը խումբ խումբ եղած դերեզմանատան ծառուղիներուն մէջ կը ցրուին. երկինք ու երկրի լռութիւնը ամէն կողմ կը տիրէ, միայն խորտակուած ոստի մը, կամ դերեզմանի մը բոլորտիքը շրջանակուած ցանկի մը ատրուելուն ձայնը ու քահանաներուն տխուր երգը կը լսուին, որուն հետ կը խառնուի ծաղկանց խիտ բոյրերուն հետ պահուած և ձեռքը միացուցած կեանք մը հառաչանքը:

Մօնթէ-Քրիսթոյի գիտած ուղիները Հէլոյիզի և Աբէյարի դերեզմանին հետ եռանկիւնի կարգով տնկուած ծառերուն մէջէն անցան և եկան հանգուցեալին կառքը քաշող ձիերուն սպասաւորաց մէջ մտան, և անոնց հետ յառաջանալով թաղման համար որոշուած տեղը հասան:

Իւրաքանչիւր ոք բանի մը կը նայէր:

Մօնթէ-Քրիսթօ միայն այն ուղիներն կը նայէր, անոր քովը եղողները դիտեր էին:

Երկու անգամ կոմսը իր կարգէն դուրս ելաւ, որպէս զի տեսնէ թէ արդեօք այն մարդը իր զբօսանքրուն տակէն ղէնք մը կը փնտռէ:

Երբ բաղմութիւնը կեցաւ, այն սուրերը Մորէլն ըլլալը ճանչցուեցաւ, որ վերէն վար կոձիած սև վերարկուովը, կապուտաչոյն ձակատովը, խոշոչացեալ այտերովը, իր դողդոջուն ձեռօքը ծռմռտած դլխարկովը՝ շիրմին վրայ նայող բլրակին վրայ տնկուած ծառի մը կը թնդներ էր, ուրկից կատարուելու Թաղման բոլոր արարողութիւնը կատարեալ պիտի տեսնէր:

Ամէն բան ըստ սովորութեան կատարուեցաւ:

Քանի մը անձինք, որոնք՝ ինչպէս միշտ կը պատահի՝ մեռելին վրայ ամենէն քիչ ցաւողներն էին, դամբանական հրապարակախօսութիւններ ըրին:

Ոմանք Վալանթինի կանխահաս մահուանը վրայ կը ցաւէին, ուրիշները անոր հօրը վիշտը երկարօրէն կը պատմէին:

Անոնց մէջ քանի մը հանճարեղներ ալ դանուեցան, որոնք կը պատմէին թէ այն ծաղկահաս աղջիկը գ. տը Վիլըֆօրէն շատ անդամ ներողութիւն խնդրած էր այն յանցաւորայ համար, որոնց դլխին վրայ Թագաւորի գործակալը արդարութեան դաշոյնը կախած էր:

Մօնթէ-Քրիսթօ ամենևին մտիկ չէր ըներ անոնց, բան մը չէր տեսներ, և կամ այսպէս ըսենք՝ միայն Մորէլին կը նայէր, որուն հանդարտութիւնն ու անշարժութիւնը սոսկալի տեսարան մը կը ներկայէին այն անձին, որ կարող էր երիտասարդ պաշտօնատարին սրտին խորէն անցածը դուշակել:

— Հոն նայեցէք, ըսաւ յանկարծ Պոշան Տըպրէին, ահա Մորէլը, տեսէք՝ ուր դացեր մնատեր է — :

Եւ երկուքին ալ Շաթօ-Ռընոյին ցոյց տուին զան:

— Ինչպէս դոյնը նետեր է, ըսաւ այս վերջինը սարսռալով:

— Պաղած է, ըսաւ Տըպրէ:

— Ոչ, ըսաւ կամաց մը Շաթօ-Ռընօ. ես կարծեմ թէ ահոր սիրտը շարժած է. խիստ դիւրազդայ մարդ մ'է Մաքսիմիլիէն:

— Ես չեմ կարծեր, ըսաւ Տըպրէ, օրիորդ որ Վիլըֆօրը հաղիւ թէ կը ճանչնար... դուք ձեր բերանովը ըսիք:

— Ստոյդ է. սակայն կը յիշեմ որ տիկին որ Մորսէրֆի սրահանդիսին մէջ երեք անդամ անոր հետ պարեց. կը յիշէք, կոմս, այն պարահանդիսին, ուր դուք այնչափ աղդեցութիւն պատճառեցիք:

— Ա՛խ, չեմ յիշեր, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ առանց դիտնալու թէ ինչ բանի և որու կը պատասխանէ, այնչափ միտքը զբաղած էր Մորէլի վրայ հսկելու, որուն այտերը կը դունատուէին, ինչպէս կը պատահի իրենց շնչառութիւնը զսպել ուղղնելուն:

— Արարողութիւնները վերջացան. մնաք բարեաւ, պարոնները —, ըսաւ յանկարծ կոմսը:

Եւ աներևոյթ եղաւ առանց յայտնի ընելու իր ուրկից երթալը:

Թաղման հանդէսը կատարուեր էր, ներկայ պտնուողները դեպ 'ի Բարիզ ճամբայ ինկան:

Միայն Շաթօ-Ռընօ իր նայուածքովը Մորէլը փնտռեց, սակայն կոմսին եռևէն նայելու առնը՝ Մորէլ իր եղած տեղէն անհետացեր էր. և Շաթօ-Ռընօ պարապ տեղը դան փնտռելէն ետև՝ Տըպրէին ու Պոշանին եռևէն մեկնեցաւ:

Մօնթէ-Քրիսթօ խիտ ծառերու մէջ նետուելով՝ լայն դերեզմանի մը եռին պահուեցաւ, ուրկից Մորէլի ամենափոքր շարժումները կը դիտէր. երիտասարդը կամաց կամաց Վալանթինի շիրմին մօտեցեր էր, որուն քովէն նախ հետաքրքրութիւնը և ետքը ծառայողները հեռացեր դացեր էին:

Մորէլ հանդարտ և անորոշ կերպով իր բոլորտիքը դիտեց, բայց իր նայուածքը կոմսին կեցած տեղին հակառակ կողմը ղրկած առնը՝ Մօնթէ-Քրիսթօ առանց տեսնուելու առաջ քայլ չափ ևս մօտեցաւ անոր:

Երիտասարդը ծնկան վրայ եկաւ:

Կոմսը պարանոցը երկնցուցած, աչքը միօրինակ երիտասարդին վրայ յարած, և անոր մեկ շարժումը տեսնելուն պէս՝ պոռցես վրան յարձակելու համար ծունկերը ծալլած՝ շարունակ Մորէլը կը մտանար:

Մորէլ իւր Ճակատը մինչև մարմարիոնին մօտեցուց, երկու ձեռօքը երկաթեայ վանդակները գրկեց և մրմնաց.

— Ո՛հ, վ.ալանթին — :

Կոմսին սիրտը վերաւորեցաւ անոր բերանէն այս երկու բառերը լսելով :

Քայլ մը ևս յառաջացաւ, և Մորէլի ուսին ղարնելով.

— Հո՛ս էք, բարեկամ, ըսաւ. ես ձեզի կը փնտռէի — :

Մօնթէ-Քրիսթօ կը կարծէր որ երիտասարդը բարկութեան պիտի ելնէ, զինքը պիտի կշտամբէ և յանդիմանէ. սակայն կը սխալէր :

Մորէլ իւր կողմը դարձաւ և հանդարտ երևոյթով մը ըսաւ.

— Կը տեսնէք որ աղօթք կ'ընեմ — :

Մօնթէ-Քրիսթօ հետաքրքիր նայուածքով մը երիտասարդը ոտքէն մինչև գլուխը լաւ մը քննեց, ու այն ատեն աւելի հանդիսաւոր երևցաւ :

— Կ'ուզէք որ ձեզ Բարիզ տանիմ, ըսաւ :

— Ոչ, շնորհակալ եմ :

— Վերջապէս բան մը կը խնդրէք :

— Թողուցէք որ աղօթք ընեմ — :

Կոմսը առանց ընդդիմութիւն մը ցուցընելու անկէ հեռացաւ, բայց դնաց վերսաին ուրիշ կողմ մը պահուեցաւ, ուրկից Մորէլի ամեն մէկ շարժումը կը դիտէր. երիտասարդը վերջապէս ոտք ելաւ, մարմարիոնէն Ճերմակած իւր ծունկերը մաքրեց և Բարիզի ճամբան գարկաւ առանց անգամ մը գլուխը ետին դարձընելու :

Կամաց կամաց քալելով Ռոքէթ փողոցը իջաւ :

Կոմսը Բէր-Լաշէզի աւջև սպասող իւր կառքը Ճամբեց, և հարիւր քայլ հեռուէն անոր ետևէն կ'երթար :

Մաքսիմիլիէն ջրանցքը անցաւ և ծառուղիներուն վրայէն Մէսլէ փողոցը մտաւ :

Մորէլի ետևէն գուռը գոցուելէն հինգ վայրկեան ետքը՝ Մօնթէ-Քրիսթոյի համար վերսաին բացուեցաւ :

Ծիւլի պարտէզին դրան առջևը կը գտնուէր, ուրկից մեծ ուշադրութեամբ Բէնդիմանին կը նայէր, որ վարպետ պարտիզպանի պէս պէնալէի վարդենիները առաջաթաղ կ'ընէր :

— Ո՛հ, պ. կոմս տը Մօնթէ-Քրիսթօ, դուշեց Ծիւլի այն ուրախութեամբ, որ ամեն անգամ Մօնթէ-Քրիսթոյի Մէսլէ փողոցը այցելութեան եկած ժամանակը Մորէլի ընտանեաց ամեն մէկ անդամը սովորաբար կը յայտնէր :

— Մաքսիմիլիէն հիմա ներս մտաւ, այնպէս չէ՞, տիկին, հարցուց կոմսը :

— Կարծեմ անոր անցնելը տեսայ, այո՛, կրկնեց Ծաղկահաս կինը. բայց կ'աղաչեմ, Էմմանուէլը կանչեցէք :

— Ներեցէք, տիկին. այս վայրկեանիս Մաքսիմիլիէնի քովը կ'ուզեմ երթալ, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, խիստ կարևոր խօսք մը ունիմ անոր ըսելու :

— Գացէք ուրեմն — , ըսաւ Ծիւլի իւր քաղցր ժպիտովը մինչև սանդուխը անոր ընկերանալով :

Մօնթէ-Քրիսթօ շտապով դեռնայարկը Մաքսիմիլիէնի բնակարանէն բաժնող երկու դռտիկոնները ելաւ :

Սանդուխին գաթին վրայ հասնելով ականջ դրաւ. բայց ամենևին ձայն մը չլսեց :

Միայն մէկ ընտանեբէ բնակեալ նախնի տուներէն շատերուն պէս՝ գաթիը ապակեպատ միայն դուռով մը փակուած էր :

Միայն թէ այն ապակեպատ դրան վրայ բանալի չկար :

Մաքսիմիլիէն ներսէն պարզունակ դրեր էր. ապակիներուն վրայ եղած կարմիր մետաքսեայ վարագոյրը անկարելի կ'ընէր դրսէն ներս տեսնելը :

Կոմսին անհանգստութիւնը իւր դիմաց վրայ պատած կարմրութենէն յայտնուեցաւ. սրտի յուզման այս նշանը այն անկարևկիր մարդուն դիմաց վրայ դիւրաւ չէր տեսնուեր :

— Ի՞նչ ընել պէտք է հիմա — , մրմնաց :

Եւ վայրկեան մը մտածեց :

— Արդեօք զանգակը հնչեցընե՞մ, կրկնեց, ո՛հ, ոչ. շատ անդամ զանգակի մը ձայնը, այսինքն այցելութեան մը լուրը Մաքսիմիլիէնի վիճակին մէջ դանուողներուն որոշման պարծագրութիւնը կ'արտորացընէ, և այն ատեն զանգակին ձայնին ուրիշ ձայն մը կը պատասխանէ — :

Մօնթէ–Քրիսթօ ոտքէն մինչեւ գլուխը սարսուայ, և որովհետեւ իր որոշումները փայլակի արագութիւնն ունէին, արմուկովը գրան մէկ ապակիին հարուած մը տուաւ, ու խորտակեց զայն. վարագոյրը վերցուց և Մորէլը տեսաւ, որ ձեռքը գլխիչ մը իր գրասեղանին առջեւը կը պտուտէր և խորտակուած ապակիին շաւաչիւնին վրայ իր նստած տեղէն վեր ցատկեր էր:

— Բան մը չէ, ըսաւ կոմսը, հաղար անգամ ներում կը խընդրեմ, սիրելիդ իմ բարեկամ. ոտքս սահեցաւ և արմուկս գրան զարկի. և որովհետեւ ապակին խորտակուեցաւ, ներս մտնելու ախիթը չեմ փախցըներ. տեղերնէդ մի ելնէք, անհանգիստ մի ըլլաք —:

Այս ըսելով կոմսը իր թեւը խորտակուած ապակիէն անցուց և գուռը բացաւ:

Մորէլ յայտնի դժուարած ոտք եկաւ, և Մօնթէ–Քրիսթոյի դիմացը եկաւ՝ առելի անոր յառաջ գալը արգիլելու քան թէ անոր ընդունելութիւն տալու համար:

— Յանցանքը ձեր ծառաներուն է, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ իր արմուկը շփելով, որոնք սախտակամածները հայելիի պէս կը փայլեցընեն:

— Վիրաւորեցաք, պարոն, հարցուց Մորէլ պաղութեամբ:

— Չեմ կրնար. բայց դուք հոս ինչ կ'ընէիք, դիր կը գրէիք:

— Ե՞ս:

— Մատներնիդ մելանով աղտեղած կը տեսնեմ:

— Այո՛, պատասխանեց Մորէլ, դիր կը գրէի. թէեւ վճռաբար եմ, բայց երբեմն դիր գրելու կ'ըղձաղիմ —:

Մօնթէ–Քրիսթօ սենեկին մէջ քանի մը քայլ յառաջացաւ:

Մաքսիմիլիէն չկրցաւ արգիլել զան. բայց անոր եաեէն գնաց:

— Դիր կը գրէիք, կրկնեց Մօնթէ–Քրիսթօ պշտութենէ յոգնած դայտածքով մը:

— Արդէն պատիւ ունեցայ ձեզ այս ըսելու —, ըսաւ Մորէլ: Կոմսը ակնարկ մը շրջեց իր բոլորտիքը:

— Կաղամարին քովը ձեր ատրճանակները իմ ինչ բան ունին, ըսաւ կոմսը գրասեղանին վրայ եղած գէնքերը մատովը Մորէլին ցուցընելով:

— Ձամբորդութիւն մը պիտի ընեմ, պատասխանեց Մաքսիմիլիէն:

— Բարեկամս, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ խիստ քաղցր ձայնով մը:

— Ի՞նչ կը հրամայէք, պարոն:

— Բարեկամս, սիրելիդ իմ Մաքսիմիլիէն, կ'աղաչեմ, վերջնական որոշումները հեռացուցէք ձեր մտքէն:

— Ի՞նչ վերջնական որոշումներ, ըսաւ Մորէլ ուսերը թոթվելով, կ'աղաչեմ ըսէք՝ մինչ ձամբորդութիւն ընելը վերջնական որոշո՞ւմ մ'է:

— Մաքսիմիլիէն, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ, երկուքնիս ալ կրած դիմակնիս վար առնենք:

«Մաքսիմիլիէն, չէք կրնար ձեր կեղծ հանդարտութեամբը խաբել զիս, ինչպէս և ես ձեր վրայ ունեցած դոյզն խնամատարութեամբս զձեզ խաբել չեմ կրնար:

«Մինչեւ հիմա ըսածներս ընելու, ապակի մը կոտրելու և բարեկամի մը սենեկին գաղտնիքը բռնաբարելու համար անշուշտ իրական անհանգստութիւն մը կամ լաւ ևս ըսեմ՝ սոսկալի համզում մը ունենալու էի:

«Մորէլ, դուք ինքզինքնիդ սպաննել կ'ուզէք:

— Ո՞ւր կը գտնէք այդպիսի խորհուրդները, պարոն կոմս, ըսաւ Մորէլ սարսռալով:

— Ինքզինքնիդ սպաննել կ'ուզէք կ'ըսեմ ձեզի, շարունակեց կոմսը նոյն ձայնով, և ահա ապացոյցը —:

Եւ գրասեղանին մօտենալով՝ սկսուած նամակի մը վրայ երիտասարդին գոյած սպիտակ թերթը վերցուց և նամակը առաւ:

Մորէլ յառաջ նետուեցաւ և ուզեց նամակը անոր ձեռքէն առնուլ:

Մօնթէ–Քրիսթօ անոր այս շարժումը դուշակեր էր. ուստի զգուշացաւ և Մաքսիմիլիէնի դաստակէն բռնելով կեցուց զան, ինչպէս պողպատեայ շղթային շարժման մէջ եղող մեքենան կը կեցընէ:

— Կը տեսնէք որ ինքզինքնիդ սպաննել կ'ուզէք, Մորէլ, ըսաւ կոմսը, ահա հոս գրեր էք:

— Ուրեմն, դուչեց Մորէլ իւր սրտի կեղծ հանդարտութիւնը յայտնի ուժդնութեան փոխելով, եթէ բսածնիդ ստոյգ ըլլայ, և եթէ այս ատրճանակին փողը ինծի պարձընելու որոշած ըլլամ, ո՞վ պիտի արգելք ըլլայ ինձ:

« Ո՞վ պիտի կարենայ արգիլել զիս:

« Երբ ըսեմ թէ՝ իմ բոլոր յոյսերս ոչնչացած են, սիրտս վիրաւորած է, կեանքս մարած, և սուգն ու ձանձրութիւնը պաշարած են զիս. աշխարհս մոխիր դարձած է ինծի համար, և մարդկային որ և է ձայն մը իմ սիրտս կը մորմնքէ:

« Երբ ըսեմ թէ՝ պիտի պիտաք ինծի եթէ Թողուք որ մեռնիմ. վասն զի եթէ արգիլէք զիս, խելքս պիտի կորսնցընեմ և պիտի խենթենամ:

« Ա՛ղէ, ըսէք, պարոն. երբ այս խօսքերը լսէք, երբ տեսնէք որ վշտագին սրտիս և արտասուօք կ՛ըսեմ զանոնք, կրնա՞ք պատասխանել ինձ թէ իրաւունք չունիմ:

« Պիտի կրնա՞յ մէկը արգիլել զիս որ յետին թշուառը չըլլամ:

« Ըսէք, պարոն, ըսէք. դուք պիտի կրնա՞ք արգիլել զիս:

— Ա՛յո՛, Մորէլ, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ այնպիսի ձայնիւ մը, որուն հանդարտութիւնը երիտասարդին եռանդալի յուզման հետ տարօրինակ ընդդիմադրութիւն մը կ՛ընծայէր. այո՛, ես պիտի արգիլեմ ձեզ:

— Դո՞ւք պիտի արգիլէք զիս կ՛ըսէք, դուչեց Մորէլ այնպիսի ձայնիւ մը, որուն մէջ իւր յաստումը և կշտամբանքը կ՛աւելնային. դուք որ այնպիսի յուսով մը հրապուրեցիք զիս, դուք որ մեռտի խոստումներով արգիլեցիք, խաբեցիք և քնացուցիք զիս, ինչ ատեն օդնութեան դիմելով կամ վերջին ջանք մը ընելով կրնայի ազատել զան, կամ դուն իմ բազկաց մէջ անոր մեռնելը կը տեսնէի. դուք որ ինքզինքնիդ հանճարալի, հնարագէտ և ամեն բանի մէջ կարող մէկը կը ձևացընէք, և ինքզինքնիդ նախախնամութենէ ղրկուած գործակատար մը կը ներկայացընէք, թուեաւորեալ ծաղկահաս աղջկան մը անպեղային տալու կարողութիւն չունեցաք: Ո՛հ, շիտակը, պարոն, պիտի ցաւէի ձեր վրայ եթէ ձեր ընթացքովը սոսկում չզգացուէի ինծի:

— Մորէլ...:

— Ա՛յո՛, դուք ըսիք որ դիմակս վար առնում, ահա դոհ եղիք, դիմակս վար առի:

« Ա՛յո՛, երբ ետևէս պերեզմանատունը եկաք, դարձեալ պատասխանեցի ձեզ, քանզի իմ սիրտս բարի է:

« Երբ սենեակս մտաք, Թողուցի որ միմչև քովս մօտենաք...:

« Սակայն որովհետև չափը կ՛անցընէք, որովհետև կը խրոխտաք ինծի միմչև իմ սենեկիս մէջ, ուր իբր պերեզմանիս մէջ քաշուեր էի:

« Եւ որովհետև կ՛ուզէք նոր տառապանք մը պատճառել ինծի այն միջոցին, որ ամեն տառապանքները կրած կը կարծէի, կոմս որ Մօնթէ–Քրիսթոյ, իմ կեղծ պաշտպանս, կոմս որ Մօնթէ–Քրիսթոյ, տիեզերաց ազատիչը, դոհ եղիք, քանզի ձեր բարեկամին մեռնիլը պիտի տեսնէք հիմա...— :

Եւ Մորէլ յիմարական ժպիտով մը երկրորդ անգամ ատրճանակները վրայ նետուեցաւ:

Մօնթէ–Քրիսթօ ուրուականի պէս դուռատեալ, բայց իւր աչքը դողդոջ բոցավառ երևելով, ձեռքը զինուց վրայ դրաւ և յիմարին ըսաւ.

— Եւ ես կը կրկնեմ ձեզի որ ինքզինքնիդ պիտի չսպաննէք:

— Արգիլեցէք տեսնեմ, կրկնեց Մորէլ վերջին յարձակումով մը, բայց առջի անգամուան պէս՝ կոմսին պողպատեայ թևէն յաղթուեցաւ:

— Ա՛յո՛, պիտի արգիլեմ ձեզ:

— Բայց վերջապէս ո՞վ էք դուք, որ այսպէս ազատ և խոհուն արարածներու վրայ բռնաւորական իշխանութիւն մը բանեցընել կ՛ուզէք, դուչեց Մաքսիմիլիէն:

— Ո՞վ եմ ես կ՛ըսէք, կրկնեց Մօնթէ–Քրիսթօ:

« Մտիկ ըրէք ուրեմն.

« Աշխարհիս վրայ միայն ես իշխանութիւն ունիմ ձեզ ըսելու թէ՝ « Մորէլ, չեմ ուզեր որ հօրդ զաւակը այսօր մեռնի » — :

Եւ Մօնթէ–Քրիսթօ թևերը կուրծքին վրայ իրարու պլեցած՝ այլայլեալ, բարձր և վեհ դէմքով մը դէպ 'ի դողդոջուն երի-

տասարդը յառաջացաւ, որ ակամայ այն մարդուն ղօրութենէն յաղթուելով՝ քայլ մը ետ քաշուեցաւ։

— Ինչո՞ւ հօրս խօսքը կ՚ընէք, ըսաւ Մորէլ կակազելով. ինչո՞ւ այսօրուան պատահածին մէջ անոր յիշատակը կը խառնէք։

— Վասն զի ես այն անձն եմ, որ քու հայրդ ինքզինքը մեռցընել ուզած օրը անոր կեանքը աղաւեցի, ինչպէս որ այսօր դուն ինքզինքդ սպաննել կ՚ուզես. վասն զի ես այն անձն եմ, որ քու ծաղկահաս քրոջդ քսակը և ծերունի Մորէլին Փոա՜ռնը ղրկեցի. վասն զի ես Էմմօն Տանթէսն եմ, որ մանկութեանդ մէջ ծնգացս վրայ քու խաղալդ տեսեր եմ— ։

Մորէլ դեղևեալ, ընկճեալ և ոգեսպառ եղած քայլ մը ևս ետ քաշուեցաւ։

Ետքը յանկարծ ուժէ կտրելով, Մոնթէ—Քրիսթոյի ոտքերուն խոնարհեցաւ բարձր ձայն մը հանելով։

Եւ Մորէլի ազնիւ և հիանալի բնութեանը մէջ յանկարծական և կատարեալ վերակենդանութեան շարժում մը եղաւ։

Ոտք ելաւ, սենեկէն դուրս ցատկեց և սանդուխին վրայէն իր ձայնին բոլոր ուժովը պոռաց.

— Ժիւլի՛, Ժիւլի՛, Էմմանուէ՛լ, Էմմանուէ՛լ— ։

Մոնթէ—Քրիսթօ ևս անոր ետևէն դուրս նետուիլ ուզեց, բայց Մաքսիմիլիէն աւելի յօժարութեամբ կ՚ուզէր մեռնիլ քան թէ կոմսին վրայ հուած դրան ծխնիները թողուլ։

Մաքսիմիլիէնի ձայնէն Ժիւլի, Էմմանուէլ, Բէնեդեթոն և քանի մը ծառաները սոսկումով վազեցին եկան։

Մորէլ անոնց ձեռքէն բռնեց և դուռը բացաւ։

— Ծնկան վրայ եկէք, պոչեց հեծկլտանքէն հեղձեալ ձայնով մը, ծնկան վրայ եկէք, ահա բարերարնիս. ահա մեր հօրը ազատիչը, ահա . . . — ։

«Էմմօն Տանթէսը» պիտի ըսէր։

Երբ կոմսը անոր թևը բռնելով՝ ընդմիջեց զան։

Ժիւլի կոմսին ձեռքը բռնեց և իր շրթանց մօտեցուց. Էմմանուէլ իբր իւր խնամակալ հայրը ճանչնալով համբուրեց զան. իսկ Մորէլ երկրորդ անգամ ծնկան վրայ ինկաւ և ճակատը տախտակամածին մօտեցուց։

Ան ատեն պղնձեայ սիրտ ունեցող մարդը իւր սրտին ուժիլը զգաց, կիզիչ բոց մը իւր կոկորդէն աչերուն ցայտեց, ցլուխը խոնարհեցուց և լացաւ։

Քանի մը վայրկեան այն սենեկին մէջ արտասուաց և հեծեծանաց ձայներ լսուեցան, որոնք անշուշտ հրեշտակաց անգամ ներդաշնակաւոր պիտի երևէին։

Ժիւլի իւր զգացած սրտի խորին յուզմունքէն հազիւ սթափելով սենեկէն դուրս նետուեցաւ, դատիկոն մը վար իջաւ, որ Մէյլանի ծառուղւոյն անծանօթէն նուիրուած քսակը առնու բերէ։

Ան միջոցին Էմմանուէլ ընդհատեալ ձայնով մը կոմսին կ՚ըսէր.

— Ո՛հ, պարոն կոմս, այնչափ անգամ մեր անծանօթ բարերարին վրայ խօսելնիս լսելով և անոր համար մեր այնչափ երախտագէտ և սիրալիր յիշատակ մը պահելը տեսնելով, ինչպէս մինչև այսօր կրցաք սպասել և ինքզինքնիդ չմատնեցուցիք։ Ո՛հ, անպտուտիւն մ՚է այս մեզի համար, և կը համարձակիմ իսկ ըսելու, պարոն կոմս, ձեզի համար ալ։

— Մտիկ ըրէք, բարեկամ, ըսաւ կոմսը, և կրնամ ձեզ այսպէս կոչել, քանզի տասն և մէկ տարիէ՝ի վեր առանց ձեր դիտնալուն իմ բարեկամս էք դուք. այս գաղտնիքին յայտնուելուն պատճառը մեծ դէպք մ՚է, զոր դուք չէք գիտեր։ Վկայ է Աստուած որ բոլոր կենացս մէջ սրտիս խորը պահել կ՚ուզէի զայն. Մաքսիմիլիէն եղբայրս այնպիսի բռնութեամբ մը երևան հանեց, որուն համար հաւաստի եմ որ զղջացած է — ։

Ետքը տեսնելով որ Մաքսիմիլիէն սենեկին մէկ կողմը միշտ ծնկան վրայ կեցած՝ թևաթոռի մը կոթերը էր։

— Հսկեցէք անոր վրայ, յաւելցուց ցած ձայնով Մոնթէ—Քրիսթօ նշանական կերպիւ Էմմանուէլի ձեռքը սեղմելով։

— Ի՞նչ պատճառաւ, հարցուց երիտասարդը զարմանքով։

— Ձեմ կրնար ըսել. սակայն անոր վրայ հսկեցէք — ։

Էմմանուէլ շրջահայեաց ակնարկ մը պատուհան սենեկին մէջ և Մորէլի ատրճանակները տեսաւ։

Իւր աչերը սոսկումով այն զինուց վրայ յարեց, ու իւր մատը անոնց բարձրութեամբը կամաց մը վեր վերցընելով Մոնթէ—Քրիսթոյի ցուցուց զանոնք։

Մօնթէ–Քրիսթօ դլուխը խոնարհեցուց։

Էմմանուէլ դէպ՝ ի ատրճանակները շարժում մը ըրաւ։

— Թողուցէք —, րսաւ կոմսը։

Եաքը Մորէլի մօտենալով անոր ձեռքը բռնեց։

Երիտասարդին սիրտը թունդ հանող եռանդալի յուզմունքը խորին թմբրութեան տեղի տուեր էր։

Ծիւլի մետաքսեայ քսակը ձեռքը բռնած սենեակը մտաւ վերըսաին. արտասուայ երկու փայլուն և ուրախալի կաթիլներ առաւօտեան ցողի երկու կաթիլներու պէս իր այտերէն վար կը գլորէին։

— Ահա մեր յիշատակը, ըսաւ. մի՛ կարծէք թէ մեր աղատիչը յայտնուելէն եաքը՝ ալ սիրելի չէ այն ինձի։

— Ջաւակս, պատասխանեց Մօնթէ–Քրիսթօ կարմրելով, նեերեցէք ինձ որ այն քսակը ետ առնում. գիս ձանչնալնէդ եաքը չեմ ուզեր որ ուրիշ կերպով յիշէք գիս բայց եթէ այն սիրով, զոր կը խնդրեմ որ շնորհէք ինձի։

— Ո՛հ, ըսաւ Ծիւլի քսակը իր սրտին վրայ սեղմելով, ոչ, ոչ, կ՝աղաչեմ, մեզի թողուցէք զայն. քանզի կրնաք օր մը բաժնուիլ մեզմէ, քանզի օր մը դժբաղդաբար մեզմէ պիտի բաժնուիք, այնպէս չէ՞։

— Ճիշդ դուշակեցիք, տիկին, պատասխանեց Մօնթէ–Քրիսթօ ժպտելով, ութ օրէն պիտի մեկնիմ այս քաղաքէն, ուր այնչափ մարդիկ, որոնք երկնից վրէժխնդրութեանը արժանի էին, երջանիկ կ՝ապրէին, ինչ ատեն հայրս անօթութենէ և վիշտէն մեռաւ —։

Մօնթէ–Քրիսթօ իր մօտաւոր մեկնիլը իմացընելով իր աչերը Մորէլի վրայ յարեց, և դիտեց որ պէտք ունէր այս խօսքերը Մորէլը իր թմբրութենէն չսթափեր էին։

Հասկըցաւ այն ատեն որ իր բարեկամին վիշտը հանդարտելու համար վերջին մրցում մը պէտք էր. և Ծիւլիին ու Էմմանուէլին ձեռքը բռնելով, զորոնք սեղմելէն եաև իրարու միացուց, հօր մը իշխանական քաղցր ձայնով ըսաւ անոնց.

— Սիրելիներս, կ՝աղաչեմ, զիս Մաքսիմիլիէնի հետ առանձին թողուցէք —։

Ծիւլիին համար յարմար ժամանակ մ՝էր իր թանկագին յիշատակը առնելու, որուն վրայ մտացեր էր Մօնթէ–Քրիսթօ վերըսաին խօսելու, և իր առաւօնյան հետ աշխուժի դուրս ելաւ։

Կոմսը Մորէլի հետ առանձին մնաց, որ արձանի պէս անշարժ կեցեր էր։

— Ա՛ղէ, ըսաւ կոմսը իր հրատապ մատովը երիտասարդին ուսին դպչելով, ինքզինքիդ պիտի գաս, Մաքսիմիլիէն։

— Ա յո՛, վասն զի վիշտերս վերսաին կ՝ըսկսին —։

Կոմսը տխուր երկմտոտ թեան մէջ ընկղմելով՝ իր յօնքը կիճռեց։

— Մաքսիմիլիէն, Մաքսիմիլիէն, ըսաւ, այդ խորհուրդներդ անարժան են քրիստոնէի մը։

— Ո՛հ, անհոգ եղիք, բարեկամ, ըսաւ Մորէլ դլուխը վերցընելով և անպատում տխրութեամբ տպաւորուած ժպիտ մը ենթընկերելով կոմսին, այսուհետև մահ փնտռելու պէտք պիտի չունենամ։

— Ուրեմն, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ, զէնքը և յուսահատութիւնը մէկ դի պիտի դնեմ։

— Ա յո՛, ըսաւ Մորէլ. քանզի վշտացս վերջ տալու համար ատրճանակի մը փողէն կամ դաշոյնի մը ծայրէն աւելի ազդու միջոց մը ունիմ։

— Ի՞նչ միջոց ունիս, խեղճ տղայ։

— Իմ վիշտերս ինքնին պիտի սպաննեն զիս։

— Բարեկամ, ըսաւ Մօնթէ–Քրիսթօ անոր մելամաղձին հատասար տխրութեամբ մը, մտիկ ըրէ.

« Օր մը ես ալ քուկինիդ հատասար յուսահատութեան մը մէջ, քանզի նոյնօրինակ որոշում մը կը ներկայէր ինձի, քեզի պէս ուզեցի ինքզինքս սպաննել։

« Օր մը քու հայրդ ալ նոյնպէս յուսահատութեամբ ուզեց ինքզինքը սպաննել։

« Եթէ հայրդ ատրճանակին փողը իր ճակտին ուղղած վայրկեանին, և իմ երեք օրէ՝ի վեր բերանս փշրանք մը չդնելէս ետև՝ հայս անկողնոյս քովէն հեռացուցած միջոցիս մէկը մօտենաք և բսէր մեզ.

«Ապրեցէք, օր պիտի գայ որ երջանիկ պիտի ըլլաք և ձեր կեանքը պիտի օրհնէք. այն ձայնը ո՛ր կողմէն որ գալու ըլլար, անշուշտ տարակուսական ժպիտով կամ անհաւատութեան անձկութեամբ ականջ պիտի դնէինք անոր. ո՛րչափ անգամ հայրդ գքեզ գրկելով իւր կեանքը օրհնած է, ո՛րչափ անգամ ես ալ...:

— Ո՛հ, գոչեց Մորէլ կոմսին խօսքը ընդմիջելով, դուք ձեր ազատութիւնը միայն կորուսած էիք, հայրս ալ իւր հարստութիւնը միայն կորուսած էր, իսկ ես Վալանթինս կորսնցուցի:

— Ինծի նայէ, Մորէլ, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ այն վսեմ ձայնիւ, որ քանի մը պարագաներու մէջ մեծ և յանկուցիչ կ'երեւցընէր ղինքը. ինծի նայէ, ոչ աչացս մէջ արտասուք ունիմ, ոչ երակներուս մէջ տենդ և ոչ սրտիս մէջ աղէտալի բաբախում մը. սակայն գքեզ վշտաց մէջ կը տեսնեմ, Մաքսիմիլիէն, գքեզ, որ զաւակիս պէս կը սիրեմ. մտածէ՛, Մորէլ, որ վիշտը մարդուս կեանցը կը նմանի, և թէ ապագան միշտ անծանօթ է մեզ: Եթէ ես քեզի կ'աղաչեմ, և կը հրամայեմ որ ապրիս, Մորէլ, անշուշտ համոզուած ըլլալուս համար է որ օր մը շնորհակալ պիտի ըլլաս ինձ քու կեանքդ ազատելուս համար:

— Տէր Աստուած իմ, գոչեց երիտասարդը. ինչ կ'ըսէք, կոմս, գուցէ երբէք մէկը սիրած չէք դուք:

— Տղայ ես դուն տակաւին, պատասխանեց կոմսը:

— Մարդ ըլլալէս 'ի վեր զինուոր եմ, կրկնեց Մորէլ, և մինչև քսան և հինը տարեկան ըլլալս սիրել ինչ բան է չէի գիտեր, քանզի մինչև այն տարիքս զգացած զգացումներս սիրոյ անուան արժանի չեն. քսան և հինը տարեկան հասակիս մէջ Վալանթինը տեսայ. գրեթէ երկու տարիէ 'ի վեր կը սիրեմ զան, և գրեթէ երկու տարիէ 'ի վեր կարող եղայ ինծի համար գրքի մը պէս բացուած այն սրտին մէջ Տիրոջ ձեռօքը գրուած աղջկան և կնոջ առաքինութիւնները կարդալու:

«Կոմս, Վալանթինի հետ իմ երջանկութիւնս անվերջ, անսահման, անիմանալի, խիստ մեծ, խիստ կատարեալ և աշխարհային երջանկութենէ խիստ բարձր պիտի ըլլար. և որովհետև աշխարհս զան չտուաւ ինծի, կոմս, ըսել է թէ առանց Վալան-

թինի ինծի համար երկրի վրայ յուսահատութենէ և սառատպանքէ զատ բան չկայ:

— Յուսա ըսի քեզի, Մորէլ, կրկնեց կոմսը:

— Եւ ես կը կրկնեմ ձեզի, ղուշացէք, կոմս, ըսաւ Մորէլ. վասն զի ձեզ համոզելու կ'աշխատիք, և եթէ համոզէք զիս, խելքս կորսնցընել պիտի տաք, քանզի ինձ կարծել կու տաք թէ Վալանթինը պիտի կարենամ տեսնել—:

Կոմսը ժպտեցաւ:

— Բարեկամս, հայրս, գոչեց Մորէլ յուզեալ սրտիւ, ղուշացէք կ'ըսեմ երրորդ անգամ. քանզի իմ վրաս բանեցուցած իշխանութիւնդիդ կը զարհուրեցընէ զիս. ուշ գրէք ձեր խօսքերուն, վասն զի աչերս կը վերարծարծին, սիրտս վերստին կը բորբոքի և կը վերածնանի, ղուշացէք, քանզի դերբնական բաներու հաւատալ պիտի տաք:

«Կը հնազանդիմ ձեզի, բայց ուշ գրէք, ձեր խօսքերը մարդս կը յուսադրեն:

— Յուսա, բարեկամ, կրկնեց կոմսը:

— Ո՛հ, ըսաւ Մորէլ իւր յուզման բարձրութենէն տխրութեան անդունդը իյնալով, ո՛հ, զիս ծաղր կ'ընէք դուք, և այն բարի կամ ինքնասէր մայրերուն պէս կը վարուիք, որոնք իրենց զաւակին ճիչերէն ձանձրացած մեղրային խօսքերով անոնց ցաւը կը հանդարտեցընեն:

«Ոչ, բարեկամ, սխալեցայ ձեր ուշադրութիւնը հրաւիրելուս. ոչ, ամենևին մի վախնաք, իմ վիշտս այնպէս սրտիս խորը պիտի թաղեմ, և այնպէս անյայտ և դաղտնի պիտի պահեմ, որ գթալու հողը անգամ պիտի չունենաք: Մնաք բարեաւ, բարեկամ, մնաք բարեաւ:

— Ընդ հակառակն, ըսաւ կոմսը, այս ժամէն, Մաքսիմիլիէն, իմ գովս և ինծի հետ պիտի սպրիս, ինձմէ պիտի չգաժնուիս, և ութ օրէն միատեղ Դաղղիայէն պիտի մեկնինք:

— Դարձեալ կ'ըսէք որ յուսամ:

— Այո՛, յուսա կ'ըսեմ, քանզի ցաւոդ դարման տանելու միջոցը գիտեմ:

— Կոմս, իմ վիշտս կ'ուեղղընէք. դլուխս եկած դժբաղդութիւնը սովորական բան մ'է, և դուք սովորական միջոցով այսինքն ձանապարհորդութեամբ զիս մխիթարել կը կարծէք — :

Եւ Մորէլ արհամարհական անհաւատութեամբ դլուխը շարժեց:

— Ի՞նչ ըսեմ, կրկնեց Մոնթէ–Քրիսթօ, ես իմ խոստմանց վրայ հաստատ եմ, թող որ անոնց փորձը ցուցընեմ:

— Կոմս, ոդեվարս երկարելէն ուրիշ բան չէք ըներ:

— Ուրեմն, ըսաւ կոմսը, ով տկարասիրտ մարդ, բարեկամիդ փորձած փորձին համար քանի մը օր շնորհելու ոյժ չունիս:

«Ըսէ, պիտեմ ինչ բանի կարող է Մոնթէ–Քրիսթոյ կոմսը:»

«Գիտեմ որ երկրային շատ իշխանութեանց կը հրամայէ:

«Գիտեմ որ աւ Աստուած այնչափ հաւատք ունի, որ կարող է հրաշքներ դործելու հրաման տանել Անորմէ, որ ըսած է թէ մարդս հաւատքով կրնայ լեռ մը տեղաշել:

«Ուրեմն սպասէ որ իմ ընել յուսացած հրաշքս տեսնես, եթէ ոչ...:

— Եթէ ոչ ինչ կայ, ըսաւ Մորէլ:

— Եթէ ոչ, Մորէլ, դքեզ ապերախտ պիտի կոչեմ:

— Մեղքըդէք ինձի, կոմս:

— Այնչափ կը մեղքընամ քեզի, Մաքսիմիլիէն, որ եթէ Ճիշդ ամէն մը ցաւոդ դարման մը ընել չկարենամ, աղէկ ուշ դիր ըսածներուս, Մորէլ, ես ձեռօքս դքեզ այս ատրճանակներուն և Իտալիոյ ամենէն սոսկալի թոյնով լեցուն բաժակի մը դիմացը կը դնեմ, հաւատա ինձի, վալանթինը սպաննող թոյնէն աւելի անվրէպ և աւելի արագամահ թոյնի մը:

— Կը խոստանաք ինձ այդ բանը:

— Այո՛, վասն զի ես մարդ եմ, վասն զի ես ալ ինչպէս ըսի՝ ուզեցի մեռնիլ, բայց դժբաղդութիւնը ինձմէ հեռանալէն ետև՝ շատ անդամ մշանջենաւոր քնոյ զուարճութիւնները երազեցի:

— Ո՛հ, ստուգիւ կը խոստանաք, կոմս, ոչեց Մաքսիմիլիէն այլայլեալ:

— Ձեմ խոստանար, այլ կ'երդնում, ըսաւ Մոնթէ–Քրիսթօ ձեռքը երկնցընելով:

— Ուրեմն եթէ մէկ ամիսէն չմխիթարուիմ, պատիւնուդ վրայ կը խոստանաք որ զիս աղատ պիտի թողուք, և ինչ որ ընեմ՝ ապերախտ պիտի չկոչէք զիս:

— Այո՛, Ճիշդ մէկ ամիսէն, Մաքսիմիլիէն. այսօր սեպտեմբերի Յն է, և այս թուականը նուիրական է մեզի. չեմ դիտեր թէ արդեօք կը յիշես:

«Այսօր Ճիշդ տասը տարի է որ հայրդ կ'ուղէր ինքզինքը սպանել և ես աղատեցի զան — :

Մորէլ կոմսին ձեռքը բռնեց և համբուրեց զանոնք:

Կոմսը թողուց որ երիտասարդը ուզածը ընէ, ոդոյես Ճանչնալով որ ինքը արժանի էր այն դպրանաց:

— Մէկ ամիսէն, շարունակեց Մոնթէ–Քրիսթօ, երկուքնիս ալ սեղանի մը առջև պիտի նստինք և դուն ընտիր ճաշեր և քաղցր մահ պիտի ունենաս. սակայն՝ ի փոխարէն՝ կը խոստանաս ինձի որ մինչև այն ատենը պիտի սպասես և ինքզինքդ պիտի չսպաննես:

— Ո՛հ, ոչեց Մորէլ, ես ալ հիմա կ'երդնում— :

Մոնթէ–Քրիսթօ երիտասարդը իր սրտին վրայ քաշեց և երկար ատեն զան գրկած մնաց:

— Եւ հիմա, ըսաւ անոր, այսօրուանէ պիտի դաս իմ՝ տունս բնակելու. Հայտէին սենեակները քեզ կու տամ, և դոնէ այս կերպով տղաս աղջկանս տեղը պիտի անցնի:

— Հայտէն ինչ եղաւ, հարցուց Մորէլ:

— Այս պիշերը մեկնեցաւ:

— Քեղմէ բաժնուելո՞ւ համար:

— Ինձ սպասելու համար... : Պատրաստուէ Շանզ-Էլիզէ փողոցը դալ զիս դանելու, և մէկը չտեսած զիս ասկէ դուրս հանէ — :

Մաքսիմիլիէն գլուխը խոնարհեցուց և մանկան մը պէս հնազանդեցաւ:

ԳԼՈՒԽ Ի

ԲԱԺԱՆՈՒՄԸ

Սէն-ժէրմէն-տէ-Բրէ փողոցին մէ և նոյն պանդոկին մէջ, ուր Ալպէր տը Մորսէրֆ իւր մօրը հետ բնակելու եկեր էր, առաջին դասիկոնին սենեակները խիստ դաղտնի կեանք մը վարող անձ մը վարձած էր։

Այս անձը այնպիսի մարդ մ'էր, որուն երեսը երբէք չկրցեր էր տեսնել պանդոկին դռնապանը ոչ անոր դուրս ելլելու և ոչ ներս մտնելու ատենը. քանզի ձմեռը իւր կղակը կարմիր փողկապով մը կը ծածկէր, ինչպէս կ'ընեն մասնաւոր կառավարները, որոնք թատրոններուն դուռը իրենց տիրոջը կ'ըսպասեն, և ամառը դռնապանին սենեկին առջևէն անցնելու ատենը ձիշդ տեսնուելու միջոցին քիթը կը խնչէր։

Պէտք է խոստովանիլ որ այս անձը ամենևին լրտեսող մը չուներ, և տարաձայնութիւն մը ելած էր որ բարձրաստիճան անձ մ'էր, բայց ինքզինքը յայտնել չէր ուզեր և մեծ վարկեր ունէր, որով իւր դաղտնի մտնելն ու ելլելը մէկուն կասկած տուած չէր։

Իւր այցելութիւնները սովորաբար որոշ ժամանակ ունէին, թէև երբեմն աւելի կանուխ կամ ուշ կ'ըլլային. բայց գրեթէ միշտ, ամառ ձմեռ, ժամը չորսին իւր սենեակը կը դառնար, ուր ամենևին գիշեր մը մնացած չէր։

Ձմեռը՝ ժամը երեք ու կէսին՝ իւր բնակարանին ծառայութիւն ընող դաղտնապահ կինը կրակը կը վառէր։

Ամառը՝ նոյնպէս ժամը երեք ու կէսին՝ նոյն ծառան զովացուցիչ ըմպելիները կը պատրաստէր։

Ժամը չորսին, ինչպէս ըսինք, դաղտնի կեանք վարող մարդը կու դար։

Իրմէ քսան վայրկեան ետքը՝ պանդոկին առջին կառք մը կը կենար։

Սեաւ կամ մութ կապոյտ զգեստներ հագած և միշտ մեծ քղով մը ծածկուած կին մը կառքէն կ'իջնէր, ստուերի պէս դռնապանին սենեկին առջևէն կ'անցնէր, սանդուխէն վեր կ'ելլէր առանց իւր թեթևաքայլ ոտքին տակը անոր աստիճաններուն ձայնը հանելու։

Երբէք պատահած չէր որ իւր ուր երթալը մէկը հարցնէ։

Իւր դէմքը նոյն պանդոկին մէջ բնակող մարդուն պէս բոլորովին անծանօթ մնացեր էր երկու դռնապաններուն, որոնք իրենց դաղտնապահութեան կողմանէ մայրաքաղաքին անթիւ դռնապաններուն մէջ դուցէ եզակի էին և օրինակ ըլլալու արժանի։

Աւելորդ է ըսել թէ կինը առաջին դասիկոնէն վեր չէր ելներ։

Մասնաւոր կերպով մը դուռը կը քերէր, և իսկոյն կը բացուէր այն, ու կինը ներս մտնելուն պէս կը դոցուէր։

Մեկնելու ատենն ալ նոյն կերպով կ'ըլլար։

Նախ անծանօթ կինը միշտ քողով ծածկուած դուրս կ'ելլէր, իւր կառքը կը մտնէր, որ երբեմն փողոցին մէկ կողմէն և երբեմն միւս կողմէն աներևոյթ կ'ըլլար։ Քսան վայրկեան ետքը անծանօթ մարդն ալ իւր փողակապին կամ թաշկինակին մէջ պահուած դուրս կ'ելլէր, և աներևոյթ կ'ըլլար։

Վալանթինի թաղման և Մօնթէ-Քրիսթոյ կոմսին իւր սեղանատորին այցելութիւն ըրած հետևեալ օրը՝ անծանօթ մարդը փոխանակ կէս օրէն ետև ժամը չորսին դալու՝ առտուան ժամը տասին եկեր էր։

Գրեթէ անմիջապէս ետքը՝ առանց ըստ սովորութեան քսան վայրկեան միջոց ձգելու՝ վարձու կառք մը հասաւ, և քօղարկեալ տիկինը արտորնօք սանդուխէն վեր ելաւ։

Դուռը բացուեցաւ և դոցուեցաւ։

Բայց դուռը չփակուած տիկինը դոչեց.

— Լիւսիէն, բարեկամս —։

Այնպէս որ դռնապանը, որ առանց ուզելու՝ տիկնոջ այս ձայնը լսեր էր, առաջին անդամ իմացաւ որ իւր վարձակալին անունը Լիւսիէն էր. սակայն որովհետև աննման դռնապան մ'էր՝ միտքը դրաւ որ լսածը իւր կնոջը անդամ չյայտնէ։

— Ի՞նչ կայ, սիրելիս, ըսաւ քաղաքական տիկնոջ շփոթութենէն կամ արտորալէն անունը յայտնուած անձը, ըսէք, խօսեցէք։

— Բարեկամ, կրնամ ձեր վրայ վստահ ըլլալ։

— Անշուշտ, ինչո՞ւ չէ. բայց ի՞նչ կայ. այս առտու ինձ գրած տոմսակնիդ սոսկալի երկմտութեան մէջ ընկղմեց զիս։ Ձեր այսպէս արտորալուն և շփոթութեանց պատճառը ի՞նչ է, ըսէք շուտով, սիրտս հանգստացուցէք և կամ բոլորովին սոսկացուցէք զիս։

— Լիւսիէն, մեծ դիպուած մը պատահեցաւ, ըսաւ տիկինը Լիւսիէնի վրայ հեռադիտիչ նայուած մը յարելով. այս գիշեր Պ. Տանկլար մեկներ է։

— Պ. Տանկլար մեկներ է, և ո՞ւր գացեր է։

— Ձեմ գիտեր։

— Ձէք գիտեր. ուրեմն չվերադառնալու մտօք մեկներ է։

— Անտարակոյս. իրիկուան ժամը տասին՝ իր ձիերը գինքը Շարանթոնի դուռը տարեր են. հոն՝ լծուած պատրաստ սուրհանդակի կառք մը գտեր, իր սենեկապանին հետ անոր մէջ մտեր է՝ իր կառավարին ըսելով թէ Ֆոնթէնըպլօ կ'երթայ։

— Ի՞նչ կ'ելնէ ասկէ։

— Սպասեցէք, սիրելիս. ինձ նամակ մը գրեր էր։

— Նամակ մը։

— Այո՛. կարդացէք —։

Եւ տիկին Տանկլար իր ծոցէն կնիքը բացուած նամակ մը հանեց ու Տըպրէյին ներկայացուց։

Տըպրէ զայն կարդալէն առաջ վայրկեան մը երկմտեցաւ թէ արդեօք անոր պարունակութիւնը ինչ կրնար ըլլալ, և կամ ինչ որ ըլլար անոր պարունակութիւնը, յուր ինչ ձամբայ բռնելիքը առաջէն որոշած էր։

Քանի մը մանրերկրորդ եաքը՝ անտարակոյս իւր որոշումը ընելով նամակը կարդայ։

Ահա այն նամակին պարունակութիւնը, որ տիկին Տանկլարին այնչափ մեծ շփոթութիւն մը պատճառեր էր.

«Տիկին և խիստ մտերիմ ամուսին»։

Տըպրէ ակամայ կեցաւ և տիկնոջ երեսը նայեցաւ, որուն մինչև աչերը շառագունեցան։

— Կարդացէք —, ըսաւ տիկինը։

Տըպրէ շարունակեց.

«Այս նամակը ընդունած ժամանակնիդ՝ ալ ամուսին պիտի չունենաք։

«Ո՛հ, սրտերնիդ շատ մի խաղցընէք, աղջիկնիդ կորսնցուցած-նուդ պէս ամուսիննիդ ալ կորսնցուցիք, ըսել կ'ուզեմ թէ գաղղիայէն դուրս հանող երեսուն կամ քառասուն ճամբաներէն մեկուն վրայ պիտի գտնուիմ։

«Այս ընթացքիս բացատրութիւնը պէտք եմ տալ ձեզ, և որովհետև զանոնք կատարեալ հասկցող կին մ'էք, ձեղմէ չեմ ուզեր պահել։ Մտիկ ըրէք ուրեմն.

«Այս առտու հինգ միլիոնի վճարում մը պատահեցաւ, և ես վճարեցի. նոյնչափ գումարի ուրիշ վճարում մը դրեթէ անմիջապէս եաքը հարկ եղաւ ընել, և վաղուան թողուցի զայն։

«Վաղուան այն վճարումէն փախչելու համար այսօրուանէ կը մեկնիմ, քանզի անտանելի պիտի ըլլայ ինձ։

«Ըսածս կը հասկընաք, այնպէս չէ՞, տիկին և խիստ թանկագին ամուսին։

«Կը հասկընաք ըսի, քանզի իմ գործերս ինձի չափ և ինձմէ աւելի ազէկ գիտէք, քանզի եթէ ասկէ քիչ ժամանակ առաջ գեռ բաւական ազէկ վիճակի մէջ եղող հարստութեանս կէսէն աւելին ուր երթալը յայտնել հարկ ըլլար, անկարող պիտի ըլլայի. իսկ դուք ընդհակառակն ապահով եմ որ ինքզինքնիդ կատարեալապէս պիտի ազատէք։

«Քանզի կիները անվրիպելի ապահովութեան մը բնազդումները ունին. իրենց մասնաւոր դրահաշուով հիանալի հաշիւներ կը լուծեն։

«Ես որ իմ հաշիւներէս զատ հաշիւ չէի գիտեր, անոնց մէջ սխալած օրէս՝ի վեր ամեն բան կորսնցուցի։

« Անկմանս ալագուրեանը վրայ երբէք չզարմայաք, տիկին։

« Զոյլ ոսկիներս հալելու ատեն՝ անոնց հրաշէկ փայլունութիւնը ձեր աչերը չխոցոտեց։

« Ճշմարիտ կ'ըսեմ, անոնց կրակին մէջ ըլլալը միայն տեսայ ես. յուսանք որ անոնց մոխրին մէջ քիչ մը ոսկի գտաք։

« Այս մխիթարիչ յուսովն է որ ես կը հեռանամ, տիկին և խիստ խելացի ամուսինս, և այս պատճառաւ խիղճս վիս չմեղադրեր զձեզ թողելուս համար։

« Դուք բարեկամներ ունիք, վերոյիշեալ մոխիրը, և որ երջանկացնէն է՝ ձեր ազատութիւնը, զոր կը փութամ ձեզ հնորհելու։

« Այսու ամենայնիւ, տիկին, ժամանակը եկաւ ալ այս պարբերութեան մէջ մտերմական բացատրութիւն մը տալու։

« Որչափ ժամանակ որկր կարծէի թէ մեր տանը բարելաւութեան և մեր աղջկան հարստութեան համար կ'աշխատիք, փիլիսոփայապէս աչքս դոցեցի, բայց որովհետև մեր լումայատունը կործանեցիք, չեմ ուզեր ուրիշի հարստութեան հիմնադիրն ըլլալ։

« Ձեզ առած ժամանակս հարուստ էիք, բայց քիչ մը անպատիւ։

« Ներեցէք ինձ այսպիսի համարձակութեամբ խօսելուս. բայց որովհետև հատնականաբար այս խօսքերը մեր երկուքնուս մէջ միայն կը խօսիմ, խօսքերս կեղծելու հարկ չեմ տեսներ։

« Մեր հարստութիւնը աւելցուցի, և տասն և հինգ տարի շարունակ աճելու վրայ էր մինչև որ ինձի համար անծանօթ և անխիղճ ալէտներ վրայ հասան և զան կործանեցին, կրնամ ըսել առանց երբէք յանցանքը իմս ըլլալու։

« Դուք միայն ձեր հարստութիւնը աճեցընելու աշխատեցաք, որուն բարոյապէս համոզուած եմ որ յաջողեցաք։

« Ուստի առած ժամանակս եղածնուդ պէս կը թողում զձեզ հարուստ բայց ոչ պատուաւոր։

« Գնաք բարեաւ. այսօրուանէ ես ալ իմ հաշուիս աշխատելու կ'երթամ։

« Հաւատացէք իմ երախտագիտութեանս որ ինձ այսպիսի օրինակ մը տուիք, որուն հետևելու պիտի աշխատիմ։

« Ձեր անձնուէր ամուսինը։

« ՍԵՊՈՒՀ ՏԱՆԿԼԱՐ »։

Այս երկար և դժուարին ընթերցման միջոցին տիկին Տանկլար իւր նայուածքը Տըպրէին վրայէն չվերցուցեր էր։

Երիտասարդը մէկ կամ երկու անգամ իւր գոյնը ակամայ փոխեր էր։

Երբ նամակը վերջացուց, կամայ մը գոցեց զայն, և իւր մտածութեանց մէջ ընկղմեցաւ։

— Ասոր ի՞նչ կ'ըսէք, հարցուց տիկին Տանկլար սրտի այնպիսի անձկութեամբ մը, որ գիւրին էր երևակայել։

— Ի՛նչ ըսեմ, տիկին, պատասխանեց Տըպրէ մեքենապէս։

— Այս նամակէն ի՞նչ կը հասկընաք։

— Նամակը պարզ գրուած է, տիկին, և կ'իմացընէ որ պ. Տանկլար կասկածներով մեկներ է։

— Ստոյգ է. բայց դուք ասկէ զատ ուրիշ խօսք չունիք ինձ ըսելու ասոր վրայ։

— Ձեմ հասկընար ի՞նչ ըսել կ'ուզէք, ըսաւ Տըպրէ սաստիկ պաղութեամբ մը։

— Պ. Տանկլար դնաց, և մէկ մ'ալ պիտի չվերադառնայ։

— Ո՛հ, ըսաւ Տըպրէ, մի՛ հաւատաք այդ խօսքերուն, տիկին։

— Ոչ կ'ըսեմ, մէկ մ'ալ պիտի չվերադառնայ. ես աղէկ կը ճանչնամ զան. իւր որոշմանցը մէջ անյողդողդ մէկն է։

« Եթէ պ. Տանկլար կարծէր որ ես իրեն օգտակար պիտի ըլլամ, զիս հետը կը տանէր։

« Բայց զիս Բարիզ կը թողու. վասն զի մեր բաժանումը կըրնայ իւր դիտաւորութեանց նպաստել. անկարելի է որ սեպուհը իւր միտքը փոխէ, ու ես այսուհետև ազատ եմ—, յաւելցուց տիկին Տանկլար թախանձալի կերպով մը։

Սակայն Տըպրէ՝ փոխանակ պատասխանելու՝ տիկինը իւր անձնութեանը մէջ թողուց։

— Ձէք պատասխաներ, պարոն, ըսաւ տիկինը վերջապէս։

— Միայն հարցում մը ունիմ ձեզ ընելու. ինչ ընելու միտք ունիք։

— Ես ալ այս բանս ձեզ պիտի հարցընէի, պատասխանեց տիկին Տանկլար սրտի բաբախմամբ։

— Ա՛հ, ուրեմն խրատ մը կը հարցընէք ինձ։

— Այո՛, խրատ մ՚է հարցուցածս, ըսաւ տիկինը սրտի անձկութեամբ։

— Ուրեմն եթէ ինձ խրատ կը հարցընէք, պատասխանեց ենրիտասարդը պաղութեամբ, ես կը խրատեմ զձեզ որ ձամբորդութիւն ընէք։

— Ճամբորդութիւն ընեմ, մրմնաց տիկին Տանկլար։

— Անշուշտ։

« Ինչպէս որ Պ. Տանկլար ըսեր է՝ դուք հարուստ էք և կատարեալ ազատ։

« Օրիորդ Էօժէնիին ամուսնութիւնը ետ ըլլալէն և Պ. Տանկլարին աներևութանալէն ետև՝ Բարիզէն բացակայ ըլլալնիդ անհրաժեշտ պէտք է, գոնէ այնպէս կը կարծեմ։

« Ամեն մարդ պէտք է գիտնայ որ ձեր ամուսինը զձեզ թողուց, և զձեզ աղքատ կարծէ. քանզի անանկացեալի մը կնոջ հարստութիւնը և տան պերճութիւնը ներելի չեն։

« Միայն տասն և հինգ օր Բարիզ կենալնիդ բաւական է, որպէս զի ամեն մարդու ըսէք թէ ինչպէս ձեր ամուսինը զձեզ թողուց, և ձեր ամենէն մտերիմ բարեկամուհիներուն պատմէք թէ Պ. Տանկլար ինչպէս բաժնուեցաւ ձեզմէ։

« Եւքը ձեր տունը, պոհարները, և ձեր ամուսինէն ձեզի ինկած եկամուտները կը թողուք, և դուք ալ կը մնկնիք. այն ատեն ամեն մարդ ձեր անշահախնդրութիւնը կը գովէ, ու զձեզ կը հռչակէ։

« Ամեն մարդ պիտի իմանայ թէ ձեր ամուսինը զձեզ թողուց, և պիտի կարծէ թէ դուք աղքատ մնացիք. քանզի ձեր դրամային վիճակը միայն ես կը ճանչնամ, և պատրաստ եմ իբր անկեղծ ընկեր հաշիւները հիմա տալու —։

Որչափ հանդարտութեամբ և անտարբերութեամբ որ Տըպրէ այս խօսքերը կ՚արտասանէր, նոյնչափ սոսկումով և յուսահատութեամբ տիկին Տանկլար դունատեալ և վհատեալ զանոնք մտիկ կ՚ընէր։

— Այո՛, պարոն, իրաւունք ունիք, ըսաւ տիկինը, առանձին մնացի և բոլորովին առանձին, և ամենևին մէկը պիտի չտարակուսի այսպէս մնալուս —։

Ան գոռոզ և բարկասիրտ կնոջ բերանէն միայն այս խօսքերը ելան՝ ի պատասխանի Տըպրէին ըսածներուն։

— Սակայն հարուստ էք դուք և խիստ ալ հարուստ —, շարունակեց Տըպրէ իր դրապանը բանալով, և անոր մէջէն հանած քանի մը թղթերը սեղանին վրայ դնելով։

Տիկին Տանկլար անոր ըրածին արժէքը չեղաւ՝ այնչափ զբաղած էր իր սրտին բաբախումը զսպելու և իր արտասուքը արգիլելու, որոնք կ՚ըզգար որ իր արտեւանունց անկիւնը ծայր կուտային։

Բայց վերջապէս իր անձին պատիւը ամեն բանի յաղթեց, և եթէ իր սիրտը զսպել չկրցաւ, գոնէ յաջողեցաւ իր աչքէն արտասուք մը չհանելու։

— Տիկին, ըսաւ Տըպրէ, վեց ամիս է որ իրարու հետ ընկերացած ենք։

« Դուք հարիւր հազար ֆրանքի դրամագլուխ դրիք, և ապրիլ ամսոյ մէջ մեր ընկերութիւնը հաստատուեցաւ։

« Մայիսին մեր գործերը սկսանք, և նոյն ամսոյ մէջ չորս հարիւր յիսուն հազար ֆրանք շահեցանք։

« Յունիսի մէջ՝ մեր ըրած շահը հինր հարիւր հազարի ելաւ։

« Յուլիսի մէջ՝ այս գումարին վրայ մէկ միլիոն եօթը հարիւր հազար ֆրանք աւելցուցինք։

« Ինչպէս գիտէք՝ Սպանիոյ պարտաւորհակաց ամիսն է։

« Օգոստոս ամսոյն սկիզբները երեք հարիւր հազար ֆրանք կորնցուցինք. բայց նոյն ամսոյն 15ին դարձեալ շահեցանք, և մեր կորնցուցածը ձեռք ձգեցինք։ Մեր ընկերութեան սկսածէն մինչև երէկ հաշիւները կարգադրելով, զուտ երկու միլիոն

չորս հարիւր հազար ֆրանք դրամագլուխ ունինք, այսինքն մէկ միլիոն երկու հարիւր հազար ֆրանք ամէն մէկերնուս։

« Ասկէ զատ, շարունակեց Տըպրէ փոխանակագրաց դործակալի մը հանդարտութեամբը իւր ծոցատետրը քննելով, իմ ձեռքս ձնացած դումարներէն դոյացեալ տոկոսը ութսուն հազար ֆրանքի կ'ելնէ։

— Բայց, ընդմիջեց տիկին Տանկլար, ինչ կը նշանակեն այդ տոկոսները, քանի որ մեր ստակը ամենևին շահու չդրինք։

— Կը ներէք, տիկին, ըսաւ Տըպրէ պաղատութեամբ. ձեզմէ արտօնութիւն առած էի այն ստակը բանեցընելու, և ես բանեցուցի զայն։

« Ուստի ձեր հաշուին քառասուն հազար ֆրանք շահ կ'իյնայ. ասկէ զատ՝ ձեր դրած հարիւր հազար ֆրանք դրամագլուխը ունինք, որով ընդ ամենը մէկ միլիոն երեք հարիւր քառասուն հազար ֆրանք ձեզ բաժին կ'իյնայ։

« Անցեալ օր, տիկին, շարունակեց Տըպրէ, հոդ տարի ձեր ստակը պատրաստել. և կարծես թէ պիտէի որ մօտերս ձեզ հաշիւ պիտի տամ։

« Ձեր ստակը հոս պահած եմ, որուն կէսը լումայատոմսեր և կէսը թղթադրերին վճարելի պարտամուրհակներ են։

« Եւ որովհետև տունս բաւական ապահով չէի կարծեր, և վախնալով որ նօտարները խորհրդապահ չեն ըլլար, և թէ կալուածները նօտարներէն առնելի յայտնապէս ձեր վիճակը կը յայտնեն, և որովհետև վերջապէս, տիկին, առանց ձեր ամուսնոյն հետ ընկեր ըլլալու՝ չէք կրնար բան մը դնել կամ ստանալ, ուստի այս ամէն դումարները, որոնք ձեր այսօրուան միակ հարստութիւնն են, այս պահանոցին խորը պահած արկղիկի մը մէջ կընքած եմ, և առելի ապահովութեանը համար ես իմ ձեռքս հիւսեցի զայն։

« Հիմա, տիկին, շարունակեց Տըպրէ նախ պահանոցը և եռքը արկղը բանալով, ահա հազար ֆրանքնոց ութը հարիւր լումայատոմսեր, որոնք, ինչպէս որ կը տեսնէք, երկաթապատ մեծ նկարատետրի մը կը նմանին։

« Ասոնց կը յարեմ քսան և հինգ հազար ֆրանք եկամուտ բերող պարտամուրհակ մը. իսկ ձնացեալ դումարին համար, որ կարծեմ հարիւր տասն հազարի չափ բան մը կ'ընէ, ահա իմ սեղանաւորիս վրայ քաշուած 'ի տես վճարելի հատուցագիր մը, և որովհետև իմ սեղանաւորս Պ. Տանկլարը չէ, անհոգ եղիք, հատուցագիրը ներկայացուելուն պէս պիտի վճարուի —։

Տիկին Տանկլար՝ 'ի տես վճարելի հատուցագիրը, շահ բերող պարտամուրհակը և լումայատոմսերուն ծրարը մեքենապէս առաւ։

Այս մեծ հարստութիւնը փոքր բան մը կ'երևէր սեղանին վրայ դրուած ժամանակը։

Տիկին Տանկլարի աչերը թէև արտասուօք թրջուած չէին, սակայն սիրտը հեծեծանօք ուռեցած էր. ուստի ժողվեց զանոնք, լումայատոմսերուն պողպատեայ դարանը իւր մահաղակին, ու հատուցագիրը և պարտամուրհակը դրապանին մէջ դրաւ, և լուիկ ու դունատեալ ոտքի վրայ կանգնած սպասեց որ Տըպրէին բերանէն մխիթարիչ քաղցր խօսք մը լսէ։ Բայց պարապ տեղը սպասեց։

— Հիմա, տիկին, ըսաւ Տըպրէ, պատուական կեանք մը կըրնաք անցընել. վաթսուն հազար ֆրանքի չափ եկամուտ բերող դումար մը ունիք ձեռքերնիդ, որ ասկէ գոնէ մինչև տարի մը դործ ընել չկրցող կնոջ մը համար մեծ բան ըսել է։

« Ձեր ամէն մտային հաճոյքները 'ի գործ դնելու համար առանձնաշնորհ մ'է այդ։

« Մանաւանդ որ՝ եթէ ձեր բաժինը ձեզ բաւական չըլլայ, կըրնաք ինձմէ ուզել. և ես պատրաստ եմ ունեցածս այսինքն մէկ միլիոն վաթսուն հազար ֆրանքս ձեզ տալու անշուշտ փոխատուութեան դաշամբ։

— Շնորհակալ եմ, պարոն, պատասխանեց տիկինը, շնորհակալ եմ, դուք ինքնին կը հասկընաք որ ասկէ գոնէ երկար ատեն ընկերութեանց մէջ երևելու յոյս չունեցող ողորմելի կնոջ մը պէտք եղածէն շատ աւելի մեծ դումար մը կը յանձնէք ինձ —։

Տըպրէ վայրկեան մը զարմացած ձնաց, բայց ինքզինքին գալով՝ շարժում մը ըրաւ, որ խիստ մարդավարական ձևով հետևեալ խօսքը կրնար յայտնել.

— Ինչպէս որ կը հաճիք — ։

Տիկին Տանկլար մինչև այն վայրկեանը դուք բան մը կը յուսար, բայց Տըպրէին անտարբերութեան շարժումը, և այն շարժումին յարած կողմնակի նայուածքը, ինչպէս նաև անոնց հետևցուցած ակնածական շարժումը և նշանական լռութիւնը տեսնելով՝ գլուխը վեր վերցուց, դուռը բացաւ, և առանց բարկութեան շարժման, բայց և առանց երկմտութեան դէպ՝ ի սանդուխը նետուեցաւ՝ անարժան իսկ համարելով վերջին ողջոյն մը ուղղել այն անձին, որ զինքը այս կերպով կը թողուր որ մեկնի ։

— Վահ, ըսաւ Տըպրէ իւրովի երբ տիկինը մեկնեցաւ. դէշ խորհուրդներ են ասոնք. Թող իւր տունը նստի, վիպասանութիւններ կարդայ, և քանի որ լումայատոմսերու հետ խաղալ չկրնար, Թող Լանոթընէ խաղայ — ։

Եւ իւր ծոյատեարը վերստին բացաւ, ու վճարած դումարները զգուշութեամբ ջնջեց ։

— Մէկ միլիոն վաթսուն հազար ֆրանք կը մնայ ինձի, ըսաւ. ինչ դժբաղդութիւն որ օրիորդ սը Վիլըֆօր մեռաւ. այս կինը ըստ ամենայնի ինձ յարմար էր և ես կրնայի անոր հետ ամուսնանալ — ։

Եւ իւր սովորութեան համեմատ հանդարտութեամբ սպասեց որ տիկին Տանկլարի մեկնելէն եաև քսան վայրկեան անցնի, որպէս զի ինքն ալ դուրս ելնէ ։

Այս քսան վայրկեաններուն մէջ Տըպրէ ժամացոյցը իւր առջին դրած՝ հաշիւները ըրաւ ։

Ազմուկ, որ տուներուն ներքին կողմը տեսնելու համար՝ անոնց ծածկոյթը կը վերցընէր, զարմանալի տեսարան մը պիտի տեսնէր, եթէ Տըպրէին հաշիւները ըրած միջոցին՝ Սէն-Ժէրմէն-աէ-Բրէ փողոցին տան ծածկոյթը բանար ։

Այն սենեկին վրայ, ուր Տըպրէ տիկին Տանկլարի հետ երկոք ու կէս միլիոն ֆրանք բաժնուեր էր, ուրիշ սենեակ մը կար, որու մէջ բնակող մեղի ծանօթ անձերը մեր պատմածներուն մէջ բաւական մեծ դեր մը խաղացած ըլլալնուն՝ արժան է որ զանոնք երթանք դանենք ։

Այն սենեկին մէջ Մէրսէտէս և Ալպէր կը դանուէին ։

Մէրսէտէս քանի մը օրուան մէջ խիստ փոխուեր էր՝ չէ թէ իւր խիստ մեծ հարստութեան առեն անգամ՝ մարդուս որպիսութիւնը յայտնող ամբարտաւան պճնասիրութիւն մը ունէր և հիմա աւելի պարզ զգեստներով չէր ճանչցուեր, չէ թէ թշուառութեան անշուք զգեստներ հագնելու ստիպուած ըլլալուն համար այն վիճակին մէջ կնկեր էր, ոչ. Մէրսէտէս փոխուեր էր, քանզի իւր աչերը ալ չէին փայլեր, քանզի իւր բերանը ալ չէր ժպտեր, քանզի մշտնջենաւոր շփոթութիւն մը իւր շրթանց վրայ կ՝արտայէր այն արտաքահաս խօսքերը, որոնք ժամանակաւ իւր միշտ պատրաստաբան միտքը դուրս կ՝արտադրէր ։

Մէրսէտէսի միտքը բթացընողը իւր աղքատութիւնը չէր, և իւր աղքատութիւնը դժնդակ երևցընողը վհատութիւնը չէր ։

Խիստ լուսաւորուած սրահէն մթութեան մէջ մտնող անձանց պէս՝ Մէրսէտէս չափաւոր հարստութեան վիճակէն ելնելով և իւր ընտրած նոր շրջանին մէջ կորսուելով՝ արքունիքէն հիւղի մը մէջ իջնող թագուհոյ մը կը նմանէր, որ յետին չքաւորութեան մէջ իյնալով՝ ոչ իւր կաւեղէն ամաններէն, որոնք իւր ձեռքը սեղանին վրայ դնելու ստիպուած է, և ոչ իւր անկողնոյն յաջորդած խշտեակէն կը ճանչցուի ։

Եւ ստուգիւ պեղանի փաթաթանուհին կամ աղնուական կոմսուհին ոչ սէգ նայուած մը և ոչ քաղցր ժպիտ մը ունէր, քանզի աչերը իւր բոլորտիքը պտրտցընելով՝ տխրագին առարկաներէ զատ բան չէր տեսներ ։ Իւր սենեակը մութ մոխրագոյն թղթերով պատած էր, որոնք խնայող տանուտէրը ամեն պոյներէն նախատածար կ՝ընտրեն ամենէն նուազ աղտ բռնող ըլլալուն համար. պատինը օթոյ փրուած չէր. կարասիները տեսնողին ուշադրութիւնը կը հրաւիրէին և անոնց կեղծ զարդերուն աղքատութիւնը կը ցուցընէին. վերջապէս ամեն բան վայելուչ տեսնելու սովորած աչերու տպեղ կ՝երևէին անոնք ։

Տիկին տը Մորսէրֆ իւր տունէն մեկնելէն ՝ի վեր հոն կը բնակէր. անգունդի մը եզերը հաստող ճանապարհորդի մը գլուխը դառնալուն պէս՝ կոմսուհոյն գլուխը այն մշտնջենաւոր լռութեան

առջև կը դառնար։ Եւ տեսնելով որ Ալպէր իւր սրտին վիճակը քննելու համար ամէն վայրկեան պաղտնապէս իրեն կը նայէր, ստիպուեր էր իւր շրթանց վրայ միօրինակ ժպիտ մը տպաւորելու, որ աչաց ժպիտին այն քաղցր հուրը չունենալով լուսոյ յուզացման, այսինքն առանց ջերմութեան լուսոյ ազդեցութիւնը կ'ընէր։

Միւս կողմէն Ալպէր ալ մտազբաղ կ'երևէր, և իւր վրայ մեծացած փառաւոր հագուստէն անհանգիստ կ'ըլլար, քանզի իւր արդի վիճակէն կը տարբերէր ղինքը. առանց ձեռնոցի դուրս ելլել կ'ուզէր, բայց իւր ձեռները խիստ սպիտակ կ'երևէին իրեն. ոտքով քաղաքին մէջ պտըտիլ կ'ուզէր, և իւր կոշիկները խիստ փայլուն կը գտնէր։

Այսու ամենայնիւ՝ մայրական և որդիական սիրոյ անքակտելի կապերով միացած այս երկու աղնիւ և հանճարեղ անձերը՝ առանց բան մը խօսելու՝ յաջողեր էին իրարու միտքը հասկընալ և խնայողութեամբ այն ամէն պատրաստութիւնները հայթայթել, որոնք կենաց պահպանութեան համար անհրաժեշտ պէտք են։

Ալպէր կրցեր էր վերջապէս իւր մօրը ըսել առանց անոր շփոթութիւն մը պատճառելու.

— Մայր իմ, ալ ստակ մը չունինք —։

Երբէք Մէրսէտէս բուն չքաւորութիւնը ճանչցած չէր. իւր ծաղիկ հասակին մէջ շատ անգամ ինքնին աղքատութեան վրայ մտածեր էր. սակայն հիմա բոլորովին տարբեր էր. պէտքը և հարկը երկու համանշան բառեր են, որոց մէջ անսահման անջրպետ մը կայ։

Քաթալանցւոց մէջ եղած ժամանակը՝ Մէրսէտէս անթիւ բաներու պէտք ունէր, բայց ուրիշ շատ բաներու կարօտ չէր ինար. ուռկաններ ունէին, որոնցմով ձուկ կ'որսային. և ձուկերը ծախելով՝ ուռկաններուն նորոգութեան պէտք եղածը կը հոգացուէր։

Ասկէ զատ՝ բարեկամներէ մնացած՝ միայն սէր մը ունէր, որ իւր կացութեան նիւթականին երբէք չէր ձլասեր. միայն իրեն կը մտածէր. ինչպէս որ ամէն մարդ իրեն և դարձեալ իրեն համար կը մտածէ։

Մէրսէտէսի ունեցածը քիչ բան մ'էր, բայց իրեն պէտք եղածը ըստ կարի առատապէս կը լեցընէր. սակայն այսօր երկու անձի պէտքը սլիտի հոգար և այն՝ ոչինչով։

Ամուր կը մտածեր. ժամանակաւ բազմաթիւ վաճառական մը իւր տան նախասենեակներէն մինչև դահլիճները կը տաքցընէր, բայց այսօր այն մերկ և ցուրտ սենեկին մէջ կրակ անգամ չունէր. իւր սենեակներուն մէջ ոսկիի գնով լցուած ծաղկանց ջերմանոց մը ունէր, բայց այսօր խեղճ փոքր ծաղիկ մը անգամ չունէր։

Բայց իւր զաւակը քովն էր...։

Գուցէ չափազանցեալ պարտաւորութեան մը սաստիկ եռանդը մինչև այն ատեն ղանոնք բարձրացոյն շրջաններու մէջ զօրացուցած էր։

Սաստիկ եռանդը գրեթէ սրտի յափշտակութիւնն է, և սրտի յափշտակութիւնը անզգայ կ'ընէ զմարդ երկրային իրաց։

Սակայն սրտի յափշտակութիւնը խաղաղած էր, և պէտք էր կամաց կամաց երազոյ երկրէն իրական աշխարհին մէջ իջնել վերստին։

Իտէականէն ետև՝ պէտք էր ստուգութեան վրայ խօսիլ։

— Մայր իմ, կ'ըսէր Ալպէր ձիշդ այն միջոցին որ տիկին Տանկլար սանդուխէն վար կ'իջնէր, հաշուենք բոլոր մեր հարստութիւնը, եթէ կը հաճիս. մեր ընելիքը որոշելու համար ունեցածնուս ամբողջութիւնը պիտնալ կ'ուզեմ։

— Ունեցածնուս ամբողջութիւնը կ'ըսես, բան մը չունինք, ըսաւ Մէրսէտէս տխրալին ժպիտով մը։

— Ինչո՞ւ այդպէս կ'ըսես, մայր իմ. նախ՝ երեք հազար ֆրանք ունինք, և այս գումարով ապահով եմ որ երկուքնիս ալ պատուական կեանք մը պիտի անցընենք։

— Մանուկ մ'ես դուն, ըսաւ Մէրսէտէս հառաչելով։

— Ափսո՛ս, սիրելի մայր իմ, ըսաւ երիտասարդը, դժբաղդաբար շատ ստակ վատնած ըլլալուս համար անոր յարգը կը ճանչնամ։ Երեք հազար ֆրանքը մեծ բան ըսել է, և ես այս գումարով մեր ապագան ապահովցուցի։

— Այդ խօսքը դիւրին է ըսելը, սիրելիս, շարունակեց խեղճ մայրը, բայց նախ՝ այն երեք հազար ֆրանքը պիտի ընդունի՞նք, ըսաւ Մէրսէտէս կարմրելով։

— Բայց կարծեմ թէ արդէն որոշեցինք, ըսաւ Ալպէր հաստատ ձայնով մը. այո՛, մանաւանդ չունենալնուս համար պիտի ընդունինք. քանդի, ինչպէս պիտես, Մարսիլիոյ Մէյլանի ծառուղիներուն այն փոքր տան պարտիզին մէջ թաղուած են անոնք։ Երկու հարիւր ֆրանքով երկուքնիս ալ Մարսիլիա պիտի երթանք։

— Երկու հարիւր ֆրանքո՛վ, ըսաւ Մէրսէդէս, կը կարծե՞ս, Ալպէր։

— Ո՛չ, այս մասին սուրհանդակներու և շոգենաւուց պրաւուներէն տեղեկացայ, և հաշիւը ըրած եմ։ Մինչև Շալոն մանուկառքով պիտի երթաս երեսուն և հինգ ֆրանքի. կը տեսնե՞ս, մայր իմ, կ՚ուզեմ որ թաղուհիի պէս երթաս —։

Ալպէր գրիչ մը առաւ և գրեց.

Մանկաւառք՝ երեսուն և հինգ ֆրանք..... 35 ֆր.
Շալոնէն Լիոն շոգենաւով պիտի երթուի՝ վեց ֆրանք 6
Լիոնէն Ավինեոն դարձեալ շոգենաւով՝ տասն ու վեց ֆրանք..... 16
Ավինեոնէն Մարսիլիա՝ եօթը ֆրանք..... 7
Ճամբու ծախք՝ յիսուն ֆրանք..... 50
Գումար 114 ֆր.

Հարիւր քսան դնենք, յաւելցուց Ալպէր ժպտելով, կը տեսնես որ առատաձեռն եմ, այնպէս չէ՞, մայր իմ։

— Բայց դուն ինչ պիտի ընես, խեղճ զաւակս։

— Ձե՞ս տեսներ՝ ինծի համար ութսուն ֆրանք պահեցի։ Երիտասարդ մը, մայր իմ, իր ամեն հանգստութեանց պէտք չունի. մանաւանդ որ Ճանապարհորդելը ինչ ըսել է ես աղէկ պիտեմ։

— Սրընթաց կառքով և սենեկապանիդ հետ Ճանապարհորդելը։

— Ամեն կերպով, մայր իմ։

— Շատ աղէկ, թող այնպէս ըլլայ, ըսաւ Մէրսէդէս. բայց այդ երկու հարիւր ֆրանքը ուրկից պիտի դտնենք։

— Ահա երկու հարիւր ֆրանք, և ահա ուրիշ երկու հարիւր ալ։ Տես, մայր իմ, ժամացոյցս հարիւր ֆրանքի ծախեցի և ա-

նոր քովի զարդերը երեք հարիւրի։ Ո՛րչափ երջանիկ եմ եղեր. զարդերը ժամացոյցէն երեք անգամ աւելի արժողութիւն ունէին։ Ստոյգ է այն խօսքը թէ՝ Աւելորդ զարդերը միշտ աւելի տանկ կը կարեն։ Ուրեմն հարուստ ենք մենք, քանի որ Ճանապարհորդութեանդ համար պէտք եղած հարիւր տասն և չորս ֆրանքին տէր՝ երկու հարիւր յիսուն ֆրանք ունիս։

— Բայց այս պանդոկին փոքր պարտք մը ունինք։

— Երեսուն ֆրանք միայն, բայց ես իմ հարիւր յիսուն ֆրանքէս պիտի վճարեմ. և որովհետև իմ Ճանապարհորդութեանս համար Ճիշդ ութսուն ֆրանք պէտք է, կը տեսնես որ բաւական եղածէն շատ աւելի ունիմ։ Բայց ատով չլմննար. ատոր ինչ պիտի ըսես, մայր իմ —։

Եւ Ալպէր ոսկի Ճարմանդով փոքր պրապանի մը մէջէն հազար ֆրանքնոց լումայատոմս մը հանեց. այս պրապանը կամ՝ իր հին մտային հաճոյիցը ձեռագործ մ՚էր և կամ գուցէ սիրուն յիշատակ մը այն դաղտնի և քօղարկեալ կանանց մէկուն, որոնք իւր տանը փոքր գուռը կը զարնէին։

— Ի՞նչ է այդ, հարցուց Մէրսէդէս։

— Հազար ֆրանք, մայր իմ։

— Բայց ուրկից ստացար այդ հազար ֆրանքը։

— Մտիկ ըրէ, մայր իմ, և սիրտդ մի խաղցըներ —։

Եւ Ալպէր ոտք ելնելով դնաց իւր մօրը երկու այտերը համբուրելէն եաև անոր աջը կեցաւ և երեսը նայեցաւ։

— Ձես կրնար երևակայել, մայր իմ, թէ ո՛րչափ քաղցր կ՚ելլես ինձ, ըսաւ երիտասարդը որ իսկան սիրոյ խորին զգացմամբ մը. ստուգիւ դուն իմ տեսած կիներուս մէջ ամենէն գեղեցիկը և ամենէն ազնիւն ես։

— Սիրելի զաւակս, ըսաւ Մէրսէդէս ջանալով իւր արտասուքները ծայր տուած արտասուքը զսպելու։

— Ստուգիւ կարծես թէ իմ սէրս կրկնապատկելու համար դուն գժբաղդ եղար։

— Ես գժբաղդ չեմ ո՛րչափ ժամանակ որ զաւակս քովս է, ըսաւ Մէրսէդէս, և երբէք գժբաղդ պիտի չըլլամ ո՛րչափ ժամանակ որ քովէս չբաժնուի։

— Ո՛հ, Ճիշդ խնդիրը այդ տեղն է, մայր իմ. որոշումիս գիտես։

— Բայց որոշում մը ըրի՞նք մենք, հարցուց Մէրսէտէս։

— Այո՛, որոշեցինք որ դուն Մարսիլիա բնակիս, իսկ ես Ափրիկէ պիտի անցնիմ, ուր Թողուցած անունիս տեղ ընդունած անունս պիտի հռչակեմ— ։

Մէրսէտէս հառաչանք մը հանեց։

— Այո՛, մայր իմ, երէկուանէ հեծելազօրաց դնդին մէջ մտայ, յաւելցուց երիտասարդը աչքնալէն իւր աչերը խոնարհեցընելով, քանզի ինքն ալ չէր գիտեր որ իւր նուաստութիւնը ինչ վսեմութիւն մը կը պարունակէր. մայր իմ, կարծեցի թէ մարմինս իմս է և ես կրնայի ծախել զայն. ուստի, յաւելցուց Ալպէր ժպտելու ջանալով, կարծածէս աւելի սուղ ծախեցի ինքզինքս, այսինքն երկու հազար ֆրանքի։

— Ուրեմն այդ հազար ֆրանքը . . . , ըսաւ Մէրսէտէս սարսռալով։

— Դումարին կէսն է, մայր իմ. մնացեալը տարիէ մը պիտի ընդունիմ— ։

Մէրսէտէս անսկարագրելի զգացումով մը իւր աչերը դէպ 'ի երկինք վերցուց, և իւր արտևանանց անկիւնը արգիլուած արտասուաց երկու կաթիլները ներքին յուզմունքէն դուրս յորդելով ըսիկ իւր այտերէն վար գլորեցան։

— Իւր արեան գինը, մրմռաց մայրը։

— Այո՛, եթէ սպաննուիմ, ըսաւ Մորսէրֆ ծիծաղելով. բայց ընդհակառակն կ'ապահովեմ զքեզ, սիրելի մայր իմ, որ իմ անձս ամենայն զգուշութեամբ պիտի պահպանեմ. ապրելու համար արդի ունեցածէս աւելի մեծ փափաք մը երբէք զգացած չեմ։

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, ըսաւ Մէրսէտէս։

— Բայց ինչո՞ւ պիտի սպաննուիմ, մայր իմ։

« Միթէ Լամորիսիէր, Հարաւային այն միւս Նէյը սպաննուեցաւ ։

« Միթէ Շանկարնիէ սպաննուեցաւ ։

« Միթէ Պրսո սպաննուեցաւ ։

« Միթէ Մորէլ, զոր մենք կը Ճանչնանք, սպաննուեցաւ ։

« Մտածէ, մայր իմ, որչափ պիտի ուրախանաս երբ բանուած համազգեստով դալս տեսնես ։ Ստուգիւ խիստ շքեղ պիտի երեւիմ, և ես զարդասիրութեամբ այս գնդին մէջ մտնել ուզեցի — ։

Մէրսէտէս հառաչանք մը հանեց, բայց մի և նոյն միջոցին ժպտելու ջանաց ։ Այս ատրբ մայրը աղէկ կը հասկընար որ զոհողութեան բոլոր բեռը իւր զաւկին վրայ ձգելը իրեն անտանելի էր ։

— Կը տեսնես, մայր իմ, կրկնեց Ալպէր, ահա քեզի համար չորս հազար ֆրանք ապահովուած են. այս չորս հազար ֆրանքով երկու տարի կրնաս ապրիլ ։

— Կը կարծե՞ս — , ըսաւ Մէրսէտէս ։

Այս խօսքերը կոմտուհւոյն բերանէն փախան և այնպիսի դառն ցաւով մը արտասանուեցան, որ Ալպէր անոնց բուն միտքը աղէկ հասկըցաւ. իւր սրտին մորմոքիլը զգաց, և մօրը ձեռքը բռնելով, զըրոնք իւր կուրծքին վրայ խանդաղատութեամբ սեղմեց՝ ըսաւ,

— Այո՛, մայր իմ, պիտի ապրիս ։

— Պիտի ապրի՛մ, գոչեց Մէրսէտէս, բայց դուն ալ պիտի չմեկնիս, այնպէս չէ՞, զաւակս ։

— Մայր իմ, պիտի մեկնիմ, ըսաւ Ալպէր հանդարտ և հաստատ ձայնով. զիս խիստ սիրելուդ համար չեմ կարծեր որ անդործ և անպիտան մնալս ուզես, մանաւանդ որ ես ստորագրութիւնս տուի ։

— Շատ աղէկ, դուն ուզածդ ըրէ, զաւակս, ես ալ Աստուծոյ ուզածը պիտի ընեմ ։

— Իմ ուզածս չէ, մայր իմ, այլ բանականութեան և հարկին պահանջածը ։ Երկուքս ալ յուսահատեալ արարածներ ենք, այնպէս չէ՞. կեանքը ի՞նչ է այսօր քեզի համար, ոչինչ. և ի՞նչ է ինծի համար, ո՛հ, առանց քեզի ոչինչ, մայր իմ, հաւատա ինծի. քանզի առանց քեզի կ'երդնում որ իմ կեանքս պիտի դադրէր, որու մէջ հօրս պատուոյն վրայ կասկածներ ունեցայ և անոր անունը ուրացայ ։ Վերջապէս հիմա կ'ապրիմ. եթէ կը խոստանաս ինծի որ տակաւին յուսամ, եթէ ապագայիդ հողը ինձ կը

Թողուս, իմ այժս կը կրկնապատկես: Այնատեն ես ալ կ'երթամ Ալֆէրիայի կառավարիչը կը դտնեմ, որ արդարասիրտ մարդ մ'է և մանաւանդ բուն գինուոր մը. իմ աղէտալի պատմութիւնս ա- նոր կը պատմեմ, կ'աղաչեմ զան որ մերթ ընդ մերթ իւր աչքը իմ վրաս դարձընէ, և եթէ իւր խոստման վրայ կենայ, եթէ ը- րած գործերս տեսնէ՝ վեց ամիս չանցած կամ պաշտօնատար կ'ըլ- լամ և կամ կը մեռնիմ: Եթէ պաշտօնատար ըլլամ, քու բաղդդ ապահովուած է, մայր իմ, քանզի այն ատեն քեզի և ինձի հա- մար տակ պիտի ունենամ. ասկէ զատ նոր անուն մը պիտի կրենք, որով երկուքս ալ պիտի պարծինք, քանզի քու բուն անունդ պի- տի ըլլայ այն: Իսկ եթէ սպաննուիմ... այն ատեն, սիրելի մայր իմ, դուն ալ մեռիր, եթէ կ'ուզես, և այն ատեն մեր թշուառու- թիւնները իրենց յետին ծայրը հասնելով պիտի վերջանան:

— Շատ աղէկ, պատասխանեց Մէրսէտէս ամենիւ և սերձա- խօս նայուածքով մը. իրաւունք ունիս, զաւակս, զմեզ դիտող և մեր գործերը լրտեսող քանի մը անձանց փորձով յուսընենք որ մենք գոնէ գթութեան արժանի ենք:

— Բայց այդպիսի տխուր խորհուրդները հեռացուր մտքէդ, սիրելի մայր իմ, դոչեց երիտասարդը. կ'երդնում որ խիստ եր- ջանիկ ենք կամ գոնէ կրնանք ըլլալ: Դուն խելացի և Աստուծոյ կամացը հնազանդող կին մ'ես. ես ալ կը յուսամ որ հաճոյքներս պիտի մեղմեմ և կիրքերս պիտի զսպեմ: Պաշտօնի մէջ մտնելուս պէս՝ պիտի հարստանամ. դուն ալ Պ. Տանթէին տունը մտնելուդ պէս պիտի հանդստանաս: Փորձենք, կ'աղաչեմ, մայր իմ, փոր- ձենք:

— Այո՛, փորձենք, զաւակս, վասն զի դուն պէտք ես ապ- րիլ, և երջանիկ ըլլալ, պատասխանեց Մէրսէտէս:

— Ուրեմն մեր որոշումը ընենք եաև, յաւելցուց երիտա- սարդը սրտի մեծ հանդարտութիւն մը կեղծելով, այսօր կրնանք մեկնիլ: Ինչպէս ըսի՝ մասնակարգ բռնած եմ:

— Բայց դուն, զաւակս:

— Ես տակաւին երկու կամ երեք օր պէտք եմ հոս մնալ, մայր իմ, իրարմէ բաժնուելու սկիզբը մ'է այս, և մենք այս բա-

նին սովորելու պէտք ունինք: Քանի մը յանձնարարականներ և Ափրիկէի վրայ տեղեկութիւններ պիտի ստանամ, և Մարսիլիա գիրար կը գտնենք:

— Շատ աղէկ, թող այնպէս ըլլայ, մեկնինք ուրեմն —, ը- սաւ Մէրսէտէս իւր հետը բերած միակ ցիսին վրան առնելով, որ ըստ պատահման Քաշմիրի թանկագին սեւ ցիսի մ'էր:

Ալպէր շուտով իր ձղթերը ժողվեց, զանգակը հնչեցուց, պանդոկապետին ունեցած երեսուն ֆրանք պարտքը վճարեց, և իւր թևը մօրը նուիրելով՝ սանդուխէն վար իջաւ:

Իրենց առջևէն մէկը ի'իջներ, այս մէկը մեսաքսեայ շքջա- զդեստի մը շղշլիւնը լսելով ետին դարձաւ:

— Տըպրէ, մրմռաց Ալպէր:

— Դո՞ւք էք Մորսէրֆ —, պատասխանեց պաշտօնէին դիւա- նադպիրը իւր դտնուած սանդուխին ոտքին վրայ կենալով:

Տըպրէին հետաքրքրութիւնը իւր անձանօթ ճանչցուեր էր: յաղթեց, մանաւանդ որ արդէն ճանչցուեր էր:

Եւ իրօք զարմացած կ'երևէր նոյն պանդոկին մէջ այն երիտա- սարդը տեսնելուն, որուն դժբաղդութիւնը Բարիզի մէջ այնչափ մեծ շշուկ մը հաներ էր:

— Մորսէրֆ —, կրկնեց Տըպրէ:

Բայց կէս մթութեան մէջ տիկին մը Մորսէրֆի տակաւին մատղաշ մարմնոյ ձևը և անոր սև գոգը տեսնելով.

— Ո՛հ, ներեցեք, յաւելցուց ժպիտով մը, զձեզ առանձին կարծեցի, Ալպէր —:

Ալպէր Տըպրէի միտքը հասկըցաւ:

— Մայր իմ, ըսաւ Մէրսէտէսին դառնալով, ներքին պաշտօ- նէին առենադպիր Պ. Տըպրէն իմ նախնի բարեկամս է:

— Ինչո՞ւ նախնի բարեկամիդ կ'անուանէք զիս, ըսաւ Տըպրէ կակազելով. ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Անոր համար ըսի, Պ. Տըպրէ, կրկնեց Ալպէր, որ այսու- հետև բարեկամ չունիմ և պիտի չունենամ ալ: Ընդհակառակ եմ որ բարեհաճեցաք ճանչնալ զիս, պարոն —:

Տըպրէ երկու ոտք վեր եկաւ և իւր խօսակցին ձեռքը աշխու- ժիւ թօթվեց:

— Հաւատացէք, սիրելիդ իմ Ալպէր, ըսաւ Տըպրէ աշխուժիւ, որ ձեր դժբաղդութեան կարի վշտակից եմ, և ամէն բանի մէջ ձեզ հաճելի ըլլալու պատրաստ եմ։

— Շնորհակալ եմ, պարոն, ըսաւ Ալպէր ժպտելով. մեր այս դժբաղդութեան մէջ բաւական հարուստ ըլլալով ուրիշի օգնութիւն չունինք. մենք Բարիզէն կը մեկնինք, և մեր ճանապարհորդութեան ծախքը վճարելէն ետև՝ հինգ հազար ֆրանքերնիս կը մնայ —։

Տըպրէի դէմքը շառագնեցաւ, քանզի կը մտածէր որ իւր գրպանին մէջ մէկ միլիոն ֆրանք ունէր, և քիչ մը առաջ նոյն տան մէջ երկու կին կը դտնուէին, որոց մէկը արժանաբար անպատուեալ՝ մէկ ու կէս միլիոն ֆրանքով աղքատ կը մեկնէր, և միւսը անարժանաբար դժբաղդութեան մէջ ինկած, բայց իւր դժբաղդութեան մէջ վսեմ երևելով՝ քիչ մը ստակով հարուստ կը դտնուէր։

Այս համեմատութիւնը իւր քաղաքավարական խօսքերը շփոթեց. օրինակին փիլիսոփայութիւնը իւր սիրտը ձնշեց. քաղաքավարական քանի մը հասարակ խօսքեր կակազեց և շուտով վար իջաւ։

Պաշտօնատան մէջ իւր հրամանին տակն եղող գրագիրները այն օրը Տըպրէին տխուր դէմքէն շատ նեղութիւն կրեցին։


Բայց նոյն իրիկունը՝ Մատըլէնի ծառուղւոյն վրայ խիստ գեղեցիկ տան մը առջև եղեր էր, որ յիսուն հազար ֆրանք եկամուտ կը բերէր։

Հետևեալ օրը՝ Տըպրէին դաշնագիրը ստորագրած ժամուն, այսինքն իրիկուան ժամը հինգին տիկին տը Մորսէրֆ իւր որդւոյն հետ պօրովանօք պաղնուելէն ետև՝ սուրհանդակի մատնակատը կը հեծնէր, որուն դուռը իւր վրայ փակուեցաւ։

Լաֆիթի սուրհանդակաց տան բակին մէջ, ամէն պրասեննեակներուն վրայ եղած կամարաձև պատուհաններէն մէկուն ետին մարդ մը պահուած էր, որ Մէրսէտէսի կառքը մտնելն ու մեկնիլը և Ալպէրի հեռանալը տեսաւ։

Այն տեսն այն մարդը ձեռքը իւր տարակուսալի ձակատը տանելով ըսաւ։

— Ափսոս, արդեօք ինչ միջոցաւ պիտի կարենամ այս երկու անմեղներուն երջանկութիւնը վերադարձընել, որպէս ես զրկեցի զանոնք։ Աստուած կ՚օգնէ ինձ —։



ԳԼՈՒԽ Ը

ԱՌԻՒԾՈՒՑ ՓՈՍԸ

Ֆօրա կոչուած բանտարանին թաղերէն մէկը, որ ամենէն ձեռնահաս և վտանգաւոր բանտարկեալները կը պարունակէր, Սէն-Պէրնարի դաւիթը կը կոչուի։

Բանտարկեալները իրենց աղտու լեզուովը Առիւծուց Փոսը կը կոչէին զայն՝ հաւանականաբար այն տեղի կալանաւորները այնպիսի ակռաներ ունենալնուն համար, որոնցմով շատ անգամ երկաթ վանդակները և երբեմն բանտապահները կը խածնէին։

Բանտի մէջ բանտ մ՚է այն. պատերը միւս բանտերուն պատին կրկին թանձրութիւնն ունէին։

Ամէն օր բանտապահ մը միաձոյլ վանդակները զգուշութեամբ աչքէ կ՚անցընէր. այս բանտապահներուն հերքիւլեան հասակը, պաղ և ամլ դու նայուածքը կը ցուցընէին որ կալանաւորներուն երկիւղ պատճառելու և իրենց խելացիութեամբը անոնց վրայ իշխելու համար ընտրուած էին։

Այս թաղին դաւիթը բարձր պատերով շրջապատեալ էր, որոնց

վրայէն արևը կողմնակի կ'իջնէր՝ երբ բարոյական և ֆիզիքական զգրուխեամբ այս անդունդին մէջ թափանցել արժան համարէր :

Այս դաւթին քարայատակին վրայ առաւօտէն մինչև իրիկուն՝ թախծագին, վայրենագէմ ստուերի պէս դունատեալ կը թափառէին այն մարդերը, զորոնք ոստիկանութիւնը վաղրին տակը խոնարհեցուցած կը պահէ, և որոնց համար զայն միշտ կը սրէ :

Բոլոր պատին երկայնքը ոմանք կը կռթընէին և ոմանք կծկած կը նստէին. քանզի պատր ամենէն աւելի տաք բռնող կողմն էր :

Երկերկու հոգի կ'ըլլային և իրարու հետ կը խօսակցէին շատ անդամ առանձնակի և աչերնին անդադար դէպ 'ի դուռը յարած, որ երբեմն կը բացուէր այս տխուր բնակութենէն մէկը կանչելու և կամ կերակրութեանց հալոցին մէջէն մերժուած նոր աղտեղութիւն մը այն վիհին մէջ փսխելու համար :

Սէն-Պէրնարի դաւիթը իւր մասնաւոր խօսնարանն ունի :

Երկար քառակուսի տեղ մ'էր այն երկու վանդակապատներով երկու մասի բաժնուած, որոնք իրարմէ երեք ոտք զուգապիծ հեռաւորութիւն ունէին, այնպէս որ այցելուն չկարենայ բանտարկեալին ձեռքը բռնելու կամ անոր բան մը տալու :

Այս խօսնարանը մութ, խոնաւ, և ամեն կողմէն սոսկալի էր, մանաւանդ երբ մտածենք այն վանդակներուն մէջէն սարսափելի մտերմական խօսակցութեանց վրայ, որոնք վանդակներուն երկաթը ժանգոտած են :

Այսու ամենայնիւ՝ այս տեղը որչափ ալ ահռելի ըլլար, բանտին արքայութիւնն էր, ուր՝ օրերնին համրուած այս մարդիկը իրենց սպառած և փտփտած անձերը տեսնելու հաճութիւնը կ'ունենան :

Աւիւծուց Փոսէն ելնողը դրեթէ միշտ կամ Սէն-Ժագի արգելքանը պիտի երթար, կամ Թիանոյը և կամ առանձին բանտ մը :

Այն դաւթին մէջ, որուն նկարագրութիւնը ըրինք և որուն պատերէն յուրտ խոնաւութիւն մը կը ծորէր, երիտասարդ մը կը պտըտէր ձեռքերը զգեստին ծոցերուն մէջ դրած և փոսին բնակիչները հետաքրքրութեամբ զան կը դիտէին :

Իւր զգեստներուն ձևէն կրնար աղնուական մը կարծուիլ, եթէ այն զգեստները պատառոտած չըլլային. սակայն մաշած չէին անոնք, նոր

ձեացած՝ մասերուն չափան ընտիր և մտաքնի պէս կակուղ ըլլալուն դիւրութեամբ իւր փայլուն ութիւնը կ'ըստանար. քանզի բանտարկեալը իւր փաղաքուշ ձեռօքը կը ջանար իւր զգեստը նոր երևցընել :

Նոյն զգուշութիւնը կը բանեցընէր իւր բարակ կտաւէ շապիկը գոյելու, որուն գոյնը բոլորովին փոխուեր էր իւր բանտը մտնելէն 'ի վեր, և իւր ասլիկեալ կոշիկները թաշկինակի մը ծայրովը կը մաքրէր, որուն վրայ գինանշանի թաղի մը տակ անունին սկզբնական նշանագրերը բանուած էին :

Աւիւծուց Փոսին թռչակաւորներէն մէկ քանին մասնաւոր ուշադրութեամբ մը բանտարկեալին ընտիր զգեստները կը դիտէին :

— Ահա իշխան մը, որ ինքզինքը գեղեցիկ երևցընել կ'ուզէ, ըսաւ դողերէն մէկը :

— Ստուգիւ խիստ գեղեցիկ է, ըսաւ ուրիշ մը, և եթէ սանտր մը և մազի իւղ ունենար, բոլոր սպիտակ ձեռնոցներով պարոնները պիտի գերազանցէր :

— Իւր զգեստները անշուշտ խիստ նոր պիտի ըլլային և իւր կոշիկները աղտոր կը փայլին : Քիչ պատիւ չէ մեզ որ մեր մէջը այսպիսի վայելուչ ընկեր մը ունենանք. ինչպէս անօրէն մարդիկ են այն անզգամ գինակիրները : Նախանձոտ մարդիկ, այսպիսի զգեստները կը պատռտէն :

— Կ'երևի թէ համբաւաւոր մէկն է, ըսաւ ուրիշ մը, ամեն տեսակ դործ դործեր է, և մեծ դործեր . . . : Այս տարիքին մէջ, ահ, մեծ բան ըսել է — :

Եւ այս սոսկաւիթ զարմացման առարկայ եղող անձը կարծես թէ հաճութեամբ կ'ընդունէր այն գովեստները կամ գովեստից երևոյթը, քանզի անոնց խօսքերը չէր լսեր :

Երիտասարդը իւր վրան գլուխը շիտկելէն ետև՝ գինեետան գունակին մօտեցաւ, որուն ձախակողմն մը կռթըներ էր :

— Աղէ, պարոն, ըսաւ անոր, ինձ քսան ֆրանք փոխ տուր, և ես քիչ ժամանակէն կը հատուցանեմ քեզ. ինձմէ երբէք մի վախնար : Մտածէ որ ես այնպիսի ծնողք ունիմ, որոնք քու ունեցած դրամներուդ չափ միլիոններ ունին . . . : Աղէ, քսան ֆրանք միայն, կ'աղաչեմ, որպէս զի կարենամ մասնաւոր սենեակ մը ունենալ հոս և

խցաղբեստ մը դնել։ Վրայի ղեսաններովս և կոշիկներովս սաստիկ կը նեղուիմ. ինչ ղեստ է այս, պարոն, Գալաղանթի իշխանի մը համար —։

Պահապանը իր կռնակը դարձուց և ուսերը թոթվեց. չծիծաղեցաւ իսկ անոր այս խօսքերուն, որոնք ամեն մարդու զուարճութիւն կրնային պատճառել. քանզի այս մարդը այս տեսակ և կամ միշտ ասոնց նման շատ խօսքեր լսած էր։

— Անպուճի մարդ մ'ես եղեր դուն, ըսաւ Անտրէա, կեցիր, ես քու պաշտօնէդ ձգել կու տամ քեզի —։

Այս խօսքին վրայ պահապանը իր գլուխը դարձուց և այս անգամ բարձրաձայն քրքիջ մը հանեց։

Այն ատեն միւս բանտարկեալները անոր մօտեցան և բոլորտիքը շրջան մը կազմեցին։

— Կը լսե՞ս, այս դոյլն դումարով ղեստ մը և սենեակ մը պիտի հոգամ կ'ըսեմ, շարունակեց Անտրէա, որպէս զի կարենամ վայելուչ կերպով ընդունելութիւն տալ այցելուին, որուն ժամ առ ժամ կ'ըսպասեմ։

— Իրաւունք ունի, իրաւունք ունի, ըսին բանտարկեալները . . . Ցայտնի կը տեսնուի որ հասարակ մարդ մը չէ։

— Ուրեմն քսան ֆրանկը դուք փոխ տուէք անոր, ըսաւ պահապանը իւր միւս յաղթ ուսին կոթըննելով. միթէ ձեր պարտքը չէ ընկերի մը օգնել։

— Ես այս մարդոց ընկերը չեմ, ըսաւ երիտասարդը սէգութեամբ մը. մի՛ թշնամաներ դիս, քանզի իշխանութիւն չունիս —։

Գողերըցած մրմունջներով իրարու երես նայեցան, և պահապանէն ու մանաւանդ Անտրէայի խօսքերէն գրգռուած փոթորիկ մը ամբոխական բանտարկեալին վրայ որոտալ սկսաւ։

Պահապանը՝ փոթորկին աղմկալի կոհակներ հանած ատենը զանոնք հանդարտեցընելու ապահով րլլալով, Թողուց զանոնք որ անպատեհ կռիւ փնտռողին վրայ խրոխտան, և իւր օրական երկար պահպանութեանը մէջ գբօսնելու առիթ մը ներկայացնեն իրեն։

Արդէն գողերը Անտրէայի կը մօտենային, և ոմանք կ'ըսէին. — Մուճակախմղը, մուճակախմղը սկսինք —։

Անխնայ դործողութիւն մ'էր այս, որ չէ թէ մուճակներով այլ մուճակներու երկաթագամ ներբաններով կ'ըլլար այս պարոններուն տհաճելի եղող ընկերին վրայ։

Ոմանք օձաձուկին խաղը կ'առաջարկէին. այս ալ ուրիշ տեսակ գբօսանաց խաղ մ'էր, որ՝ի գործ կը դրուէր աւազ, խիճ և խոշոր դրամներ (եթէ ունենային) գալարեալ թաշկինակի մը մէջ լեցընելով, և անով իրենց թշնամւոյն ուսերուն և գլխին վրայ հարուածներ տեղացընելով։

— Մարակենք մեր դեղեցիկ պարոնը, ըսին ուրիշները, մեր պարկեշտ պարոնը —։

Բայց Անտրէա դէպ՝ի անոնց դարձաւ, իւր աչքը թարթափեց, լեզուովը իւր այտը ուռեցուց, և շուրթերը այնպէս կափկափեց, որ այս նշաններով աւազակաց շատ բաներ ըսել կ'ուզէր։

Այս դաղտնի նշանները Քատրուս սորվեցուցեր էր իրեն։

Աւազակները Անտրէային իրենցմէ ըլլալը ճանչցան. իսկոյն բարձրացուցած թաշկինակները իջեցուցին, և երկաթագամ մուճակը գլխաւոր գահճին ոտքը անցաւ։

Ան ատեն քանի մը ձայներ լսուեցան, որոնք կ'իմացընէին թէ պարոնը իրաւունք ունէր, թէ կրնար պարկեշտ մարդ մը ըլլալ, և թէ բանտարկեալները կ'ուզէին խղճի ազատութեան օրինակը տալ։

Ասոր վրայ բազմութիւնը ետ քաշուեցաւ. բայց պահապանը այնչափ զարմացած մնաց, որ իսկոյն Անտրէային ձեռքէն բռնեց և սկսաւ անոր վրան փնտռել՝ Առիւծուց Փոսին բնակչաց այն յանկարծական փոփոխութիւնը հմայութենէ աւելի նշանական յայտնութեան մը տալով։

Անտրէա թողուց որ պահապանը իւր վրան փնտռէ, թէև անոր գէմ բողոքեց։

Յանկարծ դռնակէն ձայն մը լսուեցաւ։

— Պէնէտէթթօ —, կը դոչէր տեսուչը։

Պահապանը թողուց զան։

— Ձիս կը կանչեն, ըսաւ Անտրէա։

— Խօսնարանը եկու, ըսաւ ձայնը։

— Կը տեսնէք, ինձ այցելութեան եկան։ Ո՛չ, սիրելիդ իմ պարոն,

հիմա կը տեսնէք թէ Դավալղանթիի հետ հասարակ մարդու մը պէս վարուիլը ներելի՛ է — ։

Եւ Դավալղանթիի սև ստուերի մը պէս պաթիին մէջէն սահելով, կիսաբայց դռնակէն դուրս ցատկեց իր ընկերներն ու նոյն ինքն սպահապանը զարմանքի մէջ թողլով ։

Իրօք խօսնարանէն կը կանչէին ղինքը, որուն վրայ Անտրէա իսկ նուաղ զարմայրան մէջ չէր գտնուեր. քանզի խորամանկ երիտասարդը այս բանտը մտնելէն՝ի վեր ղինքը փնտռել տալու համար գիրեր պրեղու տեղ, ինչպէս կ՚ընեն ամեն հասարակ մարդիկ, կատարեալ ստոյիկեան լուռթիւն մը պահեր էր ։

— Ցայտնապէս զօրաւոր անձ մը գիս կը պաշտպանէ անշուշտ, կ՚ըսէր իրովի. անյուսալի հարստութիւնս, այն գիւրութիւնը, որով ամեն դժուարութեանց յաղթեցի, անակնկալ ընտանիք մը, ստացած երևելի անուններ, անձրևի նման ծոցս թափած ոսկին, փառասիրութեանս խոստացուած խիստ մեծ խնամութիւնները, վերջապէս ամեն բան յայտնի կը ցուցընէ ։ Հարստութեանս վայրկենական մոռացութիւնը և պաշտպանիս բացակայութիւնը կորնցուցին գիս, այո, բայց ոչ բոլորովին, և ոչ յաւիտեանս ։ Գիս պաշտպանող ձեռքը վայրկեան մը ինձմէ հեռացաւ, բայց ինքզինքս անդունդին մէջ իյնալու պատրաստ կարծած ատենս՝ այն ձեռքը վերստին ինձ պիտի երկննայ և գիս պիտի բռնէ ։ Ինչո՞ւ ուրեմն իմ անխոհեմութեամբս ինքզինքս վտանգի մէջ ձգեմ. դուցէ իմ պաշտպանս ալ նեղացընեմ ։ Գիս ազատելու համար երկու միջոց ունի. մէկը ոսկիի գնով կրնայ դաղտնի փախուստս գնել և միսը դատաւորայ ձեռքը սեղմել իմ արձակումս ընդունելու համար ։ Ուրեմն խօսելէ և գործելէ առաջ սպասենք, թող յայտնի տեսնեմ որ բոլորովին երեսէ ձգուած եմ, և այն ատեն . . . — ։

Անտրէա իր ընելիքը որոշեր էր, որուն յաջողութեանը տարակոյս չունէր ։ Թշուառականը յարձակելու ժամանակ աներկիւղ էր և ինքզինքը պաշտպանելու ժամանակ անյաղթելի ։

Հասարակաց բանտին թշուառութեանը և ամեն տեսակ զրկանաց համբերեր էր. սակայն կամաց կամաց բնականը, կամ թէ ըսենք՝ սովորութիւնը իր համբերութեան յաղթեր էր ։

Անտրէա իր մերկութեանը, աղտեղութեանը և անօթութեանը համար կը նեղուէր, և ժամանակը իրեն համար երկար կը տևէր ։

Այս տաղտկութեան ժամուն էր որ տեսչին ձայնը ղինքը խօսնարանը կը կանչէր ։

Անտրէայի սիրտը ուրախութենէն խայտաց ։ Արդեօք ինչ բանի համար ղինքը կը կանչէին ։ Քննիչ դատաւորին այցելութեան համար շատ կանուխ էր, իսկ բանտին կառավարչին կամ բժշկին կողմէն կանչուելու համար շատ ուշ էր. ուրեմն իր սպասած այցելութիւնն էր այն ։

Խօսնարանին վանդակապատին ետին, Անտրէա անյագ հետաքրքրութեան աչօք Պ. Պէրթուչիոյի թուխ և հանճարեղ դէմքը տեսաւ, որ վշտալի զարմանքով մը երկաթ վանդակները, բանտիքուած դռները, և վանդակապասներուն ետին շարժող ստուերը կը դիտէր ։

— Ո՛հ, գոչեց Անտրէա սիրտը շարժելով ։

— Բարի լոյս, պէնէտէթթօ, ըսաւ Պէրթուչիօ իր խորունկ և հնչական ձայնովը ։

— Դո՞ն ես, ըսաւ երիտասարդը երկիւղով իր բոլորտիքը դիտելով ։

— Գիս չճանչցա՞ր, թշուառ տղայ, ըսաւ Պէրթուչիօ ։

— Լուէ, լուէ, ըսաւ Անտրէա, որ այն պատերուն լսողութեան սրութիւնը կը ճանչնար. այդչափ բարձր մի խօսիր ։

— Անշուշտ հետս առանձին խօսիլ կ՚ուզէիր, այնպէս չէ ։

— Ո՛հ, այո, ըսաւ Անտրէա ։

— Շատ աղէկ — ։

Եւ Պէրթուչիօ իր ծոցէն թուղթ մը հանելով՝ դռնակին ասլակիին ետին երևցած պահապանին նշան մը ըրաւ ։

— Կարդա՛, ըսաւ ։

— Ի՞նչ բան է այդ, ըսաւ Անտրէա ։

— Գքեզ սենեակ մը տանելու, հոն տեղաւորելու և քեզի հետ աղատ տեսնուելու հրամանը ։

— Ո՛հ —, գոչեց Անտրէա ուրախութենէն ցատկելով ։

Բայց շուտով ինքզինքին գալով՝ ըսաւ իրովի.

— Դարձեալ անծանօթ պաշտպանս է, որ գիս չէ մոռցեր ։ Գաղտնիքը կ՚ուզէ իմանալ, քանզի Պէրթուչիօ հետս առանձին սենեկի մը մէջ խօսիլ կ՚ուզէ. բայց իմ գաղտնիքս ես գիտեմ. . . ։ Իմ պաշտպանս զրկած է Պէրթուչիօն — ։

Պահապանը քիչ մը ատեն դլխաւորի մը հետ խորհրդակցելէն ետև՝ վանդակաստատ երկու դռները բացաւ, և առաջին դասիկոնը՝ բակին վրայ նայող սենեակ մը տարաւ Անտրէան, որ ուրախութենէն ալ ինքզինքէն դուրս ելլեր էր։

Ինչպէս որ բանտերուն սովորութիւնն է՝ սենեակը կիրով ձերմկած էր, և անոր զուարթ տեսքը բանտարկեալին հաճելի երևցաւ. կրակարան մը, անկողին մը, աթոռ մը, սեղան մը սենեկին կարասիները կը կազմէին։

Պէրթուչիօ աթոռին վրայ նստաւ, և Անտրէա անկողնոյն վրայ նստուեցաւ, իսկ պահապանը զանոնք Հոն թողլով հեռացաւ։

— Ա՛ղէ, ըսաւ դործակատարը, ըսելու խօսք մը ունիս։

— Եւ դուն, Հարցուց Անտրէա։

— Առաջ դուն խօսէ . . . ։

— Ո՛հ, ոչ. դուն շատ լուրեր պիտի ունենաս ինձ հաղորդելու, քանզի դուն եկար զիս դանելու։

— Շատ աղէկ. ես կ՚ըսեմ. դուն քու անառակութիւններդ շարունակեցիր, դողութիւն ըրիր և մարդ սպաննեցիր։

— Աղէկ, ըսաւ Անտրէա, եթէ այս խօսքերը ըսելու համար զիս մանաւանդ սենեակ մը բերել տուիր, աւելի աղէկ էր որ այդ նեղութիւնը չկրէիր. այդ ամէն ըսածներդ ես գիտեմ, ասոր համար՝ ուրիշ շատ բաներ կան որ ես չեմ գիտեր։ Զգիտցածներուս վրայ խօսինք, եթէ կը հաճիս։ Ո՞վ ղրկեց զքեզ Հոս։

— Ո հն, ինչպէս շուտ կ՚երթաս, պ. պէնէտէթթօ։

— Շիտակ է, և ես ձիշդ նպատակը ձեռք առի։ Անօգուտ խօսքեր չընենք. ով ղրկեց զքեզ Հոս։

— Եւ ոչ մէկը։

— Ո՞րկից գիտես որ ես բանտի մէջ եմ։

— Շատոնց զքեզ ձանչցած եմ, որ նորաձևութիւն սիրող յանդուգն մէկու պէս Շանզ–Էլիզէի մէջ վայելուչ կերպիւ ձի կը հեծնէիր։

— Շանզ–Էլիզէ կ՚ըսես . . . ահ, ուրեմն հօրս վրայօք խօսինք քիչ մը։

— Ուրեմն ով եմ ես։

— Դուն իմ հոգևոր Հայրս ես, ով իմ աղնիւ պարոնս . . . ։ Բայց դուն չես կարծեմ այն անձը, որ Հարիւր Հազարի չափ ֆրանք իմ կատմայսանձնեց, (զորոնք ես չորս կամ հինգ ամսուան մէջ կլլեցի, Իտալացի և ազնուական Հայր մը գտաւ ինձ, ընկերութեանց մէջ մտցուց զիս և Օթէօյլ այնպիսի ձաշի մը հրաւիրեց՝ որ Բարիզի ամենէն երևելի մարդոց և թագաւորի դործակալին հետ սեղանակից եղայ, որուն հետ չբարեկամանալուս չարաչար կը ցաւիմ, քանզի այս միջոցիս կրնար ինծի օգտակար ըլլալ. վերջապէս դուն չես այն անձը, որ մէկ կամ երկու միլիոնի համար երաշխաւոր պիտի ըլլար ինձ, երբ այն աղետալի դիպուածը պատահեցաւ . . . ։ Ա՛ղէ, խօսէ, պատուելի Գորսիացի, խօսէ . . . ։

— Ո՞նչ կ՚ուզես որ ըսեմ։

— Ես ալ կ՚օդնեմ քեզի. քիչ մը առաջ Շանզ–Էլիզէի խօսքը կ՚ընէիր, ով իմ սնուցիչ արժանաւոր Հայրս։

— Ո՞նչ կ՚ելնէ Շանզ–Էլիզէի խօսքը ընելով։

— Շանզ–Էլիզէի մէջ խիստ Հարուստ պարոն մը կը բնակի։

— Որուն տունը դուն պոռնալու մտար և մարդ մեռցուիր, այնպէս չէ։

— Կարծեմ թէ այո։

— Մոնթէ–Քրիսթոյ կոմսը։

— Դուն տուիր անոր անունը, ինչպէս կ՚ըսէ պարոն Ռասին . . . ։ Ըսէ, անոր գրկացը մէջ նետուիմ, և զան սրտիս վրայ սեղմելով պոռամ. «Հայր իմ, Հայր իմ», ինչպէս կ՚ըսէ պ. Բիքսերէգուր։

— Կատակը ձգէ, պատասխանեց պէրթուչիօ, և այդպիսի անունմը բերանդ առնելու մի համարձակիր։

— Ա՛հ, ըսաւ Անտրէա պէրթուչիոյի ծանր կերպարանքէն քիչ մը շփոթած, և ինչո՞ւ չըսեմ։

— Վասն զի այն անունը կրող անձը Աստուծոյ սիրելի ըլլալուն չկրնար քեզի պէս թշնամականի մը հալած ըլլալ։

— Ո՛հ, այդ ինչ մեծ խօսքեր են . . . ։

— Եւ մեծ հետևութիւններ պիտի ունենան եթէ չզղուշանաս։

— Սպառնալիք կ՚ընես, ես չեմ վախնար . . . և պիտի ըսեմ . . . ։

— Կը կարծես թէ քու ցեղիդ թշնամիներուն հետ է գործդ, ըսա

պէրթուչիօ այնպիսի հանդարտ ձայնով և անվրէպ նայուածքով մը, որ Անտրէային մեծ ազդեցութիւն ըրաւ. կը կարծես որ դործդ Թիանոյի շարադործ ընկերներուդ կամ պարզամիտ ապուշներու հետ է: Պէնէտէթթօ, ոսկեալի ձեռքի մը մէջկը դտնուիս. այս ձեռքը կ'ուզէ քեզի համար բացուիլ, օդուտ քաղէ անկէ: Կատակ մի ըներ կայծակին հետ, որ վայրկեան մը հանդարտ կեցած է, բայց կրնայ վերստին որոտալ եթէ իւր ազատ շարժմանը մէջ զայն անհանդիստ ընել ուզես:

— Հայրս . . . կ'ուզեմ դիտնալ թէ ո՞վ է հայրս . . . , ըսաւ յամառ երիտասարդը. Թող կորսուիմ եթէ կարելի է, բայց պէտք է որ դիտնամ: Գայթակղութենէ չեմ վախնար ես, ընդհակառակն բարիք, համբաւ և խրատ կրնայ տալ ինձի, ինչպէս կ'ըսէ Պոշան օրադրապետը: Բայց դուք որ բարձր ընկերութեանց կը վերաբերիք, թէև միլիոններ և գինանշաններ ունենաք, բայց միշտ գայթակղութենէ կը վախնաք . . . : Ըսէ, ո՞վ է իմ հայրս:

— Ես ալ ըսելու եկայ:

— Ա՛հ —, դոչեց Պէնէտէթթօ աչերը ուրախութեամբ լցուած:

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ, և բանտապահը իւր խօսքը Պէրթուչիոյին ուղղելով.

— Ներեցէք, պարոն, ըսաւ, քննիչ դատաւորը բանտարկեալին կ'ըսպասէ:

— Հարցափորձիս վերջն է ալ, ըսաւ Անտրէա դործակատարին . . . : Բայց ինչ տարաժամ միջոցի մէջ կու դան զմեզ անհանդիստ ընելու:

— Վաղը վերստին կու դամ, ըսաւ Պէրթուչիօ:

— Աղէկ, ըսաւ Անտրէա: Զինակիր պարոններ, պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու . . . : Ո՛հ, սիրելի պարոն, տասնի չափ թաղեռ ձգէ հոս, որպէս զի ուզածս տան ինձի:

— Շատ աղէկ —, ըսաւ Պէրթուչիօ:

Անտրէա իւր ձեռքը երկնցուց, բայց Պէրթուչիօ իրը ծոցէն չհանեց, և միայն ստակներուն ձայնը հանեց:

— Ա՛ղէ, ըսաւ Անտրէա ժպիտ մը երևցընելով, բայց Պէրթուչիոյի տարօրինակ անտարբերութենէն ընկճեալ՝ — Արդեօք խաբուեցայ, ըսաւ երկար և վանդակապատ կառքի մը մէջմտնելով. զոր ապդանէ կողվ կ'անուանեն: Տեսնենք: Ուրեմն վաղը պիտի տեսնուինք, յաւելցուց Պէրթուչիոյին դառնալով:

— Վաղը կը տեսնուինք —, պատասխանեց դործակատարը:

ԳԼՈՒԽ Թ

ԴԱՏԱՒՈՐԸ

Ինչպէս որ կը յիշենք՝ աբբայ Պլուզնին հանդուցեալին սենեակը Նուարթիէի հետ միևնակ մնացեր էր, և Նորատի աղջկան մարմնոյն պահպանութիւն ընողները ձերն ու քահանան էին:

Գուցէ աբբային քրիստոնէական խրատները, գուցէ անոր քաղցր մարդասիրութիւնը, կամ համոզիչ խօսքերը ծերունին մխիթարեր էին. քանզի քահանային հետ խօսելէն 'ի վեր՝ Նուարթիէ առաջուան պէս փոխանակ յուսահատելու՝ ամէն բան Աստուծոյ կամացը կը յանձնէր, և այնպէս հանդարտ կ'երևէր, որ Վալանթինի վրայ իւր ունեցած սաստիկ սէրը յիշողներուն զարմանքը դրաւեց:

Պ. տը Վիլֆոր Նորատի աղջկան մեռած առաւօտէն 'ի վեր ձերունին տեսած չէր:

Տան բոլոր ծառաները նորոդուեր էին: Իրեն համար ուրիշ սենեկապան մը և Նուարթիէի համար ուրիշ ծառայ մը եկեր էին:

Տիկին տը Վիլֆորի ծառայելու համար ալ երկու կին մաեր էին:

Դունապանէն սկսելով մինչև կառավարը փոխուեր էր. այս անիծեալ տան զանազան տէրերուն ծառայելու համար նորանոր դէմքեր կը ներկայէին, և անոնց մէջ արդէն եղած բաւական պաղ յարաբերութիւնները կ'արդիլէին:

Յանցաւորաց ատեանը երկու կամ երեք օրէն պիտի բացուէր, և Վիլֆոր իւր դահլիճը փակուած՝ քաւրուսի սպանչին վրայ եղած դատաստանական քննութիւնները չերմաբեր ղործունէութեամբ մը կը հետաղօտէր:

Այս դործը, այն ամէն դործերուն պէս, որոնց մէջ Մոնթէ-Քրիստոյ կոմսը խառնուած կ'ըլլար, Բարիզի ընկերութեանց մէջ մեծ շշուկ հաներ էր:

Ականջալուրները համոզիչ չէին, քանզի մեռնելու վրայ եղող Թիաուպարտի մը խօսքերուն վրայ կը կայանային անոնք, այնպիսի անձի մը,

որուն ամբաստանածը իւր Թիապարտ հին ընկերն էր, և կրնար իւր ընկերը կամ օհակալութեամբ և կամ վրէժխնդրութեամբ ամբաստանել:

Միայն դատաւորին խիղճը հանդարտ կ'երևէր:

Թագաւորի գործակալը վերջապէս իւր սոսկալի համոզման մէջ հաստատուեր էր թէ պէնէտէթթօ յանցաւոր էր, և իւր ըրած այս դժնդակ յաղթութենէն անձնասիրութեան այն գուարճութիւններէն մէկը պիտի ստանար, որոնք իւր սառած սրտին թելերուն քիչ մը կենդանութիւն կու տային:

Ուստի Վիլըֆոր առաջիկայ նիստերը սկսելու համար իւր անխոնջ աշխատութեամբը դատին պատրաստութիւնները տեսեր էր, և ունկնդրութեան տոմսակներ ընդունելու նպատակաւ իրեն ուղղուած անթիւ առաջարկութեանց պատասխանելէն փախչելու համար՝ ստիպուեր էր առաջանալ աւելի իւր տան մէջ մարդու չերևիլ:

Ասկէ զատ՝ ողբմելի Վալանթինի մահուանէն՝ի վեր այնչափ քիչ առեն անցեր էր, և իւր վիշտերը այնչափ նոր էին, որ մարդ չէր զարմանար հայրը իւր պարտաւորութեան, այսինքն իւրայաերը մոռցընող միակ զբաղման մէջ ընկղմած տեսնելու:

Անգամ մը միայն, Ճիշդ պէնէտէթթոյի հօրը անունը տալու համար պէրթուչիոյի երկրորդ այցելութեան օրուան հետևեալ առտուն, Վիլըֆոր իւր հայրը տեսեր էր. քանզի դատաւորը աշխատութենէ յողնած՝ իւր տան պարտէզը լքեր էր, և տխրութեան ու խորունկ մտածութեան մէջ ընկղմած՝ Թարքուինի պէս, որ եղէգեայ դաւաղանովը ամենէն բարձր մեկոններուն գլուխը կը ջախջախէր, պ. տը Վիլըֆոր ալ իւր գաւաղանովը մոլոշավարդերուն երկար և չորցած բուները կը կտրէր, որոնք նոր անցած եղանակին մէջ այնչափ փթթեալ այս ծաղիկներուն ուրուականներուն պէս պարտիզին ծառուղիներուն երկայնքը կանգուն կը կենային:

Արդէն քանի մը անգամ պարտիզին ծայրը այսինքն այն երեսէ ձգուած արտին վրայ նայող երևելի վանդակապատին մօտեցեր և միշտ նոյն ծառուղիէն ետ դարձեր էր՝ մի և նոյն քալուածքով և շարժումով իւր շրջագայութիւնը շարունակելով, երբ իւր աչերը մեքենապէս տան վրայ դարձան, ուր իւր որդւոյն բարձր ձայներով խաղալը կը

լսէր. քանզի դիշերօթիկ դպրոցէն գալով կիրակի և երկուշաբթի օրերը իւր մօրը քով պիտի անցընէր:

պ. տը Վիլըֆոր բայ պատուհաններուն մէկուն մէջ պ. Նուարթիէն տեսաւ, որ ղինքը իւր թևաթոռովը մինչև այս պատուհանին առջևը բերել տուեր էր, որպէս զի տակաւին տաք արևուն վերջին ճառագայթները վայելէ, որոնք պատշգամբը զարդարող բաղեղներուն կիսամռու ծաղկանց և անմիրգ որթերուն կարմրած տերևոց իրենց հրաժարական ողջոյնը կու տային:

Ծերին նայուածքը միայն կէտի մը վրայ ուղղուած կեցած էր, ուր Վիլըֆոր անկատար կերպով կը տեսնէր:

Նուարթիէի այս նայուածքը այնչափ քինալի, այնչափ անբնական և այնչափ անհամբեր էր, որ թագաւորի գործակալը իրեն ծանօթ այս դէմքին ամեն տպաւորութիւնները հասկընալու կարող ըլլալով, իւր ձամբէն դուրս ելաւ, որպէս զի տեսնէ թէ այս ծանր նայուածքը որո՞ւ ուղղուած էր:

Ան տեսն կիսամերկ ոստերով խիտ թմբիներու տակ տիկին տը Վիլըֆորը նստած տեսաւ, որ ձեռքը դիրք մը՝ մերթ ընդ մերթ ընթերցումը կ'ընդմիջէր իւր որդւոյն ժպտելու կամ անոր դնտակը իրեն վերադարձընելու համար, զոր Էտուարդ յամառութեամբ սրահէն պարտիզին մէջ կը նետէր:

Վիլըֆոր դունատեցաւ. քանզի ծերին միտքը հասկըցաւ:

Նուարթիէ միշտ նոյն առարկային կը նայէր. բայց յանկարծ իւր նայուածքը կիսով վրայէն ամուտոյն վրայ դարձուց, և այն տեսն Վիլըֆոր այն հրաշալի աչերուն յարձակման ենթակայն եղեր էր, որոնք իրենց ուշադրութեան առարկայն փոխելով, իրենց լեզուն ալ փոխեր էին՝ առանց իրենց սպառնական զգացումները կորնչընելու:

Տիկին տը Վիլըֆոր իւր դէմքին վրայ պատրաստուած փոթորիկը չտեսնելով այս միջոցիս իւր զաւկին դնտակը բռներ էր, և նշան ընելով կը կանչէր զան որ դայ համբոյրով մը իւր խաղալիկն առնու. բայց Էտուար երկար տեսն իւր մօրը աղաչանաց ղիջանելու չհաճեցաւ, հանականաբար մայրական գորովը իւր տեղէն շարժելու նեղութեան բաւական վարձատրութիւն մը չէր համարեր. վերջապէս միտքը եղաւ, պատուհանէն արևածաղիկներուն և դշխոյ-մարդարիտներուն

մէջ կատկեց, և ձակատը քրտինքով ծածկուած իւր մօրը գոլը վազեց։

Տիկին ը Վիլբֆօր անոր ձակատը սրբեց, իւր շուրթերը այն խոնաւ փղոսկրին վրայ յարեց, և իւր զաւակը ձամբեց անոր մկ ձեռքը դնատակը տալով և միւս ձեռքը ափ մը շաքարեղէն լեցնելով։

Վիլբֆօր անընդդիմանալի ձգողութեամբ մը պարտէզէն դէպ 'ի տունը կը յառաջանար։

Բայց երչափ կը մօտենար, այնչափ Նուարթիէ իւր նայուածքը կը խոնարհեցընէր, և իւր արեւանանց հուրը այն աստիճան բորբոքած կ'երեւէր, որուն ազդեցութիւնը Վիլբֆօր միտքէ իւր սրտին խորը կ'ըղգար։

Իրօք՝ Նուարթիէի նայուածքին մէջ սաստիկ յանդիմանութիւն միանդամայն սոսկալի սպառնալիք մը կ'երեւէր։

Ան ատեն ծերունին իւր աչերը դէպ 'ի երկինք վերցուց, իւր որդւոյն յիշեցընել ուզելով թէ իւր երդումը մոռցած է։

— Շատ աղէկ, պարոն, պատասխանեց Վիլբֆօր բակէն. օր մը ես համբերէ, ես խօսքիս վրան եմ—։

Ա յս խօսքերուն վրայ Նուարթիէի սիրտը դրեթէ հանդարտեցաւ, և իւր նայուածքը անտարբերութեամբ ուրիշ կողմ դարձուց։

Վիլբֆօր իւր վերարկուին կոճակները աշխուժիւ քակեց, որոնք գոգցես զինքը կը խեղդէին, կապուտացեալ ձեռքը ճակատը տարաւ և իւր դահլիճը մտաւ։

Գիշերը հանդարտութեամբ անցաւ։ Տան մէջ ամէն մարդ ըստ սովորութեան քնացաւ։ Միայն Վիլբֆօր նոյնպէս ըստ սովորութեան միւսներուն պէս մի և նոյն միջոցին չքնացաւ, այլ մինչև առտուան ժամը հինգը՝ առջի իրիկուանէ քննիչ դատաւորայ վերջին հարցափորձերը վերստին աչքէ անցընելու, ատեանին մէջ տրուած վկայութիւնները քննելու և իւր հետեւեալ օրուան դատին յայտնի պարզութիւն մը տալու աշխատեցաւ։

Հետեւեալ օրը երկուշաբթի առաջին նիստը տեղի պիտի ունենար։

Ան օրուան լուսնալը Վիլբֆօրի ժպտուն և ազէտալի երեցաւ, և առտուան կապուտագոյն լոյսը թղթին վրայ կարմիր մելանով գծուած գծերը փայլեցուց։

Դատաւորը վկայութեան մը քնացաւ ինչ ատեն իւր ձրաղն ալ ոգևվար-

քին մէջն էր. անոր ձարձատիւնէն արթնցաւ. իւր մատերը արիւնով թաթխուածի պէս խոնաւ և կարմրաներկ էին։

Նարնջագոյն ամպի երկար շերտ մը երկնից երեսը պատեր էր, և հորիզոնին վրայ կողմնակի սև նկարուած նուրբ կաղամախիները երկու կը կարէր։

Շաղանակենիներու վանդակէն անդին՝ առուոյտի դաշտին մէջ՝ արօտոյտ մը իւր առաւօտեան պարզ երգը երգելով դէպ 'ի երկինք կ'ելնէր։

Ընշալոյսին խոնաւ օդը Վիլբֆօրի գլխին վրայ իջնելով անոր միտքը զովացուց։

— Արդարութեան սուրը բռնող մարդը, ըսաւ սոսկումով մը, պէտք է որ այսօր յանցաւորները պատժէ—։

Ան ատեն իւր նայուածքը ակամայ Նուարթիէի պատուհանին կողմը դարձուց, ուր առջի իրիկունը ծերունին տեսեր էր։

Վարագոյրը գոցուած էր. սակայն իւր հօրը պատկերը այնչափ իւր աչայ առջև ներկայ էր, որ բայ եղածի պէս գոց պատուհանին դառնալով կարծեց թէ դարձեալ սպառնագին ծերունին կը տեսնէ։

— Ա յո՛, մրմնաց, անհոգ եղիր—։

Եւ իւր գլուխը կուրծքին վրայ խոնարհեցուց, և դահլիճին մէջ քանի մը շրջան ըրաւ. ետքը վերջապէս բոլորովին հագուած՝ բազմոցի մը վրայ նետուեցաւ, աւելի յոգնութենէն և մինչև ոսկրներուն ծուծը թափանցող աշխատութեան պաղութենէն բրտացած անդամոց հանգստութիւն տալու քան թէ քնանալու համար։

Կամաց կամաց տան մէջ ամէն մարդ արթնցաւ։

Վիլբֆօր իւր դահլիճին մէջէն հետզհետէ լսեց ինչպէս կ'ըսեն տան մը կենդանութիւնը հաստատող ձայները, այսինքն՝ դռներուն բացուիլն ու գոցուիլը, սենեկապանուհին կանչելու համար տիկին ը և պոյուիլը, սենեկապանուհին հնչիւնը, մանկան առջին ձայները, որ այս տարիքին մէջ եղողներուն պէս առտուները ուրախ կ'արթննար։

Վիլբֆօր ալ իւր զանգակը հնչեցուց։

Իւր նոր սենեկապանը ներս մտաւ և օրագիրները ու թաս մը թէյ բերաւ։

— Ի՞նչ է բերածդ, հարցուց Վիլբֆօր։

— Թէյ :

— Ես Թէյ չուզեցի . ոմ ըսաւ որ բերես :

— Տիկինը . պարոնը անտարակոյս այսօր այն սպանուԹեան դործին մէջ շատ պիտի խօսի , ըսաւ , և զովացուցիչ ըմպելի մը խմելու պէտք ունի — :

Եւ սենեկապանը շառագոյն Թասը բազմոցին քովի սեղանին վրայ դրաւ , որ միւս սեղաններուն պէս ԹղԹերով ծածկուած էր :

Սենեկապանը դուրս ելաւ :

Վիլըֆօր վայրկեան մը ախուր դէմքով Թասին նայեցաւ . ետքը յանկարծ ջղային շարժումով մը առաւ զայն և ՚ի մի ումպ անոր պարունակուԹիւնը խմեց :

Գուցէ կը յուսար որ այս ըմպելին մահացու ըլլար , և այս միջոցիս կը փափաքէր մեռնիլ այն պարագային աղատելու համար , որ մեռնելէ աւելի դժուար բան մը կը հրամայէր իրեն . ետքը ոտք ելաւ և իր դահլիճին մէջ պտըտեցաւ այնպիսի ժպիտով մը , որ տեսնողին սոսկում պիտի պատճառէր :

Թէյը անվնաս էր և պ. տը Վիլըֆօր բան մը չզդաց :

Նախաճաշի ժամանակ պ. տը Վիլըֆօր սեղանին վրայ չերևցաւ :

Սենեկապանը վերստին ներս մտաւ :

— Տիկինը կ՚իմացընէ ձեզ , ըսաւ , որ ժամը տասն ու մէկ զարկաւ և ատեանը կէս օրին պիտի բացուի :

— Գիտեմ , ըսաւ Վիլըֆօր , ինչ ըսել կ՚ուզէ :

— Տիկինը հագուած պատրաստ է , և կը հարցընէ Թէ պարոնին հետ պիտի կրնայ ընկերանալ :

— Ո՛ւր երԹալու համար :

— ԱրդարուԹեան պալատը :

— Ինչ ընելու :

— Տիկինը կ՚ըսէ Թէ շատ կը փափաքի այն նիստին ներկայ գտնուելու :

— Ո՛հ , ըսաւ Վիլըֆօր դրեԹէ սոսկալի ձայնով մը , ներկայ գտնուիլ կ՚ուզէ — :

Ծառան քայլ մը ետ քաշուելով ըսաւ ,

— ԵԹէ պարոնը առանձին երԹալ կ՚ուզէ , երԹամ տիկնոջ իմացընեմ — :

Վիլըֆօր վայրկեան մը լուռ կեցաւ . երեսնոսի դոյն մօրուքով շրջապատեալ ժժդոյն-այտը իր ըղձքներովը փորելու չափ կը քերէր :

— Ըսէ տիկնոջ , պատասխանեց վերջապէս , որ իրեն հետ խօսիլ կ՚ուզեմ , և կ՚աղաչեմ որ իր սենեակը սպասէ ինձ :

— Շատ աղէկ , պարոն :

— Ետքը եկու զիս ածիլէ և հագուեցուր :

— Անմիջապէս — :

Եւ ստուգիւ սենեկապանին երԹալն ու դառնալը մէկ եղաւ , Վիլըֆօրը ածիլեց և բոլորովին սև զգեստներ հագցուց անոր , որմէ ետև ըսաւ :

— Տիկինը իր սենեակը ձեզ կ՚ըսպասէ :

— Ես ալ անոր կ՚երԹամ — , ըսաւ Վիլըֆօր :

Եւ Թևին տակը ԹղԹոց ծրարներ առած և գլխարկը ձեռքը բռնած՝ դէպ ՚ի իր կնոջ սենեակը ուղղեցաւ :

Դրան առջևը վայրկեան մը կեցաւ , և իր կապուտագոյն Ճակատէն հոսած քրտինքը Թաշկինակովը սրբելէն ետև՝ դուռը հռեց :

Տիկին տը Վիլըֆօր անյենարան բազմոցի մը վրայ նստած էր , և անհամբերուԹեամբ օրագիրները և նորատիպ տետրերը աչքէ կ՚անցընէր , որոնց ընԹերցումը վերջացընելէն առաջ՝ փոքր Էտուար զանոնք պատուելու զուարճուԹիւն մը կ՚ըզդար :

Դուրս ելնելու համար կատարեալ հագուած էր . գլխարկը ԹուԹին վրայ պատրաստ կ՚ըսպասէր , և ձեռնոցները ձեռքը հագած էր :

— Վերջապէս եկաք , պարոն , ըսաւ կինը իր բնական և հանդարտ ձայնովը . որչափ գունատեր էք , պարոն . ուրեմն բոլոր գիշերը աշխատեցա՞ք . ինչո՞ւ մեր հետը ճաշելու չեկաք . ըսէք , գիս ձեր հետը պիտի տանի՞ք Թէ Էտուարին հետ առանձին պիտի երԹամ — :

Տիկին տը Վիլըֆօր , ինչպէս որ կը տեսնուի , պատասխան մը ընդունելու համար իրարու ետև զանազան շատ հարցումներ ըրաւ . բայց պ. տը Վիլըֆօր առանց այն հարցումներէն մէկուն իսկ պատասխանելու՝ արձանի պէս սպաղ և լուռ կեցաւ :

— Էտուար, ըսաւ Վիլըֆօր իւր որդւոյն հրամայական նայուածքով մը, գնա սրահը խաղա, սիրելիս, մօրդ հետ քիչ մը պիտի խօսիմ — ։

Տիկին տը Վիլըֆօր իւր ամուսնոյն պաղ դէմքը, խրոխտ ձայնը և տարօրինակ պատրաստութիւնները տեսնելով սարսռայ ։

Էտուար կլուխը վերցընելով իւր մօրը երեսը նայեցաւ. բայց տեսնելով որ մայրը Պ. տը Վիլըֆօրի հրամանը չէր հաստատեր, վերսին իւր կապարեայ գլխուորներուն կլուխը կտրելու ղբաղեցաւ ։

— Էտուար, գոչեց Պ. տը Վիլըֆօր այնպիսի խստութեամբ մը որ տղան օթոյին վրայ ցատկեց, լսեցի՞ր, գնա ։

Էտուար, որուն հետ շատ քիչ անգամ այսպէս կը վարուէին, ոտք ելաւ և դռնը նետեց ։

Դժուար է ըսել թէ բարկութենէ՞ն դեղնեցաւ եթէ երկիւղէն ։

Հայրը անոր մօտեցաւ, թևէն բռնեց և ձակատը համբուրեց ։

— Գնա, զաւակս, ըսաւ անոր, գնա — ։

Էտուար ժպտեցաւ ։

Պ. տը Վիլըֆօր դրան մօտեցաւ և անոր դուրս ելնելէն ետև դրան պարզունակը դրաւ ։

— Ո՛վ Տէր Աստուած իմ, ըսաւ ծաղկահաս կինը իւր էրկանը սրտին խորը թափանցող նայուածքով մը անոր երեսը նայելով ու ժպիտ մը կեղծելով, զոր Վիլըֆօրի անողոք դէմքը իւր շրթանցը վրայ դադրեցուց, ինչ կայ արդեօք ։

— Տիկին, ո՞ւր պահած էք այն թուղթը զոր սովորաբար կը դրծածէք —, հարցուց դատաւորը յայտնի և առանց դարձուածաւոր խօսքերու, ու իւր կնոջ և դրան մէջ տեղը կենալով ։

Տիկին տը Վիլըֆօր զգայ ինչ որ արտայտը կ'ըզգայ, երբ կը տեսնէ որ ցին թուղթը զինքը մահաբեր նեղ շրջանի մէջը կը սահմանէ ։

Տիկին տը Վիլըֆօր այնչափ զօնատեցաւ որ դռնը կապուտի փոխուեցաւ և կերկերեալ ու հեղձուկ ձայնով մը, որ ոչ հառաչանքի կը նմանէր և ոչ ձայնի, ըսաւ.

— Պարոն, չեմ հասկընար թէ ինչ կ'ըսէք — ։

Եւ իւր սոսկումին սաստկութենէն ոտք ելնելով ինքզինքը վերտին բազմոցին վրայ նետեց ։

— Կը հարցընեմ, ըսաւ Վիլըֆօր կատարեալ հանդարտ ձայնով մը, թէ ո՞ւր կը պահէք այն թոյնը, որով Պ. տը Սէն-Մէրան աներս, ղրքանչս, Պարուան և Վալանթինն աղջիկս սպաննեցիք ։

— Ո՛հ, պարոն, գոչեց տիկին տը Վիլըֆօր ձեռքը վիայընելով, ինչ կ'ըսէք ։

— Ձեմ սպասեր որ հարցընէք ինձի, այլ պատասխան տաք ։

— Ամուսնոյս պիտի պատասխանեմ թէ դատաւորիս, կակազեց տիկին տը Վիլըֆօր ։

— Ձեր դատաւորին, տիկին, ձեր դատաւորին պիտի պատասխանէք — ։

Կնոջ դաւնատութիւնը, նայուածքին անձկութիւնը և բոլոր մարմնոյն դողդոջիւնը տեսնելը սոսկալի բան էր ։

— Ո՛հ. պարո՛ն, մրմռաց, ո՛հ . . . — ։

— Ձէք պատասխաներ, տիկին —, գոչեց անողոք հարցաքննողը ։ Ետքը իւր բարկութենէն աւելի սոսկալի ժպիտով մը յաւելցուց, — Բայց չէք ալ ուրանար — ։

Տիկինը շարժում մը ըրաւ ։

— Եւ չէք կրնար ուրանալ, յաւելցուց Վիլըֆօր ձեռքը դէպ 'ի անոր երկընցընելով յանուն արդարութեան զան բռնելու համար. այս զանազան ոճիրները անամօթ յաջողակութեամբ մը 'ի գործ դրիք դուք, բայց միայն ձեր սէրէն կուրացեալ մարդերը կրնայիք խաբել ։ Տիկին տը Սէն-Մէրանի մահուանէն ետև հասկըցայ որ տանս մէջ թունաւորող մը կայ, ա'Ավրինեին ալ իմացուց ինձի. Պարուային մեռնելէն ետև մէկուն վրայ կասկածեցայ, մեղայ Տեառն, հրեշտակի մը վրայ, ես որ միշտ անմեղին վրայ իսկ կը կասկածիմ. սակայն Վալանթինի մահուանէն ետև՝ ալ ինձի համար տարակուսելու տեղի չմնաց, տիկին, և ոչ միայն ինձի այլ ուրիշներուն համար ալ. ուստի ձեր ոճրապործութիւնը երկու անձերէ ձանչցուելով և շատերէ կասկածուելով հիմա բոլոր աշխարհ պիտի հրատարակուի. և ինչպէս որ քիչ մը առաջ կ'ըսէի, տիկին, ձեզի հետ խօսողը ձեր ամուսինը չէ, այլ ձեր դատաւորը — ։

Ծաղկահաս կինը իւր դէմքը երկու ձեռացը մէջ պահեց ։

— Ո՛հ, պարոն, կակազեց, կ'աղաչեմ՝ հաւատաք ։

— Այդչափ վատասիրտ էք դուք, գոչեց Վիլբֆոր արհամարհարհան ձայնով մը. և ստուգիւ միշտ դիտած եմ որ թունաւորողները վատասիրտ կ'ըլլան. բայց դուք որ երկու ծեր և նորատի աղջիկ մը սպաննելով անոնց մեռնելը տեսնելու քաջութիւնը ունեցաք, կրնաք վատասիրտ ըլլալ:

— Պարո՛ն, պարո՛ն:

— Կրնաք վատասիրտ ըլլալ, շարունակեց Վիլբֆոր իր ձայնը աստիճանաբար աւելի բարձրացընելով, դուք որ չորս ոգեվարեալ վայրկեաններր միաւ մի համրեցիք, դուք որ ձեր դժոխային հնարքները մեքենայեցիք, և յաջողութեամբ և զարմանալի ճշդութեամբ թունալի ըմպելիները խմցուցիք. մոռցաք արդեօք մտածելու թէ ձեր մեղքը յայտնուած ատեն ինչ պիտի ըլլաք: Ո՛հ, անկարելի է, անշուշտ աւելի քաղցր, աւելի ազդու և աւելի արագամահ թոյն մը պահած էք ձեզի համար, որպէս զի ձեզ տրուելու պատիժէն ազատիք . . . : Կը յուսամ՝ որ այս հոգը տարած էք — :

Տիկին տը Վիլբֆոր ձեռքը երկնցուց և ծնկան վրայ ինկաւ:

— Դիտեմ. . . գիտեմ, ըսաւ, ձեր յանցանքը կը խոստովանիք. սակայն երբ ալ չէք կրնար ուրանալ ձեր ըրածը, վերջին վայրկենին դատաւորներուն եղած խոստովանութիւնը ձեր ընդունելու պատիժը չկրնար թեթեւցընել:

— Պատի՛ժ կ'ըսէք, պարո՛ն, գոչեց տիկին տը Վիլբֆոր. երկու անգամ է որ այս բառը կ'արտասանէք:

— Անտարակոյս. և դուք չորս անգամ յանցաւոր ըլլալնիդ համար կարծեցիք թէ պատիժէ ազատ պիտի ըլլաք, այս պատիժը սահմանողին կինը ըլլալնիդ համար կարծեցիք թէ պիտի չպատժուիք: Ո՛չ, տիկին, ոչ. ան ալ և է թունաւորողին պատիժը կատարեաւն է, եթէ սակայն, ինչպէս որ քիչ մը առաջ ըսի, թունաւորողը իր ամենէն ազահով թոյնէն իրեն համար քանի մը կաթիլ պահելու հոգ տարած չէ — :

Տիկին տը Վիլբֆոր անբնական ձայն մը հանեց, և իր ահռելի և անյաղթելի սոսկումը իր դիմաց գծերը այլայլեց:

— Ո՛հ, կատարեաւն մի՛ վախնաք, տիկին, ըսաւ դատաւորը, զձեզ անպատուել չեմ ուզեր. քանզի ինքզինքս անպատուել է.

ոչ, ընդ հակառակն՝ եթէ ըսածներս աղէկ լսեցիք, հասկըցաք ալ որ կրնաք կատարեալն վրայ չմեռնիլ:

— Ո՛չ, չհասկըցայ, ինչ ըսել կ'ուզէք, կակազեց ողորմելի կինը բոլորովին շփոթեալ:

— Ըսել կ'ուզեմ թէ մայրաքաղաքիս առաջին դատաւորին կինը իւր ամօթալից գործովը ընտանեացը անարատ մնացած անունը պիտի չպղծէ, և մէկ հարուածով իւր ամուսնոյն ու որդւոյն պատիւը խայտառակել պիտի չուզէ:

— Ո՛հ, ոչ, ոչ:

— Այդ կերպով, տիկին, բարիք մը ըրած պիտի ըլլաք մեզ, և ես չնորհակալ կ'ըլլամ ձեզմէ:

— Շնորհակալ կ'ըլլաք ինձմէ, և ինչ բանի համար:

— Ձեր ըսած խօսքին համար:

— Ինչ ըսի ես. իմ խելքս գլուխս չէ, ըսածս ալ չեմ գիտեր, ո՛վ Աստուած իմ — :

Եւ մազերը թափթփած և շուրթերը փրփրած ոտք ելաւ:

— Ձեր սենեակը մտած ժամանակ՝ ձեր թոյնը ո՛ւր պահեցիք հարցուցածիս պատասխանը կու տաք ինձի, տիկին — :

Տիկին տը Վիլբֆոր իւր բազուկները դէպ 'ի երկինք վերցուց և ձեռները ջղաձգութեամբ իրարու պլլեց:

— Ո՛չ, ոչ, գոչեց, անշուշտ պիտի չուզէք որ գործերը այն աստիճանին հասնին:

— Կատարեալն վրայ կորսուելնիդ միայն չեմ ուզեր, տիկին, կը հասկընա՞ք, պատասխանեց Վիլբֆոր:

— Ո՛հ, պարո՛ն, շնորհք ըրէք:

— Բայց կ'ուզեմ որ արդարութիւն ըլլայ: Ես պատժելու համար կ'ապրիմ, տիկին, յաւելցուց դատաւորը բոցացայտ նայուածքով մը. եթէ ձեր տեղը ուրիշ կին մը ըլլար և եթէ թագուհի անգամ ըլլար ան, դահիճը կը դրկէի. բայց ես ձեր վրայ կը դթամ, և միայն կ'լսեմ. տիկին, ձեր ամենէն քաղցր, ամենէն ազահով և ամենէն արագամահ թոյնէն քանի մը կաթիլ պահեցիք ձեզի համար:

— Ո՛հ, ներեցէք ինձի, պարո՛ն, թողուցէք որ ապրիմ:

— Ո՛հ, ուրչափ վատասիրտ էք եղեր։

— Մտածեցէք որ ձեր կինն եմ։

— Թունաւորիչ կին մ՚էք դուք։

— Յանուն երկնից . . . ։

— Ո՛չ։

— Ձեր ինձի ունեցած սիրոյն համար . . . ։

— Ո՛չ, ո՛չ։

— Մեր զաւկին սիրոյն համար, ո՛հ, մեր զաւկին սիրոյն համար թողուցէք որ ապրիմ։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ կ՚լսեմ, եթէ օր մը միայն ձեզ կենդանի թողում, միւսներուն պէս դուք ալ սպաննէք։

— Ե՛ս իմ զաւակս սպաննեմ, գոչեց վայրենի մայրը դէպ ի Վիլըֆօր ցատկելով. ե՛ս իմ Էտուարս սպաննեմ . . . ա՛հ, ա՛հ—։

Եւ իւր խօսքը դիւային, չիմարական և սոսկալի ծիծաղով մը վերջացուց։

Տիկին տը Վիլըֆօր իւր ամուսնոյն ոտքերուն ինկեր էր։

Վիլըֆօր անոր մօտենալով ըսաւ.

— Տիկին, եթէ ի դարձիս արդարութիւնը կատարուած չտեսնեմ, ես իմ բերանովս պիտի մատնեմ ու իմ ձեռօքս պիտի բանտարկեմ ձեզ—։

Տիկին տը Վիլըֆօր ոգեստաւ և ուժաթափ եղած մտիկ կ՚ընէր անոր. միայն իւր աչերը կենդանի մնացեր էին, որոնք ահռելի հուր մը կը ցայտէին անոր վրայ։

— Լսեցի՛ք, ըսաւ Վիլըֆօր. ես ատեանը պիտի երթամ մարդասպանի մը դէմ մահուան վճիռը տալու . . . ։ Եթէ ի դարձիս ձեզ կենդանի գտնեմ, այս իրիկուն բանտը պիտի պառկիք—։

Տիկին տը Վիլըֆօր յառաչանք մը հանեց, իւր ջիղերը թուլցան և սիրտը ձնշուած՝ օթոյին վրայ կորացած մնաց։

Թաղաւորի դործակալը դոգես դէմուէեան շարժում մը ղղաց, հնազանդ խոնարհութեամբ անոր նայեցաւ, և թեթև խոնարհութիւն մը ընելով.

— Մնաք բարեաւ, տիկին, ըսաւ կամաց մը, մնաք բարեաւ—։

Ա՛յս ողջոյնը տիկին տը Վիլըֆօրի սրտին վրայ դաշոյնի հարուածի պէս իջաւ, և նուաղեցաւ։

Թաղաւորի դործակալը դուրս ելաւ և դուռը բանլիքեց։



ԳԼՈՒԽ Ը

ՑԱՆՑԱՒՈՐԱՑ ԱՏԵԱՆԸ

Պէնէտէթթոյի դործը, ինչպէս որ դիւանատան և ընկերութեանց մէջ կ՚ըսուէր, մեծ ազդեցութիւն պատճառեր էր ամենուն։

Բարիզի Սրճանոցը, կանի ծառուղին և Պուլոնեի անտառը յաճախող կեղծ Գավալղանթին իւր Բարիզի մէջ մնացած միջոցին և իւր պերճութեան երկու կամ երեք ամիսներուն մէջ բաղմաթիւ ծանօթներ ստացեր էր։

Օրագիրները ամբաստանեալին թէ Բարիզի և թէ Թիասլարտութեան մէջ անցուցած կեանքը պատմեր էին. և Ընտէա Գավալդանթի իշխանը անձամբ Ճանչցողները աւելի մեծ հետաքրքրութիւն մը կ՚ըզդային անոր հետևութիւնը տեսնելու։

Ուստի ամենէն աւելի անոր ծանօթները մեծ փափաք մը ունէին ամբաստանեալներուն նստարանին վրայ երթալ տեսնել իւր շրջակայքին ընկերը սպաննող Պ. Պէնէտէթթօն։

Շատերը այնպէս կը կարծէին թէ Պէնէտէթթօ եթէ ոչ զոհ եղած՝ գոնէ սխալմամբ ամբաստանուած է։

Պ. Գավալգանթիի հայրը Բարիզ տեսնելով կը յուսային որ իր աղնուազարմ պայազատին պաշտպանութիւն ընելու համար վերադառնայ դայ։

Շատերն ալ, որոնք երիտասարդը տեսեր էին, և անոր սիրելի վարմունքը, դեղեցիկ երևելու փափաքը և վատնած սոսկները կը յիշէին, անոր ամբաստանութիւնը թշնամիի մը կողմանէ դաւաճանութիւն մը կը համարէին, ինչպէս որ այս աշխարհիս մէջ շատ անգամ կը պատահի. քանզի անբաւ հարստութիւնները զարմանալի կերպիւ չարութիւն կամ բարիք գործելու միջոցները կ'աւելցընեն ու անլուր զօրութիւն մը կու տան։

Ուստի ամեն մարդ յանցաւորաց առեանը կը դիմէր՝ ոմանք բացուելու տեսարանին վրայ զուարճանալու և ուրիշները անոր վրայ քննադատութիւն ընելու համար։

Աւտուան ժամը եօթէն առեանին դուռը վանդակապատներուն մէջ իրարու եւս կանգնած կ'ըսպասէին, և առեանին բացուելէն ժամ մը առաջ՝ սրահը արդէն առանձնաշնորհներով լցուած էր։

Առեանը բացուելէն առաջ, շատ անգամ ալ եղբը, մեծ դատեր տեսնուած օրեր՝ ունկնդրութեան սրահը այնպիսի սրահի մը կը նմանի, ուր զիրար ճանչցողները եթէ խիստ մօտ են՝ իրարու կը մօտենան, և եթէ բազմաթիւ անձերէ. փաստաբաններէ ու զինակիրներէ բաժնուած են, իրարու նշաններ կ'ընեն։

Այն օրը աչնան այն գեղեցիկ օրերէն մէկն էր, որ շատ անգամ հեռի և կարճամառի մը պակասութիւնը կը լեցընէ. աւտուան պ. աը Վիլլֆօրի տեսած ամպերը գողցես հմայութեամբ ցրուեր էին, և սեպտեմբերի վերջին և ամենէն քաղցր օրերէն մէկը իր բոլոր պայծառութեամբը կը փայլէր։

Պոշան՝ մանուլի թղթատուներէն մէկը և հետևաբար ամեն կողմ իր գահը ունենալով իր միտքի ակնոցովը յաչ և յահեակ կը գիտէր։

Պոշան Շաթօ-Ռընօն և Տըպրէն տեսաւ, որոնք ոստիկանութեան գործակալի մը շորհօք աղէկ տեղեր բռներ էին, և համոզեր էին զան որ փոխանակ առջևնին կանգնելու, ետևնին կանգնի։

Բարի գործակալը անշուշտ դուշակելով որ իր առջևի անձը պաշտօնէին դիւանադպիրը և միլիոնատէր մ'է, իր երկու աղնիւ դրացիներուն հետ ակնածանօք վարուեցաւ և թողուց իսկ որ Պոշանին քովը երթան՝ խոստանալով անոնց որ տեղերնին պիտի պահէ։

— Հիմա բարեկամիս պիտի տեսնենք, ըսաւ Պոշան։

— Է՛հ, այո, պատասխանեց Տըպրէ. մեր արժանաւոր իշխանը չէք ըսեր։ Սատանան տանի այն Իտալացի իշխանները։

— Այնպիսի մարդ մը, որուն աղյաբանը Տանթէն էր և անոր ընտանեաց աղնուականութիւնը այս բանաստեղծին Երդ-յէն Կոթ-կերթ-ըն-ն անուն քերթուածէն առաջ կ'ըսկսի։

— Այո, կախաղանի աղնուականութիւնը, ըսաւ Շաթօ-Ռընօ պաղ-արիւնով մը։

— Պիտի դատապարտուի, այնպէս չէ, հարցուց Տըպրէ Պոշանին։

— Բարեկամ, պատասխանեց օրաղրապետը, կարծեմ այս բանս ձեզի հարցընել պէտք է. դահիճին կերպարանքը դուք մեզմէ աղէկ կը ճանչնաք. ձեր պաշտօնէին վերջին երեկոյթին նախագահը տեսաք։

— Այո։

— Ինչ ըսաւ ձեզի։

— Այնպիսի խօսք մը ըսաւ որ պիտի զարմացընէ զձեզ։

— Ուրեմն շուտ ըրէք ըսէք, բարեկամ. բաւական ժամանակ կայ որ այս տեսակ խօսքեր լսած չեմ։

— Մտիկ ըրէք ուրեմն. Պէնէտէթթօն, ըսաւ, որ խորամանկութեան փիւնիկ մը և խորամանկութեան հսկայ մը համարուած է, խիստ նուաստ և խիստ անմիտ քսակահատ մ'է, և անարժան այն փորձերուն, զորոնք իր մահուանէն ետև գանկային գործարանացը վրայ պիտի ընեն։

— Այսու ամենայնիւ, ըսաւ Պոշան իշխանի մը դերը աղէկ խաղաց։

— Ձեզի համար, Պոշան, որ այն խեղճ իշխանները կ'ատէք, և կ'ուրախանաք երբ անոնց վրայ անտեղութիւններ տեսնէք, բայց ոչ ինձի համար, որ բնազդմամբ աղնուականը կը ճանչնամ և իբրև աղգատոհմական նշաններուն աղէկ տեղեկութիւն ունեցող մը՝ ուր և է աղնուապետական ընտանիք մը կ'որոշեմ։

— Ուրեմն անոր իշխան ըլլալուն ամենևին չհաւատացիք։

— Իշխանի ձևերուն, այո՛ . . . , բայց իշխան ըլլալուն, ոչ։

— Աղէկ, ըսաւ Տըպրէ. բայց ստոյգ կ'ըսեմ որ ամեն մարդ կրնար իշխան կարծել զան . . . ։ Պաշտօնէից տունը տեսայ զան։

— Ո՛հ, այո՛, ըսաւ Շաթօ-Ռընօ, անոր համար որ պաշտօնեաները աղէկ կը ճանչնան իշխանները։

— Ըսածնիդ ստոյգ է, Շաթօ-Ռընօ, պատասխանեց Պոշան բարձրաձայն ծիծաղելով. խօսքերնիդ կարճ և գուարճալի է. ձեզմէ հրաման կը խնդրեմ որ այդ խօսքը ես ալ բանեցընեմ։

— Բանեցուցէք, սիրելիդ իմ Պոշան, ըսաւ Շաթօ-Ռընօ։

— Բայց, ըսաւ Տըպրէ Պոշանին, եթէ ես նախապահին հետ խօսեցայ, անշուշտ դուք ալ թագաւորի դործակալին հետ խօսեցած էք։

— Անկարելի էր զան տեսնելը. ութ օրէ՝ի վեր Պ. ոը Վիլըֆօր իր տան մէջ պահուած էր, և իրաւունք ունէր. քանզի հետզհետէ պատահած տնային տարօրինակ վիշտերը և իր աղջկան ոչ նուազ տարօրինակ մահը . . . ։

— Տարօրինակ մա՛հ ըսիք, ինչ կ'ըսէք Պոշան։

— Ո՛հ, այո՛, չդիտնալ ձևացուցէք, ինչու որ այս ամենը դատաւորաց աշնուականութեան մէջ կը պատահի, ըսաւ Պոշան միականի ակնոցը իր աչքին յարելով և ստիպելով զայն որ առանց բռնելու հաստատ կենայ հոն։

— Սիրելիդ իմ պարոն, ըսաւ Շաթօ-Ռընօ, ներեցէք ինծի որ ըսեմ թէ միականի ակնոցը տեղաւորելու համար Տըպրէին չափ՛ յաջողակութիւն չունիք։ Տըպրէ, պ. Պոշանին դաս մը տուէք։

— Հոն նայեցէք, ըսաւ Պոշան, չսխալեր համ երբէք։

— Ինչ կայ։

— Ան է։

— Ո՞վ։

— Կ'ըսէին թէ Բարիզէն մեկնեցաւ։

— Օրիորդ Էօժէնի՞ն, հարցուց Շաթօ-Ռընօ, արդեօք վերադարձե՞ր է։

— Ոչ, անոր մայրը։

— Տիկին Տանկլա՞ր։

— Ի՞նչ կ'ըսէք, ըսաւ Շաթօ-Ռընօ, անկարելի է. իր աղջկան փախչելէն տասն օր ետքը ու իր ամուսնոյն մեռնելու թեներէն երեք օր ետքը հոս պայ —։

Տըպրէ թեթև կերպով կարմրեցաւ և իր աչքը Պոշանին նայած կողմը ուղղեց։

— Քողարկեալ անձանօթ կին մ'է, ըսաւ, գուցէ օտարական իշխանուհի մը կամ Գալլպանթի իշխանին մայրն ըլլայ. բայց կարծեմ թէ խիստ կարևոր խօսքեր ընելու վրայ էիք, Պոշան։

— Ե՛ս։

— Այո՛. Վալանթինի տարօրինակ մահուան խօսքը կ'ընէիք։

— Ո՛հ, այո՛, ստոյգ է. բայց ինչո՞ւ արդեօք տիկին ոը Վիլըֆօր չէ եկեր։

— Խեղճ կին, ըսաւ Տըպրէ, անշուշտ հիւանդանոցայ համար թուրինջ խոտին ջուրը հանելու և իրեն ու իր բարեկամուհիներուն համար պեղեցկացուցիչ դեղեր շինելու զբաղած է։ Գիտէք որ այս զբօսանաց համար տարին երկու կամ երեք հազար թալեռ ծախք կ'ընէ, ինչպէս որ կ'ըսատուգեն։ Ցիրաւի ինչո՞ւ տիկին ոը Վիլըֆօր հոս չըլլար, մեծ հաճութիւն մը պիտի ունենայի զան տեսնելու. ես այն կինը շատ կը սիրեմ։

— Ես ալ, ըսաւ Շաթօ-Ռընօ, կ'ատեմ զան։

— Ինչ պատճառաւ։

— Չեմ գիտեր. ինչ պատճառաւ կը սիրէ կամ կ'ատէ մարդ. հակակրութեամբ կ'ատեմ զան։

— Եւ կամ բնազդմամբ։

— Գուցէ . . . ։ Բայց ձեր խօսքին դառնանք, Պոշան։

— Հետաքրքիր չէք գիտնալու, պարոններ, կրկնեց Պոշան, թէ Վիլըֆօրի տան մէջ այսպէս շուտ մեռնելուն պատճառը ինչ է։

— Ստուգիւ, ըսաւ Տըպրէ, երեք ամիս՝ի վեր այն տան վրայ պատած սուգը իմ ալ զարմանքս գրաւած է. անցեալ օր Վալանթինի խօսքը բացուելով Տիկինն ալ նոյնը ըսաւ ինծի։

— Ո՞վ է այդ տիկինը, հարցուց Շաթօ-Ռընօ։

— Ո՞վ պիտի ըլլայ, պաշտօնէին կինը։

— Ո՛հ, ներեցէք, ըսաւ Շաթօ-Ռընօ, ես պաշտօնէից տունը

չեմ երթար որ պիտնամ. այդ հոգը իշխաններուն կը թողում։

— Մինչև հիմա հանդարտ էիք, սեպուհ, բայց շուտով շանթեր կ'արձակէք. գթացէք մեր վրայ. եթէ ոչ՝ Դիոսի մը պէս հիմա պիտի այրէք զմեզ։

— Ուրեմն ես ալ այսուհետև բան մը չեմ ըսեր, ըսաւ Շաթօ-Ռընօ, և պատասխան մի՛ սպասէք ինձմէ։

— Խօսքերնիդ վերջացուցէք, Պոշան. ես կ'ըսէի թէ Տիկինը անցեալ օր այն եղելութեանց վրայ տեղեկութիւններ կը հարցընէր. տուէք ինծի այն տեղեկութիւնները որ ես ալ անոր հաղորդեմ։

— Ուրեմն մտիկ ըրէք, պարոններ, Վիլլֆօրի տան մէջ այսպէս շուտ մնունելու համար պէտք է որ մարդասպան մը գտնուի հոն —։

Երկու երիտասարդները սարսռացին. քանդի արդէն քանի մը անգամ իրենք ալ նոյն բանին վրայ մտածեր էին։

— Եւ ո՞վ է այդ մարդասպանը, հարցուցին միատեղ։

— Էտուար մանուկը —։

Երկու ունկնդիրներուն ծիծաղը խօսողին ամենևին չփոթութիւն չպատճառեց, այլ իր խօսքը շարունակեց.

— Այո՛, պարոններ. այն նորանշան Էտուար տղան է որ մարդասպանութիւն կ'ընէ։

— Կատակ մ'է ըսածնիդ։

— Ամենևին. Պ. տը Վիլլֆօրի տունէն ելնող ծառայ մը բրուներեսի երէկ. աղէկ մտիկ ըրէք այս պատմութեան։

— Այո՛, մտիկ կ'ընենք։

— Եւ վաղը պիտի Ճամբեմ զան, վասն զի Պ. տը Վիլլֆօրի տունը վախուն անօթի կեցած ըլլալուն խիստ շատ կերակուր կ'ուտէ։ Կ'երևի թէ այն սիրուն զաւակը դեղի սրուակ մը ձեռք ձգեր է, զոր իրեն տհաճելի եղողներուն դէմ կը գործածէ։ Ամենէն առաջ իր Սէն-Ֆէրան հաւը և հանին իրեն անհաճոյ երևցեր են, ու իր հեղուկէն երեք կաթիլ անոնց խմոցները է. եաղը Նուարթիէ հաւին ձեր ծառան իր հակակրութիւնը դրաւեր է. քանզի մերթ ընդ մերթ ղինքը յանդիմանէ եղեր. խորամիտ սիրուն զաւակը իր հեղուկէն երեք կաթիլ ալ անոր խմոցները է. նոյնը ը-

ներ է ողորմելի Վալանթինին ալ, որ թէև ղինքը չէր յանդիմաներ, բայց Էտուար իրմէ կը նախանձի եղեր և իր հեղուկէն երեք կաթիլ ալ անոր խմոցները ու միւսներուն պէս անոր կեանքն ալ վերցուցեր է։

— Բայց այդ ինչ առասպել մ'է որ մեզ կը պատմէք, ըսաւ Շաթօ-Ռընօ։

— Այո՛, ըսաւ Պոշան, միւս աշխարհէն եկած առասպել մը, այնպէս չէ՞։

— Տարօրինակ բան է, ըսաւ Տըպրէ։

— Ա՛հ, եթէ չէք հաւատար, կրկնեց Պոշան, վաղը Ճամբելու ծառայիս հարցուցէք. տան մէջ եղած տարաձայնութիւնը այս էր։

— Բայց այն հեղուկը ինչ տեսակ հեղուկ է և ո՞ւր է։

— Տղան կը պահէ եղեր։

— Ո՞վ տուեր է իրեն։

— Իւր տիկնին մօրը գործանոցէն առեր է։

— Ուրեմն մայրը իւր գործանոցին մէջ թոյներ ունի։

— Գիտեմ ես. Թագաւորի դործակալի հարցումներ ընել սկսաք ինձ. ես լսածս կը կրկնեմ և ոչ ուրիշ բան, կրնամ ինծի ըսաղը ցուցընել ձեզ, բայց ուրիշ բան չեմ կրնար ընել։ Խեղճ ծառան իւր սարսափէն կերակուր չուտեր եղեր։

— Անհաւատալի բան է։

— Ոչ, բարեկամ, ամենևին անհաւատալի չէ, չէք յիշեր անցեալ տարի Ռիշլիէօ փողոցին այն տղան, որ իւր եղբայրներն ու քոյրերը սպաննելու կը զուարճանար անոնց քնացած առեն ականջնուն մէջ գնդասեղ խօթելով։ Մեր եաևէն եկող սերունդը խիստ շուտ կը յառաջադիմէ։

— Բարեկամ, ըսաւ Շաթօ-Ռընօ, ես դրաւ կը դնեմ որ այդ պատմութեան և ոչ մէկ խօսքին կը հաւատաք դուք . . . ։ Բայց Մօնթէ-Քրիսթոյ կոմսը հոս չեմ տեսներ, ինչպէս եղեր է որ չէ եկեր։

— Գավազանթիներէն խաբուելուն համար անշուշտ պիտի չուզէ այս բազմութեան մէջ երևիլ, ըսաւ Տըպրէ, քանզի ըստ ե-

բեւութիւն անունք կիզէ վարկաւոր նամակներով իրեն եկան, և կոմսը

հարիւր հազար ֆրանքի չափ դումար մը անոնց վրայ կորնցուցած է։

— Աղէկ միտքս եկաւ, Պ. տը Շալժօ-Ռընօ, ինչպէս է Մորէլ, հարցուց Պոշան։

— Երեք անգամ իւր տունը պայի, ըսաւ Շալժօ-Ռընօ, և զան չգտայ։ Սակայն իւր քոյրը անհանդիստ չերևցաւ ինձ, և խիստ հանգարտ դէմքով մը ըսաւ թէ ինքն ալ երկու կամ երեք օրէ ’ի վեր զան տեսած չէր, բայց ապահով էր որ առողջ վիճակի մէջ կը գտնուի։

— Ո՛հ, հիմա միտքս եկաւ թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ինչո՞ւ հոս եկած չէ։

— Ինչո՞ւ։

— Ինչու որ Թատրերգու Թեանս դերասաններէն մէկն է։

— Մինթէ կոմսն ալ մարդ սպաննեց, հարցուց Տըպրէ։

— Ոչ, ընդ հակառակն զինքը սպաննել ուզեցին. գիտէք որ այն բարի Պ. Քատրուսը կոմսին տունէն ելնելու առենը իւր պէնէֆէթ-Թօ փոքր բարեկամէն սպաննուեցաւ. գիտէք որ անոր տան մէջ գտնուեցաւ այն համբաւաւոր բաճկոնը, որուն մէջ այն նամակը կը գտնուէր, որ Գաւալղանթիի ամուսնութեան դաշնագրին ստորագրութիւնը խանգարեց։ Կը տեսնէք այն բաճկոնը, որ իբր ապացոյց՝ դրասեղանին վրայ կախուած է բոլորովին արիւնաթաթաւ։

— Ո՛հ, այո՛։

— Լուեցէք, պարոններ, ատեանը պիտի բացուի, ամեն մարդ իւր տեղը —։

Իրօք ատեանին բակին մէջ բարձր ձայներ լսուեցան։

Ոստիկանութեան դործակալը հաղալու աղդու ձայնով մը իւր երկու բարեկամները կանչեց. և նուիրակ մը քննութեան սրահին սեմոց վրայ երևելով Պոմարշէի ժամանակին նուիրակներուն պէս խիստ ձայնով մը պոռաց.

— Պարոնայք, ատեանը բացուեցաւ —։



ԳԼՈՒԽ ԺԱ

ԱՄՐԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՑՏԱԳԻՐԸ

Դատաւորները սրահին խորին լուութեան մէջ իրենց տեղը նստան, նոյնպէս ըրին Երդուեալ դատաւորներն ալ։

Պ. տը Վիլֆոր ամենուն ուշադրութեան և կրնանք իսկ ըսել ամենուն զարմացման առարկայն, դատաւորի հագուստով իւր թեւաթոռին մէջ նստելէն ետև՝ անխռով նայուածքը իւր բոլորտիքը շրջեց։

Ամեն մարդ անոր ծանր և անաչառ դէմքը կը դիտէր, որուն անկարեկիր բնութեան վրայ տնային վիշտերը ամենևին ազդեցութիւն մը ըրած չէին երեւեր, և մարդկութեան կրած հարուածոց բոլորովին անզդայ եղող այս մարդուն գրեթէ սոսկումով մը կը նայէին։

— Ձինակիրներ, ըսաւ նախագահը, ամբաստանեալը ներս բերէք —։

Այս հրամանին վրայ՝ ամենուն ուշադրութիւնը աւելի զրգռուեցաւ, և ամեն մարդ իւր նայուածքը դէպ ’ի այն դուռը յարեց, ուրկից Պէնէտէթօն ներս պիտի մտնէր։

Շատ չանցաւ այն դուռը բացուեցաւ և ամբաստանեալը երևցաւ։

Իւր ներկայութիւնը ամենուն վրայ նոյն ներգործութիւնը ըրաւ, և ամեն մարդ անոր դէմքին անտարբերութիւնը դիտեց։

Իւր գծերը չէին կրեր ներքին խորին յուզման այն տպաւորութիւնը, որ արիւնը դէպ ’ի սիրտը կը մղէ և ճակատն ու այտերը կը շառագնէ։

Իւր ձեռները ամենևին չէին դողար, այլ շնորհալի կերպով մէկ ձեռքը գլխարկը բռնած էր և միւսը իւր սպիտակ բաճկոնին բացուածքին մէջ խօթեր էր։

Իւր աչքը հանգարտ և փայլուն կ’երևէր։

Սրահը մտնելուն պէս՝ երիտասարդը իւր նայուածքը դատաւո-

թայ և հանդիսականայ վրայ շրջեց, ու նախադահին և մանաւանդ թագաւորի դործակալին վրայ աւելի երկար ատեն մնայ։

Անտրէայի քովը իւր փաստաբանը նստաւ, զոր դատաւորը իրեն սահմաներ էր (քանզի Անտրէա պէտք չունենալով ամենևին կարեւորութիւն մը տուած չէր անոր)։ Մուխ խարտեաշ մազերով երիտասարդ մ'էր, որուն սիրտը ամբաստանեալին սրտէն հարիւր անդամ աւելի դիւրազգած ըլլալուն՝ յուզմունքէն երեսը կարմրեր էր։

Նախագահը խնդրեց որ ամբաստանութեան յայտագիրը կարդայի, որ ինչպէս գիտենք՝ Վիլըֆօրի այնչափ յաջողակ և այնչափ անողոք գրչէն ելած էր։

Յայտագիրը կարդացուած ատեն, որ բաւական երկար ժամանակ տևեց, և կրնար որ և է ուրիշի շփոթութիւն պատճառել, բազմութեան ուշադրութիւնը անդադար Անտրէայի վրայ ուղղուած էր, որ Սպարդայիի սրտի անխռովութեամբը անտարբեր կեցաւ։

Գուցէ Վիլըֆօր երբեք այնչափ ազդու և այնչափ պերճախօսական մը բանեցուցած չէր, ամբաստանեալին յանցանքը ամեն ապացոյցներով հաստատած էր. անոր անցեալը, և մանկութենէ՛ի վեր ըրած գործերը այնպիսի տաղանդով մը շարադրած էր, որ կենաց ամեն հանգամանաց տեղեակ եղողները և մարդկային սիրտը աղէկ ճանչցողները միայն կրնան ունենալ։

Միայն այս յայտագրով բաղմութիւնը այնպէս կը կարծէր որ պէնէտէթթօ բոլորովին կորսուած է, և կ'ըսպասէր որ օրէնքը աւելի նիւթապէս պատժէ զան։

Անտրէա ամենևին ուշադրութիւն իսկ չդրաւ իւր վրայ ծանրացած ամբաստանութեան ապացոյցներուն։

Պ. տը Վիլըֆօր, որ շատ անդամ զան կը դիտէր և անտարակոյս ամբաստանեալին ներքինը իմանալու կը ջանար, ինչպէս որ ամեն ամբաստանեալներուն շատ անդամ այս կերպով իմացեր էր. Պ. տը Վիլըֆօր կ'ըսենք չկրցեր էր և ոչ անդամ մը անոր աչերը խոնարհեցընել, թէև անթարթ և խորին նայուածքով անոր կը նայէր։

Վերջապէս ընթերցումը լմննալէն ետև՝

— Ամբաստանեալ, ըսաւ նախագահը, անունդ և մականունդ ինչ է։

Անտրէա ոտք ելաւ։

— Ներեցէք, պարոն նախագահ, ըսաւ կատարեալ անխռով և յստակ ձայնով մը, կը տեսնեմ որ ձեր հարցումները այնպիսի կարգով կ'ըսկսիք, որոնց ես պիտի չկրնամ պատասխանել։ Այնպէս համոզուած եմ որ սովորական ամբաստանեալներէն բացառութիւն մը ըլլալս պիտի իմանաք աւելի ետքը։ Ուստի կ'աղաչեմ որ հաճիք ձեր հարցումները տարբեր կարգաւ ընել, և ես ձեր ամեն հարցմանց պիտի պատասխանեմ— ։

Նախագահը զարմանքով Երդուեալ դատաւորաց նայեցաւ, անոնք ալ թագաւորի գործակալին նայեցան։

Բոլոր հանդիսականները մեծ զարմանք մը յայտնեցին. սակայն Անտրէա ամենևին չայլայլեցաւ։

— Քանի՞ տարեկան ես, հարցուց նախագահը. այս հարցմանս կրնաս պատասխանել։

— Այս և ուրիշ ամեն հարցմանց պիտի պատասխանեմ, բայց կարգաւ։

— Քանի՞ տարեկան ես, կրկնեց դատաւորը։

— Քանի մը օրէն քսան և մէկ տարեկան պիտի ըլլամ. քանզի 1817ին սեպտեմբերի 27էն 28 լուսնալու գիշերը ծնած եմ— ։

Պ. տը Վիլըֆօր, որ ամբաստանեալին ըսածները կ'արձանագրէր, այս թուականը լսելով գլուխը վերցուց։

— Ո՞ւր ծնած ես, շարունակեց նախագահը։

— Օթէօյլ՝ որ Բարիզի մօտերն է— , պատասխանեց պէնէտէթթօ։

— Պ. տը Վիլըֆօր երկրորդ անդամ գլուխը վերցուց, և այս անդամ Մեդուզայի գլուխը տեսածի պէս պէնէտէթթոյին նայեցաւ, ու գոյնը կապուտի փոխուեցաւ։

Իսկ պէնէտէթթօ բարակ կտաւէ թաշկինակի մը բանուած անկիւնը շնորհալի կերպիւ իւր շրթանց մօտեցուց։

— Արհեստդ ինչ է, հարցուց նախագահը։

— Նախ ներողաւոր մ'էի, ըսաւ Անտրէա կատարեալ հանդարտութեամբ, ետքը պողպեղայ, և այս մօտերս մարդասպանութիւնը ձեռք առի— ։

Սրահին ամեն կողմերէն զայրայման և զարմանքի մրմունջ մը եկաւ թէ ըսենք փոթորիկ մը փրթաւ։

Դատաւորներն անդամ ապշեալ մնային. Երդուեալները այնպիսի վայելուչ երիտասարդէ մը չսպասուած այն լրբութեան վրայ իրենց տհաճութիւնը յայտնեցին:

Պ. տը Վիլըֆօր իւր մկ ձեռքը ճակտին կոթնցուց, որ դեղնելէն ետև՝ կարմրեր էր և կրակի պէս կ'այրէր:

Ցանկարծ ոտք ելաւ, և խելայնորի պէս իր բոլորտիքը նայեցաւ. անշուշտ օդ առնել կ'ուզէր:

— Բան մը կը փնտռէք, Թագաւորի պարոն դործակալ —, հարցուց Պէնէտէթթօ իւր ամենէն քաղցր ժպիտովը:

Պ. տը Վիլըֆօր ամենևին չպատասխանեց և իւր թևաթոռին վրայ դողդոջ իյնալու պէս նստաւ:

— Կը հաւանիս հիմա քու անունդ ըսելու, ամբաստանեալ, հարցուց նախագահը: Ցմարդի կերպով քու զանազան ոճիրներդ շարելուդ, զորոնք քու արուեստդ կ'անուանես, և անոնց տուած յարդանացդ համար առեանս յանուն մարդկութեան բարոյականութեանը և պատուոյն կը պարտաւորի խստիւ կշտամբել զքեզ, գուշէ այս է պատճառը որ մինչև հիմա անունդ չտուիր. քանզի քու անուանդ առաջնորդող տիտղոսներով կ'ուզես ըսել զայն:

— Կը զարմանամ, պարոն նախագահ, ըսաւ Պէնէտէթթօ խիստ ցաղցր ձայնով մը և խիստ քաղաքավարական ձևերով, թէ ինչպէս կրցաք իմ մտացս խորը թափանցել. և յիրաւի այս նպատակաւ էր որ աղաչեցի զձեզ հարցմանց կարգը փոխել —:

Ամենուն ապշութիւնը կատարեալ եղաւ:

Ամբաստանեալին բերանէն այնուհետև անամօթ և լիրբ խօսքեր չէին ելներ:

Առեանը յուզուելով այն մութ ամպին տակը կայծակի մը ճայթիլը կը դուշակէր:

— Ա՛ղէ, ըսաւ նախագահը, ըսէ՝ ինչ է անունդ:

— Անունս չեմ կրնար ըսել, քանզի չեմ գիտեր. բայց հօրս անունը գիտեմ և կրնամ ըսել ձեզ —:

Վշտալի շլացութիւն մը Վիլըֆօրի աչքը մթագնեց. իւր այտերէն դառն և անհամբեր քրտինքի կայլակները իւր դողդոջուն և անկօր ձեռքը բռնած թղթին վրայ կը հոսէին:

— Ուրեմն հօրդ անունը ըսէ —, կրկնեց նախագահը:

Շշուկ մը, շնչառութիւն մը անդամ այս մեծագումար ժողովին լռութիւնը չէր խանգարեր. ամեն մարդ կ'ըսպասէր:

— Հայրս թագաւորի գործակալ է, պատասխանեց Անտրէա առանց շփոթելու:

— Թագաւորի գործակա՞լ է կ'ըսես, գոչեց ապշութեամբ նախագահը առանց Վիլըֆօրի դիմաց վրայ երևցած այլայլութիւնը տեսնելու. Թագաւորի՞ գործակալ:

— Այո՛, և որովհետև անոր անունը գիտնալ կ'ուզէք, ըսեմ ձեզ. տը Վիլըֆօր է անոր անունը —:

Ամեանէն ակնածելով ամեն մարդ երկար ատեն լուռ կենալէն ետև՝ իրենց ձայները որոտումի պէս ամենուն կոկորդէն դուրս ելան:

Ամեանը անգամ բազմութեան այս շարժումը արգիլելու հոգ չէրաւ:

Պէնէտէթթոյի ուղղուած կշտամբալի և թշնամանալի խօսքերը, որոնց առջև երիտասարդը անտարբեր կեցեր էր, զինակիրներուն ուժգին շարժումները, և այս ստորին մարդոց հեգնութիւնները, որոնց ձայները ամեն ժողովի մէջ աղմուկի և դայթակղութեան ժամանակ ամենէն աւելի կը լսուին, հինգ վայրկեան տևեցին և դատաւորներն ու նուիրակները հազիւ կրցան լռութիւնը վերահաստատել:

Այն աղմուկին մէջ նախագահին ձայնը կը լսուէր, որ կը պոռար:

— Ամբաստանեալ, արդարութեան առեանը ծաղրե՞լ կ'ուզես, և կը համարձակի՞ս այդպիսի անօրինակ ընթացքով մը Թագաւորի դործակալը անպատուել —:

Ցասը հոգի Պ. տը Վիլըֆօրի քովը վազեցին, որ իւր աթոռին վրայ կիսով չափ նուաղած էր, և անոր մխիթարութիւններ և քաջալերութիւններ տուին ու իրենց համակրութեան հաւաստիքը յայտնեցին:

Սրահը վերստին հանդարտեր էր բայ՛ի մէկ կողմէն, ուր բաւական անձինք խումբ մը կազմած յուզման մէջ էին և շշնչիւնով կը խօսէին:

Կին մը կ'ըսէին նուաղեր էր, ու անոր ոգելից հեղուկ մը շնչել տալով խելքը գլուխը բերեր էին:

Այս աղմուկին մէջ Անտրէա ժպտախառն դէմքով դէպ՝ի ժողովը դառնալով և շնորհալի դիրքով մը իւր մէկ ձեռքը նստարանին կաղնեայ վանդակին կռթնցընելով ըսաւ.

— Պարոնայք, իմ գիտաւորութիւնս ատեանը թշնամանել և պատկառելի ժողովոյդ ներկայութեանը անօգուտ գայթակղութիւն մը տալ չէ։ Քանի՛ տարեկան ըլլալս հարցուցիք ինձի, և ես ըսի ձեզ. ուր ծնելս հարցուցիք, և ես պատասխանեցի. հիմա անունս կը հարցընէք, բայց պիտի չկրնամ ըսել, քանզի ծնողքս թողուցին զիս։ Բայց կրնամ հօրս անունը տալ, և կը կրկնեմ ձեզ. հայրս Պ. տը Վիլլֆօր կը կոչուի, և ես պատրաստ եմ ապացոյցներով հաստատել —։

Երիտասարդին ձայնին մէջ այնպիսի ստուգութիւն մը, հաստատութիւն մը և ուժգնութիւն մը կար, որ բազմութեան աղմուկը լռութեան փոխեց։ Ամենուն նայուածքը վայրկեան մը թագաւորի դործակալին վրայ ուղղեցան, որ կայծակի հարուածէ դիակացեալ մարդու մը պէս իւր աթոռին վրայ անշարժ մնացեր էր։

— Պարոնայք, շարունակեց Անտրէա իւր շարժումին ու ձայնովը լռութիւն խնդրելով, պէտք եմ իմ ըսածներուս ապացոյցը և մկնութիւնը տալ ձեզի։

— Բայց, գոչեց նախագահը բարկութեամբ, քննիչ դատաւորին յայտներ ես թէ՝ քու անունդ Պէնեդէթթօ է, թէ դուն որբ մ'ես, և հայրենիքդ Քորսիա է։

— Քննիչ դատաւորին ըսի ինչ որ արժան համարեցի անոր ըսել, քանզի չէի ուզեր խօսքերուս հանդիսաւորութիւնը տկարացընել կամ խափանել, ինչպէս որ քննիչ դատաւորին իմ դաղտնիքս յայտնելով պիտի պատահէր։

«Հիմա կը կրկնեմ դարձեալ թէ ես 1817ին սեպտեմբերի 27էն 28 լուսնալու գիշերը Օթէոյլ ծնած եմ, և թագաւորի դործակալին Պ. ար Վիլլֆօրի զաւակն եմ։ Ասոնց մանրամասն տեղեկութիւնները կ'ուզէք. հիմա անոնք ալ տամ ձեզի։

«Փօնթէն փողոցին թիւ 28 տան առաջին դասիկոնին վրայ դամասկեան կարմիր կերպասով զարդարուած սենեկի մը մէջ ծնայ։ Հայրս գիս բազկաց մէջ առնելով մօրս ըսաւ թէ մեռած եմ,

և ն դրերով նշանակուած կտաւի մը մէջ ամփոփեց գիս, պարտէզը տարաւ և կենդանի թաղեց գիս —։

Բոլոր հանդիսականաց վրայ սարսուռ մը տիրեց երբ տմբաստանեալին խօսքերուն ստուգութեան հետ Պ. տը Վիլլֆօրի սարսափը կ'աճէր։

— Բայց այս մանրամասն տեղեկութիւնները դուն ինչպէս դիտես, հարցուց նախագահը։

— Ան պարտիզին մէջ, ուր հայրս գիս թաղեց, պարոն նախագահ, նոյն դիշերը մարդ մը մտեր էր, որ հօրս ցմահ թշնամին էր, և իւր քորսիացի վրէժխնդրութիւնը անոր վրայ կատարելու համար երկար ատենէ՝ի վեր անոր վրայ կը հսկէր։ Ան թշնամին խիտ ծառերուն ետին պահուած էր, և հողին մէջ հօրս բան մը թաղելը տեսնելով, անոր աշխատութեան մէջ դանակի հարուածով մը զարկաւ զան. ետքը կարծելով թէ թաղուածը գանձ մ'է, փոսը բացաւ և գիս կենդանի գտաւ։ Ան մարդը Գոնսուած-Մանկանց վանատունը տարաւ գիս, ուր 37դ թուով արձանագրեցաւ։ Երեք ամիս ետքը անոր քոյրը Ռոլիանոյէն Բարիզ եկաւ ու իրրև իւր զաւակը վանատունէն առաւ գիս և հետը տարաւ։ Ահա ինչ կերպով Քորսիա մնծցայ թէև Օթէոյլ ծնած էի —։

Վայրկեան մը լռութիւնը տիրեց, բայց այնպիսի խորին լռութիւն մը որ եթէ սրտի անձկութիւնը չըլլար, պիտի կարծուէր թէ սրահը դատարկ է։

— Շարունակէ, ըսաւ նախագահին ձայնը։

— Անշուշտ կրնայի երջանիկ ըլլալ այն անձանց քով, որոնք գիս չափազանց կը սիրէին, շարունակեց Պէնեդէթթօ, սակայն դէպ՝ի մոլութիւնները ունեցած բնական հակումս յաղթեց այն ամեն առաքինութեանց, զորոնք հոգևոր մայրս կը ջանար սրտիս մէջ հեղուլ։ Մոլի ընթացքով մնծցայ և սկսայ ոճիրներ գործել։ Վերջապէս օր մը երբ զՍատուած կը հայհոյէի այնպէս դէշ վարք մը ունենալուս և ինձ այսպիսի տսկալի ձակատագիր մը տալուն համար, հոգևոր հայրս ըսաւ ինծի. «Մի՛ հայհոյեր զՍատուած, թշուառական տղայ. վասն զի Սատուած առանց բարկութեան ստեղծեց զքեզ։ Յանցանքը հօրդ է և ոչ քուկդ, քու հօրդ որ դժոխք սահմանած էր քեզի՝ եթէ մեռնէիր, և թշուառութիւնը՝ եթէ հրաշքով մը մա-

հուանէ ազատէիր» : Ան օրէն զԱստուած հայհոյելէն դադրեցայ , բայց իմ հայրս անիծելի . և ահա այս է պատճառը որ ես այն խօսքերը բերանէս հանելի , որոնց համար զիս կշտամբեցիք , պարոն նախագահ . և ահա ասոր համար ես ալ այն գայթակղութիւնը տալու պատճառ եղայ , որմէ բոլոր ժողովս տակաւին կը սարսռի : Եթէ այսպէս վարուիլս աւելի յանցանք մ'է , պատժեցէք զիս . բայց եթէ համոզուեցաք որ ծննդեանս օրէն 'ի վեր իմ ճակատագիրս աղէտալի , վշտալի , դառն և ափսոսալի է , ցաւեցէք վրաս :

— Բայց մայրդ , հարցուց նախագահը :

— Մայրս կը կարծէր որ ես մեռած եմ , և ամենևին յանցանք չունի : Ամենևին անոր անունը իմանալ չուզեցի , և ես չեմ ճանչնար զան — :

— Ան միջոցին՝ ինչպէս ըսինք՝ կնոջ մը բոլորտիքը շրջապատող խմբեակի մը մէջէն սուր ձայն մը լսուեցաւ , որ հեծկլտանքով մը վերջացաւ :

Ան կինը սաստիկ ջղաձգութեան մը մէջ իյնալով սրահէն դուրս հանելին զան . բայց տանելուատեն՝ իւր դէմքը ծածկող խիտ քողը բացուեցաւ և ամեն մարդ տիկին Տանկլարը ճանչցաւ :

Վիլըֆօր իսկ ճանչցաւ զան և ոտք ելաւ , թէև մտային տկարութեան մը մէջ իսկեր էր , թէև սոսկումէն իւր ականջը կը դոնչէր , և գրեթէ չիմարութիւն մը իւր ուղեղը կը խանգարէր :

— Ապացոյցներդ , ըսաւ նախագահը , ի՞նչ ապացոյց ունիս , աղէկ մտածէ , ամբաստանեալ , որ այսպիսի սարսափելի խօսքերը խիստ հաստատ ապացոյցներով պէտք են հաստատուիլ :

— Ապացո՞յց կը խնդրէք ինձմէ , ըսաւ պէնեդիքթօ ծիծաղելով :

— Այո՛ :

— Ուրեմն պ. տը Վիլըֆօրի երեսը նայեցէք , և դարձեալ ինձմէ ապացոյց խնդրեցէք — :

Ամեն մարդ թագաւորի դործակալին երեսը նայեցաւ , որ իւր վրայ ուղղուած նայուածքներէն ընկճեալ ատեանին մէջ տեղը յառաջացաւ դողդոջուն քալուածքով , մազերը տակն ու վրայ եղած , և դէմքը ըղձունգներուն ճնշումէն խաղաւարտերով ծածկուած :

Բոլոր ժողովին մէջ զարմացման երկար մրմունջ մը տիրեց :

— Հայր իմ , ապացոյց կը խնդրեն ինձմէ , ըսաւ պէնեդիքթօ , կ'ուզէք որ ապացոյցներս տամ :

— Ոչ , ոչ , կակազեց պ. տը Վիլըֆօր հեղձեալ ձայնով , ոչ , անօգուտ է :

— Ի՛նչպէս , անօգո՞ւտ է կ'ըսէք , դոչեց նախագահը , բայց ինչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ , պարոններ , դոչեց թագաւորի դործակալը , թէ զիս ճնշող մահայոյս հարուածին դէմ պարապ տեղը պիտի մաքառիմ . կը ճանչնամ որ վրէժխնդիր Աստուծոյ ձեռքը կը զբաղեցնէ : Ամենևին ապացոյց պէտք չէ , ինչ որ այս երիտասարդը ըսաւ՝ ճշմարիտ է — :

Բնութեան աղէտից առաջնորդող լռութեան պէս տխուր և անտանելի լռութիւն մը բոլոր հանդիսականաց վրայ պաղութեամբ տիրեց , որոնց դլխին վրայ մազերնին քստմնեցան :

— Ի՛նչ , պ. տը Վիլըֆօր , դոչեց նախագահը , միթէ զանցանաց մէջ ինկած չէք , միթէ ձեր մտային կարողութիւնները կորնցուցած չէք : Ամեն մարդ աղէկ կը հասկընայ որ տարօրինակ , անակնկալ և սոսկալի զրպարտութիւն մը ձեր միտքը շփոթած է . ա՛ղէ , սթափեցէք — :

Թագաւորի դործակալը դլուխը շարժեց . տենդէն տագնապող մարդու մը պէս իւր ականները սաստկութեամբ կը կափկափէին , և մեղաւոր դունատեր էր :

— Խելքս կատարեալ գլուխս է , պարո՛ն , ըսաւ . միայն մարմինս տկարացած է , և ասոր սպառնալիքը դիւրաւ կը հասկընայի : Այս երիտասարդին բոլոր ինձի դէմ ըսածներուն մէջ յանցաւոր ըլլալս կը ճանչնամ , և այս վայրկեանիս իմ տանս մէջ պատրաստ կը դտնուիմ ինձի յանձնելու — :

Եւ այս խօսքերը ցած և գրեթէ խեղդուած ձայնով մը արտասանելէն ետև՝ պ. տը Վիլըֆօր դեղևելով դէպ 'ի դուռը յառաջացաւ , որուն քովն եղող նուիրակը մեքենական շարժմամբ բացաւ զայն :

Բոլոր ժողովը լուռ և ապշեալ մնաց այս յայտարարութեան և այս խոստովանութեան վրայ , որ տասն և հինգ օրէ 'ի վեր Բա-

բիզեան բարձր ընկերութիւնները շփոթող բախտին յանկարծական փոփոխութեանց սոսկալի վերջ մը կու տար։

— Տնօրէն, ըսաւ Պոշան, թող հիմա գան ըսեն թէ բնութեան մէջ թատերդութիւն չկայ։

— Ստուգիւ, ըսաւ Շամֆո-Ռընօ, ամենէն աղէկ Ճամբան Պ. տը Մորսերֆի պէս ընելն է. այսպիսի աղէտքէ մը հետև ատրճանակին հարուածը ամենէն քաղցր երևցածն է։

— Եւ սպանութիւն ալ կ'ընէ եղեր, ըսաւ Պոշան։

— Ես ալ ժամանակ մը կը մտածէի որ անոր աղջկան հետ ամուսնանամ, ըսաւ Տըպրէ. ողորմելի աղջիկը մեռաւ և ազատեցաւ։

— Ատեանը վերջացաւ, պարոններ, ըսաւ նախագահը, և դատը առաջիկայ նստին ձգուեցաւ։ Պէտք է գործը վերստին քննել և ուրիշ դատաւորի մը յանձնել —։

Իսկ Անտրէա կատարեալ հանդարտութեամբ սրահէն դուրս ելաւ վինակիրներէն շրջապատեալ, որոնք ակամայ ակնածութեամբ կը վարուէին անոր հետ։

— Այս եղածին ինչ կ'ըսես, պարոն, հարցուց Տըպրէ ոստիկանութեան գործակալին՝ անոր ձեռքը Լուի ոսկի մը դնելով։

Ծանր ոճիրները գործուած պիտի ըլլան —, պատասխանեց գործակալը։



ԳԼՈՒԽ ԾԲ

ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ

Բազմութիւնը թէև խիստ սեղմուած էր, բայց Պ. տը Վիլըֆօրի առջև Ճամբայ բացաւ ու թողուց որ դուրս երթէ։

Մեծ վիշտեր ունեցողին այնչափ ակնածութիւն կ'ըլլայ, որ անոր ամենէն յետին թշուառութեանը մէջ անդամ երբէք պատահած չէ որ համարձակած բազմութեան առաջին շարժումը համակրութեան ղաղում մը չըլլայ։

Ատեանի եղող շատ մարդիկ ամբոխի մէջ սպասնուած են. սակայն շատ քիչ անգամ թշուառ մը, թէև յանցաւոր ըլլայ, իր մահուան դատաստանին ներկայ պտնուող մարդոցմէ թշնամանուած է։

Ուստի Վիլըֆօր իր խոստովանութեամբը յանցաւոր Ճանչցուած և միայն իր վշտէն պաշտպանուած՝ հանդիսականաց, պահապան զինուորաց և պալատականաց մէջէն անցնելով սրահէն դուրս ելաւ։

Այնպիսի կացութիւններ կան, զորոնք մարդս բնազդումով կ'ըմբռնէ, բայց չկրնար մեկնութիւններ տալ անոնց վրայ. այսպիսի պարագայի մէջ՝ ամենէն պերճախօս մարդը այն է, որ իր դժբաղդութեանը մէջ յուսահատութեան ազդու և բնական ձայն մը կը հանէ։ Հանդիսականները յուսահատեալին այս ձայնը անոր բոլոր պատմութիւնը կը համարին և իրաւունք ունին անով զոհ ըլլալու մանաւանդ երբ այն ձայնը կեղծ չէ։

Սակայն անկարելի է ներկայացնել արդարութեան պալատէն դուրս ելնելու առեն Վիլըֆօրի ղգացած ընդարմացումը և այն սարսռալի ջերմը, որ իր ամեն ընչերակները կը բաբախէր, ամեն ջիղերը կը պրկէր, ամեն երակները պայթելու չափ կ'ուռեցնէր և մահացեալ մարմնոյն ամեն մէկ մասը անդադրմանելի յուզերով կը յուզուէր։

Վիլըֆօր միայն սովորութենէն առաջնորդուած՝ դատիներուն մէջէն անցաւ, իր ուսերուն վրայէն դատաւորի պատմուճանը նե-

ան չէ թէ մոռնալով որ պէտք էր վայելչութեան համար զգին վրայէն հանել, այլ իր ուսոց վրայ ծանր բեռ մը և նեղսոի ա-զատի պատմուճանը կ'երևէր իրեն։

Դեղնելով միևչև Ցոմիմի հրապարակը հասաւ, ուր իր կառ-քը սեպատ, իր ձեռօքը դռնակը բանալով կառավարը արմնցուց, ու նստարանին վրայ նետուելա մոռովը Սէնթ-Օնօրէ արուարձա-նին կողմը յուսընելով։

Կառքը Ճամբայ ելաւ։

Իր բախտին հարուածը վերսին իր սիրտը կը ճնշէր ու չէր դիտեր թէ այնուհետև ինչ պիտի գոյ իր գլխուը, քանդի անոնց վրայ չէր մոռնար, այլ միայն կ'ըզգար, և չէր խորհեր այն օրէնք-քին վրայ, ինչպէս կ'ընէ անհոգ մարդասպան մը յայտնի յօդուա-ծի մը վրայ մեկնութիւններ տալով։

— Ասուած —, կը մրմնար շարունակ Վիլլֆօր առանց գիտ-նալու թէ ինչ կ'ըսէ։

Քանդի այս ապտակն ետին վրէժխնդիր Աստուծոյ ձեռքը կը կարծէր տեսնել։

Կառքը արագութեամբ կը յառաջանար։

Վիլլֆօր կառքին մէջ շարժելով, զգայ որ բան մը գինքը ան-հանգիստ կ'ընէր. ձեռքը այն առարկային երկնցուց, ու տեսաւ որ հողմահար մ'էր այն, զոր տիկին սը Վիլլֆօր բազմոցին և բար-ձերուն մէջ տեղը մոռցեր էր։

Այս հողմահարը իր միտքը յիշատակ մը արթնցուց, և այն յիշատակը գիշերուան մէջ լոյս մը եղաւ իրեն համար։

Վիլլֆօր իր կնոջը մոռածեց . . .

— Ո՛հ —, կը գոչէր Վիլլֆօր կարծելով թէ հրաշէկ երկաթ մը իր սիրտը կը մխուէր։

Ժամէ մը ի վեր իր ներշնչութեան միայն մէկ կողմը իր ա-զայ առջևն ունէր, և ահա յանկարծ միւս կողմն ալ ոչ նուազ սոսկումով իր մոռայ առջև ներկայացաւ։

Քիչ մը առաջ իր կնոջ անողոք դատաւորն եղեր էր, քիչ մը առաջ ինքը ի մահ դատապարտեր էր զայն. և իր կինը սարսա-փէն զարհուրեալ, խիղճէն տապնապեալ, և իր անստգամնելի ա-

պրուեստեան պերճախօսութենէն խայտառակեալ, բայարձակ և դերազգայ իշխանութեան մը դէմ տակաւ և անզգաշտան միտքով գոյէ այս վայրկենիս մեռնելու կը պատրաստուէր։

Իր կնոջ դատապարտութենէն ի վեր արդէն ժամ մը անցեր էր, Ընտարակոյս այն միջոցին իր ամէն մեղքերը մոռայը առջև կը բերէր, անոնց համար Աստուծմէ թողութիւն կը խնդրէր, նամանաւ մը կը գրէր իր առաքինի ամուսնոյն՝ ծնրադրեալ անոր ներումն խնդրելու համար, զոր իր մահուամբը պիտի գնէր։

Վիլլֆօր մինչդիւնէ նման երկրորդ հատաչանք մը հանեց գառով և բարկութեամբ լցուած։

— Ո՛հ, գոչեց կառքին բազմոցին վրայ մէկ կողմէն միսը գլ-խելով, կինս միայն ինձի գոչելուն համար յանցաւոր եղաւ, մեղ-քը քրեական նման ինձմէ դուրս եկաւ, ու ժանտատենդէ, համա-ձարակ ախտէ, կամ ժանտախտէ վարակելու պէս կինս ալ ինձմէ վարակեցաւ, և ես կը պատժեմ զան . . . . Ո՛հ, համարձակեմ-գոյ իսկ անոր ըսելու թէ՝ «Ներէ՛ք և մոռնա՛ք» . . . . Ո՛հ, ոչ, ոչ, թող ապրի . . . թող ինձի ընկերանայ . . . միատեղ կը փախչինք, Գաղղիոյէն կը հեռանանք, և ուրիշ երկիրներ կը բնա-կինք որչափ ժամանակ որ աշխարհս կարենայ գինձ կրել։ Դատա-ւորի խօսքն ըրի անոր . . . ո՛վ Աստուած իմ, ինչպէս համար-ձակեցայ այս բառը արտասանելու։ Ձէ՞ որ կառավարը ինձ ալ կ'ըսպասէ . . . . Միատեղ կը փախչինք, այո՛, իմ մեղքերս ա-նոր կը խոստովանիմ. ամէն օր ներողամտութեամբ կ'ընեմ անոր թէ նոր կը խոստովանիմ. ամէն օր ներողամտութեամբ կ'ընեմ անոր թէ մեղք մը գործեցի . . . . Ո՛հ, վարդի և օձի միութիւն մը պիտի ըլլայ մերը, ինձի պէս ամուսնի մը արժանաւոր կինն է ան . . . . Այո՛, պէտք է որ ապրի, և իմ անօրէնութիւնս անոր յանցանքը թող ծածկէ։

Եւ Վիլլֆօր կառքին առջևի պատուհանը շառաչիւնով մը խ-ղեցուց։

— Շո՛ւտ, աւելի շուտ —, գոչեց այնպիսի ձայնով մը, որ կա-ռավարը իր նստարանին վրայէն վեր ցատկեցուց։

Ձիերը երկիւղէն մղուած մինչև տունը վազեցին։

— Այո՛, այո՛, կը կրկնէր Վիլլֆօր իրեն իսկ իր տան մտնելա-

լով, այո, պէտք է որ կինս ապրի, պէտք է որ զղջայ և իմ զաւակս մեծցընէ, իմ ողբումըս և միակ զաւակս, որ անմեռ ծերին հետ ընտանեացս կոտրածէն ազատեցաւ։ Կինս կը սիրէր զան, և ամեն բան անոր համար ըրաւ. իւր զաւակը սիրող մօր մը սրտին վրայ երբէք յուսահատիլ պէտք չէ։ Կինս պիտի զղջայ, մ'կը պիտի չիմանայ թէ յանցանք մը գործեց. իմ տանս մէջ գործուած մեղքերը, որոնց վրայ արդէն ամեն մարդ անհանգիստ կ'ըլլայ, ժամանակին հետ պիտի մոռցուին, և կամ եթէ թշնամիներէն ոմանք յիշեն զայն, իմ յանցանացս ցոյցակին մէջ կ'աւնում զանոնք։ Մէկ, երկու, երեք մեղք աւելի թող ըլլայ, հոգ չէ. կինս իւր հետը ոսկի և մանաւանդ իւր զաւակն առնելով կ'ազատի այն անդունդէն, որուն մէջ ինձ կ'երեւի թէ մարդիկ ինձի հետ պիտի իյնան։ Թող ապրի, և Թող տակաւին երջանիկ ըլլայ, քանի որ իւր բոլոր սէրը զաւկին վրայ է, և իւր զաւակը երբէք իրմէ պիտի չբաժնուի։ Գոնէ այս կերպով բարիք մը ըրած պիտի ըլլամ, և այս բանս ինձ մխիթարութիւն մը պիտի ըլլայ —։

Եւ թագաւորի գործակալը սկսաւ աւելի ազատութեամբ շունչ առնուլ, որ ժամ մը 'ի վեր դրեթէ արգիլուեր էր։

Կառքը տան բակին մէջ կեցաւ։

Վիլլֆօր կառքին պատուանդանին վրայէն սանդուխին վրայ ցատկեց, իւր այնչէս շուտ գառնայուն համար ծառաները զարմանքի մէջ տեսաւ, բայց անոնց դիմաց վրայ ուրիշ բան չդիտեց։ Ամենեւին մէկն ալ չհամարձակեր էր խօսք մը ուզել իրեն. ըստ սովորութեան իւր աչքը կեցան անոնք մինչև որ ինքը վեր ելաւ։

Վիլլֆօր Նոարթիէի սենեկին առջևէն անցաւ, և կխտաբաց դրան ներս երկու հոգւոյ ստուերը տեսաւ. բայց ամենևին հոգ չըրաւ իւր հօրը քովն եղողը իմանալու, իւր անհանգստութիւնը ուրիշ տեղ կը քաշէր զինքը։

— Բան մը չէ փոխուեր հոս —, րսաւ Վիլլֆօր այն փոքր սանդուխէն վեր ելնելով, որ իւր կնոջը և Վալանթինի դատարկ սենեակը տանող դաւիթը կը հանէր։

Ամենէն առաջ դաւիթին դուռը զոցեց։

— Պէտք չէ որ մէկը պայ զմեզ անհանգիստ ընէ, րսաւ. քանի կ'ուզեմ կնոջս հետ ազատութեամբ խօսիլ, իմ յանցանքս անոր յայտնել, և ամեն բան պատմել. . . —։

Եւ դրան մօտենալով վանահայեայ Ճարմանդը դարձուց և դուռը բացուեցաւ։

— Բարի, րսաւ —, դուռը փակուած չէ —։

Եւ այն փոքր սրահը մտաւ, ուր ամեն իրիկուն փոքր Էտուարի համար անկողին մը կը շինէին. քանզի Էտուար թէպէտ դիշերօթիկ դպրոց կ'երթար, բայց ամեն իրիկուն տունը կը վերադառնար. մայրը երբէք չուզեր էր իւր զաւկէն հեռու ըլլալ։

Մէկ ակնարկով փոքր սրահին ամեն կողմը դիտեց։

— Մարդ չկայ հոս, րսաւ. անտարակոյս իւր պառկելու սենեակը կը գտնուի —։

Դէպ 'ի այն դուռը ցատկեց. բայց անոր պարզնակը դրուած էր. ուստի սարսռալով հոն կեցաւ։

— Հէլոյիզ —, գոչեց։

Իրեն այնպէս երևցաւ թէ կարասիի մը շարժիլը կը լսէ։

— Հէլոյիզ, կրկնեց Վիլլֆօր։

— Ո՞վ է ան —, հարցուց անունը կանչուած անդին ձայնը։

Այս ձայնը սովորականէն աւելի ակար երևցաւ Վիլլֆօրին։

— Բացէք, բացէք դուռը, գոչեց Վիլլֆօր, ես եմ —։

Բայց այս հրամանին հակառակ և իւր ձայնին անձկութեան ուշադրութիւն չընելով դուռը չբացուեցաւ։

Վիլլֆօր ոտքի հարուածով մը դուռը խորտակեց։

Տիկին որ Վիլլֆօր իւր դահլիճը մտնելու սենեկին դրան առջև կանգնած էր գտնատեալ, երեսին գծերը այլայլեալ և սոսկալի պշուրթեամբ մը իւր ամուսնոյն երեսը նայելով։

— Հէլոյիզ, Հէլոյիզ, րսաւ Վիլլֆօր, ինչ ունիք, րսէք —։

Ծաղկահաս կինը իւր պիրկ և կապուտացեալ ձեռքը անոր երկնցընելով՝

— Լռեցաւ, պարոն, րսաւ այնպիսի խորտակուռ ձայնով մը, որ զոգցես իւր կոկորդը պիտի պատռէր. ինչ կ'ուզէք տակաւին —։

Եւ իւր երկայնութեամբը գետինը ինկաւ։

Վիլլֆօր անոր վրայ ցատկեց, ձեռքը բռնեց, և այն ձեռքին մէջ ոսկի խուփով վանահայեայ սրուակ մը տեսաւ։

Տիկին տը Վիլըֆօր մեռեր էր։

Վիլըֆօր իր տոկումն շփոթած՝ մինչև սենեկին դրան սեմոց վրայ քաշուեցաւ և դիակին նայեցաւ։

— Զաւակս, դուչեց յանկարծ, ո՛ւր է զաւակս. Էտուար, Էտուար —։

Եւ սենեակէն դուրս նետուեցաւ՝ «Էտուար, Էտուար», պոռալով։

Այս անունը այնպիսի անձկայրեաց ձայնով մը արտասանեց, որ ծառաները վազեցին եկան։

— Զաւակս, ո՛ւր է զաւակս, հարցուց Վիլըֆօր. տունէն հեռացուցէք որ չտեսնէ . . .։

— Պ. Էտուարը վարը չէ, պարոն, պատասխանեց սենեկապանը։

— Անտարակոյս պարտիզին մէջ կը խաղայ. նայեցէք, նայեցէք,

— Ոչ, պարոն. դրեթէ կէս ժամ առաջ տիկինը վեր կանչեցուցած. Պ. Էտուար տիկնոջ սենեակը գնաց և անկէ ետքը վար չիջաւ —։

Սառած քրտինք մը Վիլըֆօրի ճակատը պատեց. իր ոտքերը սալաքարերուն վրայ իրենց հաւասարակշռութիւնը կորնցուցին, և իր մտմտուքները խորտակուած ժամացոյցի մը անիւներուն անկարգ դարձին պէս սկսան իր գլխին մէջ դառնալ։

— Տիկին տը Վիլըֆօրի սենեակը, մրմռաց, տիկին տը Վիլըֆօրի սենեակը —։

Եւ ետ դարձաւ մէկ ձեռքով իր ճակտին քրտինքը սրբելով միւսովը պատին կոթնելով։

Սենեկին մէջ մտնելով վերստին ողորմելի կնոջ դիակը պիտի տեսնէր։

Էտուարը կանչելու համար՝ գերեզման դարձած այն սենեակներուն արձագանքը պիտի լսէր. եթէ խօսէր, գերեզմանին լռութիւնը պիտի աւրէր։

Վիլըֆօր զգաց որ իր լեզուն կոկորդին մէջ բռնուեր էր։

— Էտուար, Էտուար —, կակազեց։

Բայց մանուկը չէր պատասխաներ. ո՛ւր էր ուրեմն իր զաւակը, որ ծառաներուն ըսածին նայելով իր մօրը սենեակը մտեր և անկէ դուրս չելեր էր։

Վիլըֆօր քայլ մը առաջ անցաւ։

Տիկին տը Վիլըֆօրի դիակը տարածուած էր այն դահլիճին դըրան երկայնութեամբը, ուր հարկաւ Էտուար կը գտնուէր. տիկնոջ դիակը կարծես թէ պշուցեալ և բաց աչօք, ու հեղնական սոսկալի ժպիտով մը դրան սեմոց վրայ կը հսկէր։

Դիակին ետին՝ սրահակը բացուած ըլլալով դահլիճին մէկ մասը, դաշնամուր մը և կապոյտ մնդուսեայ բազմոցի մը ծայրը կ'երևէին։

Վիլըֆօր երեք կամ չորս քայլ առաջ գնաց և բազմոցին վրայ իր զաւակը պառկած տեսաւ։

Անտարակոյս մանուկը կը նիջէր։

Ողորմելի մայրը աննկարագրելի ուրախութեամբ լցուեցաւ. պայծառ լուսոյ ճառագայթ մը այն գժոխքը լուսաւորեր էր, ուր Վիլըֆօր ինքնիրեն կը մաքառէր։

Ուստի պէտք էր դիակին վրայէն անցնիլ, դահլիճին մէջ մտնել, մանուկը իր գրկացը մէջ առնուլ և անոր հետ փախչիլ հեռու խիստ հեռու երկիր մը։

Վիլըֆօր նոյն մարդը չէր ալ. ի՛ մահ վհրաւորեալ վագրի մը կը նմանէր, որ իր փշրուած ակռաները իր վերջին վէրքին մէջ կը թողու։ Ա՛յնուհետև նախապաշարումներէ չէր վախնար այլ ուրուականներէ։

Կիզիչ կրակարանի մը վրայէն անցնելու պէս դիակին վրայէն ցատկեց, և մանկան մօտենալով իր բազկացը մէջ առաւ, սեղմեց զան, շարժեց և անոր անունը տուաւ։

Բայց Էտուար պատասխան չտուաւ։

Վիլըֆօր իր անյագ շրթները անոր այտերուն յարեց, բայց մանկան այտերը կապուտացեր և սառեր էին։

Անոր պրկեալ անդամները շօշափեց. ձեռքը սրտին վրայ դրաւ. բայց սիրտը չէր բաբախեր ալ։

Մանուկը մեռեր էր։

Էտուարի կուրծքէն չորս ծալլուած թուղթ մը ինկաւ։

Վիլըֆօր շանթահար եղած ծնկան վրայ ինկաւ։

Էտուար իր հօրը անշարժ բազկացը մէջէն սահեցաւ և մօրը քովը գլորեցաւ։

Վիլըֆոր Թուղթը պետնէն առաւ, իր կնոջ գիրը Ճանչցաւ և անհամբերութեամբ հետևեալը կարդաց.

«Գիտցէք որ ես Բարի մայր մ'եմ, քանզի իմ զաւակիս համար ես այն յանցանաց տէրն եղայ։

«Բարի մայր մը իր զաւակը հետը չառած չմնկներ»։

Վիլըֆոր չէր կրնար իր տեսածին հաւատալ, այլ կը կարծէր թէ կը զառանցէ։ Դէպ 'ի Էտուարին մարմինը հակեցաւ և էգ ա-ռիւծի մը նման, որ իր մեռեալ կորիւնը կը դիտէ, երկրորդ ան-գամ ուշադրութեամբ զննեց զան։

Այն ատեն ողորմագին ձայն մը ելաւ իր սրտէն։

— Աստուած, մրմնաց, միշտ Աստուած —։

Այն երկու զոհերը գինքը կը զարհուրէին, և երկու դիակներու մէջ առանձին մնալու վախցաւ։

Քիչ մը առաջ այժ կու տային իրեն բարկութիւնը, որ զօրաւոր մարդոց մեծ զէնքն է, և յուսահատութիւնը, որ ոգեվարքի մէջ ե-զողին յատկութիւնն է, և որմէ Տիտանեանները գրկուելով եր-կինք վերելակելու ջանային, ու Այաքս իր բուռը աստուածոց յուզուց։

Սակայն Վիլըֆորի դլուխը յաւոյ բեռին տակը խոնարհած՝ իր ծնպայը վրայ ելաւ, գրտինքէն խոնաւացած և սարսափէն քստմնած մազերը թոթվեց, և այն մարդը, որ և ոչ մկնուն վրայ դութ ու-նեցեր էր, իր ծեր հայրը սեմնելու գնաց, որպէս զի իր տակ-բութեանը մէջ մարդ մը գտնէ, որուն կարենայ իր թշուառու-թիւնը պատմել և անոր քովը լալ։

Ուստի նոյն սանդուխէն վար իջաւ և Նուարթիէի սենեակը մտաւ։

Այն միջոցին կ'երևէր թէ Նուարթիէ իր անշարժութիւնը նե-րածին չափ սիրով աբբայ Պիւզոնիին խօսքերը մտիկ կ'ընէր, որ ըստ սովորութեան հանդարտ և պաղ կ'երևէր։

Վիլըֆոր աբբան տեսնելով՝ ձեռքը ճակտին տարաւ։ Անցեալը փրփրալի ալիքի պէս իր մտացը առջև ներկայացաւ։ Օթէօյլի ճաշին հետևեալ առտուն իր աբբային ըրած այցելութիւնը և Վա-լանթինի մահուան օրը աբբային իրեն ըրած այցելութիւնը յիշեց։

— Հիմ կը գտնուիք, պարոն, ըսաւ անոր, ուրեմն միայն մեռ-եալները տանելու համար կու գաք —։

Պիւզոնի ոտք ելաւ. դատաւորին դիմաց այլայլութիւնը և անոր աչաց վայրագութիւնը տեսնելով հասկըցաւ և կամ իրեն այնպէս երևցաւ թէ առեանին տեսարանը կատարուած է. մնացածը չէր դիտեր։

— Ձեր աղջկան մարմնոյն վրայ աղօթք ընելու համար միայն ձեր տունը եկայ։

— Եւ այսօր ինչ ընելու եկաք։

— Եկայ ըսելու թէ զիս աղէկ վարձատրեցիք, և այսօրուանէ սկսեմ աղաչեմ զԱստուած, որ ինծի պէս դոհ ըլլայ ձեզմէ։

— Ո՛վ Տէր Աստուած, դոչեց Վիլըֆոր սոսկումով ետ քաշուե-լով, այս ձայնը արբայ Պիւզոնիինը չէ։

— Ոչ, պատասխանեց արբան և իր կեղծ կուլակը վար առաւ, դլուխը թոթվեց, և իր սև երկար մազերը ուսոյը վրայ ինկան որ իր ժպտուն դէմքը շրջանակեցին։

— Պ. տը Մոնթէ-Քրիսթօ է, դոչեց Վիլըֆոր ապուշ նա-յուածքով մը։

— Ան ալ չէ, թաղաւորի պարոն դործակալ, աղէկ փնտռեցէք և աւելի հեռուն դացէք։

— Այս ձայնը, այս ձայնը ուր լսած եմ ես արդեօք առաջին անդամ։

— Առաջին անդամ Մարսիլիա լսած էք ասկէ քսան երեք տա-րի առաջ՝ օրիորդ տը Սէն-Մէրանի հետ ամուսնացած օրերնիդ։ Ձեր դատապարտութեան թղթոյ ծրարներուն մէջ փնտռեցէք։

— Ոչ Պիւզոնին էք, և ոչ Մոնթէ-Քրիսթօն, ո՛վ Աստուած իմ, ուրեմն իմ դաղտնի, անկարեկիր և մահացու թշնամիս էք դուք։ Մարսիլիոյ մէջ ես ձեզի դէմ դործ մը դործեր եմ, ո՛հ, վայ ինծի ուրեմն։

— Այո՛, իրաւունք ունիս, Ճիշդ այդպէս է, ըսաւ կոմսը թե-ւերը իր լայն կուրծքին վրայ խաչաձև դնելով, փնտռէ, դտիր։

— Բայց ինչ ըրի ես քեզի, դոչեց Վիլըֆոր, որուն խելքը այն սահմանին վրայ կը ծփար, ուր բանաւորութիւնը և յիմարու-

Թիւնը կը շփոթին այն շամանդաղին մէջ, որ ոչ երազ է և ոչ իսկ արթնութիւն. ինչ ըրի ես քեզի, ըսէ:

— Ցամրաքայլ և սարսափելի մահուան մը դատապարտեցիք զիս, հայրս սպաննեցիք, աղատութեանս հետ սէրս և սիրոյս հետ հարստութենէս զրկեցիք զիս:

— Բայց ո՛վ էք դուք, ո՛վ էք դուք, ո՛վ Աստուած իմ:

— Ես այն ողորմելւոյն ոդին եմ, զոր դուք Իֆ դղեակին ստորերկրեայ բանտերուն մէջ թաղեցիք: Իւր դերեզմանէն վերջապէս դուրս ելած այս ոդիին Աստուած Մօնթէ-Քրիսթոյ կոմսին դիմակը տուաւ, և ադամանդներով ու ոսկւով ճոխացուց զան, որպէս զի այսօր զինքը ճանչնաք:

— Ո՛հ, ճանչցայ, ճանչցայ, ըսաւ Վիլըֆօր, գուն . . . :

— Էտմօն Տանթէ՛ան եմ ես:

— Էտմօն Տանթէ՛ան ես, գոչեց թագաւորի գործակալը կոմսին դաստակէն բռնելով, եկու ուրեմն — :

Եւ սանդուխէն վեր հանեց Մօնթէ-Քրիսթօն, որ չէր դիտեր թէ ո՛ւր կը տանէր զինքը թագաւորի գործակալը, և նոր աղէտ մը կը դուշակէր:

— Տե՛ս, Էտմօն Տանթէս, ըսաւ Վիլըֆօր իւր կնոջը և զաւկին դիակները կոմսին ցուցընելով, ահա՛, տե՛ս, վրէժդ աղէկ լուծած ես . . . — :

Այն զարհուրելի տեսարանին վրայ Մօնթէ-Քրիսթոյի դոյնը նետեց. հասկըցաւ որ իւր վրէժխնդրութեան չափը անցեր էր, հասկըցաւ որ հարկ չկար այնուհետև ըսել. «Աստուած ինձի հետ է և զիս կը պաշտպանէ»:

Կոմսը սրտի անբնկարագրելի անձկութեամբ մահկան մարմնոյն վրայ յառկեց, անոր աչերը բացաւ, երակաց զարկը քննեց, և հետը առնելով Վալանթինի սենեակը վազեց, ու դուռը փակեց:

— Զաւակս, գոչեց Վիլըֆօր, զաւկիս դիակը կը տանի. ո՛հ, անէծք, թշուառութիւն և մահ թափին վրադ — :

Եւ ուղեց Մօնթէ-Քրիսթոյի ետևէն երթալ. բայց երազի մէջ պատահածին պէս՝ զգայ որ իւր ոտքերը դետինը փակեր էին, կապիճները պայթեցընելու չափ աչերը բացուեր էին, իւր կուրծքին

վրայ գրած մատները աստիճանաբար մսին մէջ կը խրէին, մինչև որ ըղձնգները արիւնով ներկուեցան. քունքերուն երակները այնչափ բորբոքեալ մտածութիւններով ուռեցան, որ իւր դանգին խիստ նեղ գմբէթը բարձրացուցին և իւր ուղեղը հրոյ բոցերու մէջ ընկղմեցին:

Վիլըֆօրի այս վիճակը քանի մը վայրկեան տևեց, մինչև որ իւր խելքին սոսկալի յեղաշրջումը կատարեալ եղաւ:

Այն ատեն բարձր ձայն մը հանելէն ետև սկսաւ երկար ատեն քրքիջով ծիծաղիլ, և արտորնօք սանդուխներէն վար վազեց:

Քառորդ մը ետքը՝ Վալանթինի սենեակը բացուեցաւ, և Մօնթէ-Քրիսթոյ կոմսը դուրս ելաւ գոնատեալ, տխուր նայուածքով, և իւր դիմաց գծերը, որոնք սովորաբար հանդարտ և վայելուչ էին, վշտէն այլայլեր էին:

Իւր բազկացը մէջ մանուկը գրկած էր, որուն իւր ըրած ջանքերը օգուտ մը չըրեր էին զան կենդանացընելու համար:

Մէկ ծունկը գետինը դրաւ, և չերմեռանդութեամբ մանուկը մօրը քովը պառկեցուց գլուխը անոր կուրծքին վրայ դնելով:

Ետքը ոտք ելնելով դուրս ելաւ, և սանդուխին վրայ ծառայի մը հանդիպելով հարցուց.

— Ո՞ւր է պ. տը Վիլըֆօր — :

Ծառան առանց պատասխանելու՝ ձեռքը պարտէզին կողմը երկնցուց:

Մօնթէ-Քրիսթօ պարտէզին սանդուխէն իջաւ, դէպ՝ ինշանակուած կողմը յառաջացաւ և Վիլըֆօրը տեսաւ, որ իւր ծառաներէն շըրջապատեալ և ձեռքը բահ մը առած դողդոջ կատաղութեամբ մը գետինը կը փորէր:

— Հոս ալ չէ, ըսաւ, հոս ալ չէ —:

Եւ աւելի հեռու կը փորէր:

Մօնթէ-Քրիսթօ յուշիկ քալուածքով անոր մօտեցաւ:

— Պարո՛ն, ըսաւ պրեթէ խոնարհ ձայնով մը, զաւակ մը կորսընցուցիք. բայց . . . — :

Վիլըֆօր ընդմիջեց զան, բայց ոչ աբբային խօսքը լսեր էր և ոչ անոր մտիկ ըրեր էր:

—Ո՛հ, ես պիտի դտնեմ, ըսաւ. պարապ տեղը ըսէք թէ հոս չէ. ես պիտի դտնեմ զան, եթէ մինչև վերջին դատաստանին օրն ալ փնտռել հարկ ըլլայ — :

Մօնթէ-Քրիսթօ սոսկումով ետ քաշուեցաւ :

— Ո՛հ, ըսաւ, խենթեցեր է — :

Եւ դողդոջ վախնալով որ այն անիծեալ տան պատերը իւր վրայ չփլչին, դէպ 'ի փողոցը ցատկեց՝ առաջին անգամ տարակուսելով թէ արդեօք պէ՞տք էր ընել ինչ որ ըրեր էր :

— Ո՛հ, բաւական է, բաւական է այսչափս, վերջինը աղաւ տենք — :

Եւ իւր տունը վերադառնալով Մօնթէ-Քրիսթօ Մորէլին պատահեցաւ, որ իւր գերեզմանը մտնելու համար Աստուածմէ սահմանուած ժամանակին սպասող ստուերի մը պէս անձայն Շանզ-Էլիզէի տան մէջ կը պտրտէր :

— Պատրաստ էք, Մաքսիմիլիէն, ըսաւ ժպիտով մը, վաղը Բարիզէն պիտի մեկնինք :

— Բարիզի մէջ դործ չունիք ալ, Հարցուց Մորէլ :

— Ոչ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, և Աստուած չուզեր որ աւրիշ դործեր ընեմ — :



ԳԼՈՒԽ ԾԳ

ՄԵԿՆԻԼԸ

Ա յս պատահած դէպքերը բոլոր Բարիզցւոց խօսակցութեան ճիւթ եղեր էին :

Էմմանուէլ և իւր կինը Մէյլէ փողոցին իրենց փոքր սրահին մէջ խիստ բնական զարմացմամբ իրարու կը պատմէին զանոնք :

Մորսէրֆի, Տանկլարի և Վիլֆոռի յանկարծական և անակնկալ աղէտները իրարու կը մօտեցընէին :

Մաքսիմիլիէն, որ իրենց այցելութիւն ընելու եկեր էր, մինչ կ'ընէր զանոնք, և կամ անոնց խօսակցութեան ժամանակ՝ իւր սոսկալի անզգայութեան մէջ ընկղմած անոնց քովը կը կենար :

— Ստուգիւ, Էմմանուէլ, կ'ըսէր Թիւլի, կարծես թէ երէկուան այնչափ հարուստ և այնչափ երջանիկ եղող ամեն այն անձերը իրենց հաշուին մէջ, որուն վրայ իրենց հարստութիւնը, երջանկութիւնը, և բոլոր յոյսը հաստատած էին, մուդեր էին չար ոդիին մասը հանելու, և թէ ան ալ Բէրոյի հնարած առասպելներուն չար վհուկներուն պէս, (որոնք հարսանիքի կամ խնջոյքի հրաւիրուելու մուդուեր էին), յանկարծ երևան ելեր էր անոնց աղէտալի մոռացութեան վրէժը առնելու համար :

— Ո՛հ, ինչ դժբաղդութիւններ են ասոնք, կ'ըսէր Էմմանուէլ Մորսէրֆին և Տանկլարին մտածելով :

— Ո՛հ, ինչ տառապանքներ, կ'ըսէր Թիւլի վալանթինը միտքը բերելով, որուն անունը կանացի բնազդումով մը չէր ուզեր իւր եղբօրը առջև տալ :

— Եթէ Աստուած է զանոնք պատժողը, կ'ըսէր Էմմանուէլ, անշուշտ Աստուած, որ բարեաց աղբիւրն է, այն մարդոց անցեալին մէջ իրենց թողութեան արժանի բան մը գտած չէ, և այն մարդերը անիծեալ էին :

— Բանաղատութեանդ մէջ խիստ չե՛ս, Էմմանուէլ : Եթէ հայրս

ատրճանակով իւր ուղեղը ցրուէր, և եթէ այս ժամուս ըսածիդ պէս մէկը ըսէր. «Այս մարդը իւր պատիժին արժանի էր», այս խօսքը ըսողը պիտի զիս չխաբուէր:

— Այո՛, բայց Աստուած չներեց որ քու հայրդ մեռնի, ինչպէս որ չներեց Աբրահամին որ իւր զաւակը զոհէ. այն նահապետին ինչպէս և մեզի հրեշտակ մը ղրկեց որ մահուան թևերը՝ կէս ճամբան կտրեց —:

Այս խօսքերը վերջացընելու վրայ էր երբ զանպակին ձայնը հնչեց:

Այցելուի մը գալստեան համար դռնապանին կողմէն տրուած նըշանն էր այն:

Գրեթէ նոյն միջոցին սրահին դուռը բացուեցաւ, և Մօնթէ-Քրիսթոյ կոմսը սեմոյ վրայ երևցաւ:

Երկու ամուսինները ուրախութեան ձայն մը հանեցին:

— Մաքսիմիլիէն, ըսաւ կոմսը երիտասարդներուն վրայ իւր ներկայութեան ըրած տարբեր տպաւորութիւնները չտեսնել ձևացընելով, զձեզ առնելու եկայ:

— Ձիս առնելո՞ւ, ըսաւ Մորէլ երազէ մը սթափածի պէս:

— Այո՛, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, չորոշեցի՞նք որ զձեզ հետս պիտի տանիմ, և երէկ չմացուցի ձեզի որ պատրաստուիք:

— Ես պատրաստ եմ, ըսաւ Մաքսիմիլիէն, և եղբօրս ու քրոջս ձեռք բարեաւ ըսելու եկայ:

— Եւ ո՞ւր պիտի երթաք, պարոն կոմս, հարցուց Ժիւլի:

— Նախ Մարսիլիա, տիկին:

— Մարսի՛լիա, կրկնեցին միաբերան երկու ծաղկահաս ամուսինները:

— Այո՛, ձեր եղբայրն ալ հետս պիտի տանիմ:

— Ափսո՛ս, պարոն կոմս, ըսաւ Ժիւլի, եթանի՛ թէ զան առողջացած դարձընէք մեզ —:

Մորէլ երեսը դարձուց իւր երեսին սաստիկ կարմրութիւնը ծածկելու համար:

— Ուրեմն դուք ալ պիտեցի՞ք որ եղբայրնիդ անհանգիստ է, ըսաւ կոմսը:

— Այո՛, պատասխանեց ծաղկահաս կինը, և կը վախնամ որ ձեր քովը մնալով սիրտը չնեղանայ:

— Ես պիտի զբօսցընեմ զան, կրկնեց կոմսը:

— Պատրաստ եմ ես, պարոն կոմս, ըսաւ Մաքսիմիլիէն. մնաք բարեաւ, սիրելիներս. մնաս բարեաւ, Էմմանուէլ, մնաս բարեաւ, Ժիւլի:

— Ինչպէս մնաս բարեաւ կ'ըսես, դոչեց Ժիւլի. առանց պատրաստուելու և առանց անցագրի ինչպէս կ'երթաս:

— Որչափ ուշանայ մարդ, այնչափ իւր բաժանումը վշտալի կ'ընէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. ապահով եմ որ Մաքսիմիլիէն իմ հրամանիս համեմատ՝ ամեն բանին հոգ տարած է:

— Անցագիրս առի և մորթարկուն պատրաստեցի, ըսաւ Մորէլ իւր միօրինակ հանդարտութեամբը:

— Շատ աղէկ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով, բարի զինուորի մը ճշդութիւնը կը ցուցընէք այդ գործին մէջ:

— Ուրեմն հիմա պիտի բաժնուի՞ք մեզմէ, ըսաւ Ժիւլի. միայն օր մը և ժամ մ'ալ պիտի չկենաք մեր քովը:

— Կառքս դուռը կ'ըսպասէ, տիկին. պէտք է որ հինգ օրէն Հռոմ հասնիմ:

— Բայց Մաքսիմիլիէն ալ Հռոմ պիտի երթայ, ըսաւ Էմմանուէլ:

— Կոմսին հետ պիտի երթամ ուր որ անոր հաճելի ըլլայ, ըսաւ Մորէլ տխուր ժպիտով մը. դեռ ամիս մը անորն եմ:

— Ո՛վ տէր Աստուած, տեսէք ի՛նչ կ'ըսէ, պարոն կոմս:

— Մաքսիմիլիէն ինձի հետ պիտի ընկերանայ, ըսաւ կոմսը իւր համոզիչ քաղցրութեամբը, ուստի ձեր եղբօր համար հոգ մի՛ ընէք:

— Մնաս բարեաւ, քոյր իմ, կրկնեց Մաքսիմիլիէն. մնաս բարեաւ, Էմմանուէլ:

— Իւր անտարբերութեամբը սիրտս կը վիրաւորէ, ըսաւ Ժիւլի. ա՛հ, Մաքսիմիլիէն, Մաքսիմիլիէն, բան մը ունիս դուն ու մեզմէ կը պահես —:

Մաքսիմիլիէն դրեթէ արհամարհալի և դրեթէ ցասմնալի նայուածքով մը կոմսին նայեցաւ:

— Երթանք —, ըսաւ կոմսը:

— Երթալնէդ առաջ, պարոն կոմս, ըսաւ Ժիւլի, կը ներէք ինձի որ ըսեմ ձեզ անցեալ օրուան . . . :

— Տիկին, ընդմիջեց կոմսը անոր երկու ձեռքը բռնելով, ձեր ըսելիքը ձեր աչաց և սրտին մէջ աւելի բացայայտ կարդացի, և սրտիս մէջ զգացի։ Վիշտս անուղեցոյց պէս պէտք էի ղձեզ չտեսած մեկնիլ. բայց այդ բանը իմ կամքէս կախեալ չէր, քանզի ես տկար և ունայնասէր մեկնեմ, քան զի իմ նմանեներուս ուրախալի, քաղցր և խնամալի աչերը տեսնելը հաճելի է ինծի։ Հիմա ես կը մեկնիմ, և իմ ետեւէդ կ'ըսեմ իսկ ձեզի. «Մի՛ մոռնաք զիս, սիրելիներս, քանզի հատանականաբար ալ պիտի չտեսնէք զիս»։

— Ալ պիտի չտեսնենք զձեզ, դոչեց Էմմանուէլ, ինչ ատեն արտասուայ երկու մեծ կաթիլներ ծխելիին այտերուն վրայ կը գլորէին. ալ պիտի չտեսնենք զձեզ։ Ուրեմն դուք մարդ չէք, այլ հրեշտակ մը որ մեզմէ կը բաժնուի, այնպիսի հրեշտակ մը, որ երկրի վրայ բարիք մը ընելու համար երևելէն ետև՝ երկինք կը վերանայ։

— Ո՛հ, մի՛ ըսէք այդ խօսքը, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ աշխուժիւ, երբէք այդ խօսքը մի՛ ըսէք, սիրելիներս. հրեշտակները բնաւ չարութիւն չեն ըներ, հրեշտակները ուզած տեղերնին կ'իջնեն, դիպուածը իրենցմէ աւելի զօրաւոր չէ, այլ ընդհակառակն իրենք դիպուածին կ'իշխեն։ Ոչ, Էմմանուէլ, ես մարդ եմ, և որչափ անտեղի է ձեր զարմանքը, նոյնչափ Աստուծոյ դէմ են ձեր խօսքերը —։

Եւ ծխելիին ձեռքը համբուրելով, որ իւր գրկացը մէջ նետուեցաւ, կոմսը իւր միւս ձեռքը Էմմանուէլին երկնցուց։

Եաքը ակամայ այն տունէն բաժնուելով, ուր երջանկութիւնը կը բնակէր, նշանով մը Մաքսիմիլիէնը իւր ետևէն կանչեց, որ Վալանթինի մահուանէն ՚ի վեր յուսահատեալ և անզգայ կ'երևէր։

— Եղբօրս արտմուքիւնը փարատեցէք —, ըսաւ ծխելի Մօնթէ-Քրիսթոյի ականջին։

Մօնթէ-Քրիսթօ անոր ձեռքը թողվեց։

— Սէնթատ Նաւատորին վրայ վտանգ էր, հարցուց կոմսը ժըպտելով։

— Ո՛հ, այո՛։

— Ուրեմն խաղաղութեամբ և վստահութեամբ քնացիք —։

Ինչպէս որ ըսինք՝ սուրհանդակին կառքը կ'ըսպասէր. չորս հուժկու ձիեր իրենց բաշերը տնկելով՝ անհամբերութեամբ ոտքերնին գետինը կը զարնէին։

Սանգուինին վարի կողմը Ալի կ'ըսպասէր, որուն դէմքը քրտինքէն կը փայլէր, և այնպէս կ'երևէր թէ երկար ճամբայէ մը եկած էր։

— Ծերին պայքը —, հարցուց կոմսը խափչիկին։

Ալի նշան ըրաւ թէ այո՛։

— Եւ հրամանիս համեմատ՝ անոր աչաց առջևը նամակը բացիր։

— Այո՛, ըսաւ դարձեալ գերին ակնածութեամբ։

— Ինչ ըսաւ և կամ ինչ ըրաւ —։

Ալի լոյսին գնաց, որպէս զի իւր տէրը կարենայ զինքը տեսնել, ու իւր դէմքը ծերին դէմքին նամանեցընելով, աչքը դոյեց, ինչպէս կ'ընէր Նուարթիէ երբ այո՛ ըսել կ'ուզէր։

— Բարի, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, կ'ընդունի. երթանք ուրեմն —։

Այս խօսքը հաղիւ թէ բերանէն ելաւ, որ կառքը արդէն ճամբայ ելեր էր, և ձիերը քարայատակէն կայծերու փոշի մը կը ժայթքեցընէին։

Մաքսիմիլիէն առանց խօսք մը խօսելու կառքին մէկ անկիւնը տեղաւորուեցաւ։

Կէս ժամ ետքը կառքը յանկարծ կեցաւ։

Կոմսը Ալիին մատին հաղորդող մեսաքսեայ ժապաւէնը քաշեր էր։

Նուպիացին վար իջաւ և դռնակը բացաւ։

Գիշերը աստղներով կը փայլէր։

Վիլժուիվի զառիվերին վրայ հասեր էին, ուրկից տխուր ծովու մը պես Բարիզը կը տեսնէին իւր միլիոնաւոր լոյսերովը, որոնք փոսփորական կոհակներու կը նմանին. և ստուգիւ կոհակներ են անոնք և մրրկածուփ Ովկիանոս կոհակներէն աւելի աղմկալի, աւելի դիւրայոյզ, աւելի յուղդողդ, աւելի կատաղի և աւելի անյագ են. անսահման ծովուն կոհակներուն պէս հանդարտութիւն չեն գիտեր անոնք. միշտ իրարու կ'ընդհարին, միշտ կը փրփրին և միշտ կ'ըսպառնան. . . ։

Կոմսը առանձին վար իջաւ և ձեռքովը ըրած նշանին վրայ կառքը քանի մը քայլ յառաջ անցաւ։

Այն ատեն կոմսը թևերը իրարու պլլած երկար ատեն այն հաղլցը դիտեց, ուր կը հալէին, կը ձուլուէին և ձև մը կ'առնուին այն դաղափարները, որոնք աշխարհս յուզելու համար խռովայոյզ անդունդէն դուրս կը ցատկէին. և իր զօրաւոր նայուածքը այն Բաբելոնի վրայ լաւ մը յարելէն ետև՝

— Մեծդ քաղաք, մրմռաց աղօթք ընելու պէս դլուխը խոնարհեցընելով և ձեռքը միացընելով, հաղիւ թէ վեց ամիս կայ որ ես քու դռներէդ ներս մտայ, Նախախնամութիւնը կ'առաջնորդէր ինձ հոն, և ահա յաղթանակաւ գիս կը վերադարձընէ. քու պատերուդ մէջ իմ ներկայութեանս գաղտնիքը միայն Աստուծոյ վստահելոյ, քանզի Աստուած միայն կրցաւ իմ սրտիս խորը թափանցել, և Աստուած միայն գիտէ որ ես առանց ոխակալութեան և առանց դառնութեան, բայց ոչ առանց վշտաց կը բաժնուիմ քեզմէ. Ան միայն գիտէ որ իւր ինձի վստահացած գործութիւնը ոչ ինձի համար և ոչ սնոտի պատճառներու համար դործածեցի։ Ո՛վ մեծդ քաղաք, քու բաբախող կրկդդ մէջ իմ փնտռածս դտայ, և չարութիւնը երևան հանելու համար քու աղիքդ յուզեցի. հիմա իմ դործս կատարեալ է և պաշտօնս վերջացած. այսուհետև ոչ ուրախութիւն կրնաս տալ ինձի և ոչ տրտմութիւն. մնաս բարեաւ ուրեմն, Բարիզ, մնաս բարեաւ —։

Գիշերային ոդիի մը պէս իւր նայուածքը վերստին այն լայնատարած դաշտին վրայ շրջեց, ետքը ձեռքը ճակատին տանելով, վերստին իւր կառքը մտաւ, որ իւր ետևէն գոյութեցաւ և բլուրին միւս կողմը անհետացաւ եղաւ փոշիի մրրիկ մը և մեծ շառաչիւն մը հանելով։

Առանց խօսք մը խօսելու երկու մղոն յառաջացան։

Մորէլ կը մտածէր, և Մօնթէ-Քրիսթօ անոր կը նայէր։

— Մորէլ, ըսաւ կոմսը, արդեօք հետս դալերնուդ համար զղջացած էք։

— Ոչ, պարոն կոմս, բայց Բարիզէն բաժնուելուս համար։

— Եթէ կարծէի որ Բարիզ կենալով երջանիկ պիտի ըլլաք, Մորէլ, ձեզ հոն կը թողուի։

— Վալանթինի դերեզմանը Բարիզի մէջ է, և Բարիզէն բաժնուիլը երկրորդ անդամ զան կորսնցընել է։

— Մաքսիմիլիէն, ըսաւ կոմսը, մեր կորսնցուցած սիրելիները հողին մէջ չեն հանդչիր, այլ մեր սրտին մէջ կը թաղուին. և Աստուած ուզեց որ այսպէս ըլլայ, որպէս զի անոնք միշտ մեր հետը ըլլան։ Ես այսպէս երկու բարեկամներ ունիմ, որոնք միշտ ինձի կ'ընկերանան. մէկը կեանք և միսը խելք տուողն է։ Այս երկուքին ալ ոգին սրտիս մէջ կենդանի կը մնայ. տարակուսանայս մէջ անոնց խորհուրդ կը հարցընեմ, և եթէ երբէք բարիք մ'ըրի, անոնց խորհուրդովը ըրած եմ։ Ձեր սրտի ձայնին հետ խորհրդակցեցէք, և հարցուցէք անդամ մը թէ միշտ այդպիսի տխուր դէմք մը ինձ ցուցընել պէ՞տք էք։

— Բարեկամ, ըսաւ Մաքսիմիլիէն, սրտիս ձայնը տխուր է, և թշուառութենէ զատ բան մը չխոստանար ինձի։

— Տկարամտաց յատուկ է ամեն բան մութ կերպով տեսնել. մարդուս հոգին իւր հորիզոնը կը կազմէ. ձեր հոգին տխուր է, և ան է ձեզ փոթորկայոյզ երկինք մը երևցընողը։

— Դուշէ ստոյգ ըլլայ այդ խօսքը —, ըսաւ Մաքսիմիլիէն և վերստին իւր մտածութեանց մէջ ընկղմեցաւ։

Ճանապարհորդութիւնը կոմսին կարողութեանց մէկն եղող հիանալի արագութեամբ կ'ըլլար. իրենց ճամբուն վրայ քաղաքները ստուերի պէս կ'անցնէին. ծառերը աշնան առաջին հողմերէն թօթափեալ հերարձակ հսկաներու պէս իրենց դիմացը կ'ելլէին և իրենց մօտենալնուն պէս արագութեամբ կը փախչէին։

Հետևեալ առտու Շալոն հասան, ուր կոմսին շոգենաւը կ'ըսպասէր. առանց վայրկեան մը կորսնցընելու՝ կառքը շոգենաւը փոխադրուեցաւ, և երկու ճանապարհորդները արդէն շոգենաւը մտեր էին։

Այս շոգենաւը ճանապարհորդութեան համար շինուած էր. հնդկական մակոյկի մը կը նմանէր այն, որուն երկու անիւները երկու թևերու կը նմանէին, որոնցմով ճանապարհորդ թռչունի պէս ջուրին երեսը սահելով կը յառաջանար։

Մորէլ իսկ այս արագընթաց ճամբորդութենէն դոդջես զուարճութիւն կ'ըզդար, և իւր մազերը շարժող հողմը կարծես թէ իւր ճակատին ամպերը կը փարատէր։

Իսկ կոմսը որչափ Բարիզէն կը հեռանար, նոյնչափ գրեթէ զերմարդկային զուարթութիւն մը կը շրջապատէր զինքը։

Իւր հայրենիքը գարձող աքսորեալի մը կը նմանէր։

Շատ չանցաւ՝ Մարսիլիա քաղաքը երևցաւ իւր սպիտակ շէնքովը, բարեխառն օդովն ու բազմամարդ բնակիչներովը, այն Մարսիլիան, որ Տիւրոսի և Կարդագինէի կրտսեր քոյրն էր, և որոնց յաջորդեց Միջերկրականին տիրելէն ետև, այն Մարսիլիան, որ որչափ ծերանայ, այնչափ կը նորոգի։

Երկուքնին ալ յիշողութիւննին արթնցնող տեսարաններ ունէին առջևնին, ինչպես էին բոլորշի աշտարակը, Սէն-Նիքօլայի բերդը, Բիւժէի խորհրդատունը, աղիւսներով յատակեալ նաւամատոյցները, ուր երկուքնին ալ իրենց մանկութեան մէջ խաղացեր էին։

Ուստի միաբան հաւանութեամբ երկուքնին ալ ֆանըպիէրի առջև կեցան։

Նոյն միջոցին նաւ մը ձամբայ կ'ելլէր դէպ'ի Ալճէրիա երթալու։

Անոր յարկին վրայ խռնուած ճանապարհորդները, անոնց բեռները, ապրանայ և բարեկամաց բազմութիւնը, որոնք իրարու հրաժարական ողջոյննին կու տային, կը պոռային և կու լային, և ամեն օր այս տեսարաններուն ներկայ գտնուողներուն անդամ սրտաշարժ երևցող այս տեսարանը չկրցան Մաքսիմիլիէնի ազդեցութիւն մը ընել, քանզի երիտասարդին ոտքը նաւամատոյցին լայն սալաքարերուն վրայ կոխելուն պէս՝ ուրիշ մտածութիւն մը իւր միտքը գրաւեր էր։

— Ահա, ըսաւ Մորէլ Մօնթէ-Քրիսթոյի թևէն բռնելով, փոքրանին նաւահանգիստը մտնելու տեղ կեցած էր. մահուանէ և յուսահատութենէ ազատած ձեր մարդը այս տեղս իմ բազկաց մէջ նետուեցաւ. երեսիս վրայ անոր արտասուաց ազդեցութիւնը դեռ կ'զգամ, և մինակ ինքը չէր լար, այլ շատ մարդիկ զմեզ տեսնելով կու լային —։

Մօնթէ-Քրիսթօ ժպտեցաւ։

— Ես ալ հոն է —, ըսաւ կոմսը փողոցի մը անկիւնը Մորէլին ցուցընելով։

Այս խօսքը լսելու ատեն և կոմսին ցուցուցած ուղղութեամբը վշտալի հեծութեան ձայն մը լսուեցաւ և կին մը տեսան, որ ճամբայ ելնող նաւուն ճանապարհորդներէն մէկուն նշան կ'ընէր։

Այս կինը քողով ծածկուած էր։

Մօնթէ-Քրիսթօ այնպիսի այլայլութեամբ իւր աչերը անոր վրայ յարեց, որ Մորէլ դիւրութեամբ պիտի կրնար դիտել զինքը, եթէ կոմսին հակառակ՝ իւր նայուածքը նաւուն յարած չըլլար։

— Ո՛վ տէր Ասուած, դոչեց Մորէլ, ոչ, չեմ սխալիր, այն գլխարկովը ողջունող և միաղգեստ հաղնող երիտասարդը Ալպեր որ Մորսէրֆն է —։

— Այո՛, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ես ալ ճանչցայ զան։

— Ի՛նչպէս, դուք հակառակ կողմը կը նայէիք —։

Կոմսը ժպտեցաւ, ինչպէս որ կ'ընէր երբ չէր ուզեր պատասխանել։

Եւ իւր նայուածքը վերստին այն քողարկեալ կնոջ վրայ դարձուց, որ փողոցին անկիւնը աներևոյթ եղաւ։

Այն ատեն Մորէլին դարձաւ։

— Սիրելիդ իմ, ըսաւ Մաքսիմիլիէնին, այս երկրին մէջ ընելու գործ մը ունիք։

— Հօրս գերեզմանին վրայ լալու պիտի երթամ, պատասխանեց Մորէլ ցած ձայնով։

— Շատ աղէկ, գայէք և հոն սպասեցէք ինձի. ես կու գամ զձեզ կը գտնեմ։

— Ինձմէ կը բաժնուի՞ք։

— Այո՛ . . . ես ալ բարեպաշտ այցելութիւն մը ունիմ ընելու —։

Մորէլ կոմսին իրեն երկնցուցած ձեռքը բռնեց, և գլխի այնպիսի շարժումով մը, որուն տխրութիւնը յայտնելը անկարելի էր, կոմսէն բաժնուեցաւ և քաղաքին արևելեան կողմը ուղղեցաւ։

Մօնթէ-Քրիսթօ թողուց որ Մաքսիմիլիէն հեռանայ և նոյն տեղը կեցաւ մինչև որ երիտասարդը աներևոյթ եղաւ. ետքը դէպ'ի Մէյլանի ծառուղիները դնաց այն տնակը մտնելու համար, զոր մեր ընթերցողները ճանչցած են վիլֆաստանութեանս սկիզբները։

Այս տունը տակաւին թմբլիներու մեծ ծառուղիին տուներուն տակէն

էր, որ անդորձ Մարսիլիայցւոց շրջագայելու կը ծառայէ. ծերուԹենէ սեգած և տկարացած որթի ընդարձակ ոստերը Հարաւային տաք արևէն դեղնած պատը կը ծածկէին։

Ոտից շփուելէն մաշուած երկու քարէ աստիճաններով տան մէջ մտնուէը. դուռը երեք տախտակներով շինուած էր, որոնք Թէև իրարմէ բաժնուած՝ բայց ամենևին սոսինձ և ներկ տեսած չէին, և համբերուԹեամբ խոնաւուԹեան կ'ընպատէին որ պիրենք իրարու մօտեցնէ։

Այս տունը, որ իւր հնութեան մէջ սիրուն և Թշուառ երևոյԹին մէջ զուարԹ կ'երևէր, ժամանակաւ նոյն ՏանԹէսի հօրը բնակած տունն էր։

Միայն Թէ ծերունին վերնայարկը կը բնակէր և կոմսը ամբողջ տունը Մէրսէտէսի յանձներ էր։

Երկար քողով կինը մեկնող նաւէն բաժնուելէն ետև այս տան մէջ մտնելով դուռը դոցեր էր ձիշդ այն միջոցին որ ՄօնԹէ-ՔրիսԹօ նոյն փողոցին անկիւնը երևցեր էր, այնպէս որ կոմսը հազիւ Թէզանտեսեր էր։

Սանդուխին մաշուած ոտքերը երկար ժամանակէ՝ի վեր իրեն ծանօԹ էին։

Աղէկ գիտէր Թէայն հին դուռը ինչպէս կը բացուէր, քանզի լայն գլխով բևեռ մը անոր ներքին փականակը կը վերցընէր։

Ուստի բարեկամի մը կամ տանտիրոջ մը պէս առանց դուռը զարնելու և առանց իմաց տալու ներս մտաւ։

Աղիւսներով յատակուած բակի մը ծայրը փոքր պարտէզ մը կար, ուր արևը բոլոր ջերմուԹեամբն ու լուսովը կը Թափանցէր։

Այս պարտիզին մէջ այն նշանակուած տեղը Մէրսէտէս գտեր էր այն գումարը, որուն հոն պահուիլը կոմսը ապնուամտուԹեամբ քսան և չորս տարի առաջ կը համարէր։

Փողոցի դուռէն այս պարտիզին առաջին ծառերը կ'երևէին։

Դրան սեմոյ վրայ հասնելով ՄօնԹէ-ՔրիսԹօ հեծկլտանքի նման հառաչանք մը լսեց. այս հառաչանքը իւր նայուածքը առաջնորդեց, և Վիրկինիայի ծիրանեզոյն երկար ծաղիկներով և խիտ տերևներով յասմիկի հովանոցի մը տակը Մէրսէտէսը տեսաւ, որ նստած և գլուխը կախած կու լար։

Երեսին վրայէն քողը հաներ էր և դէմքը երկու ձեռացը մէջ պահած ազատութեամբ դուրս կը թափէր իւր հառաչանքներն ու հեծկլտանքները, զորոնք իւր որդւոյն ներկայութիւնը երկար ատեն իւր սրտին մէջ արգիլեր էր։

ՄօնԹէ-ՔրիսԹօ քանի մը քայլ յառաջ գնաց. աւազին վրայ իւր ոտից ձայնէն Մէրսէտէս գլուխը վերցուց և իւր առջին մարդ մը տեսնելով սոսկումի ձայն մը հանեց։

— Տիկին, ըսաւ կոմսը, ստոյգ է որ այսուհետև չեմ կրնար զձեզ երջանիկ ընել, բայց կրնամ միխիթարել զձեզ. բարեկամի մը կողմանէ եկած այս միխիթարութիւնը կը բարեհաճիք ընդունելու։

— Ստուգիւ խիստ թշուառ եմ ես, պատասխանեց Մէրսէտէս, և աշխարհիս մէջ առանձին մնացի . . . ։ Միայն զաւակ մը ունէի, ան ալ բաժնուեցաւ ինձմէ։

— Շատ աղէկ ըրաւ, տիկին, կրկնեց կոմսը, և ձեր զաւակը աշխիւ սիրտ մը ունի երեր. քանզի հասկը ցաւ անշուշտ որ ամեն մարդ պարապ մը ունի իւր հայրենեացը. ոմանք իրենց տաղանդը, ոմանք իրենց ճարտարութիւնը, ոմանք իրենց հսկողութիւնը և այլք իրենց արիւնը հայրենեաց պարտաւոր են։ Ձեր քովը մնալով իւր կեանքը անօգուտ տեղը պիտի անցընէր. անշուշտ պիտի չկրնար ձեր վշտաց սովորիլ, և վատասիրտ մէկը պիտի ըլլար, բայց հիմա աղէտից դէմ կռուելով, իւր ձախորդութիւնը երջանկութեան պիտի փոխէ, ու մեծ և զօրաւոր պիտի ըլլայ։ Թողուցէք որ երկուքնուդ ալ ապագան վերահաստատէ, տիկին, և կը համարձակիմ խոստանալ ձեզ որ ձեր զաւակը ապահով պաշտպանութեան տակ կը գտնուի։

— Ո՛հ, ըսաւ ողորմելի կինը տխրութեամբ գլուխը շարժելով, ես պիտի չկրնամ վայելել այն երջանկութիւնը, որուն վրայ դուք կը խօսիք, և զոր բոլոր սրտովս կը խնդրեմ Աստուծմէ որ անոր շնորհէ։ Այնպիսի յուսահատութեան մէջ կը գտնուիմ որ կարծեմ Թէդերեզմանիս մօտեցած եմ։ Աղէկ ըրիք, պարոն, որ զիս մօտեցուցիք այն տեղին, ուր ես ժամանակաւ այնչափ երջանիկ էի։ Մարդս պէտք է որ իւր երջանիկ եղած տեղը մեռնի։

— Ափսոս, ըսաւ ՄօնԹէ-ՔրիսԹօ, ձեր ամեն խօսքերը, տիկին, իմ սիրտս դառնութեամբ կը լեցընեն և կ'այրեն, մանաւանդ զիս

աաելու իրաւունք ունենալնուդ համար. ձեր ամեն աղէտիյ պատ-
ճառը ես եմ. փոխանակ զիս մեղադրելու ինչո՞ւ չէք յաւիր վրաս,
այն ատեն զիս աւելի ողորմելի պիտի ընէիք . . . :

— Ե՛ս զձեզ ատեմ և մեղադրեմ, Էմմոն . . . : Իմ զաւա-
կիս կեանքը ազատող մարդը ատեմ և մեղադրեմ, քանզի անշուշտ
ձեր աղէտալի և մահացու դիտաւորութիւնը սպանանել էր Պ. տը
Մորսէրֆի այն զաւակը, որով ինքը կը պարծէր, այնպէս չէ՞: Ո՛հ,
երեսս նայեցէք, և անոր վրայ յանդիմանութեան մը երևոյթը չու-
նենալս պիտի տեսնէք — :

Էմմոն իր աչերը վերցուց և Մէրսէդէսին նայեցաւ, որ կիսով
չափ ոտք ելած իւր ձեռները դէպ 'ի անոր երկնցուց:

— Ո՛հ, երեսս նայեցէք, շարունակեց Մէրսէդէս տխրալի ըղ-
դայմամբ մը. աչացս հուրը մարած է այսօր, և չկաղտեր ձեր ա-
չերը. անցան այն ժամանակները որ Էմմոն Տանթէսիս ժպտելու
կու գայի այս տան վերնայարկը, ուր իւր ծեր հայրը կը բնակէր .
. . : Այն ժամանակէն 'ի վեր ութսուն թախծալի օրեր անցան, ո-
րոնք իմ և այն ժամանակին մէջ անդունդ մը բացին: Ե՛ս զձեզ
մեղադրեմ, Էմմոն, ես զձեզ ատեմ, սիրելիս, ո՛հ, ոչ, ես ինք-
զինքս կը մեղադրեմ և կ'ատեմ: Ո՛հ, ինչ թշուառ մ'եմ եղեր ես,
դոչեց Մէրսէդէս ձեռները միացընելով և աչերը դէպ 'ի երկինք
վերցընելով, և դեռ անպատիժ մնացեր եմ. . . : Հրեշտակայ
յատուկ եղող երեք երջանկութիւնները, այսինքն հաւատք, անմե-
ղութիւն և սէր ունէի, և ինչ թշուառ մ'եմ եղեր ես որ Աստու-
ծոյ վրայ տարակուսեցայ — :

Մօնթէ-Քրիսթօ քայլ մը մօտեցաւ, և լռութեամբ իւր ձեռքը
անոր երկնցուց:

— Ոչ, բսաւ Մէրսէդէս կամայ մը իւր ձեռքը քաշելով, ոչ,
սիրելիս, մի դպչիք ինձի: Դուք խնայեցիք իմ անձիս, թէև ձեր
պատժածներուն մէջ ամենէն յանցաւորը ես էի: Ուրիշները ատե-
լութեամբ, հարստանալու փափաքով կամ եսութեամբ յանցաւոր
եղան, իսկ ես վատութեամբ: Անոնք փափաք մը ունէին, բայց ես
երկիւղ մը:

«Ոչ, ձեռքս մի սեղմէք, Էմմոն. կ'ըղձամ որ սիրալիր խօսք

մը կը մտածէք, բայց մի՛ ըսէք ինձի, ուրիշի համար պահեցէք
զայն. այսուհետև արժանի չեմ ես: Տեսէք . . . (Մէրսէդէս
իւր երեսը բոլորովին բացաւ), տեսէք, ինչպէս թշուառութիւնը
մաղերս մոխրագոյն ըրաւ. աչերս այնչափ արտասուք թափեցին, որ
մանիշակագոյն երակներով շրջանակուած են, և ձակատս խորշո-
մած է.

«Ընդ հակառակն դուք, Էմմոն, միշտ առոյգ, միշտ գեղեցիկ
և միշտ վեհ էք: Վասն զի դուք հաւատք և յոյժ ունէիք, քանզի
դուք Աստուծոյ վստահեցաք, և Աստուած պաշտպանեց զձեզ. սա-
կայն ես վատութիւն ըրի և ուրացայ զայն, ու Աստուած թողուց
զիս, և այս վիճակիս մէջ ինկայ — :

Մէրսէդէսի արտասուքը սկսան յորդութեամբ հոսիլ:

Իւր սիրտը տխուր յիշատակներով կը ճմլուէր:

Մօնթէ-Քրիսթօ անոր ձեռքը բռնեց և ակնածանօք համբուրեց.
բայց Մէրսէդէս զգաց որ սուրբի մը արձանին մարմարեայ ձեռքը
համբուրելու պէս կոմսին այս համբոյրը ցուրտ էր:

— Անսպիսի նախասահմանեալ կեանքեր կան, շարունակեց
Մէրսէդէս, որոնց մէջ մարդս անգամ մը սխալելով իւր բոլոր
ապագան կը խանգարէ: Զձեզ մեռեալ կը կարծէի, ես ալ պէտք
էի մեռնիլ, քանզի ինչ բանի ծառայեց սրտիս մէջ մշտնջենապէս
ձեր սուգը կրելս, եթէ ոչ՝ երեսուն և ինը տարեկան հասակիս մէջ
յիսուն տարեկան կնոջ նմանիլ:

«Ի՛նչ բանի ծառայեց որ միայն ես զձեզ Ճանչցայ ու իմ զա-
ւակս միայն ազատեցի. պէտք չէի՞ միանգամայն ազատել այն ան-
ձը, որ՝ որչափ և յանցաւոր ըլլար, իմ ամուսինս էր: Այսու
ամենայնիւ թողուցի որ մեռնի. ինչ կ'ըսեմ, ո՛վ Աստուած իմ,
իմ վատ անզգայութեամբս և իմ թշնամանօքս անոր մահուան օգ-
նեցի, չյիշելով և չուզելով իսկ յիշել որ ինձի համար այն երջ-
անկութիւնն ու մատնութիւնը ըրած է:

«Վերջապէս ինչ բանի կը ծառայէ մինչև հոս իմ զաւկիս ըն-
կերանալս, երբ անորմէ կը բաժնուիմ, երբ կը թողում զան որ ա-
ռանձին մեկնի, և երբ այն Ափրիկէին կիսվիչ երկրին կը յանձնեմ
զան:



«Ո՛հ, կը կրկնեմ, ո՛րչափ վատասիրտ եմ եղեր ես, որ իմ սէրս ուրայայ և ուրայողայ պէս՝ պիս շրջապատողներուն թշուառութեան պատճառ կ՚ըլլամ։

— Ոչ, Մէրսեդէս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ոչ, ձեր վրայ ուղղեցած դէշ գաղափարնիդ ուղղեցէք։ Դուք աղնիւ և սուրբ կին մ՚էք, ու ձեր վիշտովը իմ զէնքս խորտակեցիք. սակայն Աստուած, որ աներեւութապէս կը պաշտպաներ զիս, չուզեց որ արձակած շանթս կեցընեմ։ Ո՛հ, կ՚երդնում այն Աստուծոյ առջև, որուն ոտից տակը կը տասը տարիէ ՚ի վեր ամեն օր երկրպագութիւն կ՚ընեմ, որ իմ կեանքս ձեզի համար զոհեցի, և իմ կենացս հետ անոր շղթայեալ խորհուրդներս ալ միատեղ։ Սակայն պարծանօք կ՚ըսեմ, Մէրսեդէս, որ Աստուած ինձի հետ էր, և ուզեց որ ապրիմ։

«Քննեցէք անցեալս, քննեցէք ներկաս, ու չանայեցէք ապագաս դուշակելու, և տեսէք թէ ինչպէս Աստուած ամեն բանի մէջ օգնեց ինձի. կենացս առաջին մասին մէջ ահռելի թշուառութիւններ, անտանելի տառապանքներ կրեցի, սիրելիներս զիս թողուցին, և անձանօթներէ հալածուեցայ. բայց գերութենէ, առանձնութենէ և թշուառութենէ ետքը՝ յանկարծ ազատութեան, և այնպիսի փառաւոր, հիանալի և անսահման հարստութեան մէջ գտնուեցայ, որ սկսայ մտածել թէ Աստուած է զանոնք ինձի ղրկողը որպէս զի իմ խորհուրդներս ՚ի գործ դնեմ։

«Ա՛յն ժամանակէն ինձ այնպէս երեւցաւ թէ այս հարստութիւնը նուիրական պարտք մը կը դնէր վրաս, և այն ժամանակէն ՚ի վեր ամենևին մտքէս անդամ չանցաւ այն կեանքը վարել, որուն քաղցրութիւնը դուք վայելեցիք. ժամ մը անդամ հանդստութիւն չունեցայ, անիծեալ քաղաքները այրելու համար երկնից երեսը շրջող հրային ամպերուն պէս մղուած կը կարծէի ինքզինքս։

«Վտանգաւոր ձամբորդութեան մը համար պատրաստուող բաղդախնդիր նաւապետներու պէս, իմ պարէնս կը պատրաստէի, զէնքերս կը լեցընէի, յարձակման և պաշտպանութեան միջոցները ձեռք կը բերէի. մարմինս ամենախիստ աշխատութեանց, սիրտս ամենէն դառն աղէտից, բազուկս սպաննելու, աչերս թշուառներ տեսնելու, բերանս ամենէն սոսկալի տեսարաններուն մէջ ժպտելու սովորեցուցի։ Ժամանակաւ որչափ և բարեսիրտ, բարեմիտ և մոռացկոտ որ էի, նոյնչափ քինախնդիր, կեղծաւոր, չարասիրտ և կամ թէ ըսեմ նոյնչափ անկարեկիր եղայ խուլ և կոյր բաղդին պէս։

«Այն ատեն առջիս բացուած ասպարէզին մէջ նետուեցայ, անջրպետը անցայ, և նպատակիս հասայ. վայ անոնց, որոնց Ճամբուս վրայ պատահեցայ:

— Իաւական է, ըսաւ Մէրսէտէս, բաւական է, Էտմօն, հաւատացէք որ զձեզ Ճանչնալու միայն կարող եղողը՝ ձեր միտքը նոյնպէս ինքը միայն կրցաւ հասկընալ: Եթէ ձեր Ճամբուն վրայ այդ զձեզ Ճանչցող և ձեր միտքը հասկըցող անձին հանդիպիք, և ասպակիի պէս զան փշրէիք, այն անձը պիտի հիանար ձեր վրայ, Էտմօն: Ինչպէս որ իմ ու անցեալիս մէջ վիհ մը կայ, նոյնպէս վիհ մը կայ ձեր և ուրիշ մարդոց մէջ, և ոչ սակաւ տրտմութեամբ այս բաղդատութիւնը կ'ընեմ. քանզի աշխարհի մէջ բան մը չկայ որ ձեզմէ նախամեծար ըլլայ, բան մը չկայ որ ձեզ նմանի: Հիմա մնաք բարեաւ ըսէք ինծի, Էտմօն, և իրարմէ բաժնուինք:

— Ձեզմէ բաժնուելէս առաջ՝ ըսէք, Մէրսէտէս, ինչ կը խընդրէք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Միայն կը փափաքիմ, Էտմօն, որ զաւակս երջանիկ ըլլայ:

— Աղօթք ըրէք Աստուծոյ, որմէ կախեալ է ամեն մարդոց կեանքը, որ զան կենդանի պահէ, մնացեալը ես կը հոգամ:

— Շնորհակալ եմ, Էտմօն:

— Բայց դո՞ւք, Մէրսէտէս:

— Ես բանի մը պէտք չունիմ. երկու գերեզմաններու մէջ կ'ապրիմ, որոց մէկը Էտմօն Տանթէսինն է, զոր այնչափ կը սիրէի և երկար ատենէ ի վեր մեռած է: Այս խօսքը թառամեալ շրթանցս ալ չվայլեր, բայց անոր յիշատակը տակաւին սրտիս մէջն է, և աշխարհիս մէջ բան մը չկայ որ զայն սրտէս հանել կարենայ: Միւս գերեզմանը այն անձինն է, զոր Էտմօն Տանթէս սպաննեց. այս սպաննութեան համար չեմ մեղադրեր զինքը, բայց մեռեալին համար պէտք եմ աղօթք ընել:

— Երջանիկ պիտի ըլլայ ձեր զաւակը, տիկին, կրկնեց կոմսը:

— Այն ատեն ես ալ չափազանց երջանիկ պիտի ըլլամ:

— Բայց . . . վերջապէս . . . ինչ պիտի ընէք — :

Մէրսէտէս տխրութեամբ ժպտեցաւ:

— Ձեզի ըսեմ թէ այս քաղաքիս մէջ առջի Մէրսէտէսին պէս,

այսինքն աշխատելով պիտի ապրիմ, պիտի չհաւատաք. աղօթելէ զատ բան մը չեմ գիտեր, աշխատելու ալ պէտք չունիմ, քանզի ձեր պահած փոքր գանձը նոյն ձեր նշանակած տեղը գտնուեցաւ. ամեն մարդ պիտի ուզէ գիտնալ թէ ո՛վ եմ ես, ու պիտի հարցընէ թէ ինչ կ'ընեմ, բայց պիտի չկրնայ գիտնալ թէ ինչպէս կ'ապրիմ. Աստուծոյ, ձեր ու իմ գիտնալու բանս է այս:

— Մէրսէտէս, ըսաւ կոմսը, չեմ մեղադրեր զձեզ, բայց ձեր զոհողութեան չափը անցուցիք պ. տը Մորսէրֆի բոլոր հարստութիւնը մերժելով, որուն կէսը ձեր խնայողութեանը և հսկողութեանը համար իրաւամբ ձեզի կը վերաբերէր:

— Ձեր առաջարկելիքը կը գուշակեմ. բայց չեմ կրնար ընդունիլ, Էտմօն. զաւակս պիտի հներէ ինծի:

— Ուստի ես ալ պ. Ալպէր տը Մորսէրֆին հաճելի չեղած բան մը ընելէն պիտի զգուշանամ: Անոր դիտաւորութիւնները կ'իմանամ և ըստ այնմ 'ի գործ կը դնեմ: Բայց եթէ իմ ընելու գործիս հատանութիւն տայ, առանց դժկամակութիւն ցուցընելու պիտի ընդունիմ:

— Գիտէք, Էտմօն, որ այսուհետև կենդանի արարած մը չեմ ես. թէ ինչ պիտի ըլլամ և ինչ պիտի ընեմ, չեմ գիտեր: Գլուխս եկած դժբաղդութիւնները այն աստիճան շփոթեցին զիս, որ կամքս անդամ կորսնցուցած եմ. արծիւին մագիլներուն մէջ եղող ձրնձղուկի մը նման բաղդին ձեռքը կը գտնուիմ: Աստուած չուզեր որ մեռնիմ, քանզի կենդանի կը թողու զիս. եթէ ինձ օգնութիւն մը ղրկէ, անոր կամքը պիտի օրհնեմ, և պիտի ընդունիմ զայն:

— Զգուշացիք, տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, զԱստուած այդպէս չեն պաշտեր: Աստուած կ'ուզէ որ իւր միտքը հասկընանք և այնպէս իւր զօրութիւնը փորձենք. ահա այս պատճառաւ է որ մեզ անձնիշխանութիւն տուած է:

— Ո՛հ, այդպէս մի խօսիք ինծի, դողեց Մէրսէտէս. եթէ կարծէի որ Աստուած անձնիշխանութիւն տուած է ինծի, դիւրութեամբ յուսահատութենէ կ'ազատէի —:

Մօնթէ-Քրիսթօ կնոջ անպայման վիշտն ընկճեալ՝ սակաւ ինչ գունատեցաւ և գլուխը խոնարհեցուց:

— Չէ՞ք հաճիր վերստին տեսնուինք ըսելու, ըսաւ կոմսը իւր ձեռքը անոր երկնցընելով։

— Անշուշտ նորէն պիտի տեսնուինք, պատասխանեց Մէրսէտէս հանդիսաւոր կերպով երկինքը ցուցընելով. կ՚ուզեմ փորձով ցուցընել ձեզ որ տակաւին յոյս կտրած չեմ — ։

Եւ իւր դողդոջուն ձեռքը կոմսին ձեռքը բռնելէն ետև՝ սանդուխին մէջ նետուեցաւ և կոմսին առջևէն անհետացաւ։

Ան ատեն Մօնթէ-Քրիսթօ կամայ մը դունէն դուրս ելաւ և դէպ՚ի նաւահանգիստը դնաց։

Բայց Մէրսէտէս անոր հեռանալը չտեսաւ, թէև ծերունի Տանթէսին փոքր սենեկին պատուհանը կը դանուէր. իւր աչերը ընդարձակ ծովին վրայ շրջելով՝ իւր զաւակը տանող նաւը կը փնտռէր։

Ստոյգ է որ իւր ձայնը ակամայ կը մրմռար. — Էտմո՛ն, Էտմո՛ն, Էտմո՛ն — ։

Փոքր Էտուարի մահուանէն եաքը Մօնթէ-Քրիսթոյի սիրտը մեծ փոփոխութիւն մը կրեր էր։ Հեռաւոր և դժուարին ճամբաներով վըրէժխնդրութեան դաղաթը հասնելով, լերան միւս կողմը տարակուսանայ անդունդը տեսեր էր։

Բայց յայսմանէ՝ Մէրսէտէսի հետ ըրած խօսակցութիւնը իւր սրտին մէջ այնչափ յիշատակներ արթնցուցեր էր, որոնց վրայ պէտք էր երկար մտածել. բայց կոմսին բնութիւնն ունեցող մարդ մը չէր կրնար երկար ատեն մելամաղձութեան մէջ մնալ, որ դուեհիկ մտքերու կրնայ ճնշաս մը չպատճառել յայտնի տարօրինակութիւն մը տալով անոնց, բայց բարձր մտքերու մահ կը պատճառէ։

Կոմսը կը մտածէր թէ ինքզինքը մեղադրելու համար պէտք էր որ իւր հաշուոյ մէջ սխալմունք մը սպրդած ըլլար։

— Անցեալը դէշ կը նկատեմ, կ՚ըսէր, և չեմ կրնար այսպէս խաբուիլ։ Ի՛նչ, միթէ նպատակս անխորհո՞ւրդ նպատակ մ՚էր, միթէ տասը տարիէ՛ի վեր բռնած ճամբաս կեղծ էր, և միթէ ժամ մը բաւական չէր ճարտարապետին ապացուցանելու համար թէ իւր բռնած յուսալիր գործը՝ եթէ ոչ անկարելի՝ գոնէ ուղիղ չէր։


«Ոչ, չեմ ուզեր այսպիսի դաղափարի մը վրայ կենալ, որ կրնայ խենթեցընել զիս։

«Ա՛յս խորհրդածութեանս մէջ կը տեսնեմ որ անցեալին բուն յարգը աղէկ չեմ ճանչցած, վասն զի այն անցեալը հորիզոնին միւս ծայրը կը տեսնեմ վերստին։

«Իրօք ժամանակը ո՛րչափ յառաջանայ, այնչափ անցեալը կ՚անհետի՝ ճանապարհորդի մը իւր ետին թողուցած դաշտերուն նման։

«Երազի մէջ վիրաւորեալ մարդոյ պատահածը ինձ ալ կը պատահի. անոնք իրենց վէրքը կը տեսնեն և կ՚ըզգան, բայց երբ ընդունելին չեն յիշեր։

«Ա՛ղէ, ո՛վ մարդ վերածնեալ, հարուստ անօրինակ, քնացող զարթուցեալ, դանդաչող զօրաւոր և միլիոնատէր անյաղթելի, վայրկեան մը թշուառ և սովալլուկ կենայ աղէտալի պատկերը կրէ, անցիր վերստին այն ճամբաներէն, ուր ձակատագիրը զքեզ մղեց, ուր թշուառութիւնը զքեզ տարաւ, ուր յուսահատութիւնը զքեզ ընդունեց, աղամանդները, ոսկին ու երջանկութիւնը խիստ կը փայ-



ԳԼՈՒԽ ԺԴ

ԱՆՑԵԱԼԸ

Կոմսը վիրաւորեալ սրտիւ մեկներ էր այն տունէն, ուր Մէրսէտէսը թողուցեր էր հաւանականաբար մէկ մ՚ալ զան չտեսնելու համար։

լին այսօր այն Հայելիին ապակիներուն վրայ, որու մէջ Մօնթէ-Քրիսթօ զՏանթէսը կը տեսնէ. պահէ այն ադամանդները, ջնջէ այն ոսկին, նսեմացուր այն փառքերը, և դնա իրը Հարուստ՝ աղքատը դիտէր, իրը ազատ՝ բանտարկեալը տես և իրը կենդանացեալ՝ դիակը դիտէ — :

Այս խօսքերը ըսելով Մօնթէ-Քրիսթօ քէսըրի փողոցը զարկաւ :

Նոյն փողոցն էր այն, ուրկից քսան և չորս տարի առաջ մունջ և գիշերային պահապանաց խումբ մը զինքը տարեր էին :

Այն զուարթ և բազմամարդ տուները նոյն դիշերը սխուր, անձայն և փակուած էին :

— Այսու ամենայնիւ ասոնք այն տուներն են, մրմնաց Մօնթէ-Քրիսթօ. միայն թէ այն ատեն գիշեր էր, և այսօր պայծառ ցորեկ է. ամեն բան այսպէս պայծառ և զուարթ երևցընողը արեւն է — :

Սէն-Լորան փողոցէն նաւամատոյցը իջաւ, և դէպ 'ի Օտարահամբը յառաջացաւ. իր բանտարկութեան իրիկունը նաւահանգստին այս կողմէն գինքը նաւակը մտցուցեր էին :

Կտաւէ հովանոցով շրջադայութեան նաւակ մը նոյն միջոցին անկէ կ'անցնէր :

Մօնթէ-Քրիսթօ նաւավարը կանչեց, որ առատաձեռն օտարական մը գուշակող նաւավարաց արտօրնօքը իսկոյն դէպ 'ի կոմսը թիավարեց :

Օդը դեղեցիկ էր և նաւադնացութիւնը զուարճալի :

Արևը Հորիզոնին վրայէն ալեաց մէջ կ'իջնէր, որունք անոր բոցերէն դողդես պիտի այրէին :

Հայելիի պէս միացած ծովը տեղ տեղ վէտ վէտ կ'ըլլար ձուկերու ոստիւններէն, որունք պահուած թշնամիէ մը հալածուելով ջուրէն դուրս կը ցատկէին ուրիշ տարրի մէջ իրենց ազատութիւնը գտնելու համար :

Վերջապէս Հորիզոնին վրայ սպիտակ և վայելուչ որորներու պէս դէպ 'ի Մարթիկ գացող որսորդաց մակոյկներուն, կամ Քորսիոյ և կամ Սպանիոյ համար բեռնաւորեալ վաճառականի նաւերուն անցնելը կը տեսնէին :

Այս պայծառ երկնից, շնորհալի շրջաններ ընող այս մակոյկներուն, և ծովին մակերևոյթը ոսկեզոյն երևցընող արևուն զուարճութիւնը վայելելու տեղ՝ կոմսը իր վերարկուին մէջ փաթթուած՝ քսան և չորս տարի առաջ իր սոսկալի Ճամբորդութեան մանրամասն պարագաները մի առ մի իր միտքը կը բերէր. Քաթալանի մէջ վառ Ճնացած միակ լոյսը, Իֆ դղեակին երևոյթը, որ ուր տարուիլը լրեն կ'իմացընէր, ծովը նետուիլ ուզած ատենը գինակիրներուն հետ ըրած մրցումը, անոնցմէ յաղթուելով իր յուսահատութիւնը և ատրճանակնուն բունին ծայրը սառած օղակի նման իր քունքին կոթնցընելնին սոսկումով կը յիշէր :

Ամառուան չորցած այն աղբիւրներուն պէս, որունք աշնան գումարուած ամպերէն սակաւ առ սակաւ կը խոնաւնան և կ'ըսկսին կաթիլ առ կաթիլ ըղխիլ, Մօնթէ-Քրիսթոյ կոմսն ալ սակաւ առ սակաւ զգաց իր կուրծքին մէջ ցամքած այն հին լեղիին կաթիլ առ կաթիլ ըղխիլը, որ ժամանակաւ Էտմոն Տանթէսի սրտին մէջ յորդեր էր :

Իրեն համար ոչ երկինքը պայծառ կ'երևէր, ոչ մակոյկները շնորհալի և ոչ արևը շքեղ. այլ երկինքը սպլի քողով ծածկուեցաւ և Իֆ դղեակ կոչուած սևագէմ հսկային երևոյթը յանկարծ մահացու թշնամիի մը ուրուականին երևոյթին նման իր բոլոր մարմինը սարսռացուց :

Նաւակը Իֆ դղեակին առջև հասեր էր :

Կոմսը բնազդմամբ մինչև նաւակին ծայրը քաշուեցաւ :

Նաւավարը իր խիստ քաղցր ձայնովը պարապ տեղը կ'ըսէր անոր :

— Հասանք, պարոն — :

Մօնթէ-Քրիսթօ յիշեց որ այս նոյն տեղը և նոյն ժայռին վրայ պահապանները բռնութեամբ գինքը դուրս հաներ էին և սուլնի մը ծայրը իր կողերուն խրելով ստիպեր էին գինքը որ այն սանդուխէն վեր ելնէ :

Ժամանակաւ Ճամբան խիստ երկար երևցեր էր Տանթէսին. բայց այս անգամ Մօնթէ-Քրիսթոյի շատ կարճ երևցաւ. թիակին ամեն մէկ հարուածը ծովուն խոնաւ փոշիին հետ անհամար խորհուրդներ և յիշատակներ ցայտեցուցեր էր իր մտքէն :

Յուլիսի Յեղաշրջումէն յետ վեր Ի՜ֆ դղեակին մէջ բանտարկեալ չէր մնացեր. պահապանները միայն մաքսանենգութիւնը արդիլելու համար հոն կը կենային. դռնապան մը դրան առջև հետաքրքիր այցելուներու կ՚ըսպասէր. որ հետաքրքրութեան յիշատակարան դարձող այս ահաւոր բանտարանը անոնց ցուցընէ:

Թէպէտ այս ամէն տեղեկութիւնները իրեն տուին, սակայն երբ կոմսը գմբէթին տակը մտաւ, երբ մութ սանդուխէն վար իջաւ, երբ զինքը ստորերկրեայ բանտերը տարին, զորոնք տեսնել ուզեր էր, յուրտ գետնութիւն մը իւր ձակատը պատեց, որուն սառած քրտինքը մինչև իւր սիրտը յորդեց:

Կոմսը հարցուց թէ արդեօք Թագաւորութեան Վերահաստատութեան ժամանակին հին բանտապահներէն մնացող կա՞ր, ամենքն ալ կամ պաշտօնէ քաշուած էին և կամ ուրիշ պաշտօնի մէջ մտած էին:

Զինքը պտըտցընող դռնապանը 1830էն ՚ի վեր հոն կը գտնուէր:

Իւր բուն ստորերկրեայ բանտը տարաւ զինքը:

Կոմսը վերստին տեսաւ իւր բանտին օդամուտ նեղ պատուհանէն ներս թափանցող ժպտուն լոյսը, անկողինը եղած տեղը, զոր այն ժամանակէն վերցուցեր էին, և անկողնոյն ետին աբբայ Ֆարիայի բացած ծակը, որ թէպէտ խցեր էին, բայց հոն գրուած նոր քարերէն տակաւին յայտնի էր:

Մօնթէ-Քրիսթօ իւր ոտից ոյժը կորնչուցեր էր. անյենարան փայտեայ աթոռ մը առաւ և նստաւ:

— Միրապոյի բանտարկութենէն զատ այս դղեակին վրայ ուրիշ պատմութիւն մը կը պատմուի, հարցուց կոմսը. աւանդական պատմութիւն մը կա՞յ այս աղէտալի բնակութեանց վրայ, ուր կը տարակուսի մարդ և չկրնար հաւատալ թէ երբէք մարդիկ կենդանի էակ մը բանտարկած ըլլան:

— Այո՛, պարոն, ըսաւ դռնապանը, և ինչո՞ւ այս բանտին վրայ Անթուան բանտապահը ինձ պատմութիւն մը պատմեց —:

Մօնթէ-Քրիսթօ սարսռաց. Անթուան բանտապահը իւր բանտապահն էր:

Կոմսը զրեթէ անոր անունը և դիմայ գծագրութիւնը մոռցեր էր. բայց երբ անունը լսեց, կատարեալ յիշեց զան մօրուքով շրջապատեալ դէմքովը, թուխ բաճկոնովը և բանալեաց տրձակովը, որոնց հնչիւնը կարծեր թէ տակաւին կը լսէ:

Կոմսը գլուխը դարձուց և կարծեց թէ զան կը տեսնէ ներբակլին ստուերին մէջ, որ դռնապանին ձեռքը վառուած ջահին լոյսէն աւելի թանձր կ՚երևէր:

— Պարոնը կը հաճի՞ որ այն պատմութիւնը պատմեմ, հարցուց դռնապանը:

— Այո՛, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, պատմեցէք —:

Եւ իւր բուն պատմութիւնը ուրիշի մը բերանէն լսելու վախնալով ձեռքը կուրծքին վրայ դրաւ որ սրտին ուժգին բաբախումը զսպէ:

— Պատմեցէք, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ:

— Այս ստորերկրեայ բանտը, կրկնեց դռնապանը, ասկէ շատ տարի առաջ բանտարկեալ մը կը բնակէր, որ ըստ երևութիւն խիստ վտանգաւոր մարդ մ՚է եղեր մանաւանդ հնարագէտ ըլլալուն համար: Իրեն ժամանակակից ուրիշ բանտարկեալ մը կար, բայց իրեն պէս չար չէր, այլ խեղճեցած ողորմելի քահանայ մը:

— Խե՛ղճ մը, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ. և ինչ տեսակ խեղճութիւն ունէր:

— Իւր ազատութեանը համար միլիոններ կ՚առաջարկէր —:

Մօնթէ-Քրիսթօ իւր աչերը դէպ ՚ի երկինք վերցուց, բայց երկինքը չտեսաւ. երկնից և իւր մէջ տեղը քարերու քող մը կար:

— Բանտարկեալները կրնային գիրար տեսնել, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Ո՛հ, ոչ, պարոն, մանաւանդ արդիլուած էր. բայց բանտարկեալները մէկ բանտէն միւսը ձամբայ մը բանալով, այն արգելքը ՚ի դերեւ հանեցին:

— Երկու բանտարկեալներէն ո՞րը ձամբան բացաւ:

— Ո՛հ, անշուշտ երիտասարդը, ըսաւ դռնապանը, երիտասարդը հնարագէտ և ուժեղ էր, իսկ ողորմելի աբբան ծեր և տկար. ասկէ զատ՝ անոր խելքը կատարեալ չէր որ այնպիսի բան մը խորհէր:

— Այո՛ր մարդիկ . . . , մրմռաց Մօնթէ-Քրիսթօ:

— Այսպէս ուրեմն, շարունակեց դռնապանը, երիտասարդը ձասքայ մը բացաւ, ինչո՞վ, չգիտցուիր, բայց բացաւ, և ապացոյցը ահա տեսէք, դեռ ծակին հետքը կայ —։

Եւ ջահը պատին մօտեցուց։

— Ո՛հ, այո՛, ստուգիւ, ըսաւ կոմսը իր սրտի յուզմունքէն նուաղած ձայնով մը։

— Հետեւաբար երկու բանտարկեալները իրարու կը հաղորդակցէին. ո՞րչափ ատեն տեւեց այս հաղորդակցութիւնը, չգիտցուիր։ Վերջապէս օր մը ծեր բանտարկեալը հիւանդացաւ և մեռաւ. գուշակեցէք ի՞նչ ըրաւ երիտասարդը, հարցուց դռնապանը խօսքը ընդմիջելով։

— Ըսէք։

— Մեռեալը իր սենեակը տարաւ. իր անկողնոյն վրայ պառկեցուց զան և անոր երեսը պատին դարձուց. ինքը ծերին բանտը դարձաւ, ծակը գոցեց, և մեռեալին պատանքին մէջ սահեցաւ։ Երբէք այսպիսի խելք մը լսա՞ծ էիք —։

Մօնթէ-Քրիսթօ իր աչերը դոցեց. դիակին պաղութենէն սառած այն հաստ կտաւը իր երեսին դպչած միջոցին՝ իր զգացած բոլոր ապրեցութիւնները վերստին սկսեր էր զգալ։

— Մտիկ ըրէք ինչ էր անոր նպատակը, շարունակեց դռնապանը. կը կարծէր թէ մեռեալները Իֆ դղեակին մէջ կը թաղուին, և ոբովհետև գիտէր թէ բանտարկելոց համար դաղաղի ծախք չեն ըներ, կը յուսար իր ուսերովը հողը վերցընելու. սակայն դժբաղդաբար Իֆ դղեակին մէջ սովորութիւն մը կար, որ իր նպատակը՝ի դերև կը հանէր. մեռեալները չէին թաղեր, այլ բաւական կը համարէին անոնց ոտքին դնտակ մը կապել և այնպէս ծովը նետել զանոնք. այսպէս ըրին իրեն ալ։

«Բանտարկեալը վերնադոյն յարկին վրայէն ջուրին մէջ նետեցին. հետևեալ օրը ձշմարիտ մեռեալը իր անկողնոյն մէջ գտան, և անկէ ամեն բան դուշակեցին. վասն զի դիտպատիկները, որոնք մինչև այն ատեն չէին համարձակեր ըսել, հաստատեցին թէ բանտարկեալին մարմինը նետած ատենին՝ ահռելի ձիչ մը լսեր էին, որ իսկոյն իրեն հետ ջուրին մէջ կորսուեր էր —։

Կոմսը դժուարաւ շունչ կ'առնուր. քրտինքը ճակատէն կը վազէր, և սիրտը անձկութեամբ կը սեղմուէր։

— Ո՛հ, մրմռաց Մօնթէ-Քրիսթօ. իմ զգացած տարակոյս մոռացութեան սկիզբը մ'էր. բայց ոչ, սիրտս վերստին հոս կը հաստատի, և վրէժխնդրութեան ծարաւի կ'ըլլայ։ — Եւ այնուհետև այն բանտարկեալին խօսքը չեղաւ, հարցուց կոմսը։

— Ամենևին. վասն զի կը հասկընաք անշուշտ որ երկուքին մէկմէկ եղած է. գրեթէ յիսուն ոտք բարձրութենէ նետուած ըլլալով կամ երեսի վրայ ինկած և իսկոյն մեռած է։

— Ոչ, ոտքի վրայ ինկած է, քանզի քիչ մը առաջ ըսիք թէ անոր ոտից դնտակ մը կապեցին։

— Եւ կամ ոտքի վրայ ինկած է, կրկնեց դռնապանը, և այն ատեն դնտակին ծանրութիւնը գլխքը ծովուն խորը տանելով, ողորմելի մարդը հոն մնացած է։

— Կը ցաւիք անոր վրայ։

— Ա՛յո, թէև իր տարրին մէջ գնայ։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք։

— Տարաձայնութիւն մը կար թէ այն թշուառ մարդը իր ժամանակին մէջ իբր պոնապարդեան բանտարկուած ծովային պաշտոնատար մ'էր։

— Ո՛վ ձշմարտութիւն, մրմռաց կոմսը, կոհակաց և բոցերուն վրայ ծփալու համար ստեղծած է գքեզ Աստուած։ Ուրեմն խեղճ նաւաստին միայն քանի մը պատմողներուն յիշողութեան մէջ կենդանի մնացած է, անոր սոսկալի պատմութիւնը կրակարանի անկիւնները կը պատմուի, և ամեն մարդ կը սոսկայ երբ անոր անունները կը պատմուի, և ամեն մարդ կը սոսկայ երբ անոր անջրպետը ձեղքելով խորունկ ծովուն մէջ ընկղմիլը կը լսէ։ — Անոր անունը ի՞նչ էր, հարցուց կոմսը բարձր ձայնիւ։

— Յիդ թիւով կը կոչուէր, պատասխանեց պահապանը։

— Ո՛վ Վիլֆոր, Վիլֆոր, մրմռաց Մօնթէ-Քրիսթօ, ո՛րչափ անգամ այս անունով կոչած ես գիս արդեօք երբ իմ ուրուականս քու քննադատութեանդ ժամերուն մէջ գքեզ կը տանջէր։

— Պարոնը կը հաձի իր շրջագայութիւնը շարունակել, հարցուց դռնապանը։

— Այո՛, մանաւանդ եթէ խեղճ արբային սենեակը ցուցընէք ինձ։

— Ո՛հ, թիւ 27դին սենեակը։

— Այո՛, թիւ 27դին —, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ։

Իրեն այնպէս երեւցաւ թէ արբայ Ֆարիային ձայնը կը լսէ, երբ ինքը անոր անունը հարցընելով՝ արբան պատին միւս կողմէն այս թիւը պոռացեր էր իրեն։

— Եկէք ուրեմն։

— Կեցիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, վերջին անգամ մ'ալ այս բանտին ամէն կողմերը դիտեմ։

— Աղէկ յարմարեցաւ, ըսաւ առաջնորդը, միւսին բանալին մոռացեր եմ առնելու։

— Գացէք ուրեմն բերելու։

— Առէք ջահը։

— Ոչ, հետերնիդ տարէք զայն։

— Բայց մութ տեղը պիտի մնաք։

— Մթութեան մէջ կը տեսնեմ ես։

— Ի՞նչ կ'ըսէք, ան ալ այսպէս է եղեր։

— Ո՞վ։

— Թիւ 34ը. կ'ըսեն թէ այնչափ սովորած էր մթութեան, որ իր բանտին ամէնէն մութ կողմը աստղ մը կրնար տեսնել։

— Տասը տարուան մէջ հազիւ թէ այդ սովորութիւնը ստացաւ —, մրմռաց կոմսը։

Առաջնորդը ջահովը դուրս ելաւ։

Կոմսը ստոյգ ըսեր էր. մթութեան մէջ քանի մը մանրերկրորդ մնալէն ետեւ՝ ամէն բան լոյսի մէջ եղածի պէս որոշեց։

Ան տեղն իր բոլորտիքը դիտեց. և իր բանտին ամէն կողմը ճանչցաւ։

— Այո՛, ըսաւ, ահա այն քարը որու վրայ կը նստէի. ահա պատին վրայ մնացած իմ կռնբնցուցած ուսերուս նշանը, ահա իմ ձախատէս հօսած արիւնին հետքը, երբ օր մը պլուխս պատին զարնելով ուզեցի ջախջախել զայն. . . . Ո՛հ, կը յիշեմ այս թուահաշիւներն ալ, որոնք օր մը հօրս և Մէրսէտէսին տարիքը

հաշուելու տեղնս ըրի, որպէս զի դիտնամ թէ հայրս կենդանի և սիրականս աղատ պիտի գտնեմ արդեօք. . . . : Ահա հաշիւը ըրեր եմ՝ քիչ մը տեղ յուսացի. . . . սակայն անօթութիւնը և անհատատարմութիւնը հաշուի դրած չէի —։

Եւ կոմսը սկսաւ դառնապէս ծիծաղիլ։

Իր երազի մէջ կը տեսնէր որ իւր հայրը գերեզման կը տանէին. . . և Մէրսէտէս դէպ 'ի տաճարը կը քալէր։

Միւս պատին վրայ եղած արձանագրութիւն մը իւր ուշադրութիւնը գրաւեց։

«ԱՍՏՈՒԱԾ ԻՄ, կարդաց Մօնթէ-Քրիսթօ, ԽԵԼՔՍ ՈՂՋ ՊԱՀԷ»։

— Ո՛հ, այո՛, գոչեց կոմսը, ահա էր իմ վերջին ժամանակներուս միակ աղօթքը. այնուհետեւ ազատութիւն չէի խնդրեր, այլ կը թնդրէի որ խելքս չկորսընցնեմ. քանդի կը վախնայի որ չխենթենամ և ամէն բան չմոռնամ։ Աստուած իմ, դուն իմ խելքս պահեցիր և ամէն բան յիշեցի. շնորհակալ եմ, Աստուած իմ, շնորհակալ եմ —։

Ան միջոցին՝ ջահին լոյսը պատերուն զարկաւ. դռնապանը վար կ'իջնէր։

Մօնթէ-Քրիսթօ զան դիմաւորեց։

— Եւեւէս եկէք —, ըսաւ դռնապանը, և առանց վեր ելնելու՝ սեղմկրկեայ ձամբէ մը ուրիշ բանտ մը տարաւ։

Այս բանտին մէջ ալ կոմսին մտայ անթիւ մտածութիւններ ներկայացան։

Իւր աչքը առջի զարկած բանը պատին վրայ գծուած միջօրէական շրջանաձեւ եղաւ, որուն միջոցաւ արբայ Ֆարիան օրուան ժամերը կը համրէր, այնուհետեւ անկողնոյն մնայորդները տեսաւ, որուն վրայ ողորմելի բանտարկեալը մեռեր էր։

Առանք տեսնելով իւր բանտին մէջ ղպայած սրտի անձկութեանց տեղ՝ երախտագիտութեան քաղցր զգացում մը կոմսին սիրտը ուռեցուցեր էր, և արտասուաց երկու կաթիլներ իւր աչերէն վար հոսեցան։

— Ահա հոս կը բնակէր խենթ արբան, ըսաւ առաջնորդը, և այս ձամբայէն երիտասարդը զան տեսնելու կու գար —։

Եւ այս կողմէն տակաւին բայց մեացած ստորերկրեայ Ճամբուն ծակը Մօնթէ-Քրիսթոյին ցուցուց։

— Քարին գոյնէն, յաւելցուց դռնապանը, գիտուն մը հաստատեց թէ երկու բանտարկեալները գրեթէ տասը տարի իրարու հետ կը հաղորդակցէին։ Խեղճ մարդիկ. այն տասը տարիներուն մէջ ուրչափ ձանձրացած պիտի ըլլան —։

Ցանթէս իւր ծոցէն քանի մը Լուի ոսկի հանեց, և ձեռքը այն մարդուն երկնցուց, որ առանց գլինքը Ճանչնալու երկրորդ անգամ իւր վրայ կը յաւէր։

Դռնապանը ընդունեց զանոնք կարծելով թէ քանի մը մանր ըստակներ են անոր տուածները, բայց Ջահին լուսովը այցելուին իրեն տուած դումարին արժողութիւնը տեսնելով.

— Պարոն, ըսաւ, սխալեցաք։

— Ի՛նչպէս։

— Ձեր տուածները ոսկի են։

— Գիտեմ։

— Ի՛նչպէս, գիտէք կ'ըսէք։

— Այո՛։

— Ուրեմն առանց խիղճ ընելու կրնամ պահել զանոնք։

— Այո՛ —։

Դռնապանը ապշութեամբ Մօնթէ-Քրիսթոյին երեսը նայեցաւ։

— Առաքինութիւն, ըսաւ կոմսը Համլէթի պէս։

— Պարոն, կրկնեց դռնապանը չհամարձակելով իր բաղդատութեան հաւատալ, պարոն, ձեր առատաձեռնութիւնը ինձ զարմանալի կը թուի։

— Ամենևին մի՛ զարմանաք, բարեկամ. ես ժամանակաւ նաւաստի մ'էի, և ձեր պատմութիւնը խիստ ազդեց ինծի։

— Ուրեմն, պարոն, դուք որ այդչափ առատաձեռն էք, արժանի էք որ ես ալ բան մը նուիրեմ ձեզ։

— Ի՞նչ պիտի նուիրէք, բարեկամ. ծովային խեցիները, յարդի դործուածները, ընորհակալ եմ։

— Ոչ, պարոն, ոչ, հիմա պատմած պատմութեանս վերաբերեալ բան մը։

— Ստո՞ղ կ'ըսէք, դոչեց կոմսը աշխուժիւ, և ինչ բան է այդ։

— Մտիկ ըրէք. ես ինքնին կ'ըսէի թէ տասն և հինգ տարի բանտարկուած ծնացողի մը սենեկին մէջ միշտ բան մը կը գտնուի, և սկսայ պատերը վնտռել։

— Ա՛հ, դոչեց Մօնթէ-Քրիսթօ աբբային դաղտնի պահանոցը յիշելով, իրօք ինչ գտաք։

— Ամենափ փնտռեցի, շարունակեց դռնապանը, որ անկողնոյն գլխի կողմը և կրակարանին տակը ձայն հանող խոռոչ մը գտայ։

— Այո՛, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, այո՛։

— Քարերը վերցուցի, և ինչ գտնեմ. . . ։

— Չուանէ սանդուխ մը, գործիները, դոչեց կոմսը։

— Ինչպէս գիտէք, հարցուց դռնապանը զարմանքով։

— Ձեմ գիտեր, բայց կը գուշակեմ, ըսաւ կոմսը. բանտարկելոց պահանոցներուն մէջէն սովորաբար այս տեսակ բաները կը գտնուին։

— Այո՛, պարոն, չուանէ սանդուխ մը և գործիները գտայ։

— Եւ տակաւին պահած էք զանոնք, դոչեց Մօնթէ-Քրիսթօ։

— Ոչ, պարոն, խիստ հետաքրքրական բաներ ըլլալնուն՝ այցելուներու ծախեցի զանոնք. բայց ուրիշ բան մը պահած եմ։

— Ինչ բան, հարցուց կոմսը անհամբերութեամբ։

— Կտաւի շերտերու վրայ գրուած դրքի պէս բան մը։

— Ո՛հ, դոչեց Մօնթէ-Քրիսթօ, պահա՞ծ էք զայն։

— Այո՛։

— Գացէք ինծի բերէք այն դիրքը, բարեկամ, ըսաւ կոմսը, և եթէ գուշակածս է, անհոգ եղիք։

— Հիմա կու գամ, պարոն —։

Եւ դռնապանը դուրս ելաւ։

Այն ատեն կոմսը գնաց ջերմեռանդութեամբ այն անկողնոյն մնացորդներուն առջևը ծնկան վրայ եկաւ։

— Ո՛վ իմ երկրորդ հայրս, ըսաւ, դուն որ ինծի ազատութիւն, դիտութիւն և հարստութիւն շնորհեցիր, դուն որ դերադոյն արարած մ'էիր, եթէ դերեզմանիդ խորութենէն կրնաս տակաւին երկրի վրայ մնացողներուն ձայնը լսել, եթէ հոդւոյդ կենդանական մէկ

մասը տակաւին կը ծփայ այս տեղերուն վրայ, ուր ղիրար Ճանչ-
ցանք և շատ նեղութիւններ կրեցինք, ոմ աղնիւ սիրտ, դերազանց
հանճար, կ'երդմնցընեմ ղքեզ, յանուն այն հայրական սիրոյն,
զոր ինձ շնորհեցիր, և այն որդիական ակնածութեան, որ ես քեզ
ուխտեցի, մէկ խօսքով, մէկ նշանով կամ ուր և է յայտարարու-
թեամբ մը ջնջէ սրտիս մէջէն տարակուսանաց ամպեալ մասը,
քանզի եթէ այս տարակոյսս չփարատի, խղճի խայթ մը պիտի ըլ-
լայ այն ինծի — ։

Կոմսը ղլուխը խոնարհեցուց և ձեռքը միացուց ։

— Ահա, պարոն —, ըսաւ ձայն մը իւր ետեւէն ։

Մօնթէ-Քրիսթօ սարսռաց և երեսը անոր դարձուց ։

Դռնապանը կտաւի այն շերտերը կը ներկայացընէր անոր. որոնց վրայ աբբայ Ֆարիա իւր դիտութեան բոլոր դանձերը թափեր էր ։ Այս ձեռագիրը Իտալիոյ թագաւորութեան վրայ գրուած աբբայ Ֆարիայի մեծ գործն էր ։

Կոմսը շտապաւ ձեռքը առաւ զայն, և ամենէն առաջ անոր վեր-
նագիրը իւր աչքին զարնելով կարդաց.

«Վիշապին ակռաները պիտի խլես, և առիւծները ոտքիդ տակը պիտի կոխես, ըսաւ Տէրը» ։

— Ո՛հ, գոչեց կոմսը, ահա իւր պատասխանը, շնորհակալ եմ, հայր իմ, շնորհակալ եմ — ։

Եւ իւր ծոյէն փոքր գրապան մը հանելով, որուն մէջ հազար ֆրանքնոց լումայատոմսեր կային, ըսաւ.

— Առէք այս գրապանը ։

— Ինծի՞ կը նուիրէք զայն ։

— Այո՛, բայց այն գաշամբ որ մնկնելէս ետեւ անոր մէջը պի-
տի նայիք — ։

Եւ այն գտնուած գիրքը, որ իրեն համար թանկագին գանձ մ'էր, իւր կուրծքին մէջ պահելէն ետեւ՝ ստորերկրեայ բանտերէն դուրս նետուեցաւ և նաւակին մէջ մտնելով

— Մարսիլիա քաշէ —, ըսաւ ։

Նաւակը հեռանալու ատեն՝ կոմսը իւր նայուածքը այն տխուր բանտարանին վրայ յարելով

— Վա՛յ անոնց, ըսաւ, որոնք գիս այս մութ բանտին մէջ բան-
տարկեցին, և վա՛յ անոնց, որոնք բանտարկուած ըլլալս մոռցան — ։

Քաթալանցւոց առջևէն անցնելու ատեն՝ կոմսը երեսը դարձուց, և գլուխը իւր վերարկուին մէջ փաթթելով՝ կնոջ մը անունը մրմռաց ։

Ցաղթութիւնը կատարեալ էր. կոմսը երկու անգամ տարակու-
սանաց յաղթեր էր ։

Գրեթէ սիրով լցուած դորովալիր զգացմամբ արտասանած ա-
նունը Հայտէինն էր ։

Մօնթէ-Քրիսթօ ցամաք ելնելով դէպ 'ի դերեզմանատունը գը-
նաց, ուր գիտէր որ Մորէլը պիտի գտնէ ։

Կոմսն ալ տասը տարի առաջ այս դերեզմանատան մէջ պարապ տեղը դերեզման մը փնտռեր էր ։ Միլիոններով Գաղղիա վերա-
դարձողը չէր կրցեր անօթութենէ մեռած իւր հօրը դերեզմանը գտնել ։

Մորէլ թէև խաչ մը դնել տուած էր անոր վրայ, բայց այն խաչը փայտեայ էր, և դերեզման փորողը կրակը նետելով այրեր էր զայն, ինչպէս ամեն դերեզմանատանց մէջ գտնուած հին խաչերը դե-
րեզման փորողները կ'այրեն ։

Բարի վաճառականը աւելի բաղդաւոր եղեր էր. իւր զաւակաց բազկաց մէջ մեռնելով, անոնք զինքը դերեզմանատունը տարեր, և իրմէ երկու տարի առաջ մեռած կնոջը քով տեղաւորեր էին ։

Երկու մարմարեայ մեծ քարեր, որոնց վրայ իրենց անունը արձանագրուած էր, իրարու քով գրուած էին երկաթ վանդակներով փակուած և չորս նոճիներէ հովանաւորած շրջապատի մը մէջ ։

Մաքսիմիլիէն այս ծառերէն մէկուն կեռնընած՝ այն երկու դե-
րեզմաններուն վրայ իւր մթադնեալ աչերը յարեր էր ։

Իւր վիշտը այնչափ խորունկ էր որ դողդոջ խելքը պիտի յրուէր ։

— Մաքսիմիլիէն, ըսաւ կոմսը, պէտք չէ հոգ նայիլ, այլ հոն —։

Եւ երիվինքը յուզուց ։

— Մեռեալները ամէն կողմն են, ըսաւ Մորէլ. Բարիզէն մեկնելու առեննիս դուք այսպէս չըսիք ինծի։

— Մաքսիմիլիէն, ըսաւ կոմսը, Ճամբորդութեան մէջ ուղեցիք քանի մը օր Մարսիլիա մնալ, միշտ նոյն փափաքը ունիք։

— Կոմս, փափաք ըսուած բանը չունիմ ես. միայն թէ ինձ այնպէս կ'երևի թէ ուրիշ տեղերէն աւելի Մարսիլիոյ մէջ պիտի կրնամ դիւրութեամբ սպասել։

— Աւելի աղէկ, Մաքսիմիլիէն, վասն զի ես ձեզմէ պիտի բաժնուիմ։ և դուք ձեր խօսքը ինծի տուած էք, այնպէս չէ՞։

— Ո՛հ, տուած խօսքս պիտի մոռնամ, կոմս։

— Ոչ, չպիտի մոռնաք, քանզի ամէն բանէ առաջ դուք պատուակիր մարդ մ'էք, Մորէլ, քանզի դուք երդում ըրիք և դարձեալ երդում պիտի ընէք։

— Ո՛հ, կոմս, դթացէք ինծի. քանզի խիստ ողորմելի եմ ես։

— Ձեզմէ աւելի ողորմելի մէկը տեսայ Մորէլ։

— Անկարելի է։

— Ափսոս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, խեղճ մարդկութեան եսութեանց մէկն է որ ամէն մարդ իւր քովը լացող և հեծող թշուառէն աւելի թշուառ կը կարծէ ինքզինքը։

— Աշխարհիս մէջ իւր սիրածը և փափաքածը կորնսընդող մարդէն աւելի թշուառ մէկը կրնայ ըլլալ։

— Մտիկ ըրէք, Մորէլ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, և վայրկեան մը աղէկ ուշադրութիւն ըրէք ըսածիս. մարդ մը ձանչցայ, որ ձեզի պէս իւր երջանկութեան բոլոր յոյսերը կնոջ մը վրայ դրած էր։ Ան մարդը երիտասարդ էր, ծեր հայր մը ունէր զոր կը սիրէր, և իւր նշանածը կը պաշտէր. անոր հետ ամուսնանալու վրայ էր, երբ յանկարծ բաղդին մէկ հարուածը, որ կրնար Աստուծոյ բարութեանը վրայ երկմտել տալ, եթէ Աստուած քիչ մը ետքը չհայտնէր որ իրեն համար ամէն բան դէպ 'ի մշտնջենաւոր միութիւնը տանելու միջոց մ'է, երբ յանկարծ բաղդին մէկ հարուածը անոր ազատութիւնը, սիրուհին, երազած ապագան յափշտակեց, և դինքը ստորերկրեայ բանտի մը խորը նետեց։

— Ա՛հ, գոչեց Մորէլ, ութ օրէն, մէկ ամիսէն կամ մէկ տարիէն բանտէն կ'ելլնուի։

— Տասն և չորս տարի ստորերկրեայ բանտի մէջ մնայ, Մորէլ—, ըսաւ կոմսը իւր ձեռքը երիտասարդին ուսին վրայ դնելով։

Մաքսիմիլիէն սարսռաց։

— Տասն և չորս տարի, մրմռաց։

— Այո, տասն և չորս տարի, կրկնեց կոմսը. ան ալ այն տասն և չորս տարիներուն մէջ յուսահատութեան շատ ժամեր ունեցաւ. ան ալ ձեզի պէս, Մորէլ, ինքզինքը աշխարհիս ամենէն թշուառ մարդը կարծելով ինքզինքը սպաննել ուզեց։

— Ետքը՞, հարցուց Մորէլ։

— Ետքը, վերջին վայրկենին Աստուած անոր օգնութեան հասաւ մարդկային միջոցաւ մը. գուցէ առջի բերան այն մարդը Աստուծոյ այն անսահման մարդասիրութիւնը չհասկըցաւ (քանզի արտասուօք քաղարկեալ աչերը բացուելու համար ժամանակի պէտք ունին), բայց վերջապէս համբերութիւն ունեցաւ և սպասեց։ Օր մը հրաշքով իւր գերեզմանէն դուրս ելաւ բոլորովին այլափոխեալ, հարուստ և զօրաւոր. ամենէն առաջ իւր հայրը փնտռեց, բայց հայրը մեռած էր։

— Իմ հայրս ալ մեռած է, ըսաւ Մորէլ։

— Այո, բայց ձեր հայրը ձեր բազկացը մէջ սիրեցեալ, երջանիկ, պատուեալ, հարուստ և ծերացեալ մեռաւ. բայց անոր հայրը աղքատ, վշտալի և՛ յուսահատեալ մեռաւ. և երբ տասը տարի ետքը՝ անոր որդին հօրը գերեզմանը փնտռեց, գերեզմանը անդամ աներևոյթ եղեր էր, և չկրցաւ իւր այնչափ սիրեցեալ հօրը հանգչած տեղը գտնել։

— Ո՛հ, գոչեց Մորէլ։

— Ուրեմն այն մարդը ձեզմէ աւելի թշուառ էր, Մորէլ, քանզի իւր հօրը գերեզմանին տեղն անդամ չէր գիտեր։

— Բայց գոնէ սիրած կինը ունէր։

— Կը սխալիք, Մորէլ. այն կինը . . .։

— Մեռած էր արդեօք, գոչեց Մաքսիմիլիէն։

— Աւելի գէշ. այն կինը իրեն հաւատարիմ չմնացեր էր, այլ իւր նշանածը հալածողներուն մէկուն հետ ամուսնացեր էր։ Կը

ենանէք, Մորէլ, որ այն մարդը ձեզմէ աւելի թշուառ սիրահար մ'է եղեր։

— Եւ Աստուած այն մարդը մխիթարեց, հարցուց Մորէլ։

— Գոնէ անոր սիրտը հանդարտեցուց։

— Եւ այն մարդը պիտի կրնայ օր մը երջանիկ ըլլալ։

— Կը յուսայ, Մաքսիմիլիէն —։

Երիտասարդը դլուխը իւր կուրծքին վրայ խոնարհեցուց։

— Խօսքս տուած եմ ձեզի, ըսաւ վայրկեան մը լռութենէ ետև և իւր ձեռքը Մոնթէ-Քրիսթոյին երկնցընելով, միայն թէ յիշեցէք . . . .։

— Հոկտեմբերի Ե՛ին, Մորէլ, Մոնթէ-Քրիսթոյ կղզին ձեզ կ'ըսպասեմ։ Հին շեղակայմ մը Պասթիայի նաւահանգիստը ձեզ պիտի սպասէ. շեղակայմին անունն է Ե-ր։։. անուննիգ նաւապետին տուէք, ու ան ղձեզ իմ քովս պիտի բերէ։ Այսպէս որոշուած է, այնպէս չէ՞, Մաքսիմիլիէն։

— Շատ աղէկ, կոմս, ձեր հրամանը պիտի կատարեմ. բայց հոկտեմբերի Ե՛ը յիշեցէք . . . .։

— Տղայ մ'էք, որ չէք պիտեր թէ մարդու մը խոստումը ինչ է . . . .։ Քսան անգամ ըսի որ այն օրը եթէ մեռնիլ ուզէք, ես պիտի օգնեմ ձեզ, Մորէլ։ Մնաք բարեաւ։

— Կը բաժնուինք ինձմէ։

— Այո՛, ես Իտալիոյ մէջ գործ ունիմ. զձեզ առանձին կը թողում, առանձին թշուառութեան հետ, առանձին այն զօրաւոր թևերով արծիւին հետ, զոր Աստուած իւր ընտրելոյ կը ղրկէ իւր ոտից առջևը տանելու համար. Կանիմէտի պատմութիւնը առասպել մը չէ, Մաքսիմիլիէն, այլ այլաբանութիւն մը . . . .։

— Ե՛րբ պիտի մեկնիք։

— Այս վայրկենիս շոգենաւը ինձ կ'ըսպասէ. ժամ մը արդէն ձեզմէ հեռացած պիտի ըլլամ. մինչև նաւահանգիստը կ'ընկերանաք ինծի, Մորէլ։


— Բոլորովին ձերն եմ, կոմս։

— Գրկեցէք զիս —։

Մորէլ մինչև նաւահանգիստը կոմսին ընկերացաւ. արդէն շոգե-

նաւին ծուխը երկար փետուրի պէս սև խողովակէն դուրս կ'ելնէր։

Շոգենաւը շուտով ձամբայ ելաւ, և ժամ մը ետքը, ինչպէս որ Մոնթէ-Քրիսթօ ըսեր էր, սպիտակազոյն ծուխով այն թռչունը գիշերային առջի մառախուղէն մթագեալ արևելեան հորիզոնին վրայ կ'անհետանար։



ԳԼՈՒԽ ԾԵ

ՌՔՌՌԻՆՕ

Կոմսին շոգենաւը Մորժիու հրուանդանին ետին անհետացեր ըլլալու ատեն՝ մարդ մը սուրհանդակի կառքով Ա.քուաբէնտէնթէի փոքր քաղաքէն անցնելով Ֆիորէնցայէն Հռոմ երթալու ճամբուն վրայ կը դտնուէր։

Կառքը առանց կասկածելի ըլլալու շատ շուտ կը քալէր։

Այս մարդը ճամբորդութենէ աւրուած թիկնոց մը հագած էր Պատուոյ Լէգէոնի ժապաւէնով մը զարդարուած, որ ներքին զգեստին վրայ իսկ կրնուած էր. ոչ միայն այս երկու նշաններէն, այլ և սուրհանդակներուն հետ խօսեցած ատեն իւր արտասանութենէն յայտնի կը տեսնուէր որ Գաղղիացի մ'էր։

Տիեզերական լեզուին երկրէն ծնած ըլլալուն մէկ ապացոյցն ալ իր Խաչերէն չգիտնալն էր, բայց՝ ի քանի մը երաժշտական բառերէն, որոնք Ֆիկարոյի կոմպոզիցիոն պէս մասնաւոր լեզուի մը ամեն աղնուութեանցը տեղ կը բռնեն։

— Ալ՛կօ, կը պոռար սուրհանդակներուն երբ զառիվերի մը կը հասնէին։

— Մոթըա՛կօ —, կ՛ըսէր իւրաքանչիւր զառիվարին։

Եւ Աստուած գիտէ եթէ Ֆիորէնցայէն Հռոմ երթալու համար Ա.քուաբէնտէնթէի ճամբուն վրայ զառիվերներ և զառիվարներ կան։

Այսու ամենայնիւ սուրհանդակները խիստ կը ծիծաղէին այս երկու բառերուն վրայ։

Ցաւիտենական քաղաքին առջևը, այսինքն Սթորա հասած ատենը, ուրկից Հռոմ կ՛երևի, ճանապարհորդը չզգաց այն եռանդալի հետաքրքրութիւնը, որով ամեն օտարական դրդռուած իր նստած տեղէն կ՛ելնէ ամենէն առաջ հեռուէն երևցող Սուրբ-Պետրոսի հռչակաւոր գմբէթը տեսնելու։

Միայն իր ծոցէն գրպան մը և անոր մէջէն չորս ծալլուած թուղթ մը հանեց, բացաւ զայն և վերստին ծալլեց այնպիսի զգուշութեամբ մը, որ յարգանքի կը նմանէր, և գոհ եղաւ ըսելու.

— Բարի, միշտ քովս է —։

Կառքը տէլ Բորղոյի դուռէն անցնելով ձախ կողմը զարկաւ և Սպանիոյ ըսուած պանդոկին առջևը կեցաւ։

Բասթրինի պանդոկապետը, որ մեր հին ծանօթներէն մէկն է, դրան սեմոյ վրայ և գլխարկը ձեռքը ճանապարհորդին ընդունելութիւն տուաւ։

Ճանապարհորդը կառքէն իջաւ, աղէկ ճաշ մը հրամայեց, ու Թոմսըն և Ֆրէնչ սեղանաւորներուն ուր բնակելնին հարցուց. Բասթրինի իսկոյն գոհ ըրաւ զան, քանզի այս լումայատունը Հռոմի ամենէն ծանօթ վաճառատուններէն մէկն էր։

Սուրբ-Պետրոս եկեղեցւոյն մօտ տէլի Պանքի փողոցին մէջ կը գտնուէր։

Ինչպէս ամեն տեղ՝ Հռոմի մէջ սուրհանդակի կառքի մը հասնիլը իրարանցում մը կը պատճառէ։

Մարիոսի և Կրաքոսի սերունդներէն տասնի չափ երիտասարդներ տներնին բոպիկ, արմուկնին ծակուած, բայց բուռերնին ազդրնուն վրայ կախուած և թևերնին ղլուխնէն վեր կորացած՝ ճանապարհորդին, կառքին և ձիերուն կը նայէին։

Քաղաքին այս ընտրեալ ստահակներուն յիսնի չափ Հռոմի դատարկասուններ ալ միացած էին, որոնք Սանթ-Անճէլօ կամուրջին վրայէն Տիբեր գետին մէջ թքնելով ժամանակնին կ՛անցընեն։

Եւ որովհետև ստահակներն ու Հռոմի դատարկասունները Բարիզիններէն աւելի բաղդատուր ըլլալով՝ ամեն լեզու կը հասկընան մանաւանդ դաղղիարէնը, ճանապարհորդին բնակարան մը և ճաշ մը խնդրելը և վերջապէս Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ուր գտնուիլը հարցընելը հասկըցան։

Հետևաբար երբ մեր ճանապարհորդը առաջնորդ մը առած պանդոկէն դուրս ելաւ, մարդ մը այն հետաքրքիրներուն խումբէն բաժնուելով, առանց ճանապարհորդին և անոր առաջնորդին ուշադրութեան ենթակայ ըլլալու՝ քիչ մը հեռուէն քալելով օտարականին ետևէն գնաց Բարիզի ոստիկանութեան դործակալէ մը աւելի մեծ ճարպկութեամբ։

Գաղղիացին այնչափ արտորացեր էր Թոմսըն և Ֆրէնչ լումայատունը երթալու, որ ձիերը կառքին լծելու անդամ չսպասեց. կառքը կամ ճամբան իր ետևէն պիտի հասնէր և կամ լումայատան դուռը իրեն պիտի սպասէր։

Կառքը իրեն չհասած Գաղղիացին լումայատունը հասաւ և ներս մտաւ՝ առաջնորդը նախասենեկին մէջ թողլով, որ Հռոմի լումայատուններու, եկեղեցիներու, աւերակներու, մուսարաններու կամ թատրոններու մէջ գտնուող անարուեստ կամ թէ ըսենք ամեն տեսակ արուեստներ ունեցող արուեստաւորներու հետ իսկոյն խօսակցութեան բռնուելոյ։

Հետաքրքիրներուն խումբէն բաժնուողն ալ Գաղղիացիին հետ ներս մտեր էր. Գաղղիացին դրատան դուռը զարկաւ և առջի սենեկին մէջ մտաւ. նոյնպէս ըրաւ իր ստուերն ալ։

— Թոմսըն և Ֆրէնչ պարոնները հո՛ս կը գտնուին —, հարցուց օտարականը։

Գրադրի մը նշանին վրայ՝ սպասաւոր մը, որ առաջին դրատան պահապանն էր, ոտք ելաւ։

— Ո՞րու դալուստը պիտի իմացընեմ, հարցուց սպասաւորը օտարականին առջևէն քալելու պատրաստուելով։

— Պ. սեպուհ Տանկլարին, պատասխանեց Ճանապարհորդը։

— Եկէք —, ըսաւ սպասաւորը։

Դուռ մը բացուեցաւ. սպասաւորն ու սեպուհը ներս մտան։

Տանկլարի ետևէն մտնող մարդը սպասելու համար դրուած նըստարանի մը վրայ նստաւ։

Գրադիրը դրեթէ հինգ վայրկեան ևս իր գրութիւնը շարունակեց, և այն հինգ վայրկենին մէջ նստող մարդը խորին լռութիւն մը և կատարեալ անշարժութիւն մը կը պահէր։

Գրադիրը գրիչը ձեռքէն թողուց, գլուխը վերցուց, ուշադրութեամբ իր բոլորտիքը նայեցաւ, և իր դիմացը եղողը Ճանչնալով։

— Ա՛ հա՛։ ըսաւ, դո՞ւն ես, Ռէբբինօ։

— Այո՛, պատասխանեց նստողը լակոնական ոճով։

— Ուրեմն այն մեծ մարդուն վրայ աղէկ հո՞տ մը առիր։

— Զան դանելու արժանաւորութիւնը մերը չէ, այլ մեզ իմաց տուին։

— Ուրեմն դիտե՞ս ինչ բանի համար գալը, ով հետաքրքիր։

— Անշուշտ ստակ առնելու եկած է. միայն թէ կ՚ուզէինք դիտնալ թէ ինչ դումար է առնելիքը։

— Հիմա կ՚իմացընեմ քեզ, բարեկամ։

— Աղէկ. բայց անցեալ օրուան պէս սխալ տեղեկութիւն մի՛ տար։

— Այդ ինչ խօսք է, և որո՞ւն համար ըսել կ՚ուզես. արդեօք այն Անգղիացիին համար, որ անցեալ օր երեք հազար թալեռ առաւ ասկէ։

— Ո՛չ, Անգղիացին իրօք երեք հազար թալեռ ունէր, և մենք Ճիշդ նոյն դումարը գտանք անոր վրայ. ուստի իշխանին համար է խօսքս։

— Ճիշդ չէ՞ր ըսածս։

— Դուն մեզի երեսուն հազար ֆրանք իմացուցիր, և մենք միայն քսան երկու հազար գտանք։

— Աղէկ չփնտռեր էք։

— Լուիճի Վանբան անձամբ փնտռեց։

— Ուրեմն պարտք մը վճարած է։

— Ուրուս մը պարտք ընէ։

— Կամ գուցէ ծախք ըրած է։

— Կարելի է։

— Անշուշտ այնպէս է. բայց կեցիր դիտարանս երթամ, գուցէ Ճիշդ դումարը ես չիմացած՝ Գաղղիացին իր գործը լմնցընէ —։

Ռէբբինօ հաստատական նշան մը ըրաւ, և իր ծոցէն համրիչ մը հանելով սկսաւ աղօթք մը մրմնջել, ինչ ատեն գրագիրը նոյն դռնէն աներևոյթ եղաւ, ուրկից սպասաւորն ու սեպուհը ներս մտեր էին։

Գրեթէ տասը վայրկեան ետքը գրագիրը ուրախ դէմքով վերադարձաւ։

— Ի՞նչ լուր հարցուց Ռէբբինօ իր բարեկամին։

— Արթնցիր, արթնցիր, ըսաւ գրագիրը, գումարը մեծ է։

— Հինգ կամ վեց միլիոն ֆրանք, այնպէս չէ՞։

— Այո՛, ուրկից գիտես։

— Նորին Վսեմութեան Մօնթէ-Քրիսթոյ կոմսին ընկալադրին վճարելի տոմսակ մը ունի։

— Կոմսը կը Ճանչնա՞ս։

— Եւ Հռոմի, Վենետիկի և Վեննայի լումայատուներուն մէջ պիտի վճարուի։

— Ճիշդ այդպէս, գոչեց գրագիրը. ուրկից այդպէս աղէկ տեղեկութիւն ստացար։

— Քեզի ըսի որ առաջուց իմաց տրուած է մեզ։

— Ուրեմն ինչո՞ւ կը հարցընես։

— Որպէս զի ապահով ըլլանք որ մեր փնտռածը Ճիշդ այն մարդն է։

— Ճիշդ ան է . . . հինգ միլիոն ֆրանք, պեղեցիկ դումար մ՚է, այնպէս չէ՞, Ռէբբինօ։

— Այո՛։

— Երբէք այդչափ դումար մը պիտի չկրնանք ստանալ։

— Գոնե, պատասխանեց Ռէբբինօ փիլիսոփայօրէն, անոնց կատարանքէն կրնանք ունենալ։

— Լուէ, ահա մարդը կու գայ —։

Գրագիրը վերստին իր գրիչը ձեռքը առաւ և Բէբբինօ իր համրիչը։ դուռը բացուած ժամանակ ատենմէ մէկը գիր կը գրէր և միւսը աղօթք կ'ընէր։

Տանկլար ուրախ կ'երևէր և սեղանաւորը անոր ընկերանալով մինչև դուռը տարաւ զան։

Տանկլարի ետևէն Բէբբինօ ևս դուրս ելաւ։

Ինչպէս որ որոշուած էր՝ Տանկլարի ետևէն հասնելու կառքը Թոմսըն և Ֆրէնչ լումայատան առջևը կ'ըսպասէր։

Առաջնորդը անոր դռնակը բուներ էր. քանզի Ճանապարհորդաց առաջնորդները խիստ մարդահամոյ անձեր կ'ըլլան և ամեն բանի կրնան գործածուիլ։

Տանկլար քսան տարեկան մարդու մը թեթևաշարժութեամբը կառքին մէջ ցատկեց։

Առաջնորդը դուռը դոցեց և կառավարին քովը նստաւ։

Բէբբինօ կառքին ետևի նստարանին վրայ ելաւ։

— Ձեր Վսեմութիւնը կ'ուզէ Սուրբ-Պետրոսի եկեղեցին տեսնել, հարցուց առաջնորդը։

— Ինչ ընելու համար, պատասխանեց սեպուհը։

— Տեսնելու։

— Տեսնելու համար չեկայ ես Հռոմ, ըսաւ Տանկլար բարձր ձայնով և անյագ ժպիտով մը կամաց մը յաւելլուց. — Ստակ առնելու համար եկայ ես —։

— Եւ ձեռքը իր գրապանին վրայ դրաւ, որուն մէջ նամակ մը պահեր էր։

— Ուրեմն Ձեր Վսեմութիւնը հոս կ'ուզէ երթալ։

— Պանդոկը։

— Բասթրինիլին պանդոկը քաշէ —, գոչեց առաջնորդը կառավարին։

Եւ կառքը տան կառքի մը պէս արագութեամբ Ճամբայ ելաւ։

Տասը վայրկեան ետքը սեպուհը իր բնակարանը դարձաւ, և Բէբբինօ պանդոկին առջևը եղած նստարանին վրայ տեղաւորուեցաւ՝ քիչ մը առաջ յիշուած Մարիոսի և Կրաքոսի սերունդներէն

մէկուն ականջին քանի մը խօսք խօսեցէն ետև. որուն վրայ այս սերունդն ալ իր սրնդայ բոլոր արագութեամբը Քարիթոլի Ճամբան վազեց։

Տանկլար յողնած և պոհ էր ու քուն ունէր։

Իր գրապանը գլխի բարձին տակը դրաւ և քնացաւ։

Բէբբինօ հանգստանալու ժամանակ ունէր. իր ընկերներուն հետ մօտ խաղալ, երեք թալեռ կորնդոս, և միխթարուելու համար սրուակ մը Օրվիէթոյի գինի խմեց։

Հետևեալ առտու Տանկլար ուշ արթնցաւ, թէև առջի իրիկունէն կանուխ պառկեր էր. քանզի հինգ կամ վեց գիշերէ 'ի վեր հանգիստ քուն քնացած չէր։

Լաւ նախաճաշ մը ըրաւ, և ինչպէս որ ըսեր էր՝ մշանջենաւոր քաղաքին գեղեցկութիւնները տեսնելու հետաքրքիր չըլլալով հրամայեց որ սուրհանդակի ձիերը կէս օրին պատրաստ ըլլան։

Բայց Տանկլար աստիկանութեան օրէնքը և սուրհանդակապետին ծուլութիւնը հաշուի դրած չէր։

Ուստի ձիերը ժամը երկուքէն առաջ չկրցան հասնիլ, և իր անցագիրը աստիկանութենէ վկայագրեալ ժամը երեքին եկաւ։

Այս ամեն պատրաստութիւնները Բասթրինիլի պանդոկին դրան առջևը բազմաթիւ ստահակներ դումարեր էին։

Կրաքոսի և Մարիոսի սերունդներն ալ անոնց հետ խառնուած էին։

Սեպուհը սէգութեամբ այս խումբերուն մէջէն անցաւ, որոնք փոքր նուէր մը ընդունելու համար վինքը Վսեմութիւն կը կոչէին։

Տանկլար, ինչպէս արդէն գիտենք, խիստ ռամիկ մարդ մը ըլլալով, գոհ եղեր էր մինչև այն տաեն ինքզինքը սեպուհ կոչելու և ամենևին զինքը Վսեմութիւն կոչած չէին. այս սիտղոսը փաղաքշեց զինքը, և երկոտասնեակի չափ թալեռ բաժնեց բոլոր այն դատարկասուն մարդոց, որոնք պատրաստ էին ուրիշ տասներկու թալեռի համար Բարձրութեան տիտղոսը տալ իրեն։

— Ո՞ւր պիտի երթանք, հարցուց սուրհանդակը խառնուելով զրուաւ։

— Դէպ 'ի Անբռնա —, պատասխանեց սեպուհը։

Բասթրինի պանդոկապետը այս հարցումը և պատասխանը թարգմանեց, և կառքը արշաւանօք մեկնեցաւ։

Տանկլար իրօք վենետիկ կ'ուզէր երթալ և իւր հարստութեան մէկ մասը անկէ առնուլ, եաքը վենետիկէն վեննա պիտի անցնէր, ուր դումարին մնացեալը պիտի ստանար։

Իւր դիտաւորութիւնը այս վերջին քաղաքին մէջ հաստատուիլ էր, որուն զուարճութեանց քաղաք մը ըլլալը իրեն ապահովցուցեր էին։

Հռոմի դաշտին մէջ երեք մղոն տեղ չյաւաջացած՝ գիշերը վրայ հասաւ. Տանկլար ամենևին չկարծեր էր որ այնչափ ուշ ձամբայ ելեր էր, եթէ ոչ այն իրիկուն պանդոկը կը մնար. ուստի հարցուց սուրհանդակին թէ որչափ ժամանակ պէտք էր առջի քաղաքը հասնելու համար։

— Նօն գոքէ (չեմ հասկընար)—, պատասխանեց սուրհանդակը։

Տանկլար գլխովը շարժում մը ըրաւ, որով «Շատ աղէկ» ըսել կ'ուզէր։

Կառքը իւր ձամբան շարունակեց։

— Առաջին կայարանին կը կենամ—, ըսաւ Տանկլար ինքնիրեն։

Տանկլար առջի իրիկունը ունեցած քնոյ փափաքը վերստին կ'ըզգար. կրկին ձգտաձարերով անգլիական գեղեցիկ կառքի մը մէջ փափկութեամբ երկնցած էր, և երկու հուժկու ձիեր արշաւանօք կառքը կը քաշէին։

Գիտէր որ իւրաքանչիւր եօթը մղոնին ձիերը կը փոխեն։

Ի՛նչ ընել պէտք է մարդ երբ սեղանաւոր և բարեբաղդաբար մնանկացած է։

Տանկլար Բարիզ մնացող իւր կնոջը տասը վայրկեան մտածեց, տասը վայրկեան ալ իւր աղջկան, որ օրիորդ ս'Արմիլլի հետ աշխարհք կը շրջէր. տասը վայրկեան ալ վերջապէս իւր պարտատէրներուն և անոնց ստակը դործածելու կերպին վրայ մտածեց. եաքը ուրիշ մտածութիւն չունենալով աչքը դոցեց և քնացաւ։

Սակայն երբեմն կառքին սովորականէն աւելի ուժգին տատանումէն Տանկլար վայրկեան մը իւր աչերը կը բանար։

Այն ատեն կ'ըզգար որ կառքը միշտ նոյն արագութեամբ Հռոմի դաշտերուն մէջ կը յառաջանար, որուն մէջ տեղ տեղ դտնուած խորտակեալ ջրմուղները իրենց ընթացքին մէջ քարացած կրանիթեայ հսկաներ կ'երևէին։

Բայց գիշերը ցուրտ, տխուր և անձրևոտ էր, և կէս քուն մարդ մը աւելի աղէկ կ'ընէր աչերը դոցելով իւր կառքին մէջ սպասել, քան թէ գլուխը դռնակէն դուրս հանել և իւր ուր գտնուիլը հարցնել սուրհանդակին, որ նօն գոքէ-ոէն ուրիշ բան չէր պատասխաներ։

Ուստի Տանկլար վերստին քնացաւ, ըսելով որ ձիերը փոխուած ժամանակ կրնայ արթննալ։

Կառքը կեցաւ։

Տանկլար մտածեց որ իւր այնչափ փափաքած նպատակին վերջապէս հասաւ։

Իւր աչերը բացաւ, պատուհանէն դուրս նայեցաւ կարծելով թէ քաղաքի մը կամ գոնէ պիւղի մը քով հասած են, բայց մենացեալ աւերակ տունէ մը զատ բան չտեսաւ, որուն առջևը ստուերի պէս երեք կամ չորս մարդիկ կ'երթևեկէին։

Տանկլար սպասեց որ իւր ձամբան լրացընող սուրհանդակը գայ իւր իրաւունքը պահանջէ։

Կը յուսար այն առթիւ իւր նոր սուրհանդակէն տեղեկութիւն մը ստանալ. բայց ձիերը քակուեցան, անոնց տեղը ուրիշ ձիեր լծուեցան, և ձամբորդէն ստակ պահանջող մէկը չերևցաւ։

Տանկլար զարմանալով դռնակը բացաւ. բայց հուժկու ձեռք մը գինքը ներս մղեց և կառքը սկսաւ քալել։

Սեպուհը ապշեալ բոլորովին արթնցաւ։

— Է՛հ, ըսաւ սուրհանդակին, ինծի նայէ, է՛հ, ֆօ գոքօ (սիրելիդ իմ)—։

Այս խօսքերէն բաւն ալ Տանկլար Գավալղանթի իշխանին հետ իւր աղջկան երգած երգէն սորված էր։

Սակայն ֆօ գոքօն ամենևին չպատասխանեց։

Այն ատեն Տանկլար պատուհանը բացաւ։

— Հէ, բարեկամ, ուր կ'երթանք, հարցուց գլուխը պատուհանէն դուրս հանելով։

— Տէ՛ն ըօ լա ըէօ՛ւա —, դոչեց խիստ և խրոխտ ձայն մը սպառնական շարժումով:

Տանկլար հասկըցաւ որ տէ՛ն ըօ լա ըէօ՛ւա դլուխ ներս քաշէ ըսել է: Ինչպէս կ'երևէր՝ Իտալերէն լեզուին մէջ շուտով կը յառաջադիմէր:

Սրտի անհանգստութեամբ մը այն ձայնին հնազանդեցաւ. և իր անհանգստութիւնը վայրկեանէ վայրկեան կ'աւելնար, այնպէս՝ զի իր միտքը, որ Ճանբայ ելած ատենը այնչափ հանդարտ էր, որ իր քունը բերեր էր, այնպիսի բազմադիմի խորհուրդներով լեցուեցաւ, որոնք Ճանապարհորդի մը, մանաւանդ Տանկլարի կացութիւնն ունեցող Ճանապարհորդի մը ուշադրութիւնը իր շահուցը վրայ կը տանին:

Իր աչերը մթութեան մէջ կորովութեան այն աստիճանը ստացան, զոր սրտի սաստիկ յուզմունքը մէկէն կը հաղորդէ անոնց, բայց աչաց այն կորովութիւնը քիչ քիչ յողնելով կը տկարանայ:

Վախնալէն առաջ մարդ Ճիշդ կը տեսնէ. վախցած ատեն ամեն բան կրկին կ'երևի իրեն, և վախնալէն ետև շփոթ կը տեսնէ:

Տանկլար վերարկուով փաթթուած մարդ մը տեսաւ որ կառքին աջ կողմը ձիով կ'արշաւէր:

— Զինակիր մ'է դուցէ, ըսաւ. արդեօք ոմն ըլլալս դաղիական հեռագիրները քահանայապետական կառավարութեան յայտնելո՞ւն —:

Ուզեց իր այս անհանգստութիւնը փարատել:

— Ո՞ւր կը տանիք զիս, հարցուց վերստին:

— Տէ՛ն ըօ լա ըէօ՛ւա —, կրկնեց նոյն ձայնը նոյն սպառնական արտասանութեամբ:

Տանկլար դէպ 'ի ձախ կողմի դռնակը դարձաւ:

Ուրիշ մարդ մը կառքին ձախ կողմէն ձիով կ'ընկերանար:

— Անշուշտ բռնուեցայ —, ըսաւ իւրովի Տանկլար Ճակատը քրտինքով պատած:

Եւ վերստին կառքին մէջ նետուեցաւ, բայց այս անգամ չէ թէ քնանալու այլ մտածելու համար:

Ժամ մը ետքը լուսինը ծագեցաւ:

Կառքին մէջէն իր նայուածքը դաշտին վրայ սլտըտցուց, այն

ատեն վերստին այն մեծ ջրմուղները տեսաւ, այն քարէ ուրուականները, զորոնք քիչ մը առաջ տեսեր էր, միայն թէ փոխանակ աջ կողմէն տեսնելու, այս անգամ ձախ կողմէն կը տեսնէր:

Հասկըցաւ որ կառքին կէս շրջան մը ընել տուեր էին և գինքը Հռոմ կը վերադարձընէին:

— Ո՛հ, ինչ թշուառ եմ ես մրմռաց, անշուշտ գիս դաղղիական կառավարութեան պիտի յանձնեն —:

Կառքը սոսկալի արագութեամբ շարունակ կը յառաջանար:

Ժամ մը սոսկումով անցաւ. վասն զի իր Ճամբուն վրայ տեսած իրաքանչիւր նշանէն, փախստականը յայտնի կը տեսնէր որ գինքը ետ կը տանէին:

Վերջապէս մութ քարակոյտ մը տեսաւ, որուն դէմ կարծէր թէ կառքը պիտի ընդհարէր. բայց կառքը դառնալով այն քարակոյտին քովէն անցաւ, որ ուրիշ բան չէր բայց եթէ Հռոմի շրջապատն եղող պարսպաց գօտին:

— Ո՛հ, մրմռաց Տանկլար, քաղաքը չենք վերադառնար, և ոստիկանութիւնը չէ գիս բռնողը. ո՛վ Աստուած իմ, արդեօք...՝ —:

Իր մազերը քստմնեցան:

Հռոմայեցի աւազակաց այն երևելի պատմութիւնները յիշեց, որոնց Բարիզի մէջ այնչափ չէին հաւատար, և որոնք Ալպեր որ Մորսերֆ տիկին Տանկլարին և Էօժէնիին պատմեր էր, երբ ասոնց մէկուն զաւակը և միւսին ամուսինը ըլլալու խօսքը կ'ըլլար:

— Արդեօք պո՞ղ են ասոնք —, մրմռաց:

Յանկարծ կառքը աւազակաց Ճամբէ մը ասելի խիստ դետնի վրայ սկսաւ քալել:

Տանկլար համարձակեցաւ Ճամբուն երկու կողմը դիտել, և տաբօրինակ ձևով շէնքեր տեսաւ. Մորսերֆի պատմութիւնը իր միտքը զբաղած ըլլալով, այս ժամուս ամեն պարագաներովը կը յիշէր զայն, և կը մտածէր որ անշուշտ Աբբիայի Ճամբուն վրայ կը պտնուի:

Կառքին ձախ կողմը՝ հովիտի մը մէջ բոլորակ խոռոչ մը կը տեսնուէր:

Գարագալլայի կրկեսն էր այն:

Կառքին ալ կողմէն արշաւող մարդուն մէկ հրամանին վրայ կառքը կեցաւ։

Նոյն ժամուն ձախ կողմի դռնակը բացուեցաւ։

— Շէնոթ (իջիր)—, հրամայեց ձայն մը։

Տանկլար իսկոյն կառքէն իջաւ։

Իտալերէն լեզուն տակաւին չէր կրնար խօսիլ, բայց սկսեր էր հասկընալ։

Սեպուհը մուելատիպ եղած իւր բոլորտիքը նայեցաւ։

Սուրհանդակէն զատ չորս հոգի ալ կը շրջապատէին։

— Տէ ֆոռա (ասկէ)—, ըսաւ չորս մարդոց մէկը՝ Հռոմի դաշտին այն անհատասար գծերուն մէջ Աբբիայի Ճամբան տանող փոքր շաւիղի մը մէջ իջնելով։

Տանկլար առանց ընդդիմութեան իւր առաջնորդին հետեւեցաւ, և միւս երեք մարդոց իւր ետեւէն գալը իմանալու համար ետին նայելու հարկ չեղաւ։

Սակայն իրեն այնպէս երեւցաւ թէ այս մարդերը իրարմէ գրեթէ հատասար հեռաւորութեամբ պահանորդներու պէս կեցան։

Առանց խօսելու գրեթէ տասը վայրկեան քալելէ ետեւ՝ Տանկլար բլրակի մը և երկար խոտերով մացառներու մէջ տեղը գըտնուեցաւ. երեք անձայն մարդիկ եռանկիւնի մը կը կազմէին, որոնց կենդրոնը ինքն էր։

Ուզեց խօսիլ, բայց լեզուն շփոթեցաւ։

— Ավանթի (յառաջ)—, ըսաւ նոյն ձայնը կարճ և հրամայական ձեւով։

Այս անգամ Տանկլար երկու կերպով հասկըցաւ թէ խօսքով և թէ շարժումով. քանզի իւր ետեւէն քալող մարդը այնպիսի խստութեամբ հոեց ցինքը, որ գնաց իւր առաջնորդին զարնուեցաւ։

Այս առաջնորդը մեր Բէբբինօ բարեկամն էր, որ բարձր խոտերուն մէջ մխուեցաւ այնպիսի դարձուածաւոր ճամբէ մը, որուն անցնելու ճամբայ մը ըլլալը կուզերը և մողէղները միայն կրնային ճանչնալ։

Բէբբինօ թանձր մացառներով պատած ժայռի մը առջև կեցաւ։

Այս ժայռին արտեւանունքի նման բացուածքէն ներս մտնելով աներեւոյթ եղաւ կափուլի մէջ աներեւոյթ եղող սատանայի մը նման։

Տանկլարի ետեւէն եկողին ձայնն ու շարժումը սեղանաւորը ստիպեցին որ Բէբբինոյին հետեւի։

Ալ տարակոյս չկար՝ Գաղղիացի սնանկացեալը Հռոմայեցի աւազակներու ձեռքը ինկած էր։

Տանկլար երկու սոսկալի վտանգի մէջ գտնուող և երկիւղէն զօրացած մարդու մը պէս ըրաւ։

Հռոմի դաշտին ծերպերէն մէկուն մէջ մտնելու համար թէև անյարմար փոր մը ունէր, սակայն աչերը գոցելով Բէբբինոյի ետեւէն ծակին մէջ մտաւ, և իւր ոտիցը վրայ ինկաւ։

Ան ատեն աչերը բանալով տեսաւ որ իւր առջևը բացուած Ճամբան լայն բայց մութ էր։

Հիմա որ Բէբբինօն իւր բնակութեան մէջ կը գտնուէր, ամենևին պահուելու հոգ չըրաւ, կայծահանը զարկաւ և ջահ մը վառեց։

Վերջնապահ գինուորի պէս երկու մարդիկ ալ Տանկլարի ետեւէն մտան, և սեղանաւորին կեցած ատենը՝ անոր ետեւէն հռելով, հալիւ զգալի ղառիվարէ մը վար իջեցուցին և տխուր երեւոյթով քառասուն Ճամբու մը կենդրոնը տարին զան։

Տանկլարի այնպէս կ'երեւէր թէ իրարու վրայ զետեղեալ դագաղի նման փորուած պատերուն բաժանումներուն մէջ սև և խորունկ աչերով մեռելի գլուխներ կը տեսնէ։

Պահանորդ մը իւր ձախ ձեռքը լայնափող հրացանին զարկաւ։

— Ո՛վ է ան, գոչեց։

— Բարեկամ ենք, ըսաւ Բէբբինօ։ Ո՞ւր է մեր գլխաւորը։

— Հոն է, ըսաւ պահանորդը ժայռի մէջ փորուած մեծ սրահի պէս տեղ մը ցուցընելով, ուրկից լոյսը դուրս կը ցոլար կամարաձև բացուածներուն մէջէն անցնելով։

— Լաւ. որս մը ունինք, տէր իմ—, ըսաւ Բէբբինօ իտալերէն լեզուաւ։

Եւ Տանկլարի վերարկուին օձիքէն բռնելով դուրս նման բացուածքի մը առջին տարաւ զան, ուրկից ըստ երեւութին գլխաւորին բնակարանն եղող այն սրահին մէջ կը մտնուէր։

— Ան մարդն է, հարցուց գլխաւորը, որ մեծ ուշադրութեամբ Պղտտարքոսի մէջ Աղեքսանդրի կենսագրութիւնը կը կարդար։

— Այո՛, նոյն ինքն է։

— Շատ աղէկ, ինծի ցուցուցէք տեսնեմ — :

Այս անպատեհ հրամանին վրայ՝ Ռէբբինօ իւրջահը այնչափ մօտեցուց Տանկլարի երեսին, որ կալանաւորը իւր յօնքը չայրելու համար աշխուժիւ ետ քաշուեցաւ :

Տանկլարի այլայլեալ դէմքը սոսկումի ամեն նշանները կը կրէր :

— Այդ մարդը յոդնած է, ըսաւ գլխաւորը. իւր անկողինը տարէք զան :

— Ո՛հ, մրմռայ Տանկլար, այս անկողինը անշուշտ պատին մէջ փորուած դադաղներէն մէկը պիտի ըլլայ. և անոր մէջ քնանալը այն դաշոյններէն մէկէն սպանուիլն է, որոնց ստուերին մէջ փայլիլը կը տեսնեմ — :

Իրօք այն ընդարձակ սրահին խորերը մթութեան մէջ չոր խոտերէ կամ դայլի մորթերէ խշտեակներու վրայ պառկողներուն ոտք ելնելը տեսաւ, որոնք այն մարդուն ընկերն էին, որուն կէսօրէսէյչէպօլօրանները կարգալը Ալպէր տը Մորսէրֆ տեսեր էր և Տանկլար անոր Աղեքսանդրի կենսագրութիւնը կարգալը կը տեսնէր :

Սեղանաւորը կամաց ձայնով հառաչանք մը հանեց և իւր առաջնորդին ետևէն գնաց :

Աղաչելու կամ ձայն հանելու փորձ չփորձեց :

Այնուհետև ոչ յոյժ ունէր, ոչ կամք, ոչ կարողութիւն և ոչ զղացում :

Զինքը քաշելով տանելնուն համար ինքն ալ կ'երթար :

Ոտքը աստիճանի մը դարնելով, և հասկընալով որ իւր առջին սանդուխ մը կայ, գլուխը չզարնելու համար բնազդումով ծռուեցաւ, և մէկ ժայռէ փորուած խցիկի մը մէջ դտնուեցաւ :

Այս խցիկը մաքուր, մերկ և չոր էր, թէև անչափ խորութեամբ գետնի տակ կը դտնուէր :

Այծի մորթով ծածկուած չոր խոտէ անկողին մը այն խցիկին մէկ անկիւնը տարածուած էր :

Տանկլար զայն տեսնելով իւր ազատութիւնը դուշակեց :

— Ո՛հ, օրհնեալ ըլլայ Աստուած, մրմռայ, ստոյգ անկողին մ'է այս — :

Ժամէ մը 'ի վեր երկրորդ անգամն էր որ Աստուծոյ անունը օգ-

նութեան կը կանչէր. տասը տարիէ հետէ այս բանս պատահած չէր :

— Է՛ւոօ (ահա)— , ըսաւ առաջնորդը :

Եւ Տանկլարը խցիկին մէջ հռելով դուռը անոր վրայ փակեց :

Պարզունակ մը կռնչեց, և Տանկլար բանտարկուած մնաց :

Եթէ պարզունակը չդրուէր իսկ, պէտք էր սուրբ Պետրոս մը ըլլալ և երկնից հրեշտակ մը առաջնորդ ունենալ, որ կարենար Սան Սէպաստիանոյի ստորերկրեայ դերեզմանատունը պահպանող և իրենց գլխաւորին բոլորտիքը բանակող բազմութեան մէջէն անցնիլ :

Գլխաւորին հռչակաւոր Լուիճի Վանբան ըլլալը անշուշտ մեր ընթերցողները ճանչցան :

Տանկլար իսկ այն աւազակապետը ճանչցեր էր, որուն գոյութեանը չուզեր էր հաւատալ երբ Մորսէրֆ'կը չանար անոր անունը Գաղղիոյ մէջ ալ ծանօթացընել :

Ոչ միայն զինքը ճանչցեր էր, այլ և այն խցիկը, որուն մէջ Մորսէրֆ բանտարկուեր էր, և որ հաւանականապար ամեն օտարականաց բնակարանն էր :

Մորսէրֆի պատմութիւնը յիշելով, Տանկլարի սիրտը հանդարտութիւն մը ստացեր էր :

Քանի որ աւազակները անմիջապէս չսպաններ էին զինքը, ուրեմն անոնք սպաննելու դիտաւորութիւն չունէին :

Կողոպտելու համար միայն զինքը բռներ էին, և որովհետև իւր վրայ միայն քանի մը Լուի ունէր, անշուշտ իւր փրկանագինը պիտի խնդրէին :

Յիշեց որ Մորսէրֆէն չորս հազար թալեռի չափ փրկանք մը պահանջեր էին, և որովհետև ինքզինքը Մորսէրֆէն վեր կը դասէր, իւր խելքովը իւր փրկանքը ութ հազար թալեռ սահմանեց :

Ութ հազար թալեռը քառասուն և ութ հազար ֆրանք կ'ընէին :

Այս վճարելէն ետև՝ տակաւին հինգ միլիոն յիսուն հազար ֆրանքի չափ գումար մը կը մնար իրեն, որով ամեն կողմ կրնար գործ տեսնել :

Ուստի իւր աղատութեան վրայ դրեթէ ապահով ըլլալով, քանզի երբէք օրինակ մը տեսնուած չէր որ հինգ միլիոն յիսուն հազար

ֆրանք մէկուն փրկանք սահմանուէր, Տանկլար իւր անկողնոյն վրայ երկնցաւ, ուր երկու կամ երեք անգամ մէկ կողմէն միւս՝ կողմը գառնալէն ետև՝ քնացաւ այն դիւցազունին հանդարտութեամբը, որուն պատմութիւնը Լուիձի Վանբան կը կարդար։



ԳԼՈՒԽ ԺԴ

ԼՈՒԻՁԻ ՎԱՆԲԱՑԻՆ ԿԵՐԱԿՐՈՑ ԴԻՆԸ

Տանկլարի վախցած քունէն զատ ամէն քնացող պէտք է որ արթննայ։

Տանկլար ևս արթնցաւ։

Մետաքսեայ վարագոյրներու, թաւշապատ պատերու, կրակարանին մէջ վառուած փայտին անուշ հոտերուն սովորած Բարիզեանի մը համար կաւիճեայ քարայրի մը մէջ արթննալը գէշ երազի մը նմանիլ պէտք է։

Իւր վրայ եղած այծի մորթերուն դպչելով Տանկլար անշուշտ կը կարծէր որ Լաբոնները կ'երազէ։

Բայց այսպիսի պարագայի մէջ մանրերկրորդ մը բաւական է ամենէն զօրաւոր տարակոյսը ստուգութեան փոխելու։

— Այո՛, այո՛, մրմռաց, Ալպեր տը Մորսէրֆին պատմած աւազակներուն ձեռքը ինկած եմ —։

Իւր առաջին շարժումը շունչ առնելն եղաւ, որպէս զի ապահով ըլլայ թէ վիրաւորուած չէ. այս միջոցը Տան Քիշոթին մէջ գտեր էր, զոր չէ թէ կարդացեր էր, այլ անոր մէջէն մէկ երկու բան քաղեր էր։

— Ոչ, ըսաւ, զիս սպաննած կամ վիրաւորած չեն, այլ դուցէ կողոպտած են —։

Եւ իսկոյն իւր ծոցերը խառնեց։

Ամէն բան տեղն էր։

Հռոմէն Վենետիկ ճամբորդութիւն ընելու համար պահած հարիւր Լուիները իւր առնազգեստին ծոցին մէջն էին, և հինգ միլիոն յիսուն հազար ֆրանքնոց վարկատոմսը իւր վերարկուին ծոցին մէջ կը գտնուէր։

— Ի՛նչ զարմանալի աւազակներ են ասոնք, ըսաւ ինքնիրեն, ոմանք քսակիս և գրպանիս չեն դպչեր։ Ինչպէս որ երէկ պառկելու ատենս կ'ըսէի, անոնք ինձմէ փրկանագինս պիտի պահանջեն։ Ի՛նչ զարմանք, ժամացոյցս ալ քովս է. տեսնենք ժամը քանի՛ է —։

Տանկլարի ժամացոյցը, որ Պրէկէի գլխաւոր գործերէն մէկն էր, և զոր սեղանաւորը առջի իրիկունը ճամբայ ելնելէն առաջ հոգ տարեր էր լարելու, առտուան ժամը հինգ ու կէս հնչեց։

Առանց այն ժամացուցին՝ Տանկլար իւր ժամանակին անստուգութեան մէջ պիտի գտնուէր. քանզի յորեկուան լոյսը իւր խցիկին մէջ չէր թափանցեր։

Արդեօք իւր վիճակին վրայ աւազակներէն բացատրութիւն խնդրել պէտք էր, թէ սպասելու էր որ անոնք խօսին։ Վերջին որոշումը աւելի խելացիութիւնն էր։

Տանկլար մինչև կէս օր սպասեց։

Բոլոր այն միջոցին՝ պահանորդ մը իւր դրան առջին գինքը կը հսկէր։

Առտուան ժամը ութին պահանորդը փոխուեր էր։

Տանկլարին փափաք մը եկաւ տեսնելու թէ զինքը պահպանողը ո՛վ էր։

Զէ թէ յորեկուան այլ ձրագի մը լոյսին ճաճանչները՝ իրարու աղէկ չվիացած դրան տախտակներուն միջոցներէն ներս կը թափանցէր։

Տանկլար դրան այն ձեղքուածքներէն մէկուն մօտեցաւ ձիշդ այն միջոցին որ աւազակը քանի մը ումպ օղի կը խմէր, որ թէպէտ տիկի մէջ պարունակուած էր, բայց այնպիսի հոտ մը տարածեց, որմէ Տանկլար դարչեցաւ։

— Բա՛հ —, ըսաւ իր խղճմտին ամենէն ներսի կողմը քաշուելով։

Կէս օրին օղի խմող մարդին տեղը ուրիշ պահանորդ մը դրուեցաւ։

Տանկլար իր նոր պահապանը տեսնելու հետաքրքրութիւնն ունեցաւ։

Վերստին ձակին մօտեցաւ։

Այս պահապանը մեծ աչերով, հաստ շուրթերով, տափակ քիթով հսկայ աւազակ մը, Գողիաթ մ՚էր. իր դորշագոյն մազերը օձի նման գալարուած պատրոյգի պէս իր ուսերուն վրայ կը կախուէին։

— Ո՛հ՛, ըսաւ Տանկլար, այս մարդը աւելի հրէշի կը նմանի քան թէ մարդկային արարածի մը. այս մարդը իմ բանիս չդար —։

Նոյն միջոցին՝ պահապանը դողդոջ իրեն ապացուցանելու համար որ հրէշ մը չէ, խղճին դրան դիմացը նստաւ, իր պարկին մէջէն սեւ հաց, սոխ և պանիր հանեց ու սկսաւ անյագութեամբ ուտել։

— Ձեմ կրնար հասկընալ, ըսաւ Տանկլար իր դրանձեղքուածքին մէջէն աւազակին ձաշին նայելով, թէ ինչպէս կրնայ մարդ այսպիսի գարշելի բաներ ուտել —։

Եւ դնայ իր այծի մորթերուն վրայ նստաւ, որոնք առջի պահանորդին օղիին հոտը կը յիշեցընէին իրեն։

Բայց Տանկլար թող ուզածը ըսէ և ընէ, բնութեան պաղտնիքը անխմանալի են, անօթի ստամոքսերը ամենէն անախորժ կերակուրներու անպատ հակում մը ունին։

Տանկլար զգայ յանկարծ որ իր ստամոքսը դատարկ էր, և

այն ատեն մարդը նուաղ տգեղ, հայը նուաղ սեւ և պանիրը աւելի թարմ երեւցաւ։

Վերջապէս՝ այն բիրտ մարդուն նողկալի կերակուրն եղող հում սոխերը Ռոպէրի շինած համեմանքը և իր խոհարարին վարպետութեամբ պատրաստած շերտաձև խորովելիքը կը յիշեցընէին իրեն։

Տանկլար ոտք ելաւ և դնաց դուռը զարկաւ։

Աւազակը գլուխը վերցուց, և Տանկլար տեսաւ որ իր ձայնը լսուեր էր, և կրկին դուռը զարկաւ։

— Ինչ կ՚ուզես, հարցուց աւազակը։

— Բարեկամ, ըսաւ Տանկլար իր մտերմովը դրան վրայ թմբկահարելով, կարծեմ թէ ժամանակը եկած է որ ինձ ալ կերակուր բերէք —։

Սակայն կամ Տանկլարի լեզուն չհասկընալուն և կամ անոր կերակուր բերելու հրաման չունենալուն՝ հսկան իր ձաշը շարունակեց։

Տանկլար անոր այս ընթացքը նուաստացուցիչ համարելով, և չուզելով այն բիրտ մարդուն հետ աւելի խօսիլ, վերստին իր այծի մորթերուն վրայ պառկեցաւ և ձայն չհանեց։

Ասոր վրայ չորս ժամ անցան։

Հսկային տեղը ուրիշ աւազակ մը պահանորդ դրուեցաւ։

Տանկլար, որ ստամոքսի մեծ անձկութիւն մը կ՚ըզգար, կամայ մը ոտք ելաւ, իր աչքը վերստին դրան ձեղքուածքին մօտեցուց և իր պահանորդին դէմքը ճանչցաւ։

Իրօք առջի պահանորդին տեղը Բէբբինօն էր եկողը, որ դրան դիմացը նստաւ ու իր երկու սրնգայ մէջ հողէ պտուկ մը դրաւ, որուն մէջ խոզի ճարպով եփած սիսեռին ձէնձերն ու հոտը վեր կ՚ելլէր։

Այս կերակուրին քով Բէբբինօ Վէլէթրիի խաղողով լեցուն փոքրիկ սիրուն կողով մը և Օրվիէթոյի գինիով լեցուն սրուակ մը դրաւ։

Սուպիւ Բէբբինօ որկրամոլ մ՚էր։

Այս ախորժաբեր պատրաստութիւնները տեսնելով՝ Տանկլարի բերանէն ջուրերը կը վազէին։

— Տեսնենք, ըսաւ բանտարկեալը, արդեօք այս աւազակը մեղքէն աւելի խղճմտանքաւոր է — ։

Եւ յուշիկ մը իւր դուռը զարկաւ ։

— Եկայ —, ըսաւ աւազակը, որ Բասթրինիին պանդոկը միշտ յաճախելով, գաղտիարէն լեզուն լաւ սորվեր էր ։

Եւ իրօք եկաւ դուռը բացաւ ։

Տանկլար ճանչցաւ զան որ Ճամբան սոսկալի ձայնով «Գլուխդ ներս քաշէ» պոռացողն էր ։

Սակայն վիճելու ժամանակը չէր. ընդ հակառակն զուարթ դէմք մը երեցուց և քաղցր ժպիտով մը ըսաւ.

— Կը ներէք, պարոն. բայց ինձ ալ բան մը պիտի չտաք ուստելու ։

— Արդեօք Ձեր Վսեմութիւնը անօթի է, դոչեց Բէբրինօ ։

— Հարցընելը զարմանալի է, մրմռաց Տանկլար. Ճիշդ քսան և չորս ժամէ 'ի վեր բան մը կերած չեմ։ Այո, պարոն, յաւելցուց ձայնը բարձրացընելով, անօթի եմ, և բաւական անօթի ։

— Եւ Ձեր Վսեմութիւնը կերակուր կ'ուզէ . . . ։

— Հիմա՝ եթէ կարելի է ։

— Ասկէ դիւրին բան չկայ, ըսաւ Բէբրինօ. հոս մարդ ուզածը կրնայ գտնել, միայն թէ տակը տալով, աս ալ գիտնանք, ինչպէս ամեն բարի քրիստոնէից տունը կ'ըլլայ ։

— Անշուշտ, դոչեց Տանկլար, թէև ստուգիւ զիս բռնող և բանտարկող մարդիկ պէտք էին գոնէ իրենց բանտարկեալը կերակրել ։

— Ո՛հ, տէր իմ, կրկնեց Բէբրինօ, այդ սովորութիւնը չունինք ։

— Պատճառ մը չկրնար ըլլալ այդ, կրկնեց Տանկլար յուսալով իւր պահանորդին սիրտը փաղաքշել, այսու ամենայնիւ այն կերպով ալ գոհ կ'ըլլամ։ Ա՛ղէ, թող կերակուր բերեն ինձի ։

— Իսկոյն, տէր իմ. ինչ կ'ուզէք ուտել — ։

Եւ Բէբրինօ պտուկը դետինը դրաւ, այնպէս որ անոր ձենձերը ուղղակի Տանկլարին քթի ծակերուն մէջ կը մտնէր ։

— Հրամայեցէք, ըսաւ ։

— Խոհանոց ունի՞ք հոս, հարցուց սեղանաւորը ։

— Ի՛նչպէս, խոհանոց ունենալնիս կը հարցընէք, կատարեալ խոհանոցներ ունինք ։

— Խոհարարներ ։

— Ընտիր խոհարարներ ունինք ։

— Ուրեմն վառեակ մը, ձուկ մը կամ որսի միս, և կամ ինչ կ'ուզէ ըլլայ, միայն թէ կերակուր բերեն ինձի ։

— Ինչպէս որ կը հաճիք. ուրեմն վառեակ մը կ'ուզէք, այնպէս չէ՞ ։

— Այո՛, վառեակ մը — ։

Բէբրինօ իւր բոլոր ուժովը պոռաց.

— Նորին Վսեմութեան համար վառեակ մը բերէք — ։

Բէբրինոյի ձայնը գմբէթներուն տակը տակաւին կը հնչէր, երբ վայելուչ, նուրբ և կիսամերկ երիտասարդ մը երևցաւ արծաթի պնակի մը վրայ վառեակ մը բերելով ։

— Կարծես թէ Բարիզի Սրճանոցը կը գտնուինք, մրմռաց Տանկլար ։

— Ահա, տէր իմ —, ըսաւ Բէբրինօ վառեակը երիտասարդին ձեռքէն առնելով և որդնահար սեղանի մը վրայ դնելով, որ անչեներան աթոռով մը և այծի մորթէ անկողնով խցիկին բոլոր կարասիքը կը կազմէր ։

Տանկլար դանակ մը ու պատառաքաղ մը ուզեց ։

— Ահա, տէր իմ —, ըսաւ Բէբրինօ բաժայր փոքր դանակ մը և տոսաքեայ պատառաքաղ մը ներկայացընելով ։

Տանկլար մէկ ձեռքը դանակը և միւս ձեռքը պատառաքաղը առաւ և պատրաստուեցաւ վառեակը մանրելու ։

— Կը ներէք, տէր իմ, ըսաւ Բէբրինօ մէկ ձեռքը սեղանաւորին ուսին վրայ դնելով. հոս ուտելէն առաջ ստակը կը վճարեն. կրնայ ըլլալ որ դուրս ելնելու ատեն գոհ չըլլայ մարդ . . . ։

— Ա՛հ, մրմռաց Տանկլար, այս սովորութիւնը Բարիզի մէջ չկայ, հատանականաբար գուցէ զիս կողոպտեն ալ. բայց մենք ատեաձեռնութիւն ընենք ։ Միշտ լսած եմ որ Իտալիոյ մէջ կերակուրները խիստ աժան են. Հռոմի մէջ վառեակի մը գինը տասերկու ... սէթք է որ ըլլայ ։ Ահա ձեզ Լուի մը —, ըսաւ, և Բէբրինոյին ոսկի մը նետեց ։

Բէբրինօ ոսկին գետնէն առաւ, և Տանկլար դանակը վառեակին մօտեցուց ։

— Կեցիք, տէր իմ, ըսաւ Ռէբբինօ, Ձեր Վսեմութիւնը տակաւին պարտք ունի ինծի։

— Իրաւամբ ըսի որ պիտի կողոպտեն զիս —, մրմռաց Տանկլար։ Բայց մոռացեր որ այս հարստահարութեան հնազանդիլ պէտք է։

— Ըսէք, այս վիճակ վառեակին համար տակաւին որչափ է պարտքս, հարցուց։

— Ձեր Վսեմութիւնը առհաւիտ Լուի մը տուաւ։

— Վառեակի մը համար առհաւիտ Լուի մը։

— Անշուշտ առհաւիտ մ'է այս։

— Շատ աղէկ . . . ուրիշ։

— Ձեր Վսեմութիւնը տակաւին չորս հազար ինը հարիւր իննսուն և ինը Լուի պարտաւոր է —։

Տանկլար այս բիրտ կատակին վրայ իւր աչերը տարօրինակ բացաւ։

— Ո՛հ, այս ինչ ծաղրաշարժ մարդ է —, մրմռաց։

Եւ ուզեց վառեակը մանրել. բայց Ռէբբինօ ձախ ձեռքով սեղանաւորին աջ ձեռքը բռնելով, միւս ձեռքը անոր երկնցուց։

— Ա՛ղէ, տուէք, ըսաւ։

— Ի՛նչպէս, կատակ չէ՞ ըրածնիդ, ըսաւ Տանկլար։

— Երբէք կատակ չենք ըներ մենք, տէր իմ, կրկնեց Ռէբբինօ ծանրութեամբ մը։

— Ի՛նչպէս, վառեակի մը համար հարիւր հազար ֆրանք ուզելնիդ կատակ չէ՞։

— Տէր իմ, չէք կրնար հաւատալ թէ այս անիծեալ քարայրին մէջ հաւեր սնուցանելու համար որչափ դժուարութիւններ կը կրենք։

— Իրաւական է, ըսաւ Տանկլար, խիստ ծաղրաշարժ և խիստ զուարճալի է ստուգիւ ըսածնիդ. բայց որովհետև անօթի եմ, թողուցէք որ ուտեմ։ Ահա ուրիշ Լուի մը ձեզի համար, բարեկամ։

— Այն ատեն չորս հազար ինը հարիւր իննսուն և ութ Լուի կը մնայ պարտքերնիդ, ըսաւ Ռէբբինօ նոյն անտարբերութեամբ. համբերութեամբ մը նպատակին պիտի հասնինք։

— Ո՛հ, երբէք, ըսաւ Տանկլար անոր միօրինակ հեգնութենէն ձանձրանալով. պայէք, կորնք ասկէ. չէք դիտեր թէ որու հետ է ձեր գործը —։

Ռէբբինօ նշան մը ըրաւ. երիտասարդ սպասաւորը երկու ձեռները երկնցուց և իսկոյն վառեակը յափշտակեց։

Տանկլար այծի մորթէ անկողնոյն վրայ նետուեցաւ։

Ռէբբինօ դուռը վերստին գոցեց և իր կերակուրը սկսաւ ուտել։

Տանկլար Ռէբբինոյի ըրածը չէր կրնար տեսնել, բայց աւազակին ատամներուն կափկափումը ամենևին տարակոյս չէր թողուր իր ըրածին։

Ցայտնի էր որ կ'ուտէր, և մանաւանդ ձայնով ու անկիրթ մարդու մը պէս կ'ուտէր։

— Անկիրթ —, ըսաւ Տանկլար։

Ռէբբինօ այս խօսքը չլսել ձեւացուց, և առանց դլուխն անդամ դարձընելու՝ իր ձաշը շարունակեց բայց աւելի կամաց ձայնով։

Տանկլարի այնպէս կ'երևէր թէ իր ստամոքսը Պանայիաներուն տակաւին պէս ծակուած էր. չէր կարծեր որ պիտի կարենայ երբէք լեցընել զայն։

Ա՛յսու ամենայնիւ կէս ժամ մը ևս համբերեց. բայց ստոյգն ըսելով այս կէս ժամը դար մը երևցաւ իրեն։

Վերստին ոտք ելաւ և դրան մօտեցաւ։

— Աւելի երկար ատեն մի՛ տանջէք զիս, և ըսէք շուտով թէ ինչ կ'ուզէք ինձմէ։

— Բայց, տէր իմ, դուք ըսէք մեզի թէ ինչ կ'ուզէք մեզմէ. . . : Հրամայեցէք, և մենք ձեր հրամանները պիտի կատարենք։

— Ուրեմն նախ դուռը բացէք —։

Ռէբբինօ դուռը բացաւ։

— Կերակուր կ'ուզեմ, ըսաւ Տանկլար։

— Անօթի էք։

— Հարցընելու հարկ չկայ։

— Ձեր Վսեմութիւնը ինչ կ'ուզէ ուտել։

— Պատառ մը չոր հաց, քանի որ վառեակները այս անիծեալ մառաններուն մէջ անօրինակ դին մը ունին։

— Հաճի կ'ուզէք, շատ աղէկ, ըսաւ Ռէբբինօ. շուտով հաց բերէք հոս —, դոչեց։

Սպասաւորը հայի կտոր մը բերաւ։

— Ահա, ըսաւ Բէբբինօ։

— Ինչ պիտի վճարեմ, հարցուց Տանկլար։

— Չորս հազար լիր հարիւր լիւնսուն և ութ Լուի. երկու Լուի կանխիկ վճարած է։

— Ի՛նչպէս, պատառ մը հացը հարիւր հազար ֆրանք կ՛արժէ։

— Այո՛, հարիւր հազար ֆրանք, ըսաւ Բէբբինօ։

— Բայց վառեակի մը համար հարիւր հազար ֆրանք կը պահանջէիք։

— Կերակրոց զանազան գիներ չունինք, այլ մեր գիները որոշուած են։ Շատ ուտէք կամ քիչ, տասը պնակ կերակուր խնդրէք կամ միայն մէկ պնակ, մի և նոյն հաշիւն է մեզի համար։

— Դարձեալ կատակի սկսանք. սիրելի բարեկամ, կ՛իմացընեմ ձեզ որ ըրածնիդ այլանդակ և անխոհեմ գործ մ՛է։ Աւելի աղէկ է շուտով ըսէք թէ կ՛ուզէք որ անօթութենէ մեռնիմ։

— Ոչ, տէր իմ, դուք կ՛ուզէք ինքզինքնիդ սպաննել։ Վճարեցէք և կերէք։

— Ինչպէս վճարեմ, ո՛վ եռակի անասուն, ըսաւ Տանկլար բարկանալով. կը կարծէք որ մարդ հարիւր հազար ֆրնաք կ՛ունենայ իր ծոցը։

— Ձեր ծոցը հինգ միլիոն յիսուն հազար ֆրանք ունիք, տէր իմ, ըսաւ Բէբբինօ. հարիւր հազար ֆրանքնոց յիսուն վառեակի և յիսուն հազար ֆրանքնոց կէս վառեակի գինն է — ։

Տանկլար սարսռաց։

Գաղտնիքը երևան ելեր էր. միշտ կատակ մ՛էր այն, բայց վերջապէս նպատակը կը հասկընար։

Պէտք է ստոյգն ալ ըսել որ այն կատակը քիչ մը առաջ կարծածին չափ անպատեհ չէր պտներ։

— Այս հարիւր հազար ֆրանքը վճարելէս ետև՝ դոնէ պարտքէս ազատած պիտի համարիք զիս, և հանդիստ պիտի կրնամ ուտել։

— Անտարակոյս, ըսաւ Բէբբինօ։

— Բայց ինչպէս տամ այս գումարը, ըսաւ Տանկլար աւելի ապտութեամբ շունչ առնելով։

— Ստակէ աւելի գիւրին բան կայ. Հռոմի Թոմբըն և Ֆրէնչ վաճառատան վրայ բացուած վարկ մը ունիք. այն պարոններուն վրայ չորս հազար լիր հարիւր լիւնսուն և ութը Լուիձիի վճարագիր մը տուէք մեզ, և մեր սեղանաւորը կ՛ընդունի զայն — ։

Տանկլար բարի կամեցողութեան արժանաւորութիւնը դոնէ իրեն պահել ուզեց, Բէբբինոյի իրեն ներկայացուցած գրիչն ու թուղթը առաւ, վճարագիրը գրեց ու ստորագրեց։

— Ահա, ըսաւ, առէք ձեր խնդրած գրաբերին վճարելի հատուցագիրը։

— Ահա ձեր ալ խնդրած վառեակը — ։

Տանկլար հառաչելով վառեակը մնդրեց և սկսաւ ուտել. այնպիսի մեծ գումարի մը համար իրեն խիստ վատ կ՛երևէր այն։

Իսկ Բէբբինօ հատուցագիրը ուշադրութեամբ կարդալէն ետև ծոցը դրաւ և վերջապէս սկսաւ իր սիսեռը ուտել։



ԳԼՈՒԽ ԺԲ

ՆԵՐՈՒՄԸ

Հետևեալ առտու Տանկլար դարձեալ անօթեցաւ. քարայրը խիստ ախորժակ բայող օդ մը ունէր. կալանաւորը այնպէս կարծեց թէ այն օրուան համար ընելու ծախք չունի:

Խնայող մարդու մը պէս վառեակին կէսը և հացին մէկ կտորը իր խցիկին մէկ անկիւնը պահեր էր:

Բայց ատոնք ուտելուն պէս՝ ծարաւութիւն ունեցաւ. այս բանս իր մոքէն չանցեր էր:

Իր ցամքած լեզուին մինչև բերանին առաստաղին փակչիլ սկսիլը ծարաւութեան գէմ՝ մրցեցաւ:

Բայց իր ներսը այրող կրակին չդիմանալով պահանորդը կանչեց:

Պահանորդը դուռը բացաւ. Տանկլար նոր դէմք մը տեսաւ, և մտածեց որ աւելի աղէկ էր ծանօթի մը հետ գործ ունենալ. ուստի Բէբբինօն կանչեց:

— Ահա եկայ, տէր իմ, ըսաւ աւազակը այնպիսի արտորալով մը, որ աղէկ նշան մը երևցաւ Տանկլարին, ինչ կը փափաքիք:

— Ծարաւի եմ, ըսաւ կալանաւորը:

— Տէր իմ, ըսաւ Բէբբինօ, դիտէք որ Հռոմի շրջակաները դինին շատ սուղ է:

— Ուրեմն ջուր տուէք ինծի, ըսաւ Տանկլար անոր անիրաւ պահանջումէն խռովափել չանալով:

— Տէր իմ, ջուրը պղնիէն աւելի հազուագիւտ է. երաշտութիւնը այս կողմերը կը սիրէ:

— Ո՛հ, կ'երևի թէ նորէն սկիտի սկսինք—, ըսաւ Տանկլար:

Եւ կատակ ձևացընելու համար ժպտելով ողորմելի սեղանաւորը կ'ըզդար որ իր քունքերը քրտինքէն թրջուեր էին:

— Ա՛ղէ, բարեկամ, ըսաւ Տանկլար տեսնելով որ Բէբբինօ անկարեկիր կեցեր էր, բաժակ մը ջուր կը խնդրեմ, սկիտի մերժէք:

— Արդէն ըսի ձեզ, տէր իմ, պատասխանեց Բէբբինօ ծանրութեամբ, որ մասնակի բան չենք ծախեր:

— Ուրեմն շիշ մը գինի բեր:

— Ո՞ր տեսակէն:

— Ամենէն աժան տեսակէն:

— Ամենքն ալ նոյն գնով են:

— Եւ ինչ է անոնց գինը:

— Քսան և հինգ հազար ֆրանք իւրաքանչիւր շիշը:

— Աւելի աղէկ է ըսէք որ գիս կողոպտել կ'ուզէք, ըսաւ Տանկլար այնպիսի դառնագին ձայնով մը, որուն ազդեցութիւնը միայն կծծի մարդը կրնայ իմանալ, քան թէ այս կերպով քիչ քիչ ըսպառէք գիս:

— Կարելի է, ըսաւ Բէբբինօ, որ մեր գլխաւորին դիտաւորութիւնը այդ է:

— Ո՞վ է ձեր գլխաւորը:

— Այն անձը, որուն առջև հանեցինք զձեզ անցեալ օր:

— Եւ ո՞ւր է հիմա:

— Հոս է:

— Կ'ուզեմ տեսնել գինքը:

— Շատ աղէկ—:

Վայրկեան մը ետքը՝ Լուխի վանքա Տանկլարի դիմացը կը գտնուէր:

— Գիս կանչեցիք, հարցուց աւազակապետը կալանաւորին:

— Գիս հոս բերող մարդոց գլխաւորը դուք էք, պարոն:

— Այո՛, տէր իմ:

— Ինչ կը խնդրէք ինձմէ որ գիս ազատ թողուք, ըսէք:

— Ձեր ծոցը ունեցած հինգ միլիոններէն զատ բան չենք խընդրեր—:

Տանկլար զգաց որ ջղային կարկամութիւն մը իր սիրտը կը ձմլէր:

— Բոլոր ունեցածս և անբաւ հարստութենէս մնացածը այս է, պարոն, և երբ դուք կը յափշտակէք ղանոնք, աւելի աղէկ է որ կեանքս ալ վերցընէք:

— Արդիլեալ է մեզ ձեր արիւնը թափել, տէր իմ։
— Եւ ո՛վ է այդ բանը արգիլողը։
— Ա՛յն անձը որուն մենք կը հնազանդինք։
— Ուրեմն դուք մէկո՞ւն կը հնազանդիք։
— Ա՛յո՛, գլխաւորի մը։
— Ես կարծէի թէ դուք էք գլխաւորը։
— Ես այս մարդոց գլխաւորն եմ, բայց ուրիշ անձ մը իմ գլխաւորս է։
— Եւ այդ գլխաւորը մէկուն կը հնազանդի՞։
— Ա՛յո՛։
— Որո՞ւն։
— Աստուծոյ —։
Տանկլար վայրկեան մը մտախորհ մնաց։
— Ձեր ըսածները չեմ հասկընար, ըսաւ։
— Կարելի է։
— Եւ այն գլխաւորը ըսաւ ձեզի որ ինծի հետ այսպէս վարուիք։
— Ա՛յո՛։
— Ա՛յո՛։
— Ի՞նչ է անոր նպատակը։
— Ձեմ գիտեր։
— Բայց այդ կերպով իմ քսակս պիտի պարպէք։
— Հաւանական է։
— Ըսէք, միլիոն մը կ՚ուզէք։
— Ոչ։
— Երկու՞ միլիոն։
— Ոչ։
— Երէք միլիոն . . . չո՞րս . . . ։ Ա՛յո՛, չորս միլիոն կու տամ եթէ թողուք զիս որ ասկէ դուրս ելնեմ։
— Ինչո՞ւ հինգ միլիոն արժած բանէն չորս միլիոն կ՚առաջարկէք, ըսաւ Վանբա. անիրաւ վաշխ մը առնուլ կ՚ուզէք, սեղանաւոր տէր, և կամ ձեր միտքը չեմ հասկընար։
— Առէք ամենքն ալ, առէք ամենքն ալ, դուչեց, զիս ալ սպանեցէք։
— Ո՛հ, ոչ, հանդարտեցուցէք ձեր սիրտը, տէր իմ, և ձեր

արիւնը մի՛ գրգռէք. այդ կերպով օրը մէկ միլիոնի կերակուր ուտելու ախորժակինիդ պիտի բացուի. էհ, աւելի խնայողութիւն ըրէք։
— Բայց երբ ձեզ վճարելու ստակ չունենամ, դուչեց Տանկլար սրտնեղութեամբ։
— Ա՛յն ատեն պիտի անօթենաք։
— Պիտի անօթենամ կ՚ըսէք, կրկնեց Տանկլար այլաղունելով։
— Հաւանական է, պատասխանեց Վանբա պաղութեամբ։
— Բայց զիս սպանել չէք ուզեր ըսիք։
— Ոչ, չենք ուզեր։
— Եւ պիտի թողուք զիս որ անօթութենէ մեռնիմ։
— Նոյն բանը չէ այդ։
— Ո՛հ, թշուառականներ, դուչեց Տանկլար, ես ձեր անիրաւ հաշիւները՝ի դերև պիտի հանեմ. երկու անգամ մեռնիլ չըլլար, աւելի կ՚ընտրեմ ամեն բանի վերջ տալ. տանջեցէք, չարչարեցէք և սպաննեցէք զիս, բայց իմ ստորագրութիւնս պիտի չկրնաք ստանալ։
— Ուզածնուդ պէս ըրէք, տէր իմ—, ըսաւ Վանբա։
Եւ խցիկէն դուրս ելաւ։
Տանկլար մռնչիւնով մը իր այծի մորթերուն վրայ նետուեցաւ։
Արդեօք ո՞վ էին այս մարդիկը, և ո՞վ էր այն անտեսանելի գըլխաւորը. իրեն համար ինչ խորհուրդներ ունէին արդեօք, և երբ ամեն այն աւազակաց ձեռքը ինկողները իրենց փրկանպինը տալով կ՚ազատէին, ինքը ինչո՞ւ չէր կրնար ազատիլ։
Ո՛հ, անշուշտ արագահաս և դառն մահ մը աղէկ միջոց մ՚էր իր կատաղի թշնամիները յուսահատեցընելու, որոնք կարծես թէ իր վրայ անիմանալի վրէժխնդրութեան մը փափաքը կը կատարէին։
Ա՛յո՛, բայց ինչպէս պէտք էր մեռնիլ։
Տանկլար իր կենացը երկար ընթացքին մէջ դուչէ առաջին անգամն էր որ մեռնելու փափաքով և միանդամայն երկիւղով մտածէր. բայց իրեն համար ժամանակը եկած էր ալ հուսան կը մտածէր. բայց իրեն համար ժամանակը եկած էր ալ իր տեսութիւնը շրջել ամեն արարածոց սրտին մէջ կենդանի եղող այն անողոքելի ոգւոյն վրայ, որ իր սրտին ամեն մէկ բաբախման հետ իրեն կ՚ըսէր. Պէտք է որ մեռնիս։

Տանկլար եղբերաւոր այն անատնոց կը նմանէր, որոնք որսորդները տեսնելով կը դղդումին և իրենց յուսահատութեանը մէջ երբեմն փախչելու կը յաջողին։

Տանկլար մնաածեց որ փախչի։

Սակայն պատերը ժայռեր էին. իր խցիկէն դուրս ելնելու միակ ճամբուն վրայ մարդ մը կը կարդար, և այն մարդուն եաին հրացանակիր ստուերներու անցնել դառնալը կը տեսնէր։

Ջատագրելու համար իր որոշումը երկու օր տևեց, որմէ ետև կերակուր խնդրեց և միլիոն մը տուաւ։

Լաւ ընթրիք մը տուին անոր, և մէկ միլիոնը առին։

Ա՛յնուհետև ողորմելի բանտարկեալին կեանքը իր սովորական ընթացքէն դուրս ելած էր։

Ա՛յնչափ նեղութիւն կրեր էր որ չէր ուզեր այնուհետև ինքզինքը նեղութեան յանձնել, և աւազակներուն ամեն պահանջմանց կը հնազանդէր։

Տաներկու օրէն ետև՝ իր հարստութեան երջանիկ օրերուն մէջ ըրածին պէս ճաշ մը ընել էին եաքը, իր հաշիւը ըրաւ և նայեցաւ որ այնչափ վճարադիրեր տուած էր, որ միայն յիսուն հազար ֆրանք մնացեր էր իրեն։

Ա՛յն ատեն զարհանալի ազդեցութիւն մը ղգայ վերստին. հինգ միլիոնը կորնչըրնէին եաև՝ աշխատեցաւ մնացեալ յիսուն հազար ֆրանքը ազատելու։

Նախամեծար համարեց ղրկեալ կեանք մը անցընել, քան թէ այն յիսուն հազար ֆրանքը տալ. և յիմարութեան մօտեցընող յոյսեր ունեցաւ։

Ինքը որ այնչափ երկար ժամանակէ՝ի վեր զԱստուած մոռցեր էր, սկսաւ մտածել որ Աստուած շատ անդամ հրաշքներ գործած էր. կրնար այն քարայրը գետնին տակը անցընել. քահանայապետական կառավարութեան հրայանակիրները կրնային այն անիծեալ առանձնարանը գտնել և իրեն օգնութեան հասնիլ. այն ատեն յիսուն հազար ֆրանքը իրեն պիտի մնար. յիսուն հազար ֆրանքը անօթութենէ չմեռնելու համար բաւական դումար մ՚էր։

Աղօթք ըրաւ Աստուծոյ որ այն յիսուն հազար ֆրանքը իրեն պահէ, և աղօթք ըրած ատենը լացաւ։

Երեք օր այսպէս անցան, որ ատեն Աստուծոյ անունը եթէ ոչ իր սրտին մէջ դոնէ իր շրթանց վրայ յաճախ կրկնուեցաւ։

Մերթ ընդ մերթ զառանցութեան ժամեր ունէր. այնպէս կը կարծէր թէ խեղճ սենեկի մը մէջ խշտեակի մը վրայ ոգեվարքի մէջ եղող ծերունի մը կը տեսնէ։

Ա՛յն ծերունին ալ անօթութենէ կը մեռնէր։

Չորրորդ օրը՝ ալ կենդանութիւն չմնացեր էր անոր վրայ, այլ կենդանի դիակ մը եղեր էր։

Իր առջի օրուան կերածներուն ամենափոքր փշրանքը գետնէն ժողվեր էր և սկսեր էր գետինը բրուած բսխաթը ուտել։

Ա՛յն ատեն պահապան հրեշտակ մը աղաչելու պէս՝ Բէբբինօն աղաչեց որ իրեն քիչ մը ուտելիք տայ։

Պատառ մը հացի համար հազար ֆրանք խոստացաւ։

Բայց Բէբբինօ պատասխան անդամ չտուաւ։

Հինգերորդ օրը՝ մինչև խցիկին դուռը ընդքարշ եկաւ։

— Ուրեմն դուք քրիստոնեայ չէք, ըսաւ իր ծնողացը վրայ ելնելով, Աստուծոյ առջև ձեր եղբայրն եղող մարդը դուք սպաննել կ՚ուզէք։ Ո՞ւր էք, ով իմ նախնի բարեկամներս —, մրմռաց։

Եւ երեսն՚ի վայր գետինը ինկաւ։

Եաքը յուսահատութեամբ մը ոտք ելնելով.

— Գլխաւոր, պոռաց, ձուր ես։

— Ահաւասիկ եմ, ըսաւ Վանբա յանկարծ հոն գալով. ինչ կ՚ուզէք տակաւին։

— Առէք իմ ունեցած վերջին ոսկիներս, կակազեց Տանկլար իր դրապանը ներկայացընելով, և թողուցէք որ հոս այս քարայրին մէջ ապրիմ. այսուհետև ազատութիւն չեմ խնդրեր, այլ կը խընդրեմ որ ապրիմ։

— Ուրեմն շատ նեղութիւն կ՚ըզդաք, հարցուց Վանբա։

— Ո՛հ, այո, և կրնամ ըսել անտանելի։

— Այսու ամենայնիւ ձեզմէ աւելի նեղութիւն կրող մարդիկ եղան։

— Չեմ կարծեր։

— Այո, անոնք որ անօթութենէ մեռան —։

Տանկլարի միտքը եկաւ այն ծերունին, որուն անկողնոյն վրայ տանջուիլը տեսեր էր իւր զաւակութեան ժամերուն մէջ:

Հառաչանք մը հանելով գլուխը դետինը զարկաւ:

— Այո՛, ստոյգ է, ինձմէ աւելի նեղութիւն կրող մարդիկ եղան. սակայն գոնէ անոնք մարտիրոսներ էին:

— Գոնէ դուք ալ կը ղղջաք —, ըսաւ տխուր և հանդիսաւոր ձայն մը, որ Տանկլարի մազերը քաշմեց:

Իւր տկարացած նայուածքով չկրնայ իւր բոլորտիքը դիտել, և աւազակապետին եաին վերարկուով փաթթուած ու քարէ սիւնի մը ստուերին մէջ պահուած մարդ մը տեսաւ:

— Ինչ բանի վրայ ղղջամ, կակազեց Տանկլար:

— Ձեր գործած չարութեան վրայ, ըսաւ նոյն ձայնը:

— Ո՛հ, այո՛, այո՛, կը ղղջամ —, գոչեց Տանկլար:

Եւ իւր վատուժ բուռը կուրծքին զարկաւ:

— Այն ատեն ես ալ կը ներեմ ձեզ, ըսաւ մարդը վերարկուն իւր վրայէն նետելով և քայլ մը յառաջ լուսին մէջ գալով:

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, ըսաւ Տանկլար քիչ մը առաջ ասնօթութենէն և նեղութենէն ունեցած դեղնութենէն աւելի սոսկումէն դունատելով:

— Կը սխալիք, ես Մօնթէ-Քրիսթոյ կոմսը չեմ:

— Ո՞վ էք ուրեմն:

— Ես այն անձն եմ, զոր դուք զրպարտեցիք, մատնեցիք և անպատուեցիք. ես այն անձն եմ, որուն նշանածը դուք խայտառակեցիք. ես այն անձն եմ, որուն վրայ դուք քալեցիք հարստութեան դահը երթնելու համար. ես այն անձն եմ, որուն հայրը անօթութենէ մեռցուցիք, և զիս ալ անօթութենէ մեռնելու դատապարտեցիք, այսու ամենայնիւ կը ներեմ ձեզի, քանզի ես ալ ներում ընդունելու պէտք ունիմ. Էտմոն Տանթէ՛ան եմ ես —:

Տանկլար միայն ձայն մը հանեց, և երեսը մինչև գետինը խոնարհեցաւ:

— Ո՛տք եղիք, ըսաւ կոմսը, ձեր կեանքը ազատ է. այս երջանկութենէն զուրկ դատուեցան ձեր միւս երկու մեղսակիցները, որոնց մէկը խենթեցաւ, և միւսը մեռաւ: Ձեր գովը մնացած չիտուն հա-

զար ֆրանքը պահեցէք, կը նուիրեմ ձեզ զանոնք, բայց աղքատանոցայ վերաբերեալ ձեր դողցած հինգ միլիոնները անձամբ ձեռքով մը արդէն տեղերնին դրկուեցան:

«Եւ հիմա կերէք և խմեցէք. այս իրիկուն իմ հիւրս էք:

«Վանբա, երբ այս մարդը կշտանայ, ազատէ զան —:

Տանկլար այնպէս երեսնիվայր մնաց մինչև որ կոմսը իւր առջևէն հեռացաւ:

Երբ գլուխը վերցուց, ստուերի պէս բան մը տեսաւ որ դահլիճին մէջ աներևոյթ կ'ըլլար, և որուն առջև բոլոր աւազակները կը խոնարհէին:

Կոմսին հրամանին համեմատ՝ Վանբա Տանկլարին կերակուրները տուաւ, Իտալիոյ ամենէն ազնիւ գինիէն և ամենէն ընտիր պտուղներէն հրամցուց, և զան իւր սուրհանդակի կառքովը անկէ հեռացընելով, Ճամբուն մէջ տեղը թողուց, ուր Տանկլար մինչև լոյս կեցաւ, քանզի ուր պտնուիլը չէր գիտեր:

Առտու տեսաւ որ աղբիւրի մը մօտ կը գտնուէր. ծարաւի ըլլալուն՝ ուզեց ջուր խմել, և գձկուած ատենը ջուրին մէջ նայեցաւ որ իւր մազերը ճերմակեր էին:



ԳԼՈՒԽ ԾԸ

ՃՈԿԵՑՄԱՐՏՈՒԹԻՒՆԻ ՃԻՆԳԸ

Իրիկուան դրեթէ ժամը վեցն էր. պայծառ երկինքի վրայ աշնան դեղեցիկ արևը իւր ոսկեգոյն ճառագայթները կապուտագոյն ծովուն վրայ կը զարնէր:

Արևուն ջերմութիւնը աստիճանաբար անցեր էր, և սկսեր էր այն թեթև հովը փչել, որ տաք երկիրներուն մէջ կարծես թէ միջօրեայ քունէն արթննալէն ետև բնութեան շնչառութիւնն է, այն քաղցրասիրտ հովը, որ միջերկրականին ծովեզրերը կը զովացընէ, և ծովուն բարկ հոտին հետ խառն ծառոց բուրմունքը ծովեզերքէ՝ ի ծովեզերք կը տանի:

Ճիպրալթարէն Տարտանէլ և Թունուզէն Վենետիկ՝ տարածուող այն ընդարձակ լճին վրայ պարզ և վայելուչ ձևով թեթևաշարժ շեղակայմ մը իրիկուան առջի մշուշներուն մէջէն կը սահէր:

Իւր շարժումը կարապ թռչունին շարժման կը նմանէր, որ իւր թևերը հողմին կը բանայ և դոգոս ջուրին երեսէն կը սահի:

Շեղակայմը արագաշարժ և միանգամայն շնորհալի ընթացքով կը յառաջանար, և իւր ետևէն փոսփորական ակոս մը կը թողուր:

Կամաց կամաց արևը, որուն վերջին ճառագայթները ողջունելինք, արևմտեան հորիզոնին վրայ աներևութացեր էր. բայց իւր լուսոյ ցոլացումները դոգոս դիցաբանական յղորքները հաստատելու համար՝ իւրաքանչիւր ալիքներուն ծայրը երևելով, կարծես թէ երևան կը հանէին Լուսոյ չաստուածին Ամֆիտիտի դիրքը պահպանելը, որ պարապ տեղը կը ջանար իւր կապուտագոյն վերարկուին ծալքերուն մէջ իւր սիրահարը պահելու:

Շեղակայմը արագութեամբ կը յառաջանար, թէև ըստ երևոյթին հազիւ նորատի աղջկան մը խոպոպաձև մազերը շարժելու չափ հով կար:

Նաւուն պլխի կողմը բարձրահասակ և պղնձագոյն մարդ մը կանգնած՝ ցամաք երկրին իրեն մօտենալը կը դիտէր, որ բրդաձև մուշտ հողակոյտի նման կ'երևէր և փաթալանի լայն դլխարկի նման ալիքներուն մէջէն դուրս կ'ելնէր:

— Մօնթէ-Քրիսթոյ կղզին է այն, հարցուց ծանրութեամբ մը և խորին տխրութեամբ տպաւորուած ձայնով մը Ճանապարհորդը, որուն հրամանաց ներքև կարծես առժամանակեայ կը դտնուէր փոքր շեղակայմը:

— Այո՛, տէր իմ, պատասխանեց նաւապետը, կը մօտենանք:

— Կը մօտենանք —, մրմնաց Ճանապարհորդը անպատմելի մեղամաղձութեամբ լցուած ձայնով մը:

Ետքը ցած ձայնով մը յաւելցուց.

— Այո՛, հոն պիտի ըլլայ նաւահանգիստը —:

Եւ արտասուաց տխրութենէն աւելի տխուր իւր ժպիտը կը ցուցընէր որ Ճանապարհորդը վերստին իւր մտածութեանց մէջ ընկղմեցաւ:

Քանի մը վայրկեան ետքը՝ կղզւոյն վրայ բոցի մը լոյսը երևցաւ, որ իսկոյն մարեցաւ, և հրաբաղ գինքի մը շառաչիւնը մինչև շեղակայմին մէջ լսուեցաւ:

— Տէր իմ, ըսաւ նաւապետը, ցամաքէն մեզ նշան կու տան, կ'ուզէք դուք ալ այն նշանին պատասխանել:

— Ինչ նշան —, հարցուց Ճանապարհորդը:

Նաւապետը ձեռքը դէպ՝ ի կղզին երկնցուց, որուն կողերէն սպիտակագոյն ծուխի գունդ մը վեր կ'ելնէր, և ընդարձակուելով օդին մէջ կը ցրուէր:

— Ո՛հ, այո՛, ըսաւ երազէ մը սթափածի պէս, տուէք —:

Նաւապետը լցուած հրացան մը ներկայացուց անոր, Ճանապարհորդը առաւ ղայն, կամաց մը վեր վերցուց և կրակը տուաւ:

Տասը վայրկեան ետքը՝ առագաստները ամփոփեցին և փոքր նաւահանգստէ մը հարիւր քայլ հեռու խարիսխ նետեցին:

Մակոյկը չորս թիավարներով և մէկ նաւուղիղով արդէն ծովը իջուցած էին:

Ճանապարհորդը մակոյկին մէջ իջաւ, և փոխանակ խելաց կողմը նստելու, ուր կապոյտ գորգ մը բրուած էր, ոտքի վրայ և թեւերը իրարու պլլած կեցաւ:

Թիավարները թևերնին չորցընող թուչուններու պէս թիակնին կէս մը վերցուցած կ'ըսպասէին։

— Քաշեցէք —, ըսաւ Ճանապարհորդը։

Ութ թիակները միատեղ ծովին մէջ իջան առանց կաթիլ մը ջուր ցայտեցընելու։

Մակոյկը մղման հնազանդելով արագութեամբ սահեցաւ։

Մէկ վայրկեանի մէջ՝ բնական կիսալուսնի ձևով փոքր խորշի մը մէջ մտաւ, և բարակ աւազէ յատակի մը վրայ քալեց։

— Տէր իմ, ըսաւ նաւուղիղը, մեր մարդոց երկուքին կռնակը հեծէք, որ ցամաքը տանին զձեզ —։

Երիտասարդը այս հրաւէրին կատարեալ անտարբերութեան շարժմամբ մը պատասխանեց, մակոյկին վրայէն ջուրին մէջ սահեցաւ, որ մինչև մէջքը հասաւ։

— Ո՛հ, տէր իմ, մրմռաց նաւուղիղը, մի՛ ընէք այդ բանը, ու հիմա մեր տէրը պիտի յանդիմանէ զմեզ —։

Երիտասարդը մտիկ չընելով դէպ ի ծովեզրը յառաջացաւ, երկու նաւաստիներու եւևէն քալելով, որոնք Ճամբան կը ցուցընէին։

Երեսուն քայլի չափ յառաջանալէ ետև ցամաքը հասան։ Երիտասարդը իւր ոտքերը թոթվելով իւր բոլորտիքը կը դիտէր և երթալու Ճամբան կը փնտռէր, քանզի բոլորովին մենաւոր էր։

Գլուխը զարձուցած ատենը՝ իւր ուսին վրայ ձեռք մը զգաց, և ձայն մը դինքը սարսռացուց։

— Բարի եկաք, Մաքսիմիլիէն, կ'ըսէր այն ձայնը. Ճշդապահ էք եղեր, շնորհակալ եմ։

— Դո՞ւք էք, կոմս, գոչեց երիտասարդը այնպիսի շարժումով մը որ ուրախութեան կը նմանէր և երկու ձեռօք Մոնթէ-Քրիսթոյի ձեռքը սեղմելով։

— Այո՛, ինչպէս որ կը տեսնէք, ես ալ Ճշդապահ ըլլալ ուզեցի. բայց ձեր վրայէն ջուրերը կը վազեն, բարեկամ, պէտք էք զգեստնիդ փոխել, ինչպէս կրնար ըսել Կալիպսօ Տելեմաքին։ Եկէք ուրեմն, հոս ձեզի համար կատարեալ պատրաստուած բնակութիւն մը կայ, ուր ձեր յոգնութիւնն ու ցրտութիւնը պիտի մոռնաք —։

Մոնթէ-Քրիսթօ նայեցաւ որ Մորէլ ետ կը դառնար։

Սպասեց։

Իրօք երիտասարդը զարմանքով տեսաւ որ գինքը հոն բերողները ամենևին խօսք մը չխօսեր էին, և իրմէ վՃարում մը չառած մեկներ էին։

Դէպ ի՛ր ընդակայմը վերադարձող մակոյկին թիակներուն ձայնը արդէն կը լսուէր։

— Ո՛հ, այո՛, ըսաւ կոմսը, նաւավարներուն ստանկը տալ կ'ուզէք։

— Ընշուշտ, բան մը չվՃարեցի, և անոնք մեկնեցան։

— Հոգ մի՛ ընէք, Մաքսիմիլիէն, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ ծիծաղելով. դաշինք ըրած եմ իմ նաւաստիներուս հետ, որ իմ կղզւոյս մուտքը որ և է Ճամբորդութեան ծախքէ ազատ ըլլայ։ Ինչպէս կ'ըսեն քաղաքակրթեալ քաղաքայ մէջ՝ բաժանորդ եղած եմ —։

Մորէլ զարմանքով կոմսին երեսը նայեցաւ։

— Կոմս, ըսաւ Բարիզ եղած ժամանակնուդ պէս չէք.

— Ինչպէս։

— Այո՛, հոս կը ծիծաղիք —։

Մոնթէ-Քրիսթոյի դէմքը յանկարծ տխրութիւն մը պատեց։

— Իրաւունք ունիք ինքզինքս ինձ յիշել տալու, Մաքսիմիլիէն, ըսաւ. ինծի համար զձեզ վերստին տեսնելը երջանկութիւն մ'էր, և մոռցայ որ ամեն երջանկութիւն անցաւոր է։

— Ո՛հ, ոչ, ոչ, կոմս, գոչեց Մորէլ իւր բարեկամին երկու ձեռքը բռնելով. ընդ հակառակն, ծիծաղեցէք, երջանիկ եղիք, և ձեր անտարբերութեամբը ապացուցէք ինձ թէ կեանքը միայն նեղութիւն կրողներուն համար անտանելի է։ Ո՛հ, դուք մարդասէր, բարի և մեծ էք, բարեկամ, և զիս քաջալերելու համար այդ զուարթութիւնը կը կեղծէք։

— Կը սխալիք, Մորէլ, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ. պատՃառը այն է որ իրօք երջանիկ էի։

— Ուրեմն մոռցաք զիս, աւելի աղէկ։

— Ինչպէս։

— Այո՛, և ես հիմա ձեզ կ'ըսեմ այն խօսքը, զոր ըմբշամար-

որը Կրկէսին մէջ մնաղլով կայսեր ըսաւ. —«Մեռնելու վրայ եղողը կ'ողջունէ զքեզ»։

— Եւ չմխիթարուեցաք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ տարօրինակ նայուածքով մը։

— Ո՛հ, ըսաւ Մորէլ դառնալի նայուածքով մը, իրօք կարծեցիք որ ես պիտի կրնամ մխիթարուիլ։

— Մտիկ ըրէք, ըսաւ կոմսը, անշուշտ կը հասկընաք ըսածներս, այնպէս չէ՞, Մաքսիմիլիէն։ Անտարակոյս զիս ռամիկ մարդու կամ ժամահար կոչնակի պէս անորոշ և դատարկ ձայներ հանող շաղակրատի տեղ դրած չէք։ Երբ կը հարցնեմ ձեզ թէ արդեօք մխիթարուեցաք, իրը այնպիսի մէկը կը հարցնեմ, որուն համար մարդկային սիրտը գաղտնիք չունի։ Մորէլ, իմնեցիք միատեղ ձեր սրտին խորը և քննեցէք զայն։ Միթէ անհամբեր վիշտերը տակաւին պաշարած են զձեզ, որոնցմէ մարդս մեղուկէ խայթուած առիւծի նման կը խրտչի։ Միշտ նոյն ջերմատապ ծարաւութիւնը ունիք, որ միայն գերեզմանի մէջ կ'անցնի։ Միշտ այն իտէական վիշտը ունիք, որ կենդանի մարդը կեանքէն դուրս կը հանէ և մեռեալը փընտռել կու տայ, և կամ սպառած ուժի տկարութիւն ունիք, և ամեն բանէ ձանձրացած ձեր յոյսը կորնսնցուցած էք։ Ո՛հ, սիրելիդ իմ Մաքսիմիլիէն, եթէ այսպէս է, եթէ ձեր ոյժը միայն Աստուծոյ վրայ դրած էք և միայն դէպ 'ի երկինք կը նայիք, միխիթարուած էք դուք, ալ մի՛ ցաւիք։

— Կոմս, ըսաւ Մորէլ իր քաղցր և միանդամայն հաստատ ձայնովը, կոմս, մտիկ ըրէք ինձի, ինչպէս պէտք է մտիկ ընել այն մարդուն, որ իր մատը երկրի վրայ երկնցուցած և աչերը դէպ 'ի երկինք վերցուցած կը խօսի։ Բարեկամի մը բաղկացը մէջ մեռնելու համար ես ձեր քովը եկած եմ։ Ցիրաւի թէև տակաւին սիրելիներ ունիմ, ինչպէս են իմ ծիլլի քոյրս և անոր Էմմանուէլ ամուսինը. սակայն իմ վերջին վայրկեաններուս մէջ զօրաւոր բազուկներու և ժպտադի պէտք ունիմ. քոյրս այն վայրկենին կրնայ լալ և նուաղիլ. բաւական վիշտեր կրած ըլլալուս պիտի չկրնամ անոր վշտահարիլը տեսնել. Էմմանուէլ կրնայ ձեռքէս դէնքս առնուլ և տունը ձայներով լեցընել։ Բայց դուք, որ ձեր խօսքը

առած էք, կոմս, գուք որ դերագոյն էակ մը պիտի երևէիք ինձ, եթէ մահկանացու չըլլայիք, մինչև մահուան դուռը խաղաղութեամբ և սիրով պիտի ընկերանաք ինձ, այնպէս չէ՞։

— Բարեկամ, ըսաւ կոմսը, տակաւին տարակոյս մը ունիմ. արդեօք ձեր վիշտը այդպէս չափազանց երևցընելնիդ ձեր հպարտութենէն է։

— Ո՛չ, նայեցէք, սիրտս հանդարտ է, ըսաւ Մորէլ ձեռքը կոմսին երկնցընելով, և իմ երակացս բաբախիւնը սովորականէն ոչ աւելի սաստիկ է և ոչ աւելի կամաց։ Կ'ըզդամ որ ձամբուն ծայրը հասած եմ, աւելի յառաջ չպիտի երթամ։ Ինծի ըսիք որ սպասեմ և յուսամ. գիտէք ինչ ըրիք թշուառ մարդու մը։ Ամիս մը սպասեցի, այսինքն ամիս մը նեղութիւն կրեցի։ Ցուսացի, (մարդս խեղճ և թշուառ արարած մ'է), յուսացի, բայց ինչ բան, չեմ գիտեր, անծանօթ, այլանդակ, և չիմարական բան մը, հրաշք մը յուսացի . . . ինչ հրաշք, Աստուած միայն կրնայ ըսել, Աստուած մը խելքին հետ յոյս կոչուած չիմարութիւնը խառնած է։ Այո՛, սպասեցի, յուսացի, կոմս, և քառորդէ մը 'ի վեր որ իրարու հետ կը խօսինք, առանց գիտնալու հարիւր անգամ իմ սիրտս վիրաւորեցիք, տանջեցիք. քանզի ձեր ամեն մէկ խօսքը ապացոյցով հաստատեց թէ ինծի համար ալ յոյս չկայ։ Ո՛վ կոմս, ինչպէս խաղաղութեամբ և փափկութեամբ դերեզմանիս մէջ պիտի հանգչիմ —։

Մորէլ այս ջերմին խօսքերը այնպիսի ուժգնութեամբ արտասանեց, որոնցմէ կոմսը սարսռաց։

— Բարեկամ, շարունակեց Մորէլ, տեսնելով որ կոմսը լռութիւն կը պահէր, Հոկտեմբերի 5ը պայմանաժամ սահմանեցիք ինծի, և այսօր Հոկտեմբերի 5ն է —։

Մորէլ իր ժամացոյցը նայեցաւ։

— Ժամը ինն է, ըսաւ, դեռ երեք ժամ ունիմ ապրելու։

— Թող այնպէս ըլլայ —, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ։

Մորէլ մեքենապէս կոմսին ետևէն գնաց, և երկուքնին ալ քարայրին մէջ մտեր էին, ու Մորէլ դեռ ուր գտնուիլը չէր գիտած։ Իր ոտից տակը գորգեր գտաւ, իր առջին դուռ մը բացուեցաւ,

անուշահոտ բուրմունքներ ամեն կողմ ծաւալած էին, և լոյսը իւր աչայ զարկաւ։

Այն ատեն Մորէլ կեցաւ աւելի յառաջ երթալու երկմտելով. քանզի ղինքը շրջապատող մեղկացուցիչ հեշտութեանց ինքզինքը չէր վստահեր։

Մօնթէ-Քրիսթօ մեղմով յառաջ տարաւ զան։

— Չ՚վայլեր, ըսաւ, որ մեր մնացեալ երեք ժամերը այն նախնի Հռոմայեցւոց պէս անցընենք, որոնք իրենց Ներոն կայսրէն դատապարտուելով, ծաղկեայ պսակներով սեղան կը նստէին, ու արեւածաղիկներու և վարդերու բուրման հետ մահը կը շնչէին —։

Մորէլ ժպտեցաւ։

— Ինչպէս որ կը հաճիք, ըսաւ. մահը միշտ մահ է, մահը մոռացութիւն է, այսինքն հանգստութիւն է, այսինքն կենաց և հետևաբար վշտաց բացակայութիւն է —։

Մաքսիմիլիէն նստաւ և Մօնթէ-Քրիսթօ անոր դիմացը տեղաւորեցաւ։

Այն հիանալի սեղանատան մէջ կը գտնուէին, զոր ժամանակաւ նկարագրած ենք, և ուր մարմարեայ արձանները իրենց գլուխնուն վրայ միշտ ծաղիկներով և պտուղներով լեցուն կողովներ կը կրեն։

Մորէլ ամեն բանի անորոշ կերպով նայեր էր, և հաւանական էր որ բան մը տեսած չէր։

— Իրը մարդ խօսակցինք, ըսաւ ապշութեամբ կոմսին նայելով։

— Խօսեցէք, պատասխանեց կոմսը։

— Կոմս, կրկնեց Մորէլ, դուք մարդկային գիտութեանց բովանդակութիւնն էք, և միրինէն աւելի յառաջացեալ և աւելի հանճարեալի աշխարհէ մը իջած ազդեցութիւնը կ՚ընէք ինծի։

— Ըսածնուդ մէջ ստոյգ կէտ մը կայ, Մորէլ, ըսաւ կոմսը այնպիսի տխուր ժպիտով մը, որ իրեն դեղեցկութիւն կու տար, Վիշտ կոչուած մոլորակէ մը իջած եմ ես։

— Ամեն ըսածնուդ կը հաւատամ առանց անոնց միտքը հասկընալու համար աշխատելու, կոմս, և ասոր ապացոյց՝ հրամայեցիք ինձ որ ապրիմ, և ապրեցայ. ըսիք որ յուսամ, և դրեթէ յուսացի։ Ուստի պիտի համարձակիմ հարցընել ձեզ, կոմս, որպէս թէ արդէն անդամ մը մեռած ըլլայիք. «կոմս, մեռնելու ժամանակ ցառ կ՚ըզգայ մարդ»։

Մօնթէ-Քրիսթօ խորին խանդաղատութեամբ Մորէլին կը նայէր։

— Այո՛, ըսաւ, անտարակոյս, շատ ցաւ պիտի զգաք, եթէ բռնի մահուամբ անշնչացընէք այն մահացու մարմինը, որ յամառութեամբ կ՚ուզէ ապրիլ։ Եթէ դաշոյնի մը անտեսանելի ակռաներով ձեր մարմինը յոշոտէք, եթէ դիւրավրէպ դնտակով մը ձեր դիւրաւ տխրեցող ուղեղը ծակէք, խիստ ցաւեր պիտի զգաք, և զրժդոհութեամբ կեանքէն պիտի բաժնուիք, զոր ձեր յուսահատեալ ոգեվարքին մէջ այնչափ սուղ գնուած հանգստութենէ մը լաւագոյն պիտի գտնէք։

— Այո՛, կը հասկընամ, ըսաւ Մորէլ, կենաց պէս մահն ալ վշտաց և հեշտութեանց գաղտնիքն ունի. ամեն բան զանոնք ճանչնալէն կախեալ է։

— Ճիշդ այդպէս է, Մաքսիմիլիէն, և շատ ստոյգ խօսեցաք։ Մահը մեր իրեն հետ աղէկ կամ գէշ վարուածին համեմատ կամ բարեկամ է մեզ, որ մնուցիչի պէս մեղմով կ՚ըսփոփէ զմեզ, և կամ թշնամի մ՚է, որ բռնութեամբ մեր հոգին մարմինէն կը խլէ։ Եթէ ժամանակ գայ որ մարդիկ հազարաւոր տարի ապրին, և ինչպէս կ՚ըսէիք՝ մահուան գաղտնիքը իմանան, այն ատեն մահը սիպէս կ՚ըսէիք՝ մահուան գաղտնիքը իմանան, այն ատեն մահը սիրուհոյ մը գրկաց մէջ վայելուած քունէն աւելի քաղցր և աւելի հեշտալի պիտի ըլլայ։

— Եւ եթէ դուք մեռնիլ ուզէիք, այդ կերպով պիտի կրնայիք մեռնիլ, կոմս։

— Այո՛ —։

Մորէլ ձեռքը անոր երկնցուց։

— Հիմա հասկըցայ, ըսաւ, թէ ինչու ժամադիր եղաք ինծի Ովկիանոս մը մէջ տեղը այս առանձնացեալ կղզւոյն և այս ստորերկրեայ պալատին մէջ, որ Փարաւոնի մը նախանձելի գերեզմանը կրնայ ըլլալ։ Վասն զի զիս խիստ սիրելնուդ համար ուզեցիք որ ձեր հիմա յիշած մահուամբ մեռնիմ, այսինքն առանց ոգեվարքի, և կարենաք վալանթինի անունը արտասանել և ձեր ձեռքը սեղմել։

— Այո՛, աղէկ գուշակեցիք, Մորէլ, ըսաւ կոմսը պարզմտութեամբ մը, և իմ միտքս այս էր։

— Շնորհակալ եմ, վաղը ամեն վիշտերէ աղատելու գաղափարը խեղճ սրտիս քաղցր կ'երևի:

— Ամենևին բանի մը համար չէք ցաւիր, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Ոչ, պատասխանեց Մորէլ:

— Եւ ո՞չ իսկ ինծի համար —, հարցուց կոմսը սրտի խորին յուզմամբ:

Մորէլ պատասխան չտուաւ. իւր պայծառ աչքը յանկարծ աղօտանալէն ետև անսովոր պայծառութեամբ փայլեցաւ. արտասուաց խոշոր կաթիլ մը բղխեցաւ և իւր այտին վրայ արծաթազոյն ակոս մը գծելով վար գլորեցաւ:

— Ի՛նչ, ըսաւ կոմսը, երկրի վրայ ցաւելու բան մը ունիք և մեռնիլ կ'ուզէք:

— Ո՛հ, կ'աղաչեմ, գոչեց Մորէլ տկար ձայնով մը, ուրիշ խօսք մի՛ խօսիք, և իմ տանջանքս աւելի մի՛ ընդերկարէք —:

Կոմսը կարծեց թէ Մորէլ կը տկարանար:

Ա՛յս կարծիքը վերստին այն սոսկալի տարակոյսը պատճառեց իրեն, որուն անգամ մը յաղթեր էր Իֆ դղեակին մէջ:

— Ա՛յս մարդը երջանկացընելու կ'ըղբաղիմ, մտածեց կոմսը, որպէս զի անոր ընելու հատուցումն գործուած չարութեանց զուգակշիռ ըլլայ: Բայց եթէ սխալած եմ, եթէ այս մարդը երջանկութեան արժանի ըլլալու չափ ողորմելի չէ, ափսո՛ս, ինչ պիտի ըլլայ իմ գործս, որ միայն բարիք ընելով չարութիւնը մոռնալ կ'ուզեմ:

«Մտիկ ըրէք, Մորէլ յայտնի կը տեսնեմ որ ձեր վիշտը անտանելի է, սակայն դուք Աստուծոյ կը հաւատաք, և ձեր հոգւոյն փրկութիւնը վտանգի մէջ ձգել չէք ուզեր —:

Մորէլ տխրութեամբ ժպտեցաւ:

— Կոմս, ըսաւ, գիտէք որ կատակ չեմ ըներ. կ'երդնում որ հոգիս այսուհետև իմս չէ:

— Մտիկ ըրէք, Մորէլ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. գիտէք որ աշխարհի մէջ ազդական մը չունիմ, և զձեզ իբր զաւակս կը նկատեմ. իմ զաւակս ազատելու համար կեանքս և աւելի իրաւամբ հարստութիւնս պիտի զոհեմ:

— Ինչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզեմ, Մորէլ, թէ խիստ հարուստ կեանքի մը ամեն հեշտութիւնները չճանչնալնուդ համար կ'ուզէք մեռնիլ: Մորէլ, հարիւր միլիոնի մօտ հարստութիւն ունիմ, զորոնք ձեզ կը նուիրեմ. այսպիսի հարստութեամբ ձեր ամեն նպատակք կրնաք հասնիլ: Եթէ փառասէր էք, ամեն աստիճանները ձեր առջևը պիտի բացուին. աշխարհիս ամեն զուարճութիւնները վայելեցէք, և ուրաժնիդ ըրէք, բայց ապրեցէք:

— Կոմս, ձեր խօսքը առած եմ, պատասխանեց պաղութեամբ Մորէլ, և ժամը տասն ու մէկ ու կէս է, յաւելցուց ժամացոյցը նայելով:

— Մորէլ, իմ աչացս առջև և տանս մէջ այդպիսի բան մը ընել կը խորհիք:

— Ուրեմն թողուցէք որ մեկնիմ, ըսաւ Մաքսիմիլիէն տխրութեամբ մը, եթէ ոչ՝ պիտի կարծեմ թէ չէք սիրեր զիս —:

Եւ ոտք ելաւ:

— Շատ աղէկ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ աւելի զուարթ դէմք մը երևցընելով. ուրեմն անշուշտ կ'ուզէք, Մորէլ, և անփոփոխ մտքերնիդ դրած էք. այո՛, խիստ ողորմելի անձ մ'էք դուք, և ինչպէս որ ըսիք՝ միայն հրաշք մը կրնայ բուժել ձեզ. նստեցէք ուրեմն, Մորէլ, և սպասեցէք —:

Մորէլ հնազանդեցաւ. Մօնթէ-Քրիսթօ ոտք ելաւ, զգուշութեամբ դոցուած պահանոյի մը մօտեցաւ, որուն բանալին ոսկի շղթայով մը իւր վրայ կը կրէր, և անոր մէջէն շքեղ բանուած արծաթի արկղիկ մը հանեց, որուն անկիւնները չորս կնոջ պատկերներ կը ներկայացընէին:

Արկղիկը սեղանին վրայ դրաւ, բացաւ զայն և անոր մէջէն ոսկի տուփ մը հանեց, որուն խուփը պաղտնի զսպանակի մը սեղմուելովը կը բացուէր:

Այս տուփը կէս լոյծ իւղային նիւթ մը կը պարունակէր, որուն դոյնը տուփը զարդարող փայլուն ոսկիին, շափիւղաներուն, սուտակներուն և զմրուխտներուն դոյներուն հետ խառնուելով անկարելի էր նկարագրել:

Կապույտի, ծիրանիի և ոսկեդոյնի ձաձանչներ ունէր։

Կոմսը ոսկեզօծեալ դրդալով մը այն նիւթէն քիչ մը առաւ և Մորէլի տալով երկար նայուածք մը յարեց անոր վրայ։

Ան ատեն՝ այն նիւթին կանաչ գոյն ունենալը տեսան։

— Ահա ձեր խնդրածը, ըսաւ կոմսը, և ահա իմ ձեզի խոստացածս։

— Դեռ չմեռած, ըսաւ երիտասարդը Մօնթէ-Քրիսթոյի ձեռքէն դրդալը առնելով, սրտանց շնորհակալ եմ ձեզ —։

Կոմսը երկրորդ դրդալ մը առաւ, և ոսկի տուփին մէջէն լեցուց ղայն։

— Ինչ պիտի ընէք, բարեկամ, հարցուց Մորէլ անոր ձեռքը բռնելով։

— Ստուգիւ, Մորէլ, պատասխանեց կոմսը ժպտելով, ես ալ ձեզի չափ կեանքէն ձանձրացած եմ, և որովհետև առիթը ինքնին կը ներկայանայ։

— Կեցէք, գոչեց երիտասարդը. ա՜հ, դուք որ փոխադարձ սէր ունիք ու յուսոյ կը հաւատաք, իմ ըրածս մի՛ ընէք, ձեզի համար մեղք մը կրնայ համարուիլ։ Մնաք բարեաւ, ազնիւ և առատասիրտ բարեկամս, ես պիտի երթամ Վալանթինին ըսելու ինչ որ դուք ինծի համար ըրիք —։

Եւ Մորէլ առանց երկմտութեան և միայն դէպ ի կոմսը երկընցուցած ձեռքը սեղմելով, Մօնթէ-Քրիսթոյին (տուած այն դաղտնի նիւթը կլլեց՝ կամ լաւ ևս է ըսել ախորժակով մը ճաշակեց։

Ան ատեն երկուքնին ալ լուեցին, Ալի լռութեամբ և զղուշութեամբ ներս մտաւ, ծուխ և ծխաքաշներ բերաւ, անոնց սուրճ տուաւ և անհետացաւ եղաւ։

Կամաց կամաց մարմարեայ արձաններուն ձեռքը եղած ճրագներուն լոյսը Մորէլի համար սղօտացաւ, և խնկանոցներուն անուշ հոտերը նուաղ ազդու կ'երևէին։

Մօնթէ-Քրիսթօ անոր դիմացը ստուերին մէջ նստած՝ անոր երեսը կը նայէր, և Մորէլ կոմսին փայլուն աչերէն զատ բան չէր տեսներ։

Երիտասարդին վրայ անպայման վիշտ մը տիրեց. ծխաքաշը գոգ-

ցես իր ձեռքէն կը սահէր. առարկաները անղգալի կերպով իրենց ձևն ու գոյնը կը կորսնցնէին. իր այլայլեալ աչաց՝ դռներն ու վարագոյրները բացուելու պէս կ'երևէին։

— Բարեկամ, ըսաւ, կ'ըզդամ որ կը մեռնիմ, շնորհակալ եմ —։

Վերջին անգամ մը իր ձեռքը կոմսին երկնցընելու փորձ փորձեց, բայց իր անոյժ ձեռքը իր քովը ինկաւ։

Ան ատեն իրեն այնպէս երևցաւ թէ Մօնթէ-Քրիսթօ կը ժպտէր բայց ոչ իր տարօրինակ և սոսկալի ժպիտովը, որ շատ անգամ այն խորամիտ անձին գաղտնիքը իրեն յայտներ էր, այլ այն մարդասէր խանդաղատութեամբ, զոր հայրերը անհանճար խօսքեր ընող իրենց փոքր զաւակաց վրայ կ'ունենան։

Նոյն միջոցին կոմսը իր աչաց կը մեծնար, անոր հասակը գրեթէ կրկին բարձրութիւնը ստանալով, կարմիր վարագոյրներուն վրայ կը նկարուէր. իր սև մազերը ետին ձգած էր, և կանգնած ու սէգ կ'երևէր վերջին դատաստանին օրը չարերուն սպառնացող հրեշտակներէն մէկուն պէս։

Մորէլ ուժէ կտրած իր թևաթոռին վրայ թաւալեցաւ. իր ամէն երակներուն մէջ մեղմ թմբրութիւն մը տիրեց։ Իր զգացածը երազ մ'էր. իրեն այնպէս կ'երևէր թէ մահուան առաջնորդող անորոշ զառանցանաց մէջ կը դտնուի։

Անգամ մը ևս իր ձեռքը կոմսին երկնցընել ուզեց, բայց այս անգամ իր ձեռքը չշարժեցաւ իսկ. ուզեց վերջնական ողջոյն մը տալ, բայց իր լեզուն դերեզմանի մը վրայ խցուած քարի մը պէս իր կոկորդին մէջ ծանրութեամբ դարձաւ։

Իր տկարացած աչերը ակամայ դոցուեցան. սակայն իր արտեւանանց տակէն պատկերի մը շարժիլը տեսաւ, զոր իր աչաց մթագնութեանը մէջ ճանչցաւ որ կոմսն էր ան և դուռ մը կը բանար։

Իսկոյն մօտակայ սենեկի մը կամ լաւ ևս է ըսել հիանալի պալատի մը մէջ վառուած խիստ պայծառ լոյսը այն սրահին մէջ իյրդեց, ուր Մորէլ իր քաղցր ոգեվարքին մէջ կը գտնուէր։

Ան ատեն այն սրահին սեմոյ վրայ հիանալի դեղեցկութեամբ կին մը տեսաւ, որ դունատեալ և մեղմ ժպիտով մը իրը գթութեան հրեշտակ մը կ'երևէր իրեն։



— Երդուք երկինքն է, ատ չիս բացատրը, մատանդ պահելորը, այս նրբ շատիը իմ կոչնեցյատիս կը նմանի — :

Մօնթէ--Քրիսթօ մատուռը ծաղիկահաս կնոջ այն քաղցրոյը ցուցուց, որու վրայ Մորէլ կը հանդչէր :

Կինը ձեռքը միայուցած և ժպիտ դէմքով դէպ 'ի անոր յառաջացաւ :

— Վալանթին, Վալանթին —, պոչեց Մորէլ իր սրտին խորունկէն :

Բայց իր բերանէն ձայն մը չելաւ, և որովհետև այս ներքին յուզման հետ իր բոլոր ոյժը միայուցեր էր, հառաչանք մը հաներ և աչերը դոցեց :

Վալանթին անոր քովը վազեց :

Մորէլի շուրթերը վերստին կը շարժէին :

— Ձեզ կը կանչէ, ըսաւ կոմսը, իր այն քունին մէջէն, որուն դուք ձեր բաղդը վստահեցաք, և որմէ մահը կ'ուզեր զրկել զձեզ. սակայն բարեբաղդաբար ես ձեր քովն էի ու մահուան յաղթեցի : Վալանթին, այսուհետև իրարմէ սիրտի չբաժնուիք երկրի վրայ. քանի զձեզ պահելու համար դերեզմանը մտնել կ'ուզեր : Եթէ ես չըլլայի՝ երկուքդ ալ մեռած էիք. ես զձեզ կը միացընեմ. Աստուած բարեհաճի շնորհել ինձի այս աղատած եղիս անձերուս վարձքը — :

Վալանթին Մօնթէ--Քրիսթոյի ձեռքը բռնեց և իր անդիմադրելի ուրախութեան եռանդէն իր շրթանց մօտեցուց զանոնք :

— Ո՛հ, շնորհակալ եղիք ինձի, ըսաւ կոմսը, և մի՛ ձանձրանաք ձեր շնորհակալութիւնը կրկնելու. շատ անգամ ըսէք ինձի որ ես երջանիկ ըրի զձեզ. չէք պիտեր թէ ո՛րչափ այս ստուգութեան պէտք ունիմ :

— Ո՛հ, այո՛, այո՛, բոլոր սրտովս շնորհակալ եմ ձեզ, ըսաւ Վալանթին, և եթէ իմ երախտապիտութեանս անկեղծութեանը վրայ կը կասկածիք, Հայտէին հարցուցէք, իմ սիրելի քրոջս, որ Գաղղիայէն մեկնելնէս 'ի վեր ձեր վրայ խօսելով, այսօրուան մեզի ծագած երջանիկ օրուան համբերութեամբ սպասեցընել տուաւ ղիս :

— Ուրեմն կը սիրէք Հայտէն, հարցուց Մօնթէ--Քրիսթօ այնպիսի յուզմամբ մը, զոր անորմէ պաղտնի պահել կ'ուզէր :

— Ո՛հ, բոլոր սրտովս :

— Ուրեմն մոխիկ ըրէք, Վալանթին, ըսաւ կոմսը. ձեզմէ չնորհք մը պիտի խնդրեմ։

— Ի՛նչ կ՚ըսէք, արդեօք այնչափ երջանիկ եմ որ . . . ։

— Այո՛, Հայտէն ձեր քոյրը կոչէցէք, թող իրօք ձեր քոյրը ըլլայ, Վալանթին. ինչ որ կը կարծէք թէ ինձ պարտաւոր է՝ անոր ըրէք. Մորէլ և դուք պաշտպանեցէք զան, քանզի (քիչ մնայ կոմսին ձայնը իր կոկորդին մէջ պիտի մարէր) քանզի այսուհետև առանձին պիտի մնայ աշխարհի վրայ . . . ։

— Եւ ինչ պատճառաւ առանձին պիտի մնայ —, կրկնեց կոմսին եռանդէն ձայն մը։

Մոնթէ-Քրիսթօ ետին դարձաւ, և Հայտէն տեսաւ, որ գունատեալ և սառած կեցած՝ խորին ապշութեամբ կոմսին կը նայէր։

— Վասն զի, աղջիկս, վաղը դուն աղատ պիտի ըլլաս, պատասխանեց կոմսը, վասն զի քեզի արժան եղած պատիւը վերստին պիտի ընդունիս, վասն զի վերջապէս չեմ ուզեր որ իմ ձակատագիրս քուկդ նեռմայընէ։ Ո՛վ իշխանուհի, հօրդ հարստութիւնները ու անունը կը վերադարձընեմ քեզի —։

Հայտէ գունատեցաւ, ինքզինքը Աստուծոյ յանձնող կուսի մը նման իր սպիտակ ձեռները բացաւ և արտասուելէն փոխուած ձայնով մը ըսաւ։

— Ուրեմն, տէր իմ, պիտի Թողնաս զիս։

— Հայտէ, Հայտէ, դուն ծաղկահաս և գեղեցիկ ես, մինչև անուն մուգիը և երջանիկ եղիր։

— Շատ աղէկ, ըսաւ Հայտէ, հրամաններդ կը կատարեմ, տէր իմ, մինչև անուդ պիտի մոռնամ և երջանիկ պիտի ըլլամ —։

Եւ մկնելու համար քայլ մը ետ քաշուեցաւ։

— Ո՛վ Աստուած իմ, գոչեց Վալանթին Մորէլին թմբրած գլուխը իր ուսին կռթնցընելով, կոմս, չէք տեսներ ինչպէս դունատեցաւ, և չէք հասկընար որ այս ըսածնիդ խիստ կը վիրաւորէ զինքը։

— Ինչպէս կ՚ուզէք որ հասկընայ, քոյր իմ. միթէ իմ տէրս չէ, և ես անոր աղախինը չեմ. բան մը չտեսնելու իրաւունք ունի —։

Կոմսը Հայտէին այս ձայնին հնչիւնէն սարսռաց, քանզի մինչև

սրտին խորը ազդեց. իր աչերը ծաղկահաս աղջկան աչերուն հանդիպեցան և չկրցան անոնց հուրին դիմանալ։

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, ըսաւ Մոնթէ-Քրիսթօ, ուրեմն ստոգ է կարծածս։ Հայտէ, ուրեմն ինձմէ չբաժնուելով երջանիկ պիտի ըլլաս։

— Ծաղկահաս եմ ես, պատասխանեց Հայտէ մեղմ ձայնով, կը սիրեմ կեանքը, զոր միշտ քաղցր երևցուցիր ինծի, և մեծ յաւով պիտի մեռնիմ։

— Ուրեմն ըսել կ՚ուզես որ եթէ ես քեզմէ բաժնուիմ, Հայտէ։

— Պիտի մեռնիմ, տէր իմ, այո՛։

— Ուրեմն կը սիրես զիս։

— Վալանթին, զինքը սիրելս կը հարցընէ. Վալանթին, ըսէ անոր թէ Մաքսիմիլիէնը կը սիրես դուն —։

Կոմսը իր կուրծքին ընդարձակութիւնը և սրտին ուռիլը զգաց. իր թևերը բացաւ, և Հայտէ ձիչ մը հանելով անոնց մէջ նետուեցաւ։

— Ո՛հ, այո՛, կը սիրեմ զքեզ, ըսաւ, զքեզ կը սիրեմ, ինչպէս կը սիրէ մարդ իր հայրը, եղբայրը և ամուսինը։ Իմ կեանքիս պէս կը սիրեմ զքեզ, քանզի դուն ինծի համար աշխարհիս ամենէն գեղեցիկ, ամենէն ընտիր և ամենէն մեծ մարդն ես —։

— Ուշադիր պէս Թող ըլլայ ուրեմն, սիրելի հրեշտակս, ըսաւ կոմսը։ Աստուած որ իմ թշնամեացս դէմ յարոյց զիս և յաղթող հանդիսացուց, յայտնի կը ցուցընէ թէ՝ չուզեր որ յաղթութեանս մէջ զղջամ. կ՚ուզէի ինքզինքս պատժել, բայց Աստուած կը ներէ ինծի։

«Սիրէ զիս ուրեմն, Հայտէ. ո՛վ գիտէ՝ գուցէ քու սէրդ մոռցընել տայ ինծի ինչ որ պէտք եմ մոռնալ։

— Բայց ինչ կ՚ըսես հոգ, տէր իմ, հարցուց նորատի աղջիկը։

— Կ՚ըսեմ թէ քու մէկ խօսքդ, Հայտէ, իմ քսան տարուան դիտումներէս աւելի իմ միտքս լուսաւորեց. միայն զքեզ ունիմ աշխարհիս վրայ, Հայտէ, քեզմով վերստին պիտի ապրիմ, քեզմով պիտի կրնամ երջանիկ կամ ապերջանիկ ըլլալ։

— Կը լսե՞ս, Վալանթին, գոչեց Հայտէ. կ՚ըսէ թէ ինձմով ա-

պերջանիկ պիտի ըլլայ, ինձմով, որ իմ կեանքս կու տամ անոր համար — :

Կոմսը վայրկեան մը կենալով ինքզինքին եկաւ :

— Արդեօք Ձշմարիտ է դուշակածս, ըսաւ : Ո՛վ Աստուած իմ, կ՚ընդունիմ այս Ճակատագիրը եթէ՝ ի վարձատրութիւն և եթէ՝ ի պատիժ : Եկու, Հայտէ, եկու . . . :

Եւ իւր թևը ծաղկահաս աղջկան մէջքէն անցընելով, Վալանթինի ձեռքը սեղմեց և աներևոյթ եղաւ :

Գրեթէ ժամ՝ մը անցաւ, և Վալանթին ոդեսպառ, անձայն և աչերը յարած՝ Մորէլի քովը կեցաւ :

Վերջապէս ղպայ որ անոր սիրտը սկսեր էր բաբախել, Հազիւ ղպալի ընչաւութիւն մը անոր շուրթերը բացեր էր, և վերակենդանութիւնը յայտնող թեթև սարսուռ մը երիտասարդին բոլոր մարմինը պատեց :

Վերջապէս իւր աչերը վերստին բացուեցան, բայց ապուշ և յիմարի նայուածք մը ունէին, քիչ մը ետքը պարզ և Ճիշդ կը տեսնէր. իւր նայուածքին հետ ղպայումը և ղպացման հետ վիշտը վերադարձաւ :

— Ո՛հ, դոչեց յուսահատական ձայնով, տակաւին կենդանի եմ ես, կոմսը խաբեց զիս — :

Եւ ձեռքը դէպ՝ ի սեղանը երկնցուց և դանակ մը յափշտակեց.

— Սիրելիս, ըսաւ Վալանթին իւր խիստ քաղցր ժպիտովը, արթնցիր և երեսս նայէ — :

Մորէլ բարձր Ճիչ մը ձգեց, և զառանցեալ տարակուսանօք լըցուած, և դողդոջ երկնային երևոյթէ մը շլացեալ՝ իւր երկու ծնդացը վրայ ինկաւ . . . :

Հետևեալ առտու լուսնալուն պէս՝ Մորէլ և Վալանթին իրարու թևը մտած ծովեզերքին վրայ կը պտըտէին. Վալանթին Մորէլին կը պատմէր թէ ինչպէս Մոնթէ-Քրիսթօ իւր սենեակը երևցեր էր, ինչպէս ամեն բան իրեն յայտներ էր, և ինչ հրաշքով գինքը մահուանէ ազատեր էր ամեն մարդու հաւատացընելով թէ մեռած է :

Քարայրին դուռը բայ դտնելով դուրս ելեր էին. դիշերուան

վերջին աստղերը տակաւին առաւօտեան արշալուսին մէջ երկնից երեսը կը փայլէին :

Ան ատեն Մորէլ մարդ մը տեսաւ, որ ժայռերուն քովը կեցած նշանի մը կ՚ըսպասէր որ մօտենայ, ու Վալանթինին ցուցուցած էր :

— Ո՛հ, ծագօպօն է, ըսաւ, շեղակայմին նաւապետը — :

Եւ նշան մը ընելով զան իրենց քովը կանչեց :

— Բան մը ունիմ մեզ լսելու, հարցուց Մորէլ :

— Կոմսին կողմանէ այս նամակը ունիմ ձեզ յանձնելու :

— Կոմսին կողմանէ, մրմռացին Մորէլ ու Վալանթին :

— Այո՛, կարդացէք — :

Մորէլ նամակը բացաւ և կարդաց.

«Սիրելիդ իմ Մաքսիմիլիէն,

«Ձեզի համար խարսխի վրայ նաւ մը կեցած է, որ զձեզ Լիվորնօ տանի, ուր Պ. Նուարթիէ իւր թոռը օրհնելու կ՚ըսպասէ անոր ձեզի հետ ամուսնանալէն առաջ :

«Այդ քարայրին մէջ ինչ որ կայ, Ծանթ-Էլիզէի տունս և Թրէբորի փոքր աշտարակս հարսանեաց այն ընծաներն են, զորոնք Էդմոն Տանթէս իւր Մորէլ տիրոջը որդւոյն կ՚ընէ :

«Օրիորդ տը Վիլֆոր ալ թող բարեհաճի անոնց կէսը ընդունելու. քանզի կը խնդրեմ որ Բարիզի աղքատաց բաշխէ բոլոր այն հարստութիւնը, որ իւր խենթեցած հօրը և իւր մօրուին հետ սեպտեմբերի մէջ մեռնող իւր եղբօր կողմանէ իրեն կ՚իյնայ :

«Ձեր կեանցը վրայ հսկելու պատրաստուող հրեշտակին ըսէք, Մորէլ, որ աղօթք ընէ երբեմն այնպիսի մարդու մը համար, որ Սատանային նման ժամանակ մը ինքզինքը Աստուծոյ հաւասար կարծեց, և քրիստոնէի մը ամենայն խոնարհութեամբ Ճանչցաւ որ Աստուծոյ ձեռքն է միայն դերագոյն իշխանութիւնը և անսահման իմաստութիւնը :

«Այս աղօթքները գուցէ իւր սրտին խաղաղ խայթերը մեղմեն :

«Իսկ ձեզի, Մորէլ, միայն այս դաղտնիքը ունիմ հաղորդելու.

աշխարհիս մէջ ոչ երջանկութիւն կայ և ոչ դժբաղդութիւն, այլ մէկ վիճակին միւսին հետ եղած բաղդատութիւնն է, և ոչ ուրիշ բան։

«Ցեղին դժբաղդութիւն կրողը միայն կարող է կատարեալ երջանկութիւնը վայելելու։

«Պէտք է ճանչել ուզել, Մաքսիմիլիէն, որ դիտնայ մարդ թէ որչափ քաղցր է կեանքը։

«Ապրեցէք ուրեմն և երջանիկ եղիք, ով սրտակից զաւակներս, և մի մոռնաք երբէք որ մինչև այն օրը որ Աստուած պիտի բարեհաճի ապագան մարդուս յայտնելու, բոլոր մարդկային իմաստութիւնը այս երկու բառերուն մէջ պարունակուած է.

«Սպասել և յուսալ։

«Ձեր բարեկամը

«ԻՏՄՕՆ ՏԱՆԹԻՍ

«ԿՈՄՍ ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՈՑ»։

Վալանթին այս նամակէն իւր հօրը խենթենալը և եղբօրը մահը իմանալով հառաչանք մը հանեց, և արտասուայ կաթիլները լռութեամբ իւր այտերէն վար կ'երթեցան. իւր երջանկութիւնը շատ սուղի նստեր էր իրեն։

Մորէլ անհանգստութեամբ իւր բոլորտիքը նայեցաւ։

— Բայց ստուկիւ կոմսը իւր առատաձեռնութեան չափը կ'անցընէ, ըսաւ. Վալանթին կրնայ իմ չափաւոր հարստութեամբս ալ գոհ ըլլալ։ Ո՞ւր է կոմսը, բարեկամ, գիս անոր քովը տար —։

Ծագօպօ իւր ձեռքը դէպ 'ի հորիզոնը երկնցուց։

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց Վալանթին, ո՞ւր է կոմսը, ո՞ւր է Հայտէ։

— Հոն նայեցէք —, ըսաւ Ծագօպօ։

Երկու երիտասարդները նաւաստիին ցուցուցած կողմը նայեցան. հորիզոնին վրայ և միջերկրական ծովը երկինքէն բաժնող մութ կապոյտ կէտի մը վրայ որոշ մը թևին նման սպիտակ առագաստ մը տեսան։

— Գնա՛ց, գոչեց Մորէլ, գնաց. Ճաս բարեաւ, բարեկամս, Հայրս։

— Գնա՛ց, մրմռաց Վալանթին. Ճաս բարեաւ, բարեկամուհիս, Ճաս բարեաւ, քոյր իմ։


— Ով գիտէ թէ մէկ մ'ալ զանոնք պիտի տեսնեմ, ըսաւ Մորէլ իւր արտասուքը սրբելով։

— Սիրելիս, ըսաւ Վալանթին, միթէ կոմսը չըսեր էր որ մարդկային բոլոր իմաստութիւնը այս երկու բառերուն մէջն է.

«Սպասել և յուսալ»։

ՎԵՐՋ

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՈՑ ԿՈՄՍԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԵՐԵՎԱՆ
ՀԱՄԱ

ՅԱՆԳԱՄԱՏԵԱՆ

	Եր֊
Ա. Երեւոյթը	3
Բ. Լոկիւսի	13
Գ. Վաշանին . . .	21
Դ. Մաքսիմիլիէն . .	30
Ե. Տանկլարի աստրագրու֊թիւնը	42
Զ. Բէր֊Լաշէզ կոչուած գերեզմանատունը.	57
Է. Բաժանումը . . .	76
Ը. Առիւծուց փոսը .	97
Թ. Դասաւորը . . .	107
Ժ. Ցանգաւորաց ատեանը	119
ԺԱ. Ամբաստանութեան յայտագիրը . .	127
ԺԲ. Ներողութիւն . .	137
ԺԳ. Մեկնիչը . . .	149
ԺԴ. Անցեալը . . .	166
ԺԵ. Բէբբինօ . . .	183
ԺԶ. Լուիզի Վանբայլին կերակրոց գինը.	198
ԺԷ. Ներումը . . .	208
ԺԸ. Հոկտեմբերի հինգը	216

3n

1875
8n 1876
1877

1
2

2013